

Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորի կողմից սիրված **Գրքամոլ** ֆեյսբուքյան էջը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:


Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:



Միրելի՛ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: Մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլ.- հասցեով՝ grqamol@gmail.com: Ենթահավաքություն, որ հետևում էք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

Wylpman's Nymphen



UTQ YUQUQ

Ռուսերենից թարգմանեց՝ Լ. Մ. ԱՐԱՄՅԱՆ

7—6—3

А. Дюма—Черный тюльпан


(На армянском языке)

Изд-во «Айастан», Ереван, 1968

Ալիքսանդր Ռյուսս

ՄԵԼ ԿԱԿԱՐՁ

„Հայաստան“, հրատարակչություն Երևան 1968



1

Երախտապարտ ժողովուրդը

1672 թվականի օգոստոսի 20-ին Հաագան, այնքան աշխույժ, շողշողուն ու զուգված, ասես այնտեղ հավերժական տոն էր,— Հաագան՝ իր ստվերախիտ զբոսայգով, հսկայական ծառերով, որոնք խոնարհվել էին գոթական շինությունների ու հայելանման մակերեսով լայն ջրանցքների վրա, ուր արտացոլվում են համարյա թե արեւելյան ոճի նրա զանգակատները,— Հաագան, Միացյալ յոթ պրովինցիաների¹ մայրաքաղաքը, 1672 թվականի օգոստոսի

¹ Միացյալ յոթ պրովինցիաների հանրապետությունը (կամ Հոլանդական հանրապետությունը) կազմակերպվել է 16-րդ դարի նիդեռլանդական բուրժուական հեղափոխության հաղթանակի հետևանքով։ Հանրապետության մեջ մտնում էին յոթ պրովինցիա (Հոլանդիա, Զելանդիա, Ուտրեխտ, Հրոնինգեն, Հելդերն, Օվերիսսել և Ֆրիսլանդիա), որոնք 1579 թվա-

20-ին լցված էր փողոց ելած քաղաքացիների գրգռված բազմություններով: Նրանք շտապելով ու հուզվելով, դանակները խրած գոտիների տակ, հրացանները ուսով գցած կամ մահակները ձեռքներին, բոլոր կողմերից խառնիխուռն հոսանքով գնում էին դեպի Բյուլտենհոֆի բանտը: Այնտեղ այդ ժամանակ, բժիշկ Թիքելարի մատնությամբ, մահափորձ կատարելու համար տառապում էր Կոռնել դե Վիտը՝ Հոլանդիայի նախկին մեծ պենսիոնարի՝ Յան դե Վիտի եղբայրը: Եթե այդ դարաշրջանի և հատկապես այդ տարվա պատմությունը, որի կեսերից սկսվում է մեր շարադրանքը, անբաժանելիորեն կապված չլիներ վերոհիշյալ երկու անունների հետ, ապա հետագա պարզաբանող տողերը, անշուշտ, ավելորդ կթվային: Սակայն մենք նախազգուշացնում ենք մեր հին բարեկամ-ընթերցողին, որ նա դրանից բավականություն կստանա, եթե մեր ուժերը ներածի չափ իրագործենք մեր խոստումը, նախազգուշացնում ենք, որ այս ներածությունը անհրաժեշտ է ոչ մեր շարադրանքի պարզության, այլև քաղաքական այն խոշոր իրադարձությունները հասկանալու համար, որոնց հետ առնչվում է մեր պատմությունը:

Կոռնելը կամ Կոռնելիուս դե Վիտը, նահանգային ամբարտակների գլխավոր տեսուչը, իր հայրենի քաղաք Դորդրեխտի նախկին քաղաքագլուխը և Հոլանդիայի գլխավոր նահանգների պատգամավորը, քառասունինը տարեկան էր, երբ հոլանդացիները հիասթափվելով կառավարման հանրապետական ձևից, ինչպես այն հասկանում էր Հոլանդիայի մեծ պենսիոնարի Յան դե Վիտը, համակվեց շտատհալտե-

կանին ստորագրեցին նոր հանրապետության գոյությունը իրավաբանորեն հաստատող, այսպես կոչված, Ուտրեխտի միությունը: Հոլանդական նահանգապետության Միացյալ պրովինցիաների հանրապետության քաղաքականության վրա թողած ազդեցության աճման հետևանքով էր, որ մեջտեղ եկավ մեկ այլ՝ «Հոլանդական հանրապետություն» անվանումը:

¹ Մեծ պենսիոնարի — Հոլանդական հանրապետությունում պետական պատասխանատու պաշտոն: Պենսիոնարիի ձեռքին երբեմն կենտրոնացած էր լինում ամբողջ իշխանությունը, ինչոր բուրժուազիայի ներկայացուցիչ Յան դե Վիտը (1625—1672), լինելով մեծ պենսիոնարի, փաստորեն Միացյալ պրովինցիաների կառավարողն էր:

բության¹ գաղափարի նկատմամբ կրքոտ սիրով, որն իր ժամանակին Յան դե Վիտի պնդմամբ հատուկ հրովարտակով Հոլանդիայում վերացվել էր:

Քանի որ շատ քիչ է պատահում, երբ հասարակական կարծիքը իր քմահաճ փոփոխականությամբ ամեն մի որոշակի սկզբունք չի կապում որևէ անձնավորության հետ, ապա այս դեպքում էլ ժողովուրդը հանրապետության գաղափարը անմիջականորեն կապում էր դե Վիտ երկու խստաբարո եղբայրների հետ, հոլանդական այս հոռմեացիների հետ², որոնք չափավոր ազատության և առանց ավելորդ ճոխությունների բարեկեցիկ կյանքի աներեր պաշտպաններ էին: Իսկ փոխարքայության գաղափարի հետևում, ինչպես թվում էր ժողովրդին, խոնարհած իր դաժան, մտազբաղ ճակատը, կանգնած էր երիտասարդ Վիլհելմ Օրանցին, որին ժամանակակիցները տվել էին Լուակյաց³ մականունը:

Երկու դե Վիտ եղբայրներն էլ մեծագույն շգուշույթուն էին ցուցաբերում Լյուդովիկոս XIV-ի⁴ հետ ունեցած հարաբերության մեջ, քանի որ նրանք տեսնում էին, թե ինչպես է աճում վերջինիս ազդեցությունը ողջ Եվրոպայում: Նրա ազդեցության ուժը եղբայրները տեսնում էին հենց Հոլանդիայի ներսում, հատկապես երբ փայլուն հաջողությամբ

1 Շտատհալտեր (փոխարքա — Մ. Ք.) — Նիդեռլանդներում այսպես էր կոչվում գործող իշխանության ղեկավարը: Շտատհալտերի պաշտոնը վերացվեց Յան դե Վիտի կողմից, սակայն 1672 թվականին Վիլհելմ III Օրանցու համար նորից վերականգնվեց:

2 Նկատի են առնվում հին հունական հանրապետականներ Տիբերիոս և Գայոս Գրակոս եղբայրները, որոնք խոշոր հողատերերի դեմ մղած պայքարում զոհվեցին:

3 Լուակյաց կոչում էին ոչ թե Վիլհելմ III Օրանցուն, Հոլանդիայի շտատհալտերին, իսկ այնուհետև՝ անգլիայի թագավորին (1689 թվից), որի մասին այստեղ խոսվում է, այլ նրա նախորդին՝ Վիլհելմ I Օրանցուն, Նիդեռլանդական բուրժուական հեղափոխության աչքի ընկնող գործչին:

4 Լյուդովիկոս XIV — Ֆրանսիայի թագավոր 1643 թվականից մինչև 1715 թվականը: Զգտում էր թագավորական իշխանության առավելագույն ամրապնդմանը: Պատերազմներով և շռայլություններով Ֆրանսիան հասցրեց ծալրահեղ քայքայման:

ավարտվեց Հռենոսի արշավանքը¹, որը երեք ամսվա ընթացքում ընկճեց Միացյալ պրովինցիաների հզորությունը:

Լյուդովիկոս XIV-ը հոլանդացիների վաղեմի թշնամին էր, և վերջիններս ամեն առիթով ծիծաղում էին նրա վրա ու վիրավորում. սակայն, գրեթե միշտ, այդ արվում էր Հոլանդիայում գտնվող ֆրանսիացի տարագիրների բերանով: Հոլանդացիների ազգային ինքնասիրությունը Լյուդովիկոս XIV-ի մեջ տեսնում էր ժամանակակից Միհրդատին², որը սպառնում էր իրենց հանրապետությանը:

Ժողովուրդը դե Վիտերի նկատմամբ տածում էր կրկնակի հակակրանք: Դա մի կողմից հետևանք էր այն համառ պայքարի, որ գոյություն ուներ պետական իշխանության այդ ներկայացուցիչների և ամբողջ ազգի ձգտումների միջև, մյուս կողմից արդյունք էր պարտված ժողովրդի արգարացի հիասթափության, որը հույս ուներ, թե մեկ այլ առաջնորդ նրան կփրկի անպատվությունից ու քայքայումից:

Այդ նոր առաջնորդը, պատրաստ հրապարակելնելու, որպեսզի հանդուգն պայքար սկսի Լյուդովիկոս XIV-ի դեմ, Վիլհելմն էր, Օրանցի արքայազնը, Վիլհելմ II-ի որդին, անգլիական թագավոր Կառլոս I-ի թոռը (Հենրիետա Սթյուարտի կողմից), այն լուսկյաց պատանին, որի ստվերը, ինչպես արդեն ասացինք, ուրվագծվում էր փոխարքայության գաղափարի հետևում: 1672 թվականին նա քսաներկու տարեկան էր: Նրա դաստիարակը Յան դե Վիտն էր, որը ձգտում էր նախկին արքայազնից լավ քաղաքացի դուրս բերել: Հենց նա էլ փոխարքայության վերացման իր հրովարտակով փշրեց իշխանությունը գրավելու արքայազնի հույսը: Սակայն Լյուդովիկոս XIV-ի նկատմամբ եղած վախը հոլանդացիներին ստիպեց հրաժարվել մեծ պենսիոնարի քաղաքականությունից, բեկանել այդ հրովարտակը և վերականգնել փոխարքայությունը Վիլհելմ Օրանցու համար:

¹ Նկատի է առնվում 1672 թվականին ֆրանսիական զորքերի ներխուժումը Նիդեռլանդիա:

² Միհրդատ VI Եվպատոր (136—63 թ. մ. թ. ա.) — Պոնտոսի թագավոր: Համարվում էր Հռոմի ամենավտանգավոր թշնամին:

Մեծ պենսիոնարին իր համաքաղաքացիների կամքի առաջ խոնարհվեց, բայց Կոռնել դե Վիտը ավելի հաստատակամ գտնվեց և, շնայած ամբոխի մահվան սպառնալիքներին, որը շրջապատել էր Դորդրեխտի նրա տունը, հրաժարվեց փոխարքայութունը վերականգնելու փաստաթուղթը ստորագրելուց։ Միայն կնոջ թախանձանքներն ու արցունքները ստիպեցին նրան, վերջապես, իր ստորագրութունը դնել այդ փաստաթղթի տակ, ավելացնելով, սակայն, երկու տառ՝ v. c., այսինքն՝ vi coactus «ուժով պարտադրված»։

Նա այդ օրը հրաշքով միայն ազատվեց իր թշնամիներից։

Ինչ վերաբերում է Յան դե Վիտին, ապա սա ոչինչ չհասցեացրեց քանից, որ ավելի արագ ու հեշտությամբ ընկրկեց իր համաքաղաքացիների կամքի առջև։ Այդ դեպքից մի քանի օր անց նրա դեմ մահափորձ կատարվեց. դաշույնի մի քանի հարվածներից խոցված, նա, համենայն դեպս, վերքերից չմեռավ։ Օրանցիներին դա չբավարարեց։ Երկու եղբայրների գոյութունը նրանց մտադրութունների իրագործման մշտական արգելքն էր։ Նրանք փոխեցին իրենց գործելակերպը և ինչի չէին կարող հասնել դաշույնով, փորձեցին հասնել զրպարտանքով, իհարկե, հույս ունենալով, որ հարկ եղած գեպքում կվերադառնան իրենց նախկին գործելակերպին։

Միշտ չէ, որ պատմական մեծ գործեր կատարելու համար մեծ դեմք է հայտնվում։ Երբ այդ երկուսը համընկնում են, պատմությունը իսկույն ևեթ նշում է այդ գործչի անունը, որպեսզի սերունդները հնարավորութուն ունենան նրանով պարծենալու։

Սակայն, երբ ինքը սատանան է խառնվում մարդկանց գործերին, ինչ-որ անհատի կամ մի ամբողջ պետություն կործանելու համար, շատ քիչ է պատահում, երբ նրա ձեռքի տակ չի գտնվում համապատասխան սրիկա, որի ականջին արած մի փսփսոցը բավական է, որպեսզի նա գործի անցնի։ Այդ սրիկան, որը տվյալ հանգամանքներում սատանայի համար չափազանց հարմար անձնավորություն էր, եղավ,

ինչպես արդեն ասացինք, մասնագիտությամբ բժիշկ Թիքե-
լարը:

Նա հայտարարեց, թե Կոռնել դե Վիտը, զայրացած
փոխարքայության մասին եղած հրովարտակից, որն, ի միջի
այլոց, նա ապացուցել էր արդեն իր ստորագրությանը կցած
ծանոթագրությամբ և դեպի Վիլհելմ Օրանցին ունեցած աշ-
րող ատելությունից՝ դրդված, իբր համոզել է մի մարդա-
սպանի՝ ազատելու հանրապետությունը նոր փոխարքայից, և
որ այդ մարդասպանը ինքն է: Սակայն նազ հանձնարարու-
թյան միտքը միայն իր մեջ առաջացրել է այնպիսի խղճի
խայթ, որ նա նախընտրել է ավելի շուտ մերկացնել, քան
թե իրագործել այդ հանցագործությունը:

Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի զայրույթ համա-
կեց օրանցիներին, երբ նրանց հայտնի դարձավ դավադրու-
թյունը: 1672 թվականի օգոստոսի 16-ին Կոռնելը իր տան
մեջ ձերբակալվեց: Բյուտենհոֆի բանտում նրան տանջանք-
ների ենթարկեցին, որպեսզի հաստատի Վիլհելմի դեմ կազ-
մակերպած իր դավադրության իսկությունը:

Սակայն Կոռնելը ոչ միայն մեծ խելքի տեր էր, այլև
արտակարգ կամք և արիություն ուներ: Նա պատկանում էր
այն մարդկանց թվին, որոնք նվիրված են իրենց քաղաքա-
կան համոզմունքներին այնպես, ինչպես նրանց պապերը
նվիրված էին իրենց հավատին: Այդպիսիները տանջանք-
ների ժամանակ ժպտում են. և այն ժամանակ, երբ նրան
խոշտանգում էին, նա հաստատուն ձայնով արտասանում
էր Հորացիուսի *Yustum et tenacem*¹ ներբողի առաջին
տողը: Եվ ոչինչ չխոստովանալով, Կոռնելը ոչ միայն չարչարեց
ու հոգնեցրեց դահիճներին, այլև տատանեց նրանց կույր
հավատը իրենց գործի արդարությունը նկատմամբ:

Բայց և այնպես դատավորները Թիքելարին ոչ մի մե-
ղադրանք չներկայացրին, իսկ Կոռնել դե Վիտին զրկեցին

¹ Հորացիուս (65—8 թ. մ. թ. ա.) — հռոմեական խոշորագույն բանա-
ստեղծ, «Ներբող», «Մատիք», «Ուղերձ» և այլոց հեղինակ: Նկատի է
առնվում «Ներբող» գրքից երրորդ ներբողը, որը սկսվում է հետևյալ
խոսքերով. «Ով որ արդարամիտ է, վճռական է իր որոշումներում»:

բոլոր կոշումներից ու պաշտոններից և հանրապետության սահմաններից ընդմիշտ վտարեցին:

Հենց սկզբից, երբ լուրեր տարածվեցին եղբոր նկատմամբ հարուցվող մեղադրանքների մասին, Յան դե Վիտը հրաժարվեց մեծ պենսիոնարի իր պաշտոնից: Իսկ Վիլհելմ Օրանցին ձգտելով, ի միջի այլոց, արագացնել դեպքերը, սպասեց, մինչև ժողովուրդը, որի կուռքն էր նա այդ ժամանակ, ինքը երկու եղբայրների դիակներից պատվանդան պատրաստի, որն անհրաժեշտ էր Վիլհելմին՝ փոխարքայության դիրքին հասնելու համար: Այսպես, ուրեմն, 1672 թվականի օգոստոսի 20-ին, ինչպես արդեն ասվեց այս գլխի սկզբում, քաղաքի ամբողջ բնակչությունը հոսում էր դեպի Բյույտենհոֆ, որպեսզի ներկա լինի բանտից դուրս բերվող Կոռնել-դե Վիտի վտարմանը: Բոլորն ուզում էին տեսնել, թե ինչպիսի հետքեր են թողել բանտային փորձություններն այդ մարդու առաքինի մարմնի վրա, մի մարդու, որն այնքան լավ գիտե Հորացիոսին:

Աճապարենք ավելացնել, որ ոչ բոլորն էին սոսկ հետաքրքրասիրությունից դրդված շտապում դեպի Բյույտենհոֆ, որպեսզի ներկա գտնվեն այդ արտասովոր տեսարանին: Ամբոխի մեջ քիչ չէր նաև նրանց թիվը, ովքեր ցանկանում էին ակտիվ դեր խաղալ, ավելի շուտ՝ հանդես գալ այն դերով, որն, ըստ նրանց, վատ էր խաղացվել:

Մենք նկատի ունենք դահճի դերը: Ճիշտ է, ամբոխի մեջ կային և այնպիսիները, որոնք բանտ էին շտապում ոչ շար նպատակներով: Նրանց հիմնականում հետաքրքրում էր սպասվող տեսարանը, որը միշտ գրավել էր ամբոխին և շուրջել նրա ինքնասիրությունը, այն տեսարանը, երբ երկար ժամանակ ամբողջ հասակով հպարտ կանգնած մարդը վերածվում է մոխրի:

Զէ՞ որ Կոռնել դե Վիտը, այդ աներկյուղ մարդը, բանտ էր նստել և ենթարկվել տանջանքների: Կտեսնե՞ն արդյոք այդ մարդուն գունատ, արյունաշաղախ, ստորացված: Մի՞թե դա փայլուն հաղթանակ չէ բուրժուազիայի համար, որն ավելի նախանձախնդիր է, քան հասարակ ժողովուրդը, հաղ-

թանակ, որին Հաճախի յուրաքանչյուր ականիվ քաղաքացի պետք է մասնակից լինի:

— Բացի այս բոլորից, — ասում էին այն խառնակիչները, որոնք ճարպկորեն սողոսկելով ամբոխի մեջ, հույս ունեին վերածել նրան սուր և բուլթ զենքի, — Բյուլտենհոֆի բանտից դեպի ուղեկալ տանող ճանապարհին գուցե առիթ լինի ցեխ կամ քար շարտել այդ հպարտ մարդու վրա, ամբարտակների գլխավոր տեսչի երեսին, որը, բացի այն, որ Օրանի արքայազնին փոխարքայությունը հանձնեց vi coactus ձևով, ուզում էր նաև նրան սպանել:

Իսկ Ֆրանսիայի ավելի կատաղի թշնամիներն ասում էին, որ պետք է գործն ավելի խելոք ձևով կատարել և, եթե Հաագայում գտնվեն խիզախ մարդիկ, նրանք երբեք թույլ չեն տա Կոռնել դե Վիտին հանրապետությունից հեռանալու: Զէ՞ որ նա Հոլանդիայի սահմաններից դուրս գալուն պես նորից կսկսի Ֆրանսիայի հետ համագործակցած՝ դավեր նյութել և իր սրիկա եղբոր՝ Յանի հետ ապրել մարքիզ էռվուայի՝ նվիրած ոսկիներով: Հասկանալի է, որ այս տրամադրություններով համակված մարդիկ, որոնք ծարավի են ցնցող տեսարանների, չեն քայլում, այլ վազում են: Ահա թե ինչու Հաագայի բնակիչները սրընթաց վազում էին Բյուլտենհոֆի բանտի կողմը:

Առավել շտապողների մեջ էր նաև Թիքելարը, որը լըցված էր շարությամբ և շգիտեր այլևս՝ ի՞նչ ձեռնարկել: Օրանցիների մոտ նա համարվում էր ազնվության, ազգային հպարտության և քրիստոնեական գթասրտության մարմնացում:

Այդ ազնվատոհմ սրիկան կատարելագործելով իր ողջ սերճախոսությունն ու սրամտությունը, գործի դրեց երևակայության ամբողջ ուժը, պատմելով թե ինչպես Կոռնել դե Վիտը ձգտում էր գնել նրա խիղճը, ինչպիսի գումարներ էր խոստանում նրան և նախօրոք ինչպիսի գոխային գործաքներ էր կազմակերպում, որպեսզի վերացնի բոլոր այն խո-

¹ Լուլուա, Ֆրանսուա Միշել (1639—1691) — Լյուդովիկոս XIV-ի գինավորական մինիստրը:

չընդդռնեցին, որոնք կխանգարեին իրեն՝ Թիֆելարին, իրագործելու շարանենդ սպանությունը:

Եվ նրա յուրաքանչյուր խոսքը ամբողջ ազահորեն կլանում էր, առաջ բերելով դեպի՝ Վիլհելմ Օրանցին ունեցած բուռն սիրտ և դե Վիտ եղբայրների նկատմամբ եղած կույրատելության արտահայտություն:

Ամբոխը պատրաստ էր անիծելու և անարգելու շարամիտ դատավորներին, որոնք իրենց դատավճռով հնարավորություն էին տալիս կենդանի ու անվնաս հեռանալու այնպիսի մի սաքսափելի հանցագործի, ինչպիսին այդ սրիկա Կոռնել դե Վիտն էր:

Իսկ խառնակիչները այդ ընթացքում շշնջում էին.

— Նա մեր ձեռքից դուրս կպրծնի: Կհեռանա՝

Մյուսներն ավելացնում էին.

— Սխալ են ինքենում նրան մի նավ է սպասում, Ֆրանսիական նավ: Թիֆելարը տեսել է:

— Խիզախ Թիֆելար: Ազնիվ Թիֆելար,— միաբերան գոչում էր ամբոխը:

— Իսկ դուք չե՞ք մտածում այն մասին,— ասում էր ինչոր մեկը,— որ Կոռնելի հետ միասին կփախչի նաև Յանը, որը եղբոր նման դավաճան է:

— Եվ այդ երկու ստորները Ֆրանսիայում պիտի խժռեն մեր փողերը, Լյուդովիկոս XIV-ին՝ վաճառված նավերի, զինանոցների, նավաշինարանի փողերը:

— Մենք նրանց թույլ չենք տա հեռանալ,— բացականչեց մյուսներից ավելի կատաղի մի հայրենասեր:

— Դեպի բանտ: Դեպի բանտ,— ունաց ամբոխը:

Եվ այդ բացականչությունների ներքո արագանում էին քաղաքացիների ֆայլերը, լիցքավորվում հրացանները, փայլփլում տապարներն ու բոցկլտում աչքերը:

Սակայն առայժմ՝ դեռ ոչ մի բռնություն գործ չէր դրվել,

¹ Վիտ եղբայրների՝ Ֆրանսիացիների հետ դավադրական կապեր ունենալու մեղադրանքը չէր հիմնավորված: Սակայն Յան դե Վիտի ու կառավարության անվճռականությունը, որը բխում էր ժողովրդական հուզմանների նկատմամբ ունեցած երկյուղից, օրանժիստներին առիթ տվեց, ժողովրդականություն ձեռք բերելու նպատակով, Վիտ եղբայրներին մեղադրել դավաճանության մեջ:

և հեծելազորի շղթան, որը պահպանում էր Բյուլտենհոֆի մուտքը, իր դաժան, անհաղթահարելի ու լուռ անշարժության մեջ ավելի ահեղ էր, քան Հաագայի այդ գրգռված բուրժուաների ամբոխն իր բոլոր սպառնալիքներով ու գոռում-գոչյունով։ Զոկատը կանգնած էր անշարժ՝ իր հրամանատարի ուշիմ հայացքի տակ, որը նստած էր նժույզին՝ մերկացված, սակայն դեպի ասպանդակն իջեցրած սրով։

Այդ հեծելազորը, որը բանտի միակ պաշտպանն էր, ստիպված էր զսպել ոչ միայն սպնձազերծված, կատաղած ամբոխին, այլև քաղաքացիական միլիցիայի ջոկատին, որը բանտի առաջ կանգնած, հեծելազորի հետ միասին, պետք է կարգ պաշտպաներ։ Միլիցիան իր բացականչություններով թե էր տալիս խռովարարներին.

— Կեցցե՛ք Օրանի արքայազնը։ Կորչե՛ն դավաճանները։ Ճիշտ է, կապիտան Թիլիի և նրա հեծելազորի ներկայությունը փոքր-ինչ զսպում էր զինված բուրժուաների կիրքը, սակայն շուտով նրանք ոգևորվելով իրենց սեփական գոռում-գոչումներից և չգիտակցելով, որ կարելի է քաջ լինել նաև առանց հարայհրոցի, հեծելազորի հանգստությունն ընդունեցին որպես վախկոտություն և սկսեցին շարժվել դեպի բանտը՝ իրենց հետևից տանելով նաև ամբոխին։ Այդ ժամանակ կոմս Թիլին մոռացվելով և սուրը մերկացնելով, մեն-մենակ գնաց նրանց ընդառաջ.

— Հե՛յ, դուք, քաղաքացիական միլիցիայի պարոններ,— գոչեց նա,— ինչո՞ւ տեղից շարժվեցիք և ի՞նչ եք ցանկանում։

Բուրժուաները շարունակում էին բացականչել՝ թափահարելով հրացանները.

— Կեցցե՛ք Օրանի արքայազնը։ Մա՛հ դավաճաններին։

— Կեցցե՛ք Օրանի արքայազնը, թող այդպես լինի,— ասաց Թիլին,— չնայած ես ուրախ դեմքերը նախընտրում եմ մոռյուններից։ Մա՛հ դավաճաններին։ Եթե ձեզ հարմար է, թող այդպես լինի. սակայն մեկ պայմանով, որ դուք սահմանափակվեք միայն գոռում-գոչյուններով։ Գոռգոռացեք որքան կամենաք. «Մա՛հ դավաճաններին», սակայն այդ սպառնալիքն իրագործել ձեզ չի հաջողվի։ Ինձ այստեղ կարգել են, որսխազի այդ բանը թույլ չտամ և թույլ չե՛մ տա։

Այնուհետև դառնալով դեպի իր զինվորները, հրամայեց.
— Նշա՛ն ա՛ռ:

Թիլիի զինվորները առանց վայրկյան իսկ տատանվելու, կատարեցին հրամանը: Միլիցիան և ամբոխը շփոթվելով, իսկույն եեթ նահանջեցին. այդ բանը շարժեց հեծելազորի հրամանատարի ժպիտը:

— Դե՛, դե՛,— ասաց նա զինվորականներին հատուկ ծաղրական տոնով,— քաղաքացիներ, մի՛ վախեցեք, իմ զինվորները չեն կրակի, սակայն դուք էլ ոչ մի քայլ չպետք է անեք դեպի բանտը:

— Իսկ գիտե՞ք արդյոք, պարոն սպա, որ մենք հրացաններ ունենք,— գոչեց քաղաքացիական միլիցիայի կատաղած հրամանատարը:

— Իհարկե, ես շատ լավ եմ տեսնում, որ դուք հրացաններ ունեք,— պատասխանեց Թիլին,— դրանք շարունակ փայլփլում են իմ աչքի առջև: Սակայն, հաշվի առեք, որ մենք ատրճանակներ էլ ունենք, որոնք հրաշալի խփում են հիսուն քայլի վրա, իսկ դուք գտնվում եք միայն քսանհինգ քայլի վրա:

— Մա՛հ դավաճաններին,— նորից ոռնացին կատաղած բուրժուաները:

— Դե, դուք շարունակ միևնույն բանն եք կրկնում,— փնթփնթաց սպան,— դա արդեն ձանձրալի է:— Այդ ասելով, նա նորից անցավ ջոկատի գլուխը. իսկ Բյուլտենհոֆի շուրջը մարդիկ ավելի էին խոնվում: Գրգռված ամբոխը, սակայն, չգիտեր, որ հենց այդ ժամանակ, երբ նա իր զոհերից մեկի արյունն էր տենշում, մյուս զոհը, կարծես թե ընդառաջ գնալով իր ճակատագրին, շրջանցելով հեծելազորը հրապարակից ընդամենը մի հարյուր քայլի վրա, շտապում էր դեպի Բյուլտենհոֆ: Այդպես էլ կար. Յան դե Վիտը հենց նոր դուրս եկավ իր կառքից և ծառայի ուղեկցությամբ քայլերը հանգիստ ուղղեց դեպի բանտը տանող բուկը:

Նա ներկայացավ բանտապահին, որն առանց այդ էլ ճանաչում էր նրան:

— Բարի օր, Գրիֆուս,— ասաց Յան դե Վիտը,— ես եկել եմ տանելու իմ եղբորը՝ Կոունել դե Վիտին, որը, ինչպես քեզ հայտնի է, դատապարտված է վտարման: 12



Բանտապահը, բանտի դռները բացելու ու փակելու վարժեցրած արջի նման խոնարհվեց Յան դե Վիտի առջև ու նրան ներս թողեց։ Վերջինիս հետևից դռներն իսկույն կեթ փակվեցին։ Անցնելով տասը քայլ, Յան դե Վիտը հանդիպեց ֆրիսլանդական հագուստով՝ տասնյոթ-տասնութ տարեկան մի սքանչելի աղջկա, որը նազանքով գլուխ տվեց։

— Ողջո՛ւյն, հիասքանչ, սիրելի Ռոզա,— ասաց Յան դե Վիտը, քնքշությամբ դիպչելով նրա կզակին,— ինչպե՞ս է իմ եղբայրը։

— Օ՛հ, պարոն Յան,— պատասխանեց աղջիկը,— ես խիստ անհանգստացած եմ ոչ թե այն տանջանքների համար, որոնց նա

ենթարկվել է։ Չէ՞ որ դրանք արդեն անցած են։

— Իսկ ինչի՞ց ես վախենում, գեղեցկուհիս։

— Ես, պարոն Յան, վախենում եմ այն շարագործությունից, որին նա դեռ կարող է ենթարկվել։

— Ախ, հա՛,— ասաց դե Վիտը,— դու մտածում ես ամբոխի մասին, այնպես չէ՞։

— Դուք լսո՞ւմ եք, թե նա ինչպես է ոռնում։

— Այո, իհարկե, ժողովուրդը չափազանց զրգուլած է, բայց քանի որ մենք նրան բացի լավությունից ուրիշ ոչինչ չենք արել, ապա կարծում եմ, որ մեզ տեսնելով՝ նա կխաղաղվի։

1 Ֆրիսլանդական հագուստ—ֆրիսների ազգային հագուստը, մի ժողովուրդ, որն ապրում էր Նիդեռլանդների հյուսիսային մասում (ֆրիսլանդական նահանգ)։

— Դժբախտաբար, դա բավական չէ,— շշնջաց աղջիկը և հեռացավ՝ նկատելով հոր խիստ հայացքը։

— Այո, բավական չէ, զավակս, գու իրավացի ես։

— Ահա մի դեռատի աղջիկ,— շշնջում էր Յան դե Վիտը, շարունակելով իր ձանապարհը,— ամենայն հավանականությամբ նա նույնիսկ կարողալ չգիտե, հետևաբար, նա երբեք ոչինչ չի կարդացել, սակայն մեկ խոսքով բնութագրեց մարդկութեան ողջ պատմությունը։

Եւ Յան դե Վիտը, նախկին մեծ պենսիոնարին, առաջվա նման հանգիստ, բայց ավելի տխուր, քան երբ ներս էր մտնում բանտ, շարունակեց իր ճանապարհը դեպի եղբոր խուցը։

2

Երկու եղբայր

Գեղեցկուհի մոզայի տագնապն իզուր չէր։ Մինչ Յան դե Վիտը քանտի քարե սանդուղքներով բարձրանում էր դեպի եղբոր խուցը, զինված բուրժուաները ճիգ էին թափում հեռացնելու Թիլիի ջոկատը, որը խանգարում էր նրանց։

Այդ տեսնելով, ժողովուրդը, որը ֆարախուում էր իր միլիցիայի բարի տրամադրությունները, ամբողջ կոկորդով գոռում էր։

— Կեցցե՛ք քաղաքացիական միլիցիան։

Ինչ վերաբերում է Թիլիին, ապա վերջինս նույնքան զգույշ, որքան հաստատակամ, իր հեծելազորի ատրճանակներին պաշտպանության ներքո, բանակցություններ էր վարում քաղաքացիական միլիցիայի հետ, աշխատելով վերջինիս հասկացնել, որ ինքը իշխանությունից հրաման է ստացել պաշտպանելու բանտը և նրան հարող փողոցները։

— Ինչի՞ համար է այդ հրամանը։ Ինչո՞ւ պաշտպանել բանտը։

— Դե՛, հիմա դուք ինձ այնպիսի հարցեր եք տալիս, որոնց ես պատասխանել չեմ կարող,— պատասխանեց Թի-

լին, — ինձ հրամայված է «պաշտպանել»։ Ես էլ պաշտպանում եմ։ Դուք, պարոններ, ինքներդ համարյա զինվորականներ եք և պետք է իմանաք, որ զինվորական հրամանը վիճարկման ենթակա չէ։

— Բայց այդ հրամանը ձեզ տվել են, որպեսզի հնարավորություն ստեղծեն դավաճաններին հեռանալու քաղաքի, սահմաններից։

— Շատ հնարավոր է, քանի որ դավաճանները դատապարտված են վտարման, — պատասխանեց Թիլին։

— Սակայն ո՞վ է տվել այդ հրամանը։

— Իշխանությունը, իհարկե։

— Նրանք մեզ դավաճանում են։

— Այդ արդեն չգիտեմ։

— Դուք էլ դավաճան եք։

— Ե՛ս։

— Այո, դուք։

— Ահա թե ի՞նչ։ Սակայն, մտածեք, պարոն քաղաքացիներ, ո՞ւմ կարող էի ես դավաճանել։ Իշխանությանը՝ Բայց որտեղ եք դուք տեսնում դավաճանություն։ Չէ՞ որ ես ծառայության մեջ եմ իշխանության մոտ և ճշգրտորեն ի կատար եմ ածում նրա հրամանները։

Եվ քանի որ կոմսը իրավացի էր, և նրա պատասխաններին առարկելու ոչինչ չկար, գոշյուններն ու սպառնալիքներն ավելի ուժեղացան։ Այդ գոշյուններն ու սպառնալիքները սարսափելի էին, սակայն կոմսը դրանց պատասխանում էր ամենաբացառիկ քաղաքավարությամբ։

— Պարոն քաղաքացիներ, ամենայն լրջությամբ խընդրում եմ լիցքազերծ անել ձեր հրացանները. կարող է պատահական կրակոց լինել, և եթե իմ հեծյալներից թեկուզ մեկը վիրավորվի, ապա մենք ձեզնից ամենաքիչը երկու հարյուր մարդ շարքից կհանենք։ Դա մեզ համար շատ տհաճ կլինի, սակայն ավելի տհաճ կլինի ձեզ համար, մանավանդ, որ ո՛չ ես, ո՛չ էլ դուք նման մտադրություններ չունենք։

— Եթե դուք այդպես վարվեք, մենք էլ ձեզ վրա կրակ կբանանք, — գոռացին բուրժուաները։

— Այդպե՛ս, այդպե՛ս, սակայն, եթե դուք կրակեք մեզ

վրա և թեկուզ բոլորիս էլ կոտորեք, ապա դրանից ձեր սպանված մարդիկ հարուստյուն չեն առնի:

— Հրապարակը զիջեք մեզ և դուք ազնիվ քաղաքացիներ կլինեք:

— Նախ և առաջ ես քաղաքացի չեմ, — պատասխանեց Թիլին, — ես սպա եմ, դրանք միևնույն բաները չեն: Եվ այնուհետև ես հռլանդացի չեմ, այլ Ֆրանսիացի, որը ավելի է խորացնում մեր մեջ եղած տարբերությունը: Ես ճանաչում եմ միայն այն իշխանությունը, որն ինձ վարձատրում է: Բերեք նրա հրամանը հրապարակը աղատելու մասին, և ես իսկույն ևեթ հեռանալու հրաման կտամ, մանավանդ, որ այստեղ ցցվելը ինձ էլ սարսափելի ծանծրացրել է:

— Այո՛, այո՛, — գոչեցին հարյուրավոր ձայներ, որոնց վայրկենապես ձայնակցեցին հարյուրավոր մարդիկ: — Դեպի քաղաքապետարան: Գնա՛նք դեպուտատների մոտ: Արա՛գ: Արա՛գ:

— Այդպե՛ս, այդպե՛ս, — քրթմնջաց Թիլին, նայելով, թե ինչպես են հեռանում քաղաքացիներից ամենից կատաղածները: — Գնացեք քաղաքապետարան և տեսեք կբավարարե՞ն արդյոք ձեր պահանջը: Գնացե՛ք, բարեկամներս, գնացե՛ք:

Պատվարժան սպան կառավարություն անդամներին հավատում էր այնպես, ինչպես վերջիններս հավատում էին նրա՝ այդ զինվորի ազնվությունը:

— Գիտե՞ք, կապիտան, — կոմսի ականջին շշնջաց ավագ լեյտենանտը, — թող դեպուտատները մերժեն այդ կատաղածների պահանջը: Բայց, համենայն դեպս, թող մեզ օժանդակ զորք ուղարկեն, դա մեզ չի վնասի:

Նույն այդ պահին Յան դե Վիտը, որին մենք թողել էինք բանտի սանդուղքների վրա, բանտապահ Գրիֆուսի և նրա աղջկա՝ Ռոզայի հետ ունեցած խոսակցությունից հետո մտնեցավ այն խցի դռանը, որտեղ ներքնակի վրա պառկած էր նրա Կոռնել եղբայրը, որին, ինչպես արդեն ասացինք, դատախազի հրամանով ենթարկել էին նախնական տանջանքների:

Վտարման հրամանն արդեն ստացված էր, և այդպիսով հետագա հարցաքննությունների ու տանջանքների կարիքը չկար:

Կոռնելը, ջարդված դաստակներով և կոտրտված մատներով, ընկած էր իր անկողնին: Նա շխոստովանեց իր չկատարած մեղքերը և երեք օրվա տանջանքներից հետո, վերջապես, թեթևացած շունչ քաշեց, երբ իմացավ, որ գատավորները քարեհաճել են նրան ոչ թե սպանել, այլ երկրից արտաքսել:

Մարմնով ուժեղ և հոգով արի, նա շատ կհիասթափեցներ իր թշնամիներին, եթե վերջիններս Բյուլտենհոֆյան մոռյու մթության մեջ կարողանային տեսնել Կոռնելի գունատ դեմքին խաղացող տանջված նահատակի այն ժպիտը, որը մոռանում է երկրային ստոր շարագործությունները, երբ նրա առաջ բացվում են երկնային դռները:

Ավիլի շատ իր ուժեղ կամքի շնորհիվ, քան թե որևէ իրական օգնության, Կոռնելը, հավաքելով իր ամբողջ ուժերը, այժմ հաշվում էր, թե որքան ժամանակ դեռևս իրավաբանական ձևականությունները իրեն կպահեն բանտում:

Դա հենց այն ժամանակ էր, երբ քաղաքացիական միլիցիան, որին օժանդակում էր ամբոխը, կատաղորեն անարգում էր դե Վիտ եղբայրներին և սպառնում էր նրանց պաշտպանող կապիտան Թիլիին: Աղմուկը՝ նման ծովի բարձրացող ալիքի, գլորվեց մինչև բանտի պատերը և հասավ բանտարկյալի ականջին:

Սակայն, չնայած իր սպառնալից բնույթին, այդ աղմուկը շանհանգստացրեց Կոռնելին, նա նույնիսկ շնորհակալ էր, վանդակապատ շուսամուտին, որի միջով ներս էր սողոտսկում փողոցի աղմուկն ու ցերեկային լույսը:

Ֆիզիկական անընդհատ տանջանքներն այնպես էին անդգալացրել բանտարկյալին, որ վերջինիս համար դարձել էին արդեն սովորական: Վերջապես, նա բավականություն մեծացրեց, որ իր հոգին և գիտակցությունը պատրաստ են մարմինը թողնելու. նրան նույնիսկ թվաց, իբր հոգին և գիտակցությունն արդեն հրաժեշտ են տվել մարմնին և ճախ-

րում են նրա գլխավերևում, նման կրակի բոցին, որը ան-
ջատվելով հանգչող օջախից, թռչում է երկինք:

Կոռնելը մտածում էր նաև իր եղբոր մասին: Եվ, կա-
րող է պատահել,~ նույնիսկ, այդ միտքը ծագեց, որովհետև
ինչ-որ անբացատրելի պատճառով նա զգաց եղբոր մոտ
լինելը:

Հենց այն պահին, երբ Կոռնելի գլխում այդքան պարզ-
որոշ շողաց Յանի պատկերը, այնպես, որ նա պատրաստ էր
տալու Յանի անունը, խցի գոները բացվեցին, և Յանը ներս
մտավ: Նա արագ քայլերով մոտեցավ բանտարկյալի անկող-
նին: Կոռնելը իր խեղճած ու կապկպված ձեռքերը մեկնեց
դեպի իր փառաբանված եղբայրը, որին, պետք է ասել, որոշ
հարցերում նույնիսկ ետ էր թողել. եթե Կոռնելին չէր հաջող-
վել իր երկրին ավելի շատ օգուտ տալ, քան Յանը, ապա,
համենայն դեպս, հոլանդացիները նրան եղբորից ավելի շատ
էին ատում:

Յանը քնքշորեն համբուրեց Կոռնելի ճակատը և զգու-
շությամբ նրա հիվանդ ձեռքերը իջեցրեց ներքնակին:

— Կոռնել, իմ խեղճ եղբայր,— ասաց նա,— դու շատ
ես տանջվում, ճի՞շտ է:

— Ոչ, ես այլևս չեմ տանջվում, չէ՞ որ քեզ տեսա:

— Սակայն ինձ համար ինչպիսի՞ տանջանք է քեզ
տեսնել այդպիսի վիճակում, իմ խեղճ, սիրելի՛ Կոռնել:

— Հենց այդ պատճառով էլ ավելի շատ քո մասին էի
մտածում, քան իմ, նրանց պատճառած բոլոր փորձություն-
ները ինձնից կարողացան միայն մեկ հառաչանք խլել.
«Խեղճ եղբայրս»: Բայց դու այստեղ ես, և եկ մոռանա՜նք
ամեն ինչ: Դու իմ հետեից ես եկել, այնպես չէ՞:

— Այո՛:

— Քեզ տեսնելով՝ առողջացա: Օգնիր ինձ բարձրանալու
և դու կտեսնես, եղբայր, թե ինչքա՜ն լավ եմ քայլում:

— Դու երկար քայլելու պետք չունես, բարեկամս, իմ
կառքը կանգնած է Թիլիի հրաձիգների ջոկատի հետևում:

— Թիլիի հրաձիգների՞: Իսկ ինչո՞ւ են նրանք կանգնած
այնտեղ:

— Ահա թե ինչու. ենթադրում են,— պատասխանեց



իրեն հատուկ տխուր ժպիտով մեծ պենսիոնարին, — որ Հաագայի բնակիչներին կհետաքրքրի այն տեսարանը, թե ինչպես ես հեռանում, և վախենում եմ, որ այդ առիթով հուզումներ տեղի կունենան:

— Հուզումներ՞, — կրկին հարցրեց Կոռնելը, սուր հայացքը հառելով փոքր-ինչ շփոթված եղբոր երեսին, — հուզումներ:

— Այո, Կոռնել:

— Ահա թե քիչ առաջ ես ինչ ճայներ էի լսում, —

կարծես թե ինքն իրեն խոսեց Կոռնելը: Հետո նորից դարձավ եղբորը.— Բյույտենհոֆի շնորհը ամբողջ է հավաքված:

— Այո՛, եղբայրս:

— Իսկ ինչպե՞ս քեզ հաջողվեց:

— Ի՞նչը:

— Ինչպե՞ս ներս թողին:

— Քեզ հայտնի է, Կոռնել, որ ժողովուրդը մեզ առանձնապես չի սիրում,— դառնությամբ նկատեց մեծ պենսիոնարին:— Ես կողքի նեղ փողոցներով եկա:

— Դու թաքնվո՞ւմ էիր, Յան:

— Հարկավոր էր առանց ժամանակ կորցնելու քեզ մոտ ընկնել: Ես վարվեցի այնպես, ինչպես վարվում են քաղաքականության մեջ և ծովի վրա, երբ հանդիպակաց քամի է լինում: Ես խուսանավում էի:

Այդ ժամանակ բանտի պատերից ներս թափանցեցին հրապարակից լսվող ավելի կատաղի բացականչություններ:

Թիլին բանակցություններ էր վարում քաղաքացիական միլիցիայի հետ:

— Օ՛, դու մեծ նավավար ես, Յան,— նկատեց Կոռնելը,— սակայն ես հավատացած չեմ, քեզ կհաջողվի՞ արդյոք ամբողջի այդ կատաղած հորձանքի միջից եղբորդ դուրս բերել Բյույտենհոֆյան բանտից այնպես, ինչպես իր ժամանակին այնքան բարեհաջող Տրոմպի՝ նավատորմը անցկացրիր Շելդից մինչև Անտվերպեն ձգվող ծանծաղուտից:

— Մենք, համենայն դեպս, աստծո օգնությամբ կփորձենք, Կոռնել,— պատասխանեց Յանը,— սակայն մինչ այդ ես քեզ ասելիք ունեմ:

— Խոսի՛ր:

Հրապարակից նորից լսվեցին բացականչություններ:

— Օ՛,— նկատեց Կոռնելը,— ինչպես են կատաղած այդ մարդիկ: Ի՞նչ դեմ, թե՞ քո:

— Կարծում եմ, միաժամանակ երկուսիս դեմ, Կոռնել: Ես ուզում էի ասել, որ օրանժիստները մեր մասին ստոր

՝ Տրոմպ Կոռնելիուս (1629—1691) — հոլանդական ծովակալ, անգլո-հոլանդական պատերազմների և մի շարք ծովային մարտերի մասնակից, օրանժիստ:

գրպարտանքներ տարածելով, մեզ մեղադրում են Ֆրանսիայի հետ բանակցութիւններ վարելու մեջ:

— Հիմարներ...

— Այո, սակայն, այնուամենայնիւ, նրանք մեզ ներկայացնում են այդ մեղադրանքը:

— Բայց չէ՞ որ, եթե մեր բանակցութիւնները հաջողութեամբ ավարտվեին, այդ կփրկեր նրանց Օրսեի, Վեզելի և Ռեյսերգի մոտ կրած պարտութիւններից: Այդ կփրկեր նրանց Ֆրանսիացիների կողմից Հոննոսը կտրելուց¹ և Հոլանդիան՝ իր ճահիճներով ու ջրանցքներով դեռևս իրեն կարող էր անպարտելի համարել:

— Այդ բոլորն, իհարկե, ճիշտ է, եղբայրս, սակայն ավելի ճիշտն այն է, որ եթե նրանք հիմա գանեն մեր գրագրութիւնը դե Լուվուայի հետ, ապա, շնայած իմ ամբողջ փորձվածութեանը, ես, այնուամենայնիւ, չէի կարող փրկել նույնիսկ այն խարխուլ մակույկը, որը օտարութեան մեջ երջանկութիւն փնտրող դե Վիտ եղբայրներին պետք է Հոլանդիայի սահմաններից դուրս տանի: Այդ գրագրութիւնը, որը ազնիւ մարդկանց կապացուցեր, թե ինչպիսի ուժեղ սիրով եմ սիրում իմ երկիրը և ինչպիսի անձնազոհութիւնների էի պատրաստ հանուն նրա ազատութեան, հանուն նրա փառքի, այդ գրագրութիւնը, սակայն, ընկնելով հաղթողների ձեռքը, մեզ կկործաներ: Եվ հուսով եմ, սիրելի Կոռնել, որ դու Դորդրեխտից դուրս գալուց և ինձ մոտ՝ Հաագա ուղևորվելուց առաջ դրանք այրել ես:

— Եղբայր,— պատասխանեց Կոռնելը,— քո գրագրութիւնը պարոն դե Լուվուայի հետ ապացուցում է, որ վերջին շրջանում դու եղել ես Միացյալ յոթ պրովինցիաների ամենամեծ, ամենամեծահոգի և ամենախմաստուն անձնավորութիւնը: Ինձ համար թանկ է իմ երկրի փառքը և թանկ է հատկապես քո փառքը, եղբայր, և, իհարկե, ես չեմ այրել այդ գրագրութիւնը:

— Այդ դեպքում արգեն երկրային կյանքը մեզ համար

¹Նկատի է առնվում այն պարտութիւնը, որ 1672 թվականին Լյուդովիկոս XIV-ի բանակը հասցրեց Հոլանդական հանրապետութեանը:

վերջացած է,— մոտենալով պատուհանին, հանդիստ ասաց նախկին մեծ պենսիոնարին:

— Ո՛չ, Յան, ընդհակառակը, մենք կփրկենք մեր կյանքը և միաժամանակ կվերագարձենենք մեր նախկին ժողովրդականությունը:

— Ի՞նչ ես արել այդ նամակները:

— Ես դրանք հանձնել եմ Դորդրեխտի իմ սանիկին, քեզ հայտնի Կոռնելիուս վան Բեուխին:

— Օ՛, թշվառական: Այդ սիրելի, միամիտ տղան, այդ դիտնականը, որի նմանը խիստ սակավ է հանդիպում, այդքան բան իմանալով հանդերձ, մտածում է միայն իր ծաղիկների մասին: Եվ դու նրան ի պահ ես տվել այդ մահացու ծրարը: Այո, եղբայրս, այդ հիանալի, թշվառ Կոռնելիուսը կործանված է:

— Կործանված է:

— Այո: Նա կցուցաբերի կամ հոգու արիություն, կամ թուլություն: Եթե նա քաջություն ունենա (չէ՞ որ շնայած այն բանին, որ նա ապրում է քաղաքականությունից հեռու, որ իրեն թաղել է Դորդրեխտում և որ սարսափելի ցրված է, համենայն դեպս, վաղ թե ուշ նա կիմանա մեր ճակատագրի մասին), ուրեմն, եթե նա քաջություն ունենա, պետք է հպարտանա մեզանով. իսկ եթե թույլ գտնվի, վախենա մեզ հետ ունեցած իր մոտիկությունից: Արիություն ցուցաբերելով, նա բարձրաձայն կխոսի մեր զաղտնիքի մասին, թույլ գտնվելով, այս կամ այն ձևով կմատնի այդ: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում, Կոռնել, նա կորած է, և մենք՝ նույնպես: Ուրեմն, եղբայր, փախչենք արագությամբ, քանի դեռ ուշ չէ:

Կոռնելը թեթևակի բարձրանալով իր տեղից, բռնեց եղբոր ձեռքը, որը վիրակապի հպումից ցնցվեց.

— Մի՞թե չեմ ճանաչում իմ սանիկին,— ասաց նա,— մի՞թե չեմ կարողացել կարգալ վան Բեուխի գլխում ծագած յուրաքանչյուր միտք, նրա հոգու յուրաքանչյուր զգացում: Ինձ հարցնում ես՝ ուժե՞ղ է արդյոք նա: Ինձ հարցնում ես՝ թո՞ւյլ է արդյոք նա: Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը: Մի՞թե միևնույն չէ, թե նա ինչպիսին է: Չէ՞ որ տվյալ դեպքում

կարեորն այն է, որ նա գաղտնիքը չհայտնի, բայց նա չի էլ կարող հայտնել, քանի որ դրա մասին չգիտե:

Յանը զարմանքով շփոթեց եկավ դեպի եղբայրը:

— Օ՛հ,— փափուկ ժպիտով շարունակեց Կոռնելը,— ամբարտակների գլխավոր տեսուչը նույնպես քաղաքագետ է, չէ՞ որ նա անցել է Յանի դպրոցը: Ես կրկնում եմ, Յան, որ վան Բեռլեին հայտնի չէ իրեն վստահած ծրարի ո՛չ բովանդակությունը, ո՛չ էլ նշանակությունը:

— Այդ դեպքում շտապենք,— բացականչեց Յանը,— պետք է նրան նախազգուշացնել, որ ծրարն այրի:

— Իսկ ո՞ւմ հետ ուղարկենք այդ նախազգուշացումը:

— Իմ ծառայի՝ Կրակեի հետ, որը ձիով ուղեկցելու է մեզ: Նա ինձ հետ բանտ է եկել, որպեսզի օգնի քեզ սանդուղքներից իջեցնելիս:

— Մի անգամ էլ լավ մտածիր նախքան այդ հիանալի փաստաթղթերն այրելը:

— Ես կարծում եմ, սիրելի Կոռնել, որ ամենից առաջ դե Վիտ եղբայրներին անհրաժեշտ է մտածել իրենց կյանքը փրկելու մասին, իսկ հետո՝ արդեն իրենց հեղինակության մասին: Եթե մենք մեռնենք, ո՞վ մեզ կպաշտպանի, Կոռնել: Ո՞վ կարող է մեզ գոնե հասկանալ:

— Ուրեմն, կարծում ես, որ եթե նրանք այդ փաստաթղթերը գտնեն, մեզ կսպանեն՞:

Չպատասխանելով եղբորը, Յանը ձեռքը մեկնեց Բյուլտենհոֆյան հրապարակի կողմը, որտեղից լսվում էին կատաղի բացականչություններ:

— Այո՛, այո՛,— ասաց Կոռնելը,— ես լավ լսում եմ այդ ձայները, բայց ի՞նչ են նշանակում դրանք:

Յանը բաց արեց պատուհանը:

— Մա՛հ դավաճաններին,— ոռնում էր ամբոխը:

— Հիմա դու լսո՞ւմ ես, Կոռնել:

— Այդ մե՞նք ենք դավաճանները,— ասաց բանտարկյալը, ուսերը թոթվելով ու աչքերը զցելով երկինք:

— Այո՛, մենք ենք,— կրկնեց Յան դե Վիտը:

— Որտե՞ղ է Կրակեն:

— Հավանաբար, խցի դռան հետևում:

— Դե, կանչի՛ր նրան:

Յանը դուռը բացեց և կանչեց հավատարիմ ծառային:

— Ներս մտեք, Կրակե, և աշխատեք լավ հիշել այն, ինչ կասի իմ եղբայրը:

— Օ՛, ո՛չ, Յան, բանավոր կարգադրությունը բավական չէ. դժբախտաբար, ես պետք է գրեմ:

— Իսկ ինչո՞ւ:

— Որովհետեւ վան Բեռլեն ոչ մեկին չի հանձնի և չի այրի ծրարը, մինչև ինձնից ճշգրիտ հրաման չստանա:

— Բայց կարո՞ղ ես գրել, իմ սիրելի բարեկամ, — հարցրեց Յանը, նայելով թշվառ բանտարկյալի այրված ու այլանդակված ձեռքերին:

— Օ՛, միայն թե գրիչ և թանաք լինի:

— Ահա քեզ, համենայն դեպս, մատիտ:

— Իսկ դու թուղթ ունե՞ս: Ինձ մոտ ոչինչ չեն թողել:

— Ահա ավետարանը, պոկի՛ր առաջին էջը:

— Լա՛վ:

— Բայց քո ձեռագիրը հիմա դժվարընթեռնելի կլինի:

— Ոչինչ, — ասաց Կոռնելը, նայելով եղբորը, — այս մատները, որոնք դիմացան դահճի կրակին, և այս կամքը, որը հաղթահարեց ցավը, այժմ կմիաձուլվեն, և մի՛ կասկածիր, եղբայրս, որ տողերը անթերի, ուղիղ կլինեն:

Եվ իրոք որ, Կոռնելը վերցրեց մատիտն ու սկսեց գրել:

Այդ ժամանակ վիրավոր մատների լարվածությունից ձեռքերի փաթաթանների վրա արյան կաթիլներ երևացին:

Մեծ պենսիոնարիի քունքերը ծածկվեցին քրտինքով:

Կոռնելը գրում էր.

«Թանկագին սանիկ, այրի՛ր այն ծրարը, որը քեզ հանձնեցի, այրի՛ր առանց նայելու, առանց բացելու, որպեսզի նրա բովանդակությունը քեզ անհայտ մնա: Գաղտնիքները, որ պարունակում է այդ ծրարը, դրանց տիրոջը կարող են կործանել: Այրի՛ր և դու կփրկես Յանին ու Կոռնելին:

Մնա՞ս բարով, սիրի՛ր ինձ: Կոռնել դե վիտ, 20 օգոստոսի, 1672 թվական»:

Յանը, արցունքն աչքերին, սրբեց արյան կաթիլը, որը ծծվել էր թղթին, և վերջին կարգադրություններն անելով:

նամակը հանձնեց Կրակեին: Հետո նա վերադարձավ Կոռնելի մոտ, որը ցավից ու տանջանքներից ավելի էր գունատվել և ուշաթափվելու մոտ էր:

— Հիմա,— ասաց նա,— հենց որ մենք լսենք իմ քաջ ծառայի սուլոցը, նշանակում է, որ նա արդեն լճի մյուս ափին է, ամբոխից հեռու: Այդ ժամանակ էլ մենք ճանապարհ կընկնենք:

Ձանցած հինգ րոպե, երկարածիգ և ուժեղ սուլոցը կրտրեց սև ծփիի գագաթներն ու խլացրեց Բյուտենհոֆի մոտ հավաքված ամբոխի ճիչերը: Յանը երախտագիտությամբ ձեռքերը դեպի երկինք պարզեց:

— Հիմա, Կոռնել,— ասաց նա,— ճանապարհ ընկնենք...

3

Յան դե Վիտի սանիկը

Այն ժամանակ, երբ Բյուտենհոֆի մոտ հավաքված ամբոխի ավելի ու ավելի ուժեղացող ճիչերը հասնելով եղբայրներին, ստիպում էին Յան դե Վիտին շտապեցնելու Կոռնելին, հենց այդ ժամանակ քաղաքացիներից կազմված մի պատգամավորություն ուղղվեց դեպի քաղաքապետարան՝ պահանջելու, որպեսզի Թիլիի հեծելազորը հրապարակից ետ կանչվի:

Բյուտենհոֆից մինչև Հոգստրետ հեռու չէ: Ամբոխի մեջ կարելի էր նկատել մի անծանոթի, որը հենց սկզբից ամենայն ուշադրությամբ հետևում էր ծավալվող իրադարձություններին: Պատգամավորների հետ միասին կամ, ավելի շուտ, անմիջապես նրանց հետևից, նա նույնպես ուղևորվեց քաղաքապետարան, որպեսզի իմանա, թե այդ ամենն ինչով կվերջանա: Դա մի երիտասարդ էր, քսաներկու-քսաներեք տարեկանից ոչ ավելի, և ըստ արտաքին տվյալների՝ ֆիզիկապես ոչ այնքան ուժեղ: Բարակ, ֆրիսլանդական թաշկինակով, որով նա շարունակ սրբում էր քրտինքով

ծածկված ճակատն ու այրվող շրթունքները, նա աշխատում էր ծածկել իր գունատ, երկարուկ դեմքը: Ամենայն հավանականությամբ նա հիմնավոր պատճառներ ուներ, որոնք ստիպում էին թաքնվել: Նա ուներ գիշատիչ թռչունի սուր հայացք, երկար, արծվային քիթ, բարակ, ուղիղ շրթունքներով բերան, որը հիշեցնում էր բաց եզրերով մի վերք: Եթե կաֆատերը¹ այդ ժամանակ կենդանի լիներ, ապա այդ մարդը նրա համար դիմագիտական դիտողությունների հիանալի ցուցանմունք կծառայեր, որը, սակայն, հենց սկզբից կհանգեցներ այդ անձնավորության համար ոչ այնքան բարենպաստ եզրակացությունների:

«Աբտաքնապես ի՞նչ տարբերություն կա իսկական հաղթողի և ծովահենի միջև, — հարցնում էին մեր իմաստուն նախնիները: Եվ պատասխանում էին. — Այն տարբերությունը, ինչ կա արծվի և անգղի միջև»:

Ինքնավստահությո՞ւն, թե՞ տագնապ:

Բյուտենհոֆից դեպի Հոգստրետ շարժվող ոռնացող ամբոխին հետևող այդ մարդու դիակի նման գունատ դեմքը, փխրուն, հիվանդոտ արտաքինը, անհանգիստ քայլվածքը կարող էր ունենալ միայն կասկածամիտ մեկը կամ էլ երկյուղած գողը: Եվ ոստիկանը, իհարկե, ավելի շուտ կհակվեր վերջինիս կողմը, տեսնելով, թե ինչպիսի խնամքով ու զգուշությամբ մեղ հետաքրքրող այդ երիտասարդն աշխատում էր դեմքը թաքցնել:

Այդ բոլորից բացի, նա հագնված էր շատ պարզ և, երևի, մոտը ոչ մի զենք էլ չուներ: Նրա նիհար, բայց բավական մկանուտ ձեռքը, չոր, սակայն սպիտակ, ազնվականական մատներով, հենված էր նրան ուղեկցող սալայի ոչ թե ձեռքին, այլ ուսին: Այդ սպան, մինչև իր ուղեկիցը ամբոխին կիսառնվեր, սրի կոթից բռնած, լիովին արդարացվող հետաքրքրությամբ, հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին:

¹ Կաֆատեր, Իոհան-Ֆասպար (1741—1801) — շվեյցարական աստվածաբան և գրող, «Դիմագիտություն» գրքի հեղինակ, որը հենվելով կեղծ գիտությանը, աշխատում էր մարդու արտաքին հատկություններով դատել նրա մտավոր և բարոյական հատկությունների մասին:



Հասնելով մինչև Հոգստրիտի հրապարակը, գունատ դեմքով մարդը իր ընկերակցի հետ կանգնեց տներից մեկի բաց պատուհանի մոտ, որը դեպի դուրս բացվող կրկնակի փեղկեր ուներ, և հայացքը հառեց քաղաքապետարանի պատշգամբին։

Ամբոխի անգուսպ բացականչություններից քաղաքապետարանի պատուհանը բացվեց և պատշգամբ ելավ մի մարդ։

— Այդ ո՞վ դուրս եկավ պատշգամբ,— սպալին հարցւեց երիտասարդը, հայացքով ցույց տալով խոսողին, որը թվում էր շատ է հույսված և ավելի շուտ բռնել էր, քան թե հենվել էր պատշգամբի ճաղերին։

— Դա պատգամավոր Բուլեյտն է,— պատասխանեց սպան։

— Ի՞նչ մարդ է այդ պատգամավոր Բովելտը: Դուք նրան ճանաչո՞ւմ եք:

— Որքան գիտեմ, մոնսիւնյոր, կարգին մարդ է:

Սպայի տված այդ բնութագրումից երիտասարդը մի շարժում արեց, որը պարզ արտահայտում էր և՛ հիասթափություն, և՛ ափսոսանք: Սպան այդ նկատեց և շտապեց ավելացնել.

— Համենայն դեպս, այդպես են ասում, մոնսիւնյոր: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես չեմ կարող պնդել, որ անձամբ ճանաչում եմ Բովելտին:

— Կարգին մարդ է,— կրկնեց նա, որին մոնսիւնյոր էին կոչում,— ի՞նչ եք ուզում դրանով ասել: Ազնի՞վ: Խիզա՞խ:

— Օ՛, ներեցեք ինձ, մոնսիւնյոր, սակայն ես չէի համարձակվի տալու մի մարդու լրիվ բնութագիրը, որին, կրկնում եմ ձերդ պայծառափայլությանը, միայն դեմքով եմ ճանաչում:

— Ասենք,— ասաց երիտասարդ մարդը,— մի քիչ սալասենք և ինքներս ամեն ինչ կտեսնենք:

Սպան, ի նշան համաձայնության, գլուխը խոնարհեց և լռեց:

— Եթե միայն այդ Բովելտը կարգին մարդ է,— ասաց արքայազնը,— ապա նա այնքան էլ համակրանքով չպետք է ընդունի այդ կատաղածների պահանջը:

Արքայազնի ձեռքը, որով նա հենվել էր ուղեկցի ուսին, ջղախին դողով մատնում էր այն այրող անհամբերությունը, որը նա հրքեմն, և հատկապես տվյալ վայրկյանին աշխատում էր թաքցնել իր դեմքի սառն ու մռայլ արտահայտությունը:

Լսվեց քաղաքացիների պատվիրակների ղեկավարի ձայներ: Վերջինս պատգամավորից պահանջում էր, որպեսզի նա ասի, թե որտեղ են մնացած պատգամավորները:

— Պարոններ,— կրկնեց Բովելտը,— ես ձեզ ասում եմ, որ ներկա վայրկյանին մենք այստեղ պարոն Ասպերենի հետ մենակ ենք և սոսկ մեր հայեցողությամբ ոչինչ վճռել չենք կարող:

— Հրաման՛ը, հրաման՛ը,— ճշացին հաղարավոր ձայ-
ներ:

Բովելտն աշխատում էր խոսել, սակայն նրա խոսքերը
չէին լսվում, և կարելի էր տեսնել միայն նրա ձեւերի արագ
ու անհամբեր շարժումները: Համոզվելով, որ չի կարող
ստիպել ամբոխին իրեն լսելու, Բովելտը շուռ եկավ դեպի
բաց պատուհանը և կանչեց Ասպերենին:

Ասպերենը նույնպես դուրս եկավ պատշգամբ: Նրան
դիմավորեցին առավել բորբոքված ճիշերով, քան տասը րո-
պե առաջ դիմավորել էին պատգամավոր Բովելտին: Ասպե-
րենը նույնպես փորձեց խոսել ամբոխի հետ, սակայն փո-
խանակ լսելու նրան, ամբոխը մխրճվեց կառավարական
պահապան զորքի մեջ, որն, ի միջի այլոց, ժողովրդին ոչ մի
դիմադրություն ցույց չտվեց:

— Գնանք,— հանգիստ ասաց երիտասարդը այն ժա-
մանակ, երբ ամբոխը քաղաքապետարանի զխավոր դար-
պասից ներս խուժեց:

— Բանակցությունները, ինչպես երևում է, պետք է
տեղի ունենան ներսում: Գնանք, լսենք, տեսնենք, ինչի՞ մա-
սին են խոսելու:

— Օ՛, մոռնինյոր, տեր իմ, զգո՛ւյշ եղեք:

— Ինչո՞ւ:

— Այդ պատգամավորներին շատերը ձեզ հանդիպել են
և բավական է, որ նրանցից թեկուզ մեկը ճանաչի ձերդ պաշ-
տառափայլությանը...

— Այո, որպեսզի ինձ մեղադրեն մարդկանց գրգռելու
մեջ: Դու ճիշտ ես,— ասաց երիտասարդը, նրա այտերը մի
վայրկյան կարմրեցին, և նա զղջաց, որ ցույց տվեց իր ան-
համբերությունն ու ցանկությունները:— Այո՛, դու ճիշտ ես,
մնանք այստեղ: Այստեղից ամեն ինչ երևում է, և մենք
կտեսնենք՝ ամբոխն արդյոք բավարարված կլերադառնա,
թե՞ ոչ և, այդպիսով, մենք կարող ենք որոշել, թե որքանո՞վ
այդ պարոն Բովելտը կարգին մարդ է, ազնիվ կամ քաջ է:
Դե ինձ շա՛տ է հետաքրքրում:

— Սակայն,— նկատեց սպան, դարմանքով նայելով
այն մարդուն, որին մեծարում էր՝ կոչելով տեր իմ,— սա-

կայն ես կարծում եմ, որ ձերդ մեծությունը մի վայրկյան իսկ չի կասկածում այն բանում, որ պատգամավորները կարող են հրամայել, որպեսզի Թիլիի հեծելազորը հեռանա: Այդպես չէ՞:

— Ինչո՞ւ,— սառը հարցրեց երիտասարդը:

— Որովհետեւ այդ հրամանը պարզապես կնշանակեւ ստորագրել Կոռնել և Յան դե Վիտերի մահվան հրամանը:

— Մենք այդ հիմա կտեսնենք,— սառնորեն պատասխանեց երիտասարդը:— Միայն աստծուն է հայտնի, թե ի՞նչ կա մարդկանց սրտում:

Սպան զգուշությամբ նայեց իր ուղեկցի ոչինչ չարտահայտող դեմքին և գունատվեց: Այդ սպան ազնիվ և խիզախ մարդ էր: Այնտեղից, որտեղ կանգնած էին արքայազնն ու նրա ուղեկիցը, լավ լսվում էին ամբոխի կատաղի ձայներն ու ոտքերի դոփյունը քաղաքապետարանի սանդուղքների վրա: Հետո այդ աղմուկը տարածվեց ամբողջ հրապարակով, դուրս հորդելով քաղաքապետարանի այն դահլիճի բաց պատուհաններից, որի պատշգամբում քիչ առաջ երևացել էին Բուվելտն ու Ասպերենը. երեւի, վախենալով, որ կատաղած ամբոխը կարող է իրենց պատշգամբից ցած նետել, նըրանք ներս մտան: Այնուհետեւ լուսամուտների հետեւում երևացին անհանգիստ, խառնիխուռն ստվերներ: Դահլիճը, ուր տեղի էին ունենում բանակցությունները, լցվեց մարդկանցով:

Հանկարծ աղմուկը մի վայրկյան դադարեց, իսկ հետո պայթեց նոր թափով, հասնելով այնպիսի ուժի, որ այդ հին շենքը հիմքից մինչև տանիքը ցնցվեց:

Ամբոխը պատշգամբներով ու սանդուղքներով հոսեց դեպի ելքը, որի կամարների տակով բուռն հոսանքով դուրս նետվեց:

Մի խումբ մարդկանց գլուխ անցած՝ ավելի շուտ թրջում, քան թե վազում էր՝ մի մարդ, որի դեմքը ծամովել էր գարշիլի հաճույքից:

Դա բժիշկ Թիքելարն էր:

— Ահա՛, ահա՛,— գոռում էր նա՝ օդում թափ տալով թղթի մի կտոր:

— Նրանք ստացե՞լ են հրամանը,— քրթմնջաց ապշած սպան:

— Դե՛, հիմա համոզվեցի,— հանգիստ ասաց արքայաղնը:— Դուք, իմ սիրելի գնդապետ, չգիտեք, թե աղնի՞վ, քա՞ջ մարդ է այդ Բուլեկտը: Նա ո՛չ մեկն է, և ո՛չ էլ մյուսը:

Հայացքով ուղեկցելով մոլեգնած ամբոխին, նա ավելացրեց:

— Հիմա, գնդապետ, գնանք դեպի Բյուլտենհոֆ. ես կարծում եմ, որ այնտեղ մենք մի հիասքանչ տեսարանի ականատեսս կլինենք:

Սպան խոնարհվեց և չափափականելով՝ հետևեց իր տիրոջը:

Հրապարակն ու շրջակայքն ամբողջութեամբ լցված էին բազմաթիվ մարդկանցով, սակայն Թիլիի հեծելազորը հաջողութեամբ և, որ գլխավորն է՝ նախկին վստահութեամբ շարունակում էր զսպել ամբոխին:

Շուտով կոմս Թիլին լսեց մոտեցող մարդկանց հոսանքի անընդհատ աճող աղմուկը և նկատեց նրա առաջին աչիքները, որոնք մոտենում էին հախուռն թափով իջնող ջրվեժի արագութեամբ: Նույն վայրկյանին նա տեսավ տարածված ձեռքերի և փայլփլող զենքերի միջև օդում ծածանվող թուղթը:

— Օհո՛,— նկատեց նա՝ բարձրանալով առաջնդականներին և դիպչելով իր օգնականի սրի դաստակին,— ինձ թվում է, որ այդ սրիկաները ձեռք են բերել հրամանը:

— Ստո՛ր անպիտաններ,— գոչեց սպան:

Եվ իրոք, դա այն հրամանն էր, որը քաղաքացիական միլիցիան այդպիսի ուրախ ոռնոցով բերում էր:

Նույն վայրկյանին միլիցիան բարձր ճիչերով ու իջեցված զենքերով շարժվեց դեպի Թիլիի հեծելազորը:

Սակայն կոմսն այն մարդկանցից չէր, որ թույլ տար գինված մարդկանց մոտենալ ավելի, քան այդ սլահանջվում էր:

— Կանդնի՛ր,— գոռաց նա:— Կանդնի՛ր: Զիերից հեռո՛ւ, թե չէ կհրամայեմ «առաջ»:



— Ահա՛ հրամանը, — գոռացին հարյուրավոր անպատկառ ձայներ:

Նա զարմանքով վերցրեց հրամանը, մի արագ հայացք գցեց վրան և շատ բարձր ձայնով ասաց.

— Մարդիկ, որոնք ստորագրել են այս հրամանը, հանդիսանում են Կոռնել դե Վիտի իսկական դահիճները: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ավելի շուտ իմ զույգ ձեռքերը կկտրեի, քան կհամաձայնեի զրել այս զաղրելի հրամանի թեկուղ մեկ տառը:

Եվ սրի կոթով հրելով այն մարդուն, որն ուղում էր հրամանը ետ վերցնել, նա ասաց.

— Սպասի՛ր... սա սովորական թուղթ չէ, և ես պետք է պահեմ:— Նա խնամքով ծալեց հրամանը և դրեց իր բաճկոնի գրպանը: Այնուհետև դառնալով ջոկատին, հրամայեց.

— Թիլիի հեծելազորայիններ, ա՛ջ դարձ, քայլի՛ր:— Եվ ոչ այնքան բարձր, սակայն այնպես, որ նրա խոսքերը պարզ լսելի լինեն, ասաց.

— Իսկ հիմա, մարդասպաններ, արե՛ք ձեր գործը:

Բռուն ատելության և վայրենի ուրախության կատաղի ոռնոցը, որը լցրել էր Բյույտենհոֆյան հրապարակը, ուղեկցում էր հեռացող հեծելազորայիններին:

Հեծելակը հեռանում էր դանդաղ:

Կոմսը ետ էր մնացել և մինչև վերջին վայրկյանը ղրստում էր լկտիացած ամբոխին, որն աստիճանաբար նրա ձիու հետևից առաջ էր շարժվում:

Ինչպես տեսնում եք, Յան դե Վիտը չէր շափազանցում զրույցյան վտանգավորությունը, երբ օգնում էր եղբորը բարձրանալու և շտապեցնում էր նրան որքան հնարավոր է շուտ հեռանալ բանտից:

Եվ ահա, վերջապես, Կոռնելը հենվելով նախկին մեծ պենսիոնարիի ձեռքին, սանդուղքներով դեպի բակն էր իջնում:

Ներքևում նա առնավ գեղեցկուհի Ռոզային, որը հուզմունքից ամբողջ մարմնով դողում էր:

— Օ՛, պարոն Յան,— ասաց նա,— ինչպիսի դժբախտություն:

— Ի՞նչ է պատահել, զավակս,— հարցրեց դե Վիտը:

— Ասում են, որ նրանք գնացել են քաղաքապետարան տրահանջելու, որպեսզի հրաման տրվի պարոն Թիլիին՝ իր զորքերը հեռացնելու հրապարակից:

— Օ՛,— նկատեց Յանը,— իրոք որ, զավակս, եթե հեծելազորը հեռանա, ապա մեղ համար ճիշտ որ շափազանց վատ վիճակ կստեղծվի:

— Մի խորհուրդ եմ ուղում տալ,— ասաց աղջիկը հուզմունքից դողալով:

— Խոսիր, զավակս:

— Ահա թե ինչ, պարոն Յան, ձեր փոխարեն լինելի, գլխավոր փողոցով չէի գնա:

— Ինչո՞ւ, չէ՞ որ Թիլիի հեծելազորայինները դեռևս կանգնած են իրենց տեղերում:

— Այո, և քանի դեռ հակառակ հրամանը չի եղել, ներանք պարտավոր են մնալ բանտի մոտ:

— Իհարկե:

— Դուք արդյոք հրաման ունե՞ք այն մասին, որ Թիլիի զորքերը ձեզ պետք է ուղեկցեն մինչև քաղաքից դուրս գալը:

— Ոչ:

— Ահա, տեսնո՞ւմ եք, վերջին հեծելակի հեռանալուն պես, դուք կընկնեք ամբոխի ձեռքը:

— Իսկ քաղաքացիական միլիցիա՞ն:

— Օ՛, հենց ամենից կատաղածը նա է:

— Ի՞նչ անենք, ուրեմն:

— Ձեր փոխարեն,— ամոթխածությամբ շարունակեց աղջիկը,— ես դուրս կգալի գաղտնի ելքով: Այդ ելքը տանում է դեպի մի ամալի, փոքրիկ փողոց. ամբողջ ժողովուրդը հավաքված է մեծ փողոցում և սպասում է գլխավոր դարպասի մոտ. այնտեղից ես կգնալի դեպի ուղեկալ, որտեղից էլ արդեն դուրս կգալի:

— Բայց եղբայրս քայլել չի կարող,— ասաց Յանը:

— Ես կփորձեմ,— հաստատակամորեն պատասխանեց Կոռնելը:

— Բայց մի՞թե այստեղ կառք չունեք,— հարցրեց աղջիկը:

— Կառքն այնտեղ է, գլխավոր մուտքի մոտ:

— Ոչ,— պատասխանեց աղջիկը,— ես իմացա, որ ձեր կառուպանը նվիրված մարդ է, և կարգադրեցի սպասել գաղտնի ելքի մոտ:

Եղբայրները գործվանքով նայեցին իրար և իրենց անհուն երախտագիտությունը լեցուն հայացքները հառեցին աղջկան:

— Հիմա,— ասաց մեծ պենսիոնարին,— Գրիֆուսը կհամաձայնի՞ արդյոք բացելու մեր առաջ այդ դուռը:

— Օ՛, ո՛չ, նա երբեք չի համաձայնի,— ասաց Ռոզան:

— Ի՞նչ անենք:

— Իսկ ես նախատեսել էի, որ կմերժի, և մինչ նա բանտի լուսամուտից խոսում էր հեծեալդորայի իններից մեկի հետ, ես բանալին վերցրի:

— Եվ այդ բանալին քեզ մո՞տ է:

— Ահա, պարոն Յան:

— Զավակս,— ասաց Կոռնելը,— ցույց տված այդ ծառայութեան փոխարեն ես ոչ մի պարգև չեմ կարող տալ, բացի այն Աստվածաշնչից, որը դու կգտնես իմ խցում. դա ազնիվ մարդու վերջին նվերն է: Հուսով եմ, որ դա քեզ երջանկություն կբերի:

— Շնորհակալություն, պարոն Կոռնել, ես դրանից երբեք չեմ բաժանվի,— ասաց աղջիկը:

Հետո ժպտալով, ինքն իրեն ավելացրեց.

— Ինչպիսի՞ դժբախտություն, որ ես կարգալ չգիտեմ:

— Աղմուկն ուժեղանում է, զավակս, ես կարծում եմ, որ մենք ոչ մի բոլոր չպետք է կորցնենք,— ասաց Յանը:

— Դե՛, գնանք,— և սքանչելի ֆրիսլանդուհին երկու հղբայրներին միջանցքով առաջնորդեց դեպի բանտի հակառակ կողմը:

Ռոզայի ուղեկցութեամբ նրանք տասներկու աստիճաններով ցած իջան, կտրեցին ատամնավոր պարիսպներով փոքրիկ բակը և, բացելով քարե կամարների տակ գտնվող դուռը, դուրս եկան բանտի հակառակ կողմը, մի ամալի փողոց, որտեղ նրանց սպասում էր իջեցրած ոտնատեղով կառքը:

— Շո՛ւտ, պարոններ, շո՛ւտ,— գոչեց վախեցած կառապանը:— Դուք լսո՞ւմ եք, թե նրանք ինչպես են աղաղակում:

Առաջինը Կոռնելին նստեցնելով կառք, Յանը դարձավ դեպի աղջիկը:

— Մնաս բարո՞ւ, զավակս,— ասաց նա,— բոլոր խոսքերը շատ քիչ կլինեն ին արտահայտելու մեր երախտագիտությունը: Հուսով եմ, աստված ինքը չի մոռանա, որ դու փրկեցի ես երկու մարդու կյանք:

Ռոզան պատկառանքով համբուրեց մեծ պենսիոնարիի մեկնած ձեռքը:

— Շուտ, շուտ,— ասաց նա,— կարծես թե դարպասն են կոտրում:

Յանը արագությամբ թռավ կառքի մեջ և գոչեց կառապանին.

— Դեպի Թու-Հեկ:

Այդ ուղեկալից ճանապարհը տանում էր դեպի Սխվենին. գեն փոքրիկ նավահանգիստը, որտեղ եղբայրներին սպասում էր ոչ այնքան մեծ մի նավ:

Երկու ուժեղ ֆլամանդական ձիերը քառատրոփ, քամու արագությամբ սլացան, տանելով երկու եղբայրներին: Ռոզան կանգնած հետևում էր նրանց, մինչև որ կառքը փողոցից դուրս եկավ:

Այնուհետև նա վերադարձավ, դուռն իր հետևից փակեց և բանալին գցեց ջրհորը:

Աղմուկը, որը Ռոզային ենթադրել տվեց, թե ամբոխը դարպասն է կոտրատում, իրոք որ լսվում էր փողոցից: Հեռացնելով հրապարակից Թիլիի հեծելազորին, ամբոխը հարձակվեց բանտի դարպասի վրա:

Խղճին հակառակ չգնալով, պետք է ասել, որ շնայած բանտապահ Գրիֆուսը համառորեն հրաժարվեց բացել բանտի դռները, բայց և այնպես պարզ էր, որ հակառակ իրենց ամբուլթյան, այդ դռները ամբոխի ճնշմանը չեն դիմանա: Մինչ վախից գունատված Գրիֆուսը մտածում էր այն մասին, թե արդյոք ավելի լավ չի՞ լինի, եթե նա չսպասի դարպասը կոտրելուն և, քանի ուշ չէ՝ բաց անի, մեկը զգուշությամբ դիպավ նրա թևքին: Գրիֆուսը շուտ եկավ ու տեսավ Ռոզային:

— Լսո՞ւմ ես, թե ինչպես են կատաղել,— ասաց նա:

— Նս նրանց այնքան լավ եմ լսում, հայր, որ ձեր փոխարեն...

— Դու կբացեիր, այնպես չէ՞...

— Ոչ, ես հնարավորություն կտայի նրանց դարպասը կոտրելու:

— Բայց այդ ժամանակ նրանք ինձ կսպանեն:

— Իհարկե, եթե միայն նրանք ձեզ տեսնեն:

— Իսկ ինչպե՞ս կարող են ինձ շտեմնել:

— Թաքնվեցեք:

— Որտե՞ղ:

— Գաղտնախցում:

— Իսկ դու՞, գալակս:

— Ես էլ կիջնեմ, հայր իմ: Մենք այնտեղ կթաքնըվենք, մինչև որ նրանք կհեռանան բանտից, և հետո միայն դուրս կղանք մեր թաքստոցից:

— Դու ճիշտ ես, սատանան տանի,— զոչեց Գրիֆուսը:— Զարմանալի է,— ավելացրեց նա,— որքան ողջամբատվյուն կա այդ փոքրիկ գլխիկում:

Դարպասը, ի ցնծություն մոլեզված ամբոխի, սկսեց ճոճուկ:

— Շտապե՛նք, հայր, շտապե՛նք,— բացականչեց աղջիկը, բացելով փոքրիկ դռնակը:

— Իսկ մեր բանտարկյալնե՛րը,— նկատեց Գրիֆուսը:

— Աստված նրանց օգնական, իսկ ինձ, հայր իմ, թույլ տվեք, ամենից առաջ հոգալ ձեր մասին,— ասաց մանկամարդ աղջիկը:

Գրիֆուսը հետեւեց աղջկան, և նրանց գլխավերևում դռնակը փակվեց հենց այն վայրկյանին, երբ խորտակված դարպասից ամբոխը ներս խուժեց:

Խուցը, որտեղ Ռուզան առաջնորդեց իր հորը, կոչվում էր գաղտնարան, և մեր երկու հերոսների համար, որոնց մենք միառժամանակ ստիպված ենք թողնել, դարձավ ապահով ապաստարան: Դրա գոյությունը մասին հայտնի էր միայն իշխանություններին: Այնտեղ, պահում էին խիստ վտանգավոր հանցագործների, երբ վախենում էին, որ նրանց սլառճառով կարող է խռովություն ծագել և կամ կարող է նրանց փախցնելու փորձ կատարվել:

Ամբոխը նետվեց դեպի բանտ, զոչելով:

— Մա՛հ դավաճաններին: Կախաղա՛ն Կոռնեյ դե Վիտին: Մա՛հ: Մա՛հ:

Զարդարարները

Երիտասարդը, որը շարունակում էր դեմքը թաքցնել իր լայնեզր գլխարկի տակ, շարունակելով հենվել սպայի թևին և շարունակելով թաշկինակով սրբել իր ճակատն ու շրթունքները, աննկատելի կանգնած էր Բյուլտենհոֆյան հրապարակի անկյունում՝ մի փակ խանութի դուրս ցցված տանիքի ստվերում, նայում էր մոլեգնած ամբոխին ու հետևում այն դեպքերին, որոնք նրա աչքի առաջ զարգանալով, թվում էր, թե արդեն մոտենում են իրենց վախճանին:

— Այո,— ասաց նա սպային,— ինձ թվում է, որ դուք ճիշտ էիք, վան Դեկեն. հրամանը, որը ստորագրել են սպորտն սլատգամալորները, իրոք որ կարող է Կոռնելի համար մահվան դատավճիռ դառնալ: Դուք լսո՞ւմ եք ամբոխին: Կարծեք թե շատ է զայրացած սպարտն դե Վիտերի դեմ:

— Այո,— սլատասխանեց սպան,— այսպիսի աղմուկ ու դռուցներ ես դեռ լսած չկամ:

— Թվում է, թե նրանք հասան մինչև մեր բանտարկյալի խուցը: Ապա մի լուսամուտից դուրս նայեք: Դա այն խցի պատուհանը չէ՞, որտեղ փակված էր Կոռնելը:

Եվ իրոք, մի տղամարդ կատաղած ջարդում էր այն խցի պատուհանի վանդակը, որից մի տասը բռնակ առաջ Կոռնելը հեռացել էր:

— Փախել է, փախել է,— գոչեց տղամարդը,— նա այլևս այստեղ չէ՞:

— Ինչպե՞ս թե այստեղ չէ,— հարցնում էին նրանք, որոնք վերջում լինելով՝ չէին կարողացել ներս ընկնել, այնքան որ բանտը լեփ-լեցուն էր մարդկանցով:

— Նա չկա՞, նա չկա՞,— մոլեգին կրկնում էր այն մարդը:— Այստեղ չէ, թաքնվել է:

— Ի՞նչ է ասում,— հարցրեց երիտասարդը գունատվելով, որին կոչում էին ձերդ մեծություն:

— Օ՛, տեր իմ, այն ինչ ասաց նա, մեծ երջանկություն կլինեիր, եթե միայն ճշմարիտ լիներ:

— Այո, իհարկե, իրոք որ մեծ երջանկություն կլիներ, եթե միայն այդպես լիներ,— նկատեց երիտասարդը:— Դժբախտաբար, այդպիսի բան լինել չի կարող:

— Բայց նայե՛ք,— ասաց սպան:

Բանախ պատուհաններում երևացին ուրիշ կատաղած դեմքեր, որոնք զայրույթից կրճտացնում էին ատամներն ու գոռում.

— Փախե՛լ է, փրկվե՛լ է: Նրան օգնել են թաքնվելու:

Փողոցում մնացած ամբոխը սարսափելի անեծքներով կրկնում էր. «Փրկվե՛լ են: Փախե՛լ են: Նրանց հետևի՛ց: Պետք է հասնել նրանց»:

— Տե՛ր իմ,— ասաց սպան,— Կոռնել դե Վիտը կարծես թե իրոք փրկվել է:

— Այո, բանտից՝ կարող է պատահել, սակայն նա դեռ քաղաքից դուրս չի եկել,— պատասխանեց երիտասարդը:— Այ, կտեսնեք, վան Դեկեն, որ քաղաքի դարպասները, որոնց վրա հույս է դրել այդ դժբախտը, փակ կլինեն:

— Իսկ մի՞թե հրաման է եղել քաղաքի դարպասները փակելու, տե՛ր իմ:

— Ոչ, չեմ կարծում: Ո՞վ կարող էր այդպիսի հրաման տալ:

— Այդ դեպքում ինչո՞ւ եք այդպես ենթադրում:

— Լինում են ճակատագրական պատահականություններ,— անփութ զայրույթ պատասխանեց երիտասարդը,— և ամենամեծ մարդիկ երբեմն զոհ են դառնում նման պատահականությունների:

Սպան զգաց, թե ինչպես իր մարմնով դող անցավ և հասկացավ, որ այսպես թե այնպես, թշվառ բանտարկյալի վերջը հասել է:

Այդ րոպեին, ինչպես ամպրոպի պայթյուն, լսվեց մոլեգնած ամբոխի ոռնոցը, որը համոզվելով, որ Կոռնել դե Վիտը բանտում չէ, բռնորոշին սանձազերծ էր եղել:

Այդ ընթացքում Կոռնելը և Յանը դուրս եկան մի լայն փողոց, որը տանում էր դեպի Տոլ-Հեկ և, որպեսզի իրենց կառքը որևէ կասկածի տեղիք չտա, կառապանին հրամայեցին ավելի դանդաղ քշել:

Սակայն, երբ կառապանը հասավ փողոցի մեջտեղը և երբ հեռվից տեսավ դարպասը ու զգաց, որ բանտը և մահը մնացին հետևում, իսկ առջևում ազատությունն է ու կյանքը, նա, անտեսելով ամեն զգուշութուն, ձիերին ամբողջ թափով բաց թողեց:

Հանկարծ նա կանգ առավ:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Յանը, զլուխը դուրս հանելով կառքի պատուհանից:

— Օ՛հ, պարոն,— գոչեց կառապանը,— այստեղ...— Հուզմունքից նա չկարողացավ խոսքը վերջացնել:

— Դե, ի՞նչ է պատահել,— հարցրեց մեծ պենսիոնարին:

— Դարպասը փակ է:

— Ինչպե՞ս թե փակ է: Սովորաբար ցերեկը չեն փակում:

— Ինքներդ նայեք:

Յան դե Վիտը դուրս նայեց կառքից և տեսավ, որ դարպասն իրոք փակ է:

— Քշիր,— ասաց նա,— ինձ մոտ է արտաքսման հրամանը, դռնապանը կբացի:

Կառքը նորից առաջ շարժվեց, սակայն զգացվում էր, որ կառապանի քիչ առաջվա վստահությունն այլևս չկար:

Երբ Յան դե Վիտը դուրս նայեց կառքից, նրան տեսավ ու ճանաչեց մի խանութպան, որն ինչ-որ պատճառով ուշացել էր և այժմ շտապում էր խանութը փակել ու հասնել Բյուտենհոֆյան հրապարակում գտնվող իր ընկերներին:

Նա զարմանքից աղաղակեց ու վազեց այն երկու մարդկանց հետևից, որոնք շտապում էին դեպի հրապարակ:

Մի հարյուր քայլ վազելով՝ նա հասավ այն երկուսին և սկսեց ինչ-որ բան բացատրել: Երեքը միասին կանգ առան և սկսեցին հետևել հեռացող կառքին, սակայն, ինչպես երևում է, նրանք լիովին հավատացած չէին, թե կառքում նրանք են:

Կառքը մոտեցավ դարպասին:

— Բա՛ց արեք,— գոչեց կառապանը:

— Բաց անեմ,— ասաց դռնապանն իր տնակի շեմքից,— բաց անեմ, բայց ինչո՞վ:

— Բանալիով, իհարկե,— ասաց կառապանը:

— Բանալիով, ճիշտ է, սակայն դրա համար պետք է
բանալի ունենամ:

— Ինչպես, դու շունկո դարպասի բանալի՞ն:

— Ո՛չ:

— Իսկ ի՞նչ է եղել:

— Իմ մոտից վերցրել են:

— Ո՞վ է վերցրել:

— Նա, ում որ ամենայն հավանականությամբ պետք էր,
որ քաղաքի սահմաններից ոչ ոք դուրս չգա:

— Բարեկամս,— ասաց մեծ պենսիոնարին, դուրս հանե-
լով գլուխը կառքի դռնից և որոշելով հայտնել իր ուլ լինե-
լը,— դարպասը պետք է բացել ինձ՝ Յան դե Վիտի համար և
իմ եղբոր՝ Կոռնելի համար, որին ես, որպես արտաքսվածի,
ուղեկցում եմ:

— Օ՛, պարոն դե Վիտ, ես՝ հուսահատ վիճակում եմ,—
մոտ վազելով կառքին, գռչեց դռնապանը,— սակայն երդվում
եմ պատվովս, որ բանալիները մոտիցս վերցրել են:

— Ե՞րբ:

— Այսօր առավոտյան:

— Ո՞վ:

— Մի նրիտասարդ, քսաներկու տարեկանի մոտ, գու-
նատ, նիհար:

— Իսկ ինչո՞ւ տվեցիք բանալիները:

— Որովհետև ձեռքին ուներ կնիքով և ստորագրությամբ
հաստատված մի հրաման:

— Իսկ ովքե՞ր էին ստորագրել:

— Մեր քաղաքապետարանի պարոնները:

— Այդպե՞ս,— հանդիստ ասաց Կոռնելը,— ինչպես
երևում է, մեզ անխուսափելի կործանում է սպասում:

— Զգիտե՛ս արդյոք, բոլոր տեղերում էլ այդ նախա-
վզուշական միջոցները ձե՞ռք են առնված:

— Այդ չգիտեմ:

— Շարժվենք,— ասաց կառապանին Յանը:— Աստված
հրամայում է անել ամեն ինչ՝ կյանք փրկելու համար: Քշի՛ր
դեպի մյուս դարպասները:

— Շնորհակալ եմ, բարեկամս, քո բարի նպատակների համար,— ասաց նա դռնապանին:— Նպատակները հավասարազոր են գործողութիւններին: Դու ուզում էիր մեզ փրկել, տիրոջ համար միևնույնն է, եթե՝ իրոք փրկած լինեիր:

— Ա՛խ,— գոչեց դռնապանը,— տեսե՛ք այնտեղ ի՞նչ է կատարվում:

— Քշի՛ր քառատրոփ մարդկանց այդ խմբի միջից,— հրամայեց Յանը կառապանին,— և շուռ արի ձախ փողոցով, դա մեր միակ հույսն է:

Խումբը, որի մասին խոսում էր Յանը, հավաքված էր հիմնականում այն երեք մարդկանց շուրջը, որոնք, ինչպես քիչ առաջ տեսանք, հայացքներով ուղեկցեցին կառքը: Մինչ Յանը խոսում էր դռնապանի հետ, խումբը մեծացաւ ու հասավ յոթ-ութ մարդու:

Շարունակ ավելացող մարդիկ բացահայտորեն թշնամաբար էին տրամադրւած կառքի տերերի նկատմամբ:

Հենց մարդիկ տեսան, որ ձիերը քառատրոփ քշում են իրենց վրա, նրանք շարվեցին փողոցի մեջտեղում և մահալները թափահարելով՝ սկսեցին աղաղակել: «Կանգնի՛ր, կանգնի՛ր»: Կառապանն էլ առաջ ձգվեց և սկսեց ձեռքի մտրակով աջ ու ձախ հարվածներ տեղալ: Վերջապես մարդիկ և կառքը բախվեցին:

Դե Վիտ եղբայրները կառքի մեջ ոչինչ չէին տեսնում: Սակայն նրանք զգացին, որ ձիերը ծառս եղան, և այնուհետև պզգացին ուժեղ հրոց: Մի վայրկյան կառքն օրորվեց և ամբողջութեամբ ցնցվեց, հետո նորից կարկտի նման տեղացող անեծքների ներքո առաջ սլացաւ, անցնելով ինչ-որ բանի վրայով:

— Օ՛հ,— ասաց Կոռնելը,— վախենում եմ, որ մենք դըժբախտ դեպքի պատճառ դարձանք:

— Քշի՛ր, քշի՛ր,— գոռում էր Յանը:

Սակայն, հակառակ այդ հրամանի, կառապանը հանկարծ կանգնեցրեց կառքը:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Յանը:

— Նայե՛ք,— ասաց կառապանը:

Յանը դուրս նայեց:



Փողոցի ծայրում, որով պետք է կառքն անցներ, երևաց Բյուլտենհոֆյան հրապարակի ամբոխը, որը փոթորկի նման, ոռնոցով խուժում էր նրանց վրա:

— Թո՛ղ ձիերն ու փախի՛ր,— ասաց կառապանին Յանը:— Այլևս անօգուտ է գնալը, մենք կործանված ենք:

— Ահա՛, ահա՛, նրանք,— միանգամից գոչեցին հինգ-հարյուր ձայներ:

— Այո՛, ահա՛ դավաճաններ, մարդասպաններ, ավազակներ:— Նրանց ձայնակցում էին կառքի հետևից վազող մարդիկ: Նրանք ձեռքերի վրա բերում էին իրենց ընկերոջ խեղված մարմինը, որը ցանկացել էր բռնել ձիերի սանձերից, սակայն ընկել էր սմբակների տակ: Եվ, ինչպես սղբալսերները զգացին, կառքը հենց այդ մարդու վրայով էլ անցել էր:

Կառապանը կանգնեցրեց կառքը, սակայն, չնայած իր տիրոջ պահանջին, կառքից չհեռացավ և նստած մնաց:

Կառքը մնաց դիմացից խուժող և հետևից վազող մարդկանց արանքում: Մի վայրկյան կառքը կարծես թե լողացող կղզու նման բարձրացավ հորդացող ամբոխից վեր:

Հանկարծ այդ լողացող կղզին կանգ առավ: Ինչ-որ մի դարբին մուրճով հարվածեց ձիերից մեկի գլխին և վերջինս շանթահարվածի նման փուլեց գետին:

Նույն այդ ժամանակ մոտակա տներից մեկի լուսամուտի խրկնափեղկը կիսաբացվեց, և կարելի էր տեսնել մի երիտասարդի գունատ դեմքն ու մռայլ աչքերը, որոնք ուշի-ուշով հետևում էին պատրաստվող հաշվեհարդարին:

Նրա հետևում երևաց սպայի համարյա նույնքան գունատ դեմքը:

— Օ՛, աստված իմ, աստված իմ, տեր իմ, հիմա ի՞նչ կլինի,— շշնջաց սպան:

— Իհարկե, մի սարսափելի տեսարան,— պատասխանեց առաջինը:

— Օ՛, նայեք, տեր իմ, նրանք դուրս քաշեցին կառքից մեծ պենսիոնարիին. նրանք ծեծում, խոշտանգում են նրան:

— Այո, այդ մարդկանց մոտ ինչ-որ կատաղի զայրույթ կա,— նկատեց երիտասարդը նույն անտարբեր տոնով, որը նա պահպանեց մինչև վերջ:

— Ահա նրանք կառքից դուրս են քաշում նաև Կոռնելին, այդքան փորձություններից արդեն խոշտանգված ու տանջված Կոռնելին: Օ՛, նայե՛ք, նայե՛ք:

— Այո, դա իրոք որ Կոռնելն է:

Սպան ոչ բարձր ճշաց և իսկույն երեսը շուռ տվեց: Կոռնելը դեռևս չէր հասցրել իջնել գետին, նա դեռ կանգնած էր կառքի ոտնատեղին, երբ երկաթե լիգի ուժեղ հարվածը ջախջախեց նրա գլուխը: Սակայն Կոռնելը նորից բարձրացավ, բայց անմիջապես էլ փուլեց գետին: Այնուհետև առջևի կանգնածները բռնեցին նրա ոտքերից ու քարշ տվին ամբոխի մեջ: Նրա մարմինն իր հետևից թողնում էր արյան հետք: Ամբոխը ցնծագին աղաղակով շրջապատեց Կոռնելին:

Երիտասարդը ավելի գունատվեց, չնայած թվում էր, որ հնարավոր չէ ավելի գունատ լինել, և մի պահ աչքերը փակեց: Սպան նկատեց ցավակցական այդ արտահայտությունը, որն առաջին անգամ այդ ընթացքում երևաց երիտասարդի դեմքին, և ցանկացավ օգտվել դրանից:

— Գնանք, տե՛ր իմ, գնանք,— ասաց նա,— նրանք հիմա մեծ պենսիոնարիին էլ կսպանեն:

Սակայն երիտասարդն արդեն բացել էր աչքերը:

— Այո,— ասաց նա,— այս ժողովուրդն անգութ է, վա՛յ այն մարդուն, որը նրան կդավաճանի:

— Տե՛ր իմ,— ասաց սպան,— գուցե որևէ հնարավորություն կա փրկելու այդ դժբախտներին, ձերդ մեծությունն դաստիարակին. հրամայեք, և ես, թեկուզ կյանքի գնով...

Վիլհելմ Օրանցին, նույն այդ երիտասարդը, շարագուշակ կնճռոտեց իր ճակատը, կամքի մեծ ուժով մեղմացրեց իջեցրած կոպերի տակ փայլող մռայլ կատաղության բոցը և պատասխանեց.

— Գնդապետ վան Գեկեն, խնդրում եմ, գնացե՛ք զորքերի մոտ և հաղորդե՛ք նրանց իմ հրամանը, համենայն դեպս, լինել ուղղամական պատրաստ վիճակում:

— Բայց ես ինչպե՞ս կարող եմ ձերդ մեծությանը թողնել մենակ, այս ավաղակների մեջ:

— Իմ մասին ինձնից ավելի մի՛ հոգացե՛ք,— չոր նկատեց արքայազնը:— Գնացե՛ք:

Սպան շտապ հեռացավ, որը ցույց տվեց ոչ այնքան նրա հնազանդությունը, որքան այն, որ նա ուրախ է հեռանալու և շտեմանելու երկրորդ եղբոր արգահատելի սպանությունը: Այն վայրկյանին, երբ նա դեռ չէր հասցրել իր հետեից փակել դուռը, Յանը, վերջին ճիգերը դործադրելով, հասավ պատշգամբին, որը տեղավորված էր այն տան դեմդիմաց, որտեղ թաքնվել էր նրա սանը: Յանը օրորվեց իր վրա չորս կողմից տեղացող հարվածներից:

— Եղբա՛յրս: Ու՛ր է իմ եղբայրը,— հառաչեց նա: Ինչո՞ւ մեկը մոլեգնած ամբոխից բռնեցքի հարվածով վայր զցեց նրա գլխարկը: Մյուսը նրան ցույց տվեց արյան մեջ շաղախված իր ձեռքերը: Այդ մարդը հենց նոր պատռել էր Կոռնելի որովայնը, որի դին քարշ էին տվել դեպի կախաղան, և շտապել էր այստեղ, որպեսզի առիթը չփախցնի մյուս եղբոր հետ էլ նույն ձևով վարվելու:

Յանը սրտամորմոք հառաչեց և աչքերը ծածկեց ձեռքերով:

— Ախ, դու աչքերդ ծածկո՞ւմ ես,— ասաց քաղաքացիական միլիցիայի զինվորներից մեկը,— ես դրանք կփորկեմ:

Եվ նա նիզակի սուր ծայրը խրեց նրա աչքի մեջ, արյունը դուրս ցայտեց:

— Եղբա՛յր,— գոչեց ղե Վիտը, փորձելով տեսնել, թե ինչ է կատարվել Կոռնելի հետ, սակայն նրա աչքերը լցված էին արյունով,— եղբա՛յր:

— Գնա՛ նրա հետեւից,— ոռնաց մի ուրիշ մարդասպան և Յանի քունքին մոտեցնելով հրացանը՝ ձգեց շնիկը։ Կրակոց շեղավ։ Այդ ժամանակ մարդասպանը շուտ տվեց իր պենքը, երկու ձեռքով բռնեց փողից և ամբողջ ուժով խզակոթով հարվածեց Յանի գլխին։

Յան դե Վիտը օրորվեց ու ընկավ նրա ոտքերի մոտ։

Սակայն վերջին ճիգ գործ պնելով, նա նորից բարձրացավ։

— Եղբա՛յր,— գռչեց նա այնպիսի աղերսալի ձայնով, որ երիտասարդը փակեց լուսամուտի փեղկը։ Արդեն տեսնելու ոչինչ չմնաց, քանի որ երրորդ մարդասպանը դիմացից կրակեց Յանի գլխին ու փշրեց նրա գանգը։

Յանն ընկավ և այլևս չբարձրացավ։ Այդ ժամանակ մարդիկ, տեսնելով, որ Յանը մեռած է, համարձակություն ստացան. սկսեցին հրացանից կրակել դիակի վրա, խփել մահակով, սրով կամ դանակով։ Յուրաքանչյուրը ծարավի էր նրա արյանը, յուրաքանչյուրն ուզում էր նրա հագուստից մի կտոր պոկել։ Երկու եղբայրները բզկտված էին, խոշտանգված ու այլանդակված։ Ամբոխը նրանց արյունաշաղախ, մերկ դիակները քարշ տվեց դեպի հապճեպ սարքած կախաղանը, որտեղ կամավոր դահիճները նրանց գլխիվայր նախեցին։

Այստեղ դիակների վրա հարձակվեցին ամենից պարշտիկները. քանի դեռ եղբայրները կենդանի էին, նրանք չէին համարձակվում դիպչել նրանց, իսկ հիմա այդ ստորները լղկտում էին դիակները. սլոկոսում էին մարմիններից կտշվի ու մսի կտորներ և քաղաքով մեկ շրջելով, տասը սուով վաճառում էին։

Մեղ հայտնի չէ՝ երիտասարդը տեսա՞վ արդյոք լուսամուտի փեղկերի ճեղքից հագիվ երևացող այդ պատկերը. սակայն այն վայրկյանին, երբ կախում էին երկու տանջամահ դիակները, նա ճեղքելով ամբոխը, որը խիստ զբաղված էր իր զվարճալի գործով, ուղևորվեց դեպի Տոլ-Հեկի դարպասը։

— Օ՛, պարոն,— բացականչեց դռնապանը,— դուք բերի՞ք բանալին։

— Այո, բարեկամս, ահա, — պատասխանեց երիտասարդը:

— Օ՛հ, ինչպիսի դժբախտություն, որ դուք գոնե կես ժամ առաջ չեկաք, — հառաչելով ասաց դռնապանը:

— Ինչո՞ւ, — ասաց երիտասարդը:

— Այն ժամանակ ես կարող էի դե Վիտերի համար բացել դարպասը: Դարպասը փակ գտնելով՝ նրանք ետ դարձան ու ընկան իրենց հետապնդողների ձեռքը:

— Բացե՛ք դարպասը, բացե՛ք դարպասը, — լսվեց ըստ երևույթին շափաղանց շտապող ինչ-որ մեկի ձայնը:

Արքայազներ շուռ եկավ ու ճանաչեց ղեդապետ վան Դեկենին:

— Այդ դս՛ւք եք, գնդապետ: Դուք դեռևս Հաագայից դուրս չե՞ք եկել: Շատ մեծ ուշացումով եք կատարում իմ կարգադրությունը:

— Տե՛ր իմ, — պատասխանեց գնդապետը, — արդեն երրորդ դարպասն է, որին մոտենում եմ և բոլորն էլ փակ են:

— Դե, հիմա այս հիանալի տղան ձեզ համար բաց կանի այս դարպասը: Բա՛ց արա, բարեկամս, — դարձավ նա ղեդապետին, որը զարմանքից ապուշ էր կտրել. նա լսեց, թե ինչպես ղեդապետ վան Դեկենը «տեր իմ» անվանեց այդ գունատ երիտասարդին, որի հետ քիչ առաջ ինքը սովորական ձևով խոսում էր:

Եվ, որպեսզի իր սխալն ուղղի, նա արագությամբ նետվեց դարպասը բանալու: Դռները ճոխնշով ետ գնացին:

— Ձերդ մեծությունը չե՞ր ցանկանա արդյոք վերցնել իմ ձին, — հարցրեց գնդապետը Վիլհելմին:

— Շնորհակալ եմ, գնդապետ, իմ ձին այստեղից մի քանի քայլի վրա սպասում է ինձ:

Եվ պրպանից հանելով ոսկյա սուլիչը, որն այն ժամանակ ծառայում էր որպես կանչելու միջոց, նա սուր և երկաշատե սուլեց: Ի պատասխան դրա, արագությամբ մոտ եկավ ձիու վրա նստած ձիապանը, որը սանձից բռնած բերում էր մի ուրիշ ձի:

Վիլհելմն, առանց դիպչելու ասպանդակներին, թռավ ձիու թամբին ու սլացավ դեպի Լեյդեն տանող ճանապարհը: Հասնելով ճանապարհին, նա ետ նայեց:

Գնդապետը հետևում էր նրան:

Արքայազնը նշան արեց, որ վերջինս հավասարվի իրեն:

— Գիտե՞ք արդյոք, — ասաց նա, շարունակելով ընթացքը, — որ այդ ստորները Յան դե Վլտին էլ իր եղբոր հետ սպանեցին:

— Ա՛խ, ձերդ մեծություն, — տխուր պատասխանեց գնդապետը, — ես կգերադասեի, որ Հոլանդիայում փոխարքայություն հիմնելու ձեր ձգտումների ճանապարհին այդ երկու խոչընդոտները լինեին միայն:

— Իհարկե, ավելի լավ կլինեիր, — համաձայնեց արքայազնը, — եթե տեղի չունենար այն, ինչ տեղի ունեցավ: Բայց ինչ արված է, արդեն արված է, այդտեղ մենք մեղք չունենք: Արագ դնանք, գնդապետ, որսիսզի մինչև ուղերձի տեղ հասնելը Ալֆենում լինենք. ուղերձը, ամենայն հավանականությամբ, կառավարությունը չի հապաղի ինձ ուղարկելու:

Գնդապետը խոնարհվեց, առաջ թողեց արքայազնին և շարունակեց իր ընթացքը այն հեռավորության վրա, որով գնում էր մինչև խոսակցության սկսվելը:

— Այո, կուզենայի, — շարունակեց շշնջում էր Վիլհելմ Օրանյին, կիտելով հոնքերը, սեղմելով շրթունքներն ու խթանելով ձիուն, — կուզենայի տեսնել, թե ի՞նչ արտահայտություն կստանա լյուդովիկոս Արեգակնայինի՝ դեմքը, երբ իմանա, թե ինչպես են վարվել իր թանկագին բարեկամների՝ սլարոնները դե Վիտերի հետ: Օ՛հ, Արեգակնային, Արեգակնային: Իզուր չեն ինձ անվանում Լոակյաց ու Մթագնած. Արեգակնային, վախեցի՛ր քո ճառագայթների համար:

Նա՛մ արագ սլանում էր իր հավատարիմ ձիու վրա, այդ փոխարքան, որը դեռևս նախօրյակին վստահ չէր իր ուժին, սակայն, որի առջև հիմա Հաագայի բուրժուաները Յան և Կոռնել դե Վիտ եղբայրների դիակներից բարձրացրին հիմնավոր ու անպահով աստիճաններ:

¹ Լյուդովիկոս Արեգակնային — մականուն, որը պարզեց էին Լյուդովիկոս XIV-ին նրա կեղծավոր պալատականները:

Կակաչների սիրահարն ու նրա հարևանը

Այն ժամանակ, երբ Հաագայի բուրժուաները բզկտում էին Յանի ու Կոռնելի դիակները, Վիլհելմ Օրանցին վերջնականապես համոզվելով երկու եղբայրների մահվան մեջ, գնդապետ վան Դեկենի ուղեկցությամբ սլանում էր Լեյդեն տանող ճանապարհով. վերջինիս ցավակցական վերաբերմունքը տեղի ունեցած իրադարձություններին, խախտեցին նրա նկատմամբ Վիլհելմի տածած վստահությունը: Հենց նույն այդ ժամանակ հավատարիմ ծառա Կրակեն շկասկածելով, որ իր հեռանալուց հետո կարող էին այդպիսի հրեշավոր դեպքեր տեղի ունենալ, մի հրաշալի ձի նստած, ծառաշատ ճանապարհով սլանում էր առաջ, մինչև որ քաղաքից ու նրա մերձակա գյուղերից բավականաչափ հեռացավ:

Այստեղ իրեն զգալով վտանգից հեռու և շքանկանալով որևէ կասկած հարուցել, նա թողեց իր ձին և շարունակեց ճամփան՝ նավակից նավակ տեղափոխվելով, մինչև որ հասավ Դորդրեխտ: Նավակները ճարպկորեն լողում էին գետի ամենափոքր, ոլորուն վտակներով, որոնք իրենց խոնավ թևերով ողողում էին ուռիներով, եղեգնուտներով ու երփնեբլանդ ծաղիկներով ծածկված սքանչելի կղզյակները, ուր արևի տակ փալեցնելով իրենց մեջքները անհոգ արածում էին գեր անասունները:

Կրակեն հեռվից ճանաչեց Դորդրեխտը, ջրաղացներով ծածկված բլուրի լանջին տեղափոխված այդ ուրախ քաղաքը: Նա հեռվից տեսավ սպիտակով երիզված կարմիր, գեղեցիկ տները, որոնց աղյուսե հիմքերն ընկղմված էին ջրի մեջ: Դրանց բաց պատշգամբներում ծածանվում էին ռսկեկար, մետաքսե գորգերը, Հնդկաստանի ու Չինաստանի հիասքանչ ստեղծագործություններ, իսկ գորգերի մոտ, պատշգամբներից կախված էին կրկար կարթեր, որոնք ամեն օր լուսամուտներից ջուր նետվող ուտելիքների մնացորդներից հրապուրվող օձաձկների համար մշտական թակարդ էին ծառայում:



Կրակեն դեռևս նավակից, ջրաղացների սլտսլոզ թևերի միջով, բլրալանջին տեսավ մի բաց վարդագույն տուն, որը նրա գալու նպատակակետն էր: Տունը ցայտուն ուրվագծվում էր հսկայական թփերի մութ ֆոնի վրա, մինչդեռ տանիքի բարձր կատարը կորչում էր բարդիների դեղին տերևներում: Տունը կառուցված էր ալյուսե, որ նրա վրա ընկնող արևի ճառագայթները կարծես թե հավաքվելով ձաղարի մեջ, շորացնում, տաքացնում և անվտանգ էին դարձնում նույնիսկ այն մշուշը, որը յուրաքանչյուր առավոտ, շնայած տունը շրջապատող խիտ կանաչին, քամին գետից քշում բերում էր:

Այի դուրս դալով քաղաքային սովորական եռուզեռի պահին, Կրակեն իսկույն ևեթ ուղևորվեց դեպի այդ տունը: Հարկ ենք համարում ընթերցողին ծանոթացնել այդ տան արտաքին տեսքին, որը և հիմա մտադիր ենք անելու: Դա մի սպիտակ, մաքուր, փայլուն տնակ էր, որը ներսից ավելի մաքուր ու լվացված էր, քան դրսից էր թվում: Եվ այդ տանն ապրում էր մի երջանիկ մահկանացու:

Այդ երջանիկ մահկանացուն *rara avis*¹, ինչպես ասում է Յուլենալիսը², դոկտոր վան Բեուեն էր, Կոռնելի սանիկը:

¹ *Rara avis* (լատ.) — հազվագեյթ թռչուն:

² Յուլենալիս (մոտ. 55—մոտ. 132 թ. մ. թ.) — հռոմեական վերջին նշանավոր բանաստեղծ-երգիծաբան:

Նա մեր նկարագրած այդ տանն ապրում էր դեռևս մանկությունից, քանի որ այդ տունը պատկանում էր նրա հորը և պապին՝ Դորդրեխտ քաղաքի նշանավոր վաճառականներին:

Առետուր անելով Հնդկաստանի հետ, պարոն վան Բեռլեհայրը հավաքեց երեք հարյուրից մինչև չորս հարյուր հազար ֆլորին¹, որոնք 1668 թվականին վան Բեռլեհ-որդին՝ իր բարի ու սիրելի ծնողների մահից հետո գտավ բոլորովին նոր ու չգործածված վիճակում, չնայած այն բանին, որ ոսկիների մի մասը ձուլված էր 1640 թվականին, իսկ մյուսը՝ 1610 թվականին: Իսկ դա խոսում էր այն մասին, որ այդտեղ վան Բեռլեհ-հոր ֆլորիններից բացի, կային նաև վան Բեռլեհ-պապի ֆլորինները: Շտապենք նշելու, որ չորս հարյուր հազար ֆլորինը միայն առձեռն էր, Կոռնելիուս վան Բեռլեհի, այսպես կոչված, գրպանի դրամն էր, քանի որ նահանգում գտնվող իր կալվածքներից նա ամեն տարի ստանում էր մոտավորապես երկու հարյուր հազար ֆլորին:

Երբ Կոռնելիուսի հայրը, այդ պատվարժան քաղաքացին, մեռնում էր, որը պատահեց նրա կնոջ մահից ընդամենը երեք ամիս հետո (կինը վախճանվեց ավելի առաջ, կարծես թե թեթևացնելու համար ամուսնու մահվան ուղին, ինչպես իր կենդանության օրոք թեթևացնում էր նրա կյանքի ուղին), նա վերջին անգամ գրկելով իր տղային, ասաց.

— Եթե ցանկանում ես ապրել իսկական կյանքով, ապա կե՛ր, խմի՛ր և վատնի՛ր փողերը, քանի որ ամբողջ օրերով, առավոտից երեկո, փայտե աթոռին կամ կաշվե բազմոցին գամված, լաբորատորիայում կամ խանութում աշխատելը կյանք չէ: Երբ քո հերթը հասնի, դու նույնպես կմեռնես, և, եթե քեզ բխտ վիճակվի որդի ունենալու, ապա մեր ֆլորինները, այդ նոփ-նոր ֆլորինները, որոնք կշռել են միայն իմ, հորս և ձուլող վարպետի ձեռքերը, շատ կզարմանան՝ ընկնելով անծանոթ տերերի մոտ: Եվ որ գլխավորն է, մի հետևիր քո կնքահոր՝ Կոռնել դե Վիտի օրինակին, նա ամբողջովին

¹ Ֆլորին — նիդեռլանդական փողի միավոր: Հետագայում փոխարինվեց դուլդենով:

տարւել է քաղաքականությամբ և, անկասկած, վատ վախճան կ'ունենա:

Եւ պատվարժան պարոն վան Բեռլեն մեռավ, թողնելով իր որդուն՝ Կոռնելիուսին հուսահատ վիճակում, որը բոլորովին անտարբեր էր ֆլորինների նկատմամբ և բուն սիրով սիրում էր հորը: Այսպիսով, այդ մեծ սուս մեջ Կոռնելիուսը մնաց մենակ:

Իզուր էր Կոռնելիուսի կնքահայրը նրան առաջարկում պետական պաշտոններ, իզուր էր ջանում դալթակղել նրան փառքով. Կոռնելիուսը, որպեսզի մերժած չլինի իր կնքահոր առաջարկը, վան Ռյուտերի՝ հետ ուղևորվեց «Յոթ. նահանգներ» կոչվող ռազմական նավով, որն առաջնորդում էր հարյուր երեսունինը նավերից կազմված քարավանը. նշաֆալոր ծովակալը պատրաստվում էր մարտահրավեր նետել Անգլիայի ու Յորանսիայի միացյալ ռազմական ուժերին: Կոռնելիուսը ընդամենը մեկ հրացանի կրակոցի հեռավորությամբ մոտեցավ «Արքայազն» ռազմանավին, որի վրա զրուներվում էր Անգլիայի թագավորի եղբայրը՝ Յորքի հերցոգը: Վան Ռյուտերի հարձակումը այդ նավի վրա այնքան կտրուկ էր ու ճարպիկ, որ Յորքի հերցոգը հաղիվ հասցերեց անցնել «Սրբ. Միքայելի» տախտակամածը. Կոռնելիուսն ականատես եղավ, թե ինչպես «Սրբ. Միքայելը», հոլանդական արկերից ջարդված ու խարխլված, շարքից դուրս եկավ. նա տեսավ, թե ինչպես հօդս ցնդեց «Կոմս դե Սանվիկ» նավը և կրակի բոցերում ու ջրի ալիքների մեջ կործանվեցին չորս հարյուր նավաստիներ. նա համոզվեց, որ վերջ ի վերջո քսան նավերի խորտակումից, երեք հազար սպանված, հինգ հազար վիրավոր ունենալուց հետո մարտի վախճանը, այնուամենայնիվ, մնաց անորոշ, յուրաքանչյուր կողմ իրեն էր համարում հաղթող, և ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ ամեն ինչ պետք էր սկսել սկզբից, քանզի այդ ամբողջից մնաց միայն այն փաստը, որ ծովային ճակատամարտերի թվում ավելացավ մի նոր՝ Սուտվուդական

¹ Վան Ռյուտեր — հոլանդական նշանավոր ծովակալ. պատերազմների շրջանում ղեկավարում էր նավատորմը:



հրվանդանի ծովամարտ անունը. նա հասկացաւ, թե մարդը որքան ժամանակ է կորցնում այդ աղմուկ-աղաղակի մեջ, և, երբ մյուսները իրար կոտորում էին, նա փորձում էր աչքերն ու ականջները փակելով, մտածել: Հենց այդ ժամանակ էլ կոռնելիուսը հրաժեշտ տվեց վան Ռյուտերին, ամբարտակների գլխավոր տեսչին և իր փառքին: Նա ընկաւ մեծ սլեն-սիոնարիի ոտքերը, որի նկատմամբ ինքը խորին հարգանք էր տածում, և աղաչեց, որպեսզի վերջինս թույլ տա իրեն վերադառնալու Դորդրեխտի իր տունը: Եվ նա՝ զինված

վաստակած հանգստի իրավունքով, վերադարձավ իր քսանութ տարիներով, Երկաթն առողջությամբ, խորաթափանց հա-
յացքով և այն համոզմունքով, որն ավելի թանկ արժեք, քան
նրա ամբողջ ունեցվածքը՝ չորս հարյուր հազար ֆլորին կա-
րողությամբ և տասը հազար ֆլորին եկամուտով, մի համոզ-
մունքով, որ բախտը մարդուն ավելի շատ բան է շնորհել,
քան այդ անհրաժեշտ է երջանիկ լինելու համար և բավա-
րար է, որպեսզի երջանկություն չլինի:

Այդ պատճառով, ձգտելով իրեն համար իր ճաշակով բա-
րեկեցություն ստեղծել, Կոռնելիուսն սկսեց ուսումնասիրել
բույսերն ու միջատները: Նա հավաքեց ու դասակարգեց
կղզիների ամբողջ բուսականությունը, կազմեց ամբողջ նա-
հանգի միջատների հավաքածուն, գրեց դրանց մասին
տրակտատ, ինքն իր ձեռքով նկարադարձեց և վերջապես, չի-
մանալով ինչպես վատնի իր պարապ ժամանակը և, որ հշի-
խավորն է՝ փողերը, որոնց քանակը սարսափելի շափով ավե-
լանում էր, նա սկսեց ընտրություն կատարել իր երկրում և
իր դարաշրջանում տարածում գտած ամենաթանկ և ամենա-
ընտիր հրապուրանքների մեջ: Նա սիրեց կակաչներ:

Ինչպես հայտնի է, դա մի շրջան էր, երբ ֆլամանդա-
ցիները և փորթուգալացիները, ծաղկամշակման այդ ձևի
մեջ մրցելով իրար հետ, հասան բառացիորեն մինչև կա-
կաչների աստվածացմանը¹ և արևելքից բերած այդ ծաղկի
հետ վարվում էին այնպես, որ ոչ մի բնադետ երբեք չէր
համարձակվի նույնն անել մարդկային ցեղի հետ, վախենա-
լով, որ կշարժի աստվածների նախանձը:

Շուտով ամբողջ նահանգում, Իորդրեխտից մինչև Մոնս,
խոսակցության նյութը միայն պարոն վան Բեուլեի կակաչ-
ներն էին: Նրա թմբերը, ոռոգող ջրանցքները, շորանոցները,
նրա սոխուկների հավաքածուները գալիս էին նայելու այն:

¹ Կակաչ — դեղեցիկ ծաղիկներով, սոխարմատային, բաղամայ բույս:
Վայրի տեսակները մեծ տարածում ունեն Հարավային Եվրոպայում ու
Ասիայում: Կակաչի դեկորատիվ տեսակները Եվրոպա բերվեցին Թուրքիա-
յից, XVI դարի կեսերին: Նիդեռլանդներում կակաչների աճեցումը մասսա-
յական դարձավ: XVII դարում «կակաչամոլությունը» հասավ իր գագաթ-
նակետին: Կակաչների մշակման հիմնական կենտրոնը Հաադեմն է:

պես, ինչպես երբևէ հռոմեական նշանավոր ճանապարհորդները գնում էին տեսնելու Ալեքսանդրիայի գրադարաններն ու պատկերասրահները:

Վան Բեռլեն սկսեց նրանից, որ իր ամբողջ տարեկան եկամուտը ծախսեց հավաքածու ձեռք բերելու վրա. այնուհետև հավաքածուն ավելի հարստացնելու համար նա դիմեց իր նոր ֆլորինների օգնությանը և նրա ջանքերը պսակվեցին հաջողությամբ: Կոռնելիուսը աճեցրեց հինգ նոր տեսակի կակաչներ, որոնց անվանեց. մեկը՝ ի հիշատակ իր մոր՝ «Ժաննա», մյուսը՝ իր հոր ազգանունով՝ «Բեռլե», երրորդը, ի պատիվ իր կնքահոր, կոչեց «Կոռնել»: Մյուսների անունները չենք հիշում, սակայն, եթե հետաքրքրվողներ լինեն, նրանք, անկասկած, կգտնեն այն ժամանակվա կատալոգներում:

1672 թվականի սկզբներին Կոռնել դե Վիտը եկավ Դորդրեխտ, որպեսզի երեք ամիս անցկացնի իր հին, տոհմական տանը, քանի որ, ինչպես հայտնի է, ոչ միայն Կոռնելն էր Դորդրեխտում ծնվել, այլև դե Վիտերի ամբողջ տոհմը ծնունդ էր առնում այդ քաղաքից:

Հենց այդ ժամանակ Կոռնելի աստղը սկսեց փայլել, Վիլհելմ Օրանցու խոսքերով ասած, անժողովրդականությանամբ: Սակայն իր հայրենակիցների համար, Դորդրեխտ քաղաքի բարեհոգի բնակիչների համար, նա դեռևս այնպիսի հանցագործ չէր, որ արժանի լիներ կախաղանի, չնայած նրանք նույնպես գոհ չէին Կոռնելի չափազանց կտրուկ հակաօրանժիստական հայացքներից. բայց և այնպես, հպարտանալով նրա անձնական բարեմասնություններով, նրանք կազմակերպեցին հանդիսավոր դիմավորում:

Շնորհակալություն հայտնելով իր համաքաղաքացիներին, Կոռնելը գնաց նայելու իր հայրենի տունը և կարգադրեց, որ մինչև տիկին դե Վիտի և երեխաների գալը որոշ վերանորոգումներ կատարվեն: Այնուհետև նա ուղևորվեց իր սանիկի տունը, որը, ամենայն հավանականությամբ, միակ մարդն էր ամբողջ Դորդրեխտում, որը չգիտեր, թե ամբարտակների գլխավոր տեսուչը այցելության է եկել իր հայրենի քաղաքը: Որքան Կոռնել դե Վիտը իր նկատմամբ ատեղություն էր առաջացնում, սերմանելով, այսպես կոչված,

չարորակ գաղափարներ, որոնք անվանվում էին քաղաքական կրքեր, այնքան վան Բեռլեն ձեռք էր բերում համընդհանուր համակրանք՝ բացարձակասպես կտրված լինելով քաղաքականությունից և ամբողջովին տարվելով իր կակաչներով:

Վան Բեռլենին սիրում էին նրա բանվորները, ծառաները, և նա չէր պատկերացնում անգամ, որ աշխարհիս երեսին կարող է լինել մի մարդ, որը մյուսին վատ ցանկանա:

Սակայն, համոթ մարդկության, Կոռնելիուս վան Բեռլեն, ինքն էլ չկասկածելով այդ, մի թշնամի ուներ, որն ավելի կատաղի էր, ավելի մոլեգնած ու ավելի անհաշտ, քան ամենակատաղի օրանժիստները, որոնք ամենից ավելի թշնամաբար էին տրամադրված Կոռնել դե Վիտի և նրա եղբոր՝ Յանի դեմ:

Հրապուրվելով կակաչներով, Կոռնելիուսը դրանց վրա սկսեց ծախսել իր տարեկան եկամուտից բացի, նաև իր հորից մնացած ֆլորինները:

Դորդրեխտում վան Բեռլեի հետ պատը պատին կից ապրում էր մի քաղաքացի՝ Իսահակ Բոքստել անունով, որը հենց սկզբից էլ հրապուրվել էր այդ նույն գործով և միայն «կակաչ» խոսքից ընկնում էր արտակարգ ոգեշնչված վիճակի մեջ:

Բոքստելին, սակայն, բախտ չէր վիճակվել վան Բեռլեի նման հարուստ լինելու: Մեծ դժվարություններով, մեծ համբերատարությամբ և աշխատանքով նա Դորդրեխտի իր տան այգում սկսեց կակաչներ մշակել: Համաձայն կակաչագիտության բոլոր կանոնների, նա մշակեց հողը և իր թմբերին տալիս էր այնքան ջերմություն ու խոնավություն, որքան այգեգործության մեջ ընդունված էր:

Իսահակը գիտեր իր ջերմոցների ջերմության աստիճանը մինչև մեկ քսաներորդի ճշտությամբ: Նա ուսումնասիրել էր քամու ճնշման ուժը, իր մոտ սարքել էր այնպիսի հարմարանքներ, որոնց շնորհիվ քամին միայն աննշան կարող էր տատանել նրա կակաչները:

Նրա կակաչները սկսեցին դուր գալ: Դրանք գեղեցիկ էին և նույնիսկ նրբաճաշակ: Շատ սիրողներ էին գալիս Բոքստելի կակաչները տեսնելու: Վերջապես, Բոքստելն

աճեցրեց կակաչների մի նոր տեսակ, որին տվեց իր անունը: Այդ կակաչը մեծ տարածում ստացավ, նվաճեց Ֆրանսիան, հասավ Իսպանիա և թափանցեց նույնիսկ Փորթուգալիա: Դոն Ալֆոնս VI¹ թագավորը, որը Լիսաբոնից արտաքսվել և ապրում էր Տերսեյր կղզում և այնտեղ հրապուրվել էր կակաչների մշակմամբ, նայեց վերը հիշատակված «Բոքստելին» և ասաց. «Վա՛տ չէ»:

Երբ Կոռնելիուս վան Բեռլեն, իր նախորդ բոլոր զբաղմունքներից հետո, կրքոտորեն տարվեց կակաչներով, նա որոշ ձևափոխություններ մտցրեց իր տան մեջ, որը, ինչպես արդեն ասացինք, տեղավորված էր Բոքստելի տան կողքին: Նա իր սենյակներից մեկի վրա հարկ ավելացրեց, որով և սպասեցրեց Բոքստելի այդու ջերմաստիճանը մոտավորապես կես աստիճանով և, հետևաբար, կես աստիճանով ցրտացրեց, եթե չհաշվենք այն, որ իր նոր կառույցով Կոռնելիուսը կտրեց քամու մուտքը դեպի Բոքստելի այգին և դրանով խախտեց իր հարևանի բոլոր հաշիվները:

Վերջ ի վերջո, Բոքստելի տեսանկյունից, դրանք մանր բաներ էին: Նա վան Բեռլեին համարում էր նկարիչ, այսինքն՝ էություն մարդ, որը փորձում է բնության հրաշքները աղավաղված ձևով վերարտադրել կտավի վրա: Հիմա նա իր աշխատանոցի վրա կառուցել է մի հարկ, որպեսզի ավելի շատ լույս ունենա. դա նրա իրավունքն է: Պարոն վան Բեռլեն այնպիսի նկարիչ էր, ինչպիսի ծաղկաբույծ էր պարոն Բոքստելը, որն աճեցնում էր կակաչներ: Առաջինին արևը սկսեց էր իր նկարների համար, և նա կես աստիճան լույսը խեց պարոն Բոքստելի կակաչներից:

Իրավունքը վան Բեռլեի կողմն էր. Bene sit², Բացի դրանից, Բոքստելը տարզեց, որ լույսի չափազանց առատությունը կարող է վնասել կակաչներին, որ այդ ծաղիկն ավելի լավ է աճում ու ավելի լավ գունավորում է ստանում արևի առավոտյան և երեկոյան մեղմ ճառագայթների տակ, քան կեսօրվա կիզիչ տաքությունից:

¹ Ալֆոնս VI—Փորթուգալիայի թագավոր (1656—1667): Պալատական հեղաշրջման հետևանքով իր եղբայր Պեդրոյի կողմից գահընկեց արվեց:

² Bene sit (լատ.) — թող այդպես լինի:

Այսպիսով, նա համարյա թե իրեն երախտապարտ էր զգում վան Բեռլեի հանդեպ, որ ձրիաբար իրեն մի պատվար է տրամադրել արևից պաշտպանվելու համար:

Գուցե և դա այնքան էլ ճիշտ չէր. գուցե Բոքստեյն իր հարևանի մասին այն չէր ասում, ինչ մտածում էր: Սակայն մեծ հոգիները իրենց կյանքի ծանր վայրկյաններին ղարմանալի հենարան են գտնում փիլիսոփայության մեջ:

Բայց ավա՞ղ, ի՞նչ կատարվեց այդ դժբախտ Բոքստեյլի հետ, երբ նա տեսավ, որ նոր կառուցված հարկաբաժնի պատուհանները զարդարվեցին ծլած ու չծլած սոխուկներով, հողով լցված արկղներում աճող կակաչներով և, մի խոսքով, այն ամենով, ինչ որ բնորոշ է կակաչների մշակմամբ տարված մոլի մարդուն:

Այնտեղ կային պիտակների ամբողջ տուփեր, դարակներ, բաժանմունքներ ունեցող արկղներ, մետաղյա ցանցեր, որոնք պետք է ծածկեին այդ արկղները, որպեսզի անվտանգ ապահովվեր օդի անընդհատ մուտքը և չթափանցեին մրկներ, առնետներ, որոնք մեծ հետաքրքրասիրություն են ցուցաբերում հազար ֆրանկ արժողությամբ կակաչների նկատմամբ:

Բոքստեյլը քարացավ այդ ամբողջ հարստությունից, սակայն նա դեռ չէր գիտակցում իրեն հասած վտանդի ամբողջ մեծությունը: Վան Բեռլեին ճանաչում էին որպես մի մարդու, որը սիրում է գեղեցիկը, ինչ որ շոյում է աչքը: Նա ամենայն նրբությամբ ուսումնասիրել էր բնությունը և վերարտադրում էր իր նկարներում, որոնք այնքան ավարտուն էին, որքան Հերարդ Դոուի¹ նրա ուսուցչի նկարները, ինչպես նրա բնկերոջ՝ Միրիսի նկարները: Հնարավոր է, որ նա պատրաստվում էր նկարել մի ծաղկագործի սենյակ, որը մշակում է կակաչներ. հենց այդ նպատակով էլ, գուցե, իր աշխատանքում հավաքել է այդ ամբողջը:

Չնայած Բոքստեյլը հանգստացնում էր իրեն այդ խաբու-

¹ Հերարդ Դոու (1613—1675) — հոլանդական նշանավոր նկարիչ, Ռեմբրանդտի աշակերտը: Ֆրանս վան Միրիս (1635—1681) — հոլանդական նկարիչ, Հ. Դոուի աշակերտը:

սիկ մտքով, սակայն նա այրվում էր հետաքրքրասիրությունից: Մուլթն ընկնելուն պես նա սանդուղքը դնում էր ընդհանուր միջնապատի մոտ և բարձրանալով՝ սկսում էր հետևել, թե ի՞նչ են անում իր հարևան վան Բեռլեի մոտ: Նա համոզվեց, որ հողի այն հսկայական հատվածը, ուր առաջ դանադան բույսեր էին ցանված, այժմ փորված է և բաժանված թմբերի: Հողը խառնված է գետաջին տիղմի հետ, մի խառնուրդ, որը ամենանպաստավորն է կակաչների համար. ամբողջ այդ հատվածը ծածկված է ճիմով, որպեսզի կանխվի հողի հոսքը: Բացի այդ, Բոքստելը համոզվեց, որ թմբերի տեղաբաշխումը այնպիսին է, որպեսզի դրանք կարողանան ջերմանալ արևի ծագող և մայր մտնող ճառագայթներից և պաշտպանվեն կեսօրվա այրող արևից: Ջրի պաշարը բավարար է և այն էլ այդքան մոտ: Ամբողջ հողամասը նայում է արավ-արևմուտք, մի խոտքով, հաշվի են առնված բոլոր այն պայմանները, որոնք անհրաժեշտ են ոչ միայն հաջողության հասնելու, այլև դործն ավելի կատարելագործելու համար:

Այլևս կասկած չէր կարող լինել. վան Բեռլեն սկսել էր կակաչներ մշակել:

Հենց նույն վայրկյանին Բոքստելը պատկերացրեց, թե ինչպես այդ գիտնական մարդը, իր շորս հարցուր հազար ֆլորին կապիտալով և տասը հազար տարեկան ռենտայով կօգտագործի իր բոլոր ունակություններն ու իր բոլոր հնարավորությունները կակաչներ աճեցնելու համար:

Բոքստելը աղոտ, բայց շատ մոտ ապագայում կանխատեսում էր նրա հաջողությունը և նախօրոք զգաց այնպիսի տանջանքներ, որ նրա ձեռքերը թուլացան, ոտքերը փայտացան և նա հուսահատության մեջ սանդուղքներից տապալվեց ներքև:

Այդպես ուրեմն, նշանակում է ոչ թե կակաչներ նկարելու համար էր վան Բեռլեն նրանից խլել կես աստիճան ջերմությունը, այլ իսկական կակաչներ աճեցնելու համար: Այդպես ուրեմն, վան Բեռլեն կունենա հիանալի լուսավորություն և, բացի դրանից, ընդարձակ, պայծառ և լավ օգափոխիչով հագեցված սենյակ, որտեղ կպահի իր սոխուկներն ու կակաչ-

ների ծիլերը. այդ շքեղությունից ինքը՝ Բոքստեւը, զրկված է, և այդ նպատակի համար նա ստիպված զոհել էր իր սեփական ննջարանը, որպեսզի մարդկային մարմնից արտագրվող գոլորշիացումը բույսին չվնասի, իսկ ինքը քնում էր վերնահարկում:

Այդպես ուրեմն, պատը՝ պատին, դուռը՝ դռանը կպած ապրում էր մի հակառակորդ, մրցակից գուցե և հաղթող: Այդ մրցակիցը ոչ թե ինչ-որ մի տղա է, աննշան այգեգործ, այլ հայտնի մարդ, Կոռնել դե Վիտի սանիկը: Ինչպես երևում է, Բոքստեւը հնդկական Պոր թագավորից¹ ավելի քիչ ողջամիտ էր, որը Ալեքսանդր Մակեդոնացուց հաղթվելով, մխիթարվում էր նրանով, որ իրեն հաղթողը այդպիսի մի հռչակավոր անձնավորություն է:

Իրոք, ի՞նչ կլինի, եթե օրերից մի օր վան Բեռլեն հայտնագործի կակաչի մի նոր տեսակ և դա անվանի Յան դե Վիտ, այն բանից հետո, երբ առաջին տեսակն արդեն կոչել է Կոռնել: Զէ՞ որ շարությունից ուղղակի կարելի է խեղդվել:

Այդպիսով՝ իր նախանձոտ կանխագուշակությամբ, Բոքստեւը՝ նման սեփական դժբախտությունը գուշակող մարգարեի, արդեն տեսնում էր այն, ինչը պետք է տեղի ունենար:

Եվ ահա, անելով այդ հայտնագործությունը, նա անցկացրեց իր կյանքի ամենասարսափելի գիշերներից մեկը, որը միայն կարելի էր պատկերացնել:

6

Կակաչների սիրահարի ատելությունը

Այդ վայրկյանից Բոքստեւին համակեց ոչ թե հոգսը, այլ երկյուղը: Երբ մարդ աշխատում է որևէ նվիրական գաղափարի իրականացման համար, ապա այդ նրա հոգուն ուժ և

¹ Ալեքսանդր Մակեդոնացու ճակատամարտը հնդկական ռաջա Պորի հետ տեղի ունեցավ 326 թ. մ. թ. ա. Հյուսիսային Հնդկաստանում գտնվող հնագույն Նիկեյ քաղաքի մոտ:

վեհուկությունն է ներարկում, իսկ մարմինը դարձնում է ուժեղ: Սակայն Բոքստելը կուրցրեց հենց դրանք, մտածելով սոսկ այն վնասի մասին, որ կարող է իրեն հասցնել հարևանի մտահուպումը:

Վան Բեռլեն, ինչպես որ պետք էր ենթադրել, գործի դրեց իր ամբողջ բնական ձիրքն ու հրաշալի ունակությունները և հասավ հիանալի արդյունքների՝ աճեցնելով գեղեցիկ կակաչներ:

Կոռնելիուսը մեծ հաջողությամբ, քան որևէ մեկը Հաառլեմում և Լեյդենում (քաղաքներ, որոնք հայտնի էին իրենց ամենանպաստավոր հողով ու կլիմայով) հասավ այն բանին, որ աճեցրեց խիստ բաղմբերանգ ու բաղմաձև կակաչներ և, այսպիսով, մեծ չափով ավելացրեց կակաչների տեսակները:

Նա միամիտ, սակայն տաղանդավոր այն ուղղության հետևորդներից էր, որ դեռևս VII դարից առաջնորդվում էր հետևյալ նշանաբանով.

«Արհամարհել ծաղիկները, նշանակում է վիրավորել աստծուն»:

Սա մի նախադրյալ էր, որի հիման վրա կակաչների սիրահարները 1653 թվականին կառուցել էին հետևյալ սիլլոգիզմը¹.

«Արհամարհել ծաղիկները, նշանակում է վիրավորել աստծուն: Կակաչները բոլոր ծաղիկների մեջ ամենագեղեցիկն են: Հետևաբար, ով որ արհամարհում է կակաչները, նա անչափ վիրավորում է աստծուն»:

Այս դատողության հիմքի վրա Հոլանդիայի, Ֆրանսիայի,

¹ Սիլլոգիզմ — տրամաբանական մտահանգում, բաղկացած երկու նախադրյալներից, այսինքն՝ դատողություններից, որոնք եղրակացույթյան համար հիմք են ծառայում (օրինակ, բոլոր քառանկյունիներն ունեն շորս կողմեր, քառակուսին քառանկյունի է, հետևապես, քառակուսին ունի շորս կողմեր): Միջնադարյան սխոլաստ-գիտնականները փիլիսոփայական մտահանգումների մեթոդները ձգտելով օգտագործել քրիստոնեական կրոնի ամրապնդման համար, հաճախ բնության կենդանի ուսումնասիրությունը նենդափոխում էին սիլլոգիզմով: Տարածում էր գտել, օրինակ, այսպիսի սիլլոգիզմ. Իվանը մարդ է: Բոլոր մարդիկ իրենց բնույթով մեղավոր են: Հետևապես՝ Իվանը մեղավոր է:

Փորթուգալիայի (էլ շենք խոսում Յեյլոնի, Հնդկաստանի և Զինաստանի ծաղկաբույծների մասին) շորս թե հինգ հազար ծաղկաբույծներ չար ուժի զորութեամբ կարող էին ուխտադրութենք, հերետիկոսներ և մահվան արժանի հայտարարել հարյուր միլիոնավոր մարդկանց, որոնք անտարբեր են կակաշների նկատմամբ։ Եվ, չպետք է կասկածել, որ Բոքըստեյլը, շնայած վան Բեուլեի նկատմամբ նրա տաժաժ մահացու ատելութեանը, այս բանում նրա հետ ձեռք-ձեռքի տված կգործեր։

Այսպես ուրեմն, վան Բեուլեն հասել էր մեծ հաջողությունների, և նրա մասին սկսեցին ամենուրեք այնքան խոսել, որ Բոքստեյլը հոլանդացի նշանավոր ծաղկաբույծների շարքից ընդմիշտ չբացավ, իսկ Դորդրեխտի այգեդործության առաջին ներկայացուցիչը դարձավ համեստ ու բարեհոգի գիտնական Կոոնելիուսը։ Այսպես՝ մի բողբոջից աճում են հրաշագեղ ճյուղեր, ու մի շորս թերթանի անդույն մասրենուց իր սկիզբն է առնում իսկական բուրավետ վարդը։ Այսպես՝ երբեմն թագավորական սոհմի արմատները դուրս են գալիս փայտահատի տնակից կամ էլ ձկնորսի խարխուլ խրճիթից։

Վան Բեուլեն ամբողջովին կլանված ծաղիկների աճեցնելու և հավաքելու իր աշխատանքով, վան Բեուլեն, որ արդեն հոշակվել էր Եվրոպայի ծաղկադործության մեջ, նույնիսկ չէր էլ կասկածում, որ իր կողքին ապրում է մի դժբախտ, գահազրկված թագավոր, որի գահին տիրացել է։ Նա հաջողութեամբ շարունակում էր փորձերը և երկու տարվա ընթացքում իր թմբերը ծածկեց հիասքանչ ստեղծագործություններով, որոնց հավասարը դեռ ոչ ոք ոչ մի ժամանակ չէր ստեղծել, բացառությամբ թերևս Շեքսպիրի ու Ռուբենսի¹։

Եվ ահա, պատկերացում ունենալու համար այն տան-

¹ Կակաշների համեմատությունը անգլիական խոշորագույն դրամատուրգ Վիլյամ Շեքսպիրի (1564—1616) և ֆլամանդական նկարիչ Պետեր Պաուլ Ռուբենսի (1577—1640) ստեղծագործությունների հետ պատկերացում է տալիս այն «կակաշամոլության» մասին, որ XVII դարում տիրում էր Հոլանդիային։



ջահարի մասին, որին Դանթեն¹ մոռացել էր տեղ տալ իր «Դժոխքում», բավական էր միայն մի հայացք դրել Բոքստեյի վրա։ Այն ժամանակ, երբ վան Բեռլեն ջրում, սպարարտացնում ու մշակում էր իր թրմբերը, երբ նա ծնկի եկած ճիմով ծածկված թմբերի եզրին, ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում էր ծաղկող կակաչի տերևների յուրաքանչյուր երակը, խորհելով այն մասին, թե ի՞նչ նոր տեսակներ կարելի է դրանից ստանալ, ինչպիսի՞նոր ծաղիկներ կարելի է զուգավորել, այդ նույն ժամանակ Բոքստեյը, թաքնված ոչ մեծ թխկիի հետևում, որը տնկել էր պա-

րլսպի մոտ և իր համար ծառայեցնում էր որպես թաքստոց, բորբոքված աչքերով ու փրփուրը բերնին, հետևում էր իր հարեանի յուրաքանչյուր շարժումին։ Նվ երբ վերջինս նրան ուրախ ու գոհ էր երևում, երբ հարեանի դեմքին որսում էր ժպիտ կամ տեսնում էր, որ վերջինիս աչքերն ուրախությունից փայլում են, նա այնպիսի անեծքներ, այնպիսի կատաղի սպառնալիքներ էր թափում. հարեանի հասցեին, որ նույնիսկ անհասկանալի է, թե ինչպես թունավոր նախանձի ու

¹ Դանթե, Ալիգերի (1265—1321) — իտալացի խոշոր հումանիստ-բանաստեղծ, «Աստվածային կատակերգություն» պոեմի հեղինակ, որը բաղկացած է երեք մասից. «Դժոխք», «Քավարան», «Դրախտ»։ Պոեմի առաջին մասում Դանթեն նկարագրում է դժոխքում մեղավոր հոգիների կրած սարսափելի տանջանքները։ Նրանց մեջ կային հայրենիքի դավաճաններ, մի քանի կաթոլիկ հոգևորականներ ու պապեր։

շարության այդ շունչը չէր թափանցում ծաղիկների ցողունների մեջ ու քայքայում, մեռցնում դրանք:

Քանի որ մարդկային հոգին պարուրած շարությունը խիստ արագ է աճում, ապա շատ շուտով Բոքստեին արդեն չէր բավարարվում նրանով, որ հետևում էր Կոռնելիուսի ամեն մի քայլին: Բոքստելը ցանկանում էր տեսնել նրա ծաղիկները. չէ՞ որ նա հոգով արվեստագետ էր, իսկ հակառակորդի հաջողությունները նրա հոգու նուրբ թելերն էին շոշափում:

Բոքստելը գնեց մի հեռագիտակ, որի օգնությամբ կարողանում էր Կոռնելիուսից ոչ պակաս հետևել ծաղկի ամեն մի փոփոխությանը՝ տնկելու վայրկյանից, երբ առաջին տարում հողի տակից երևում է մի գունատ ծիլ, մինչև այն վայրկյանը, երբ հինգ տարիների ընթացքում սկսում է ծնունդ առնել ու լցվել մի ազնվագույն, նրբագեղ կոկոն, և նրա վրա երևում են ապագա ծաղկի անորոշ երանգները, իսկ այնուհետև՝ երբ բացվում են ծաղկի թերթերը և, վերջապես, ծաղկաբաժակի գաղտնի գանձարանը:

Եվ քանի՜-քանի՜ անգամ դժբախտ, նախանձոտ այդ մարդը բարձրանում էր սանդուղքների վրա ու վառ Բեռլեի թմբերին տեսնում էր կակաչներ, որոնք կուրացնում էին նրան իրենց հրաշագեղ գեղեցկությամբ ու ճնշում էին իրենց կատարելությամբ:

Եվ ապա, վայրկենական հիացմունքից հետո, որը, համենայն դեպս, չէր կարողանում թաքցնել, նրան համակում էր հիվանդագին նախանձը, որը կրծում էր կուրծքը՝ վերածելով նրա սիրտը անվերջ տանջանքների մի օջախի:

Քանի՜ անգամ այդպիսի ըրտենքերին, որոնց նկարագրությունը գրչով անհնար է տալ, Բոքստելին համակել է գայթակղությունը՝ փշերով իջնել հարեանի բակն ու ջարդել բոլոր ծաղիկները, ատամներով կրծել կակաչների սոխուկները և, նույնիսկ, իր անսահման զայրույթի զոհը դարձնել հենց իրեն՝ տիրոջը, եթե վերջինս համարձակվեր պաշտպանել իր ծաղիկները:

Սակայն կակաչ սպանելը իսկական ծաղկագործի համար սարսափելի մի հանցագործություն է:

— Մարդ սպանելը դեռ ոչինչ:

Բայց և այնպես, վան Բեռլեի անընդհատ ու ամենօրյա հաջողութիւնները, որոնք նա ձեռք էր բերում մի տեսակ բնագոյով, Բոքստելին հասցրին շարութեան այնպիսի մոլուցքի, որ նրա մտքով անցաւ քարերով ու փայտերով ավերել իր հարեանի կապալները թմբերը: Սակայն նա վախենում էր, որ հաջորդ առաւոտյան տեսնելով այդ ավերածութիւնը, վան Բեռլեն կսկսի հետաքննութիւն կատարել և կբացահայտի, որ իր տունը տեղադրւած է փողոցից հեռու, որ XVII դարում երկնքից փայտեր ու քարեր շէն թափւում, ինչպես այդ լինում էր ամալեկիտները¹ շրջանում, որ հանցագործը, չնայած գործել է գիշերով, միևնույն է, կմերկացվի և ոչ միայն կպատժվի արդարադատութեամբ, այլև ամբողջ կյանքում եւրոպական բոլոր ժողկաթուծների աչքում պատվազուրկ կարվի: Այդ ժամանակ Բոքստելը որոշեց դիմել խորամանկութեան և գործադրել մի այնպիսի միջոց, որը իրեն չէր վարկաբեկի:

Ճիշտ է, նա երկար փնտրեց այդ միջոցը, սակայն, վերջին վերջո, գտաւ:

Մի անգամ գիշերով նա երկու կառվի հետևի թաթերը տասը ոտնաչափ երկարութեան պարանով կապեց իրար և պատի վրայից գցեց իր հարեանի ամենագլխավոր թմբի, կարելի է ասել արքայական թմբի ուղիղ մեջտեղը, որտեղ դրնւում էին ոչ միայն «Կոռնել դե Վիտը», այլև կաթնասպիտակւում ու ալ կարմիր «Բրաբանտացին», գորշավուն, վարմիր ու վառ կարմիր «Մարմսրյան», Հաառլեմում աճեցրած «Հրաշքը» և նաև «Կոլոմբին մուգ» և «Կոլոմբին բաց» կակաչները:

Բարձր պատից ցած ընկնելով՝ խելահեղ կենդանիները սկզբում թմբի վրա դեսուդեն վազելով ցանկացան տարբեր կողմեր փախչել, սակայն իրար կապող պարանը թույլ չտվեց: Զգալով, որ փախչելն անհնար է, նրանք վայրենի մլավոցով

¹ Ամալեկիտներ — քոչվոր ցեղեր, որոնք հարձակումներ էին գործում Հին Հրեաստանի վրա: Ավետարանի ավանդութեան համաձայն, «մահակներն ու քարերը, որ թափւում էին երկնքից», ջրհեղեղներն ու փոթորիկները, մրրիկը և մնացած տարերային աղետները ներկայացւում են որպէս աստվածային զայրույթի արդյունք:

սկսեցին դեսուդեն ընկնել՝ պարանով կոտրատելով ծաղիկները: Տասնհինգ րոպե այդպես կատաղի սլաքարելուց հետո, վերջապես նրանց հաջողվեց պարանը սլոկել և անհետանալ:

Բոքստելը, թխկենու հետև թաքնված, գիշերվա խավարի մեջ ոչինչ չէր տեսնում, սակայն երկու կատունների կատաղի ճշոցներից նա պատկերացրեց ավերածության ամբողջ պատկերը, և նրա սիրտը՝ թափելով իր մաղձը, խանդավառվեց:

Բոքստելի մեջ իր հասցրած վնասի արդյունքները տեսնելու ցանկությունն այնքան ուժեղ էր, որ նա մինչև առավոտ մնաց աչքուտեղ, որպեսզի սեփական աչքերով տեսնի, թե ի՞նչ վիճակում են գտնվում հարևանի թմբերը՝ կատուների գիշերային մարտից հետո:

Նա փայտացել էր վաղորդյան ցրտից, սակայն չէր դգում: Վրիժառության զգացմունքը նրան տաքացնում էր: Մրցակցի վիշտը նրա կրած բոլոր տանջանքների փոխհատուցումը կլիներ:

Արևի առաջին ճառագայթների հետ սպիտակ ծան դրոները բացվեցին: Երևաց վան Բեռլեն և գիշերն իր հարմարավետ անկողնում հաճելի երազներ տեսած մարդու ժպիտը երեսին՝ ուղևորվեց դեպի թմբերը:

Հանկարծ նա նկատեց, որ հողը, որը նախօրյակին հարթ էր ինչպես հայելի, դարձել է խորդուբորդ. հանկարծ նա նկատեց, որ իր կա՛կաչների համաչափ թմբերը խառնիխուռն վիճակում են, նման այն ղինվորների ջոկատին, որոնց մոտ ումբ էր պայթել:

Կտավի պես գունատվելով, նա նետվեց դեպի թմբերը: Բոքստելը հաճույքից գողում էր: Տասնհինգ թե՛ քսան կակաչ տրորված ու պոկոտված, ընկած էին գետնին, մի մասը թեքվել էին, մյուսները՝ բոլորովին ջարդվել և արդեն թառամել էին: Նրանց վերքերից հյութ էր կաթում, թանկարժեք արյուն, որը վան Բեռլեն կհամաձայներ իր սեփական արյան գնով պահպանել:

Ինչպիսի՜ անսպասելի ուրախություն վան Բեռլեի համար: Ինչպիսի՜ անասելի ցավ Բոքստելի համար: Այն շորենշանամոտ կակաչներից և ոչ մեկը, ոտոնց նկատմամբ էլ

հենց այդ նախանձ մարդը մահափորձ էր կազմակերպել, չէին վնասված: Դրանք վեհորեն բարձրացրել էին գլխիկները իրենց զոհված ընկերակիցների դիակների վրա: Դա արդեն բավական էր վան Բեռլենին մխիթարվելու համար: Դա արդեն բավական էր նենգ շարագործին հուսահատեցնելու համար: Նա իր գլխի մազերն էր փետում՝ տեսնելով շարագործությունների հետևանքները, շարագործություն, որը, սակայն, նպատակին չի հասել:

Վան Բեռլեն ողբալով իրեն հասած դժբախտությունը, որը սակայն, բախտի քմահաճ խաղով, կարող էր ավելի վատ հետևանքներ ունենալ, ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ի՞նչն էր դրա պատճառը. նա հարցուփորձ արեց և իմացավ, որ գիշերը լսվել են սարսափելի մլավոցներ: Ի միջի այլոց, նա ինքն էլ համոզվեց, որ այդտեղ կատուներ են մուտք գործել, նրանք ճակատամարտի դաշտում թողել էին իրենց ճանկերի հետքերը, զգզված մորթու մազը, որոնց ծայրերին, ինչպես նաև տրորված ծաղիկների թմբերին, դողդողում էին առավոտյան ցողի կաթիլները: Խուսափելու համար հետագայում նման դժբախտությունից, վան Բեռլեն կարգադրեց, որ այսուհետև այգեպանը գիշերի թմբերի մոտ:

Բոքստելը լսեց այդ: Նա տեսավ, թե ինչպես հենց նույն օրը սկսեցին պահակատուն կառուցել, և ճոհ, որ իրեն ոչ ոք չի կասկածում, և առաջվանից ավելի գրգռված երջանիկ հաղկագործի դեմ, սկսեց սպասել ավելի հարմար առիթի:

Այս բոլորը տեղի էր ունենում մոտավորապես այն ժամանակ, երբ Հաառլեմ քաղաքի կակաչներ սիրողների ընկերությունը մեծ պարգև էր նշանակել այն մարդուն, որը կաճեցնի, մենք չենք համարձակվում ասել կստեղծի, մի մեծ, սև կակաչ՝ առանց որևէ բծի. մի խնդիր, որը դեռևս չէր վիճակվել իրագործել ոչ մեկին և համարվում էր անլուծելի, բանի որ այդ ժամանակ բնության մեջ անգամ գոյություն չուներ նույնիսկ մուգ շագանակագույն կակաչ:

Եվ բոլորը համոզված սպասում էին, որ պարգև նշանակողները նույն հաջողությամբ, առանց որևէ բան վտանգելու, դրա չափը հարյուր հազար ֆլորինի փոխարեն կարող էին

նշանակել երկու միլիոն, քանի որ, միևնույն է, ոչ ոքի չէր հաջողվի այդ պահանջն իրականացնել:

Համենայն դեպս, աշխարհի բոլոր կակաշագետները հուզումնալից ապրումների մեջ էին: Որոշ սիրահարներ, չհավատալով հանդերձ դրա իրագործման հնարավորությանը, տարվեցին այդ գաղափարով, որովհետև այդպիսին է այգեգործի երեակայության ուժը: Նախօրոք համոզված լինելով իրենց ձեռնարկման անյուծելիության մեջ, նրանք, այնուամենայնիվ, մտածում էին սև կակաշի մասին, որը համարվում էր այնպիսի մի քիմեո, ինչպես Հորացիոսի սև կարապը կամ Ֆրանսիական լեգենդների սպիտակ կեռնեխը¹։

Վան Բեռլեն այն ծաղկագործների թվում էր, որոնք հրապուրվել էին այդ գաղափարով. Բոքստեյնը պատկանում էր նրանց թվին, որոնք մտածում էին, թե ինչպե՞ս օգտվեն դրանից:

Հենց որ այդ միտքը տեղավորվեց վան Բեռլեի խորաթափանց ու հնարամիտ գլխում, նա իսկույն ևեթ շատ հանգիստ սկսեց աշխատել այն ուղղությամբ, որպեսզի կարմիր գույնի կակաշը, որն ինքը արդեն մշակել էր, վերածի շագանակագույնի և, այնուհետև, շագանակագույնը՝ մուգ շագանակագույնի:

Հաջորդ տարում արդեն վան Բեռլեն ստացավ մուգ շագանակագույն երանգի կակաշ, և Բոքստեյն իր աչքերով տեսավ դրանք վան Բեռլեի թմբերին. մինչդեռ ինքը կարողացել էր ստանալ միայն բաց շագանակագույն երանգի ծաղիկ:

¹ Քիմեո — հին հունական դիցաբանության մեջ պատկերացվում է առյուծի գլխով, վիշապի պոչով և այծի մարմնով հրեշ: Փոխաբերական իմաստով՝ անիրագործելի երեակայություն, անիրականալի երազ:

Հին Հռոմում չգիտեին սև կարապների գոյության մասին, որոնք ապրում էին Ալստորալիայում: Այդ պատճառով Հորացիոսը իր բանաստեղծություններից մեկում Վեներա՝ աստվածուհու կերպարը կերտում է սև կարապներով լծված սպիտակ կառքի մեջ նստած:

Ֆրանսիական հին առասպելներում «սպիտակ կեռնեխը» հիշատակվում է մոտավորապես այն առումով, ինչպես մեզ մոտ՝ «սպիտակ աղումը»: Այստեղից էլ ֆրանսիական արտահայտությունը. «Հազվադեպ, ինչպես սպիտակ կեռնեխը»:

Հնարավոր է, որ ընթերցողներին օգտակար կլինեն ծանոթացնելու այն հիանալի տեսությունների հետ, որոնք ապացուցում են, որ կակաչները զանազան երանգներ են ստանում բնության ուժերի ազդեցության տակ. հնարավոր է, որ մեզ ևրախտապարտ կլինեին, եթե մենք հաստատեինք, որ ոչ մի անհնարին բան գոյություն չունի ծաղկաբույծի համար, որն իր տաղանդի ու համբերության շնորհիվ օգտագործում է արևի ճառագայթները, ջրի փափկությունը, հողի հյութը և օդի շարժումը: Սակայն մենք մտադիր չենք ընդհանրապես տրակտատ դրել կակաչների մասին, մենք որոշել ենք զրել մեկ որոշակի կակաչի պատմությունը և դրանով էլ կսահմանափակվենք, որքան էլ մյուս թեման գայթակալիչ լինի:

Բոքստելը իր հակառակորդի գերազանցությունից նորից խոցված, ծաղկագործության նկատմամբ սկսեց տածել անասելի վզվանք և, համարյա թե դժվելու աստիճանի հասնելով, ամբողջովին տարվեց իր հարևանին լրտեսելու գործով:

Նրա մրցակցի տունը կանգնած էր բաց տեղում: Արևով լուսավորված այգին, մեծ պատահաններով սենյակները, որոնց միջով դրսից կարելի էր տեսնել բոլոր արկղներն ու պահարանները, տուփերն ու պիտակները. այդ բոլորը հրաշալի երևում էին հեռագիտակով: Բոքստելի այգում հողի մեջ սոխուկները փառում էին, արկղներում տնկիները շորանում էին, թմբերին թառամում էին կակաչները, սակայն նա այլևս չխնայելով ո՛չ իրեն, ո՛չ իր տեղդությունը, հետաքրքրվում էր միայն նրանով, թե ի՞նչ է կատարվում վան Բեռլեի մոտ: Թվում էր, թե նա շնչում է միայն Կոռնելիուսի կակաչների ցողուններով, իր ծարավը հագեցնում է այն ջրով, որով վան Բեռլեն իր ծաղիկներն է ջրում, սովից փրկվում է՝ ճաշակելով փափուկ ու լավ մանրացրած հողը, որով հարևանը ծածկում է իր թանկարժեք սոխուկները: Սակայն աշխատանքի ամենահետաքրքրական մասը այգում չէր կատարվում:

Նրբ ժամացույցը զարկում էր գիշերվա ժամը մեկը, վան Բեռլեն բարձրանում էր իր լաբորատորիան, ապակեպատ մի սենյակ, որտեղ շատ հեշտությամբ թափանցում էր

Բոքստեղի հեռագիտակը: Հենց որ ցերեկվա լույսին, որը լուսավորում էր պատուհաններն ու պատերը, փոխարինում էր երեկոյան լույսը, Բոքստեղն արդեն ականատես էր լինում իր մրցակցի հանճարեղ հնարամասություններին:

Նա տեսնում էր, թե ինչպես վերջինս ցանում, ապա ջրում է սերմերը, որպեսզի դրանք զանազան երանգափոխությունների ենթարկի: Բոքստեղը տեսնում էր, թե ինչպես վան Բեռլեն այնուհետև տաքացնում է սերմերը, ապա թրջում ու միացնում այլ սերմերի հետ, չափազանց վարպետորեն, ինքնատիպ ու մանրակրկիտ կերպով սլատվաստելով դրանք: Նա մութ տեղում էր պահում այն սերմերը, որոնցից պետք է սև գույն ստանար և, դրան հակառակ, արևի լույսով կամ լամպով լուսավորում էր այն սերմերը, որոնք պետք է ունենային կարմիր գույն, իսկ ջրի արտացոլման լույսով լուսավորում էր այնպիսիները, որոնցից ստացվելու էին սպիտակ կակաչներ:

Այդ անմեղ կախարդությունը, որը մանկական երազների ու առնական հանճարի արդյունքն էր, այդ համբերատար ու համառ աշխատանքը, որի համար Բոքստեղն իրեն անընդունակ էր համարում, այդ ողջ կյանքը՝ իր մտքերով ու հուզվերով, ամբողջը, ամբողջը այդ նախանձոտ մարդու հեռագիտակի նյութ էր կազմում:

Տարօրինակ բան էր, որ արվեստի նկատմամբ ունեցած այդքան հետաքրքրասիրությունն ու սերը, այնուամենայնիվ, չէին մարում նրա վայրենի նախանձն ու վրիժառության ծարավը: Երբեմն վան Բեռլեի վրա ուղղելով իր հեռագիտակը, նա պատկերացնում էր, թե ինչպես ինքը հրացանից անլրեպ նշան է բռնում և ինքնամոռացության մեջ նա նույնիսկ մատով շնիկն էր փնտրում, որպեսզի կրակի ու սպանի վան Բեռլեին:

Սակայն ժամանակն է, որ այս օրերի դեպքերը, երբ մեկն աշխատում էր, իսկ մյուսը հետապնդում էր նրան, կապենք Կոռնել դե Վիտի՝ ամբարտակների գլխավոր տեսչի, իր հայրենի քաղաքն այցելելու փաստի հետ:

Երջանիկ մարդը ծանոթանում է դժբախտության հետ

Ավարտելով իր տնային գործերը, Կոռնելը 1672 թ. հունվարին ուղևորվեց իր սանիկ Կոռնելիուս վան Բեռլեի մոտ:

Իրիկնամուտ էր:

Ջնայած Կոռնելը այգեգործության մեծ գիտակ չէր, չնայած նա արվեստով ալնքան էլ չէր հրապուրվում, համենայն դեպս, նա ման եկավ ու դիտեց ամբողջ տունը՝ աշխատանոցից սկսած մինչև ծաղկանոցը, նկարներից սկսած մինչև կակաչները: Նա շնորհակալ եղավ իր սանիկից այն բանի համար, որ վերջինս նրա անունով է կոչել այգապիսի մի հոյակապ կակաչ: Դե վիտը նրա հետ խոսեց ամենայն սիրալիրությամբ, բարեհոգի հայրական տոնով և, մինչ նա դիտում էր վան Բեռլեի գանձարանը, երջանիկ մարդու դոնե-րի մոտ պատկառանքով ու հետաքրքրասիրությամբ հավաքվել էր մարդկանց ամբոխը:

Այդ ամբողջ աղմուկը գրավեց Բոքստելի ուշադրությունը, որն այդ ժամանակ իր տանը նախաճաշում էր: Նա հարցրեց, թե ի՞նչ է պատահել և, իմանալով գործի էությունը, իսկույն ևեթ բարձրացավ իր աստղադիտարանը: Նվ չնայած ցրտին, նա իր հեռադիտակով տեղավորվեց այնտեղ:

1671 թվականի աշնանից սկսած այդ հեռադիտակը Բոքստելին այլևս օգուտ չէր բերում: Մրսկան կակաչները, որպես արևելքի իսկական զավակներ, ձմռանը բաց երկնքի տակ չէին աճեցվում: Նրանց պետք են սենյակներ, արկղներում՝ փափուկ անկողին և վառարանների շոյող ջերմությունը: Այդ պատճառով Կոռնելիուսը ձմեռն անց էր կացնում իր լաբորատորիայում՝ շրջապատված նկարներով ու գրքերով: Նա շատ սակավ էր մտնում այն սենյակը, որտեղ պահվում էին սոխուկները, և այն էլ այն դեպքում, եթե հարկ էր լինում դրանք ջերմացնել երկնքում երբեմն հայտնվող արևի պատահական ճառագայթներով, որոնց նա ստիպում էր սեն-

յակի առաստաղում բացված ապակեպատ օդանցքից ներս թափանցել:

Այդ երեկո, որի մասին մենք պատմում ենք, ծառաների ուղեկցությամբ ամբողջ տունը դիտելուց հետո, Կոռնելը մեզմ դիմեց վան Բեռլեին.

— Տղա՛ս, հեռացրեք ծառաներին և աշխատեք, որ մենք մի որոշ ժամանակ մենակ մնանք:

Կոռնելիուսն ի նշան համաձայնության, գլուխը խոնարհեց: Այնուհետև բարձրաձայն ասաց.

— Զէի՛ք ցանականա արդյոք, պարոն, այժմ նայել կալաչների շորանոցը:

Չորանոցը: Ծաղկագործության այդ pandaemonium-ը¹, բարիքների այդ գանձարանը, այդ sanctorum-ը², որն անմատչելի էր սովորական մահկանացուներին, ինչպես մի ժամանակ Դելփիքը³:

Դեռ երբեք ոչ մի ծառա իր հանդուգն ոտքով չէր անցել նրա շեմքից, ինչպես կասեր մեծ Ռասինը⁴, որին այդ դարաշրջանում երկրպագում էին: Կոռնելիուսը թույլ էր տալիս ներս մտնելու միայն իր ծառային իր անվտանգ ավելի հետ միասին: Այդ ծեր կինը, այն օրվանից, ինչ Կոռնելիուսն իրեն նվիրել էր կակաչների մշակմանը, չէր համարձակվում կերակրի մեջ սոխ գցել, վախենալով, որ հանկարծ կմաքրի ու կտապակի իր սանիկի սրբություններից որևէ մեկը: Այսպես ուրեմն, միայն «չորանոց» խոսքը լսելով, ծառաները, որ ճրագներ էին բռնել, պատկառանքով հեռացան: Կոռնելիուսը նրանցից ամենամոտիկ գտնվողի ձեռքից վերցրեց մոմը և իր կնքահորը դեպի սենյակ առաջնորդեց:

Վերը ասվածին ավելացնենք նաև այն, որ չորանոցը

¹ Սրբավայր:

² Սուրբ սրբոց:

³ Հին հունական Դելփիք քաղաքը հայտնի էր իր «պատգամախոսարանով», որը գտնվում է Ապոլլոնի տաճարում: Տաճար կարող էին մուտք ունենալ միայն «ձեռնադրված» մարդիկ, այսինքն՝ քուրմերը:

⁴ Ռասին, Ժան (1639—1699), ֆրանսիացի խոշոր գրամատուրգ: Ռասինի ստեղծագործությունը հանդիսանում է ողբերգության ժանրում ֆրանսիական կլասիցիզմի բարձրագույն նվաճումը:

հենց այն ապակեպատ սենյակն էր, որի վրա Բոքստեյն օր ու գիշեր ուղղում էր իր հեռագրիտակը:

Նախանձոտ մարդը, իհարկե, իր դիտակետում էր: Սկզբում նա տեսավ, թե ինչպես լուսավորվեցին պատերն ու ապակիները: Այնուհետև երևացին երկու ստվերներ: Նրանցից մեկը, որ մեծ էր, վեհ ու խիստ, նստեց սեղանի առջև, որի վրա Կոռնելիուսը դրեց մոմակալը: Մարդկանցից մեկը Կոռնել դե Վիտն էր, որի գունատ դեմքը ու մեջտեղից բացվող և ուսերին թափվող երկար մազերն արդեն ծանոթ էին Բոքստեյնին:

Ամբարտականների գլխավոր տեսուչը մի քանի խոսք ասելով Կոռնելիուսին, որոնց բուլանդակությունը նախանձոտ մարդը շրթունքների շարժումներից գուշակել չէր կարող, իր ներսի գրպանից հանեց և Կոռնելիուսին հանձնեց խնամքով փակված մի սպիտակ ծրար: Այն բանից, թե ինչպիսի տեսքով Կոռնելիուսը վերցրեց այդ ծրարն ու դրեց իր արկղներից մեկի մեջ, Բոքստեյլը ենթադրեց, որ դրա մեջ խիստ կարևոր թղթեր կային:

Սկզբում նա մտածեց, որ այդ թանկարժեք ծրարը իր մեջ պարունակում է Բենգալիայից կամ Ցեյլոնից հենց նոր ստացված սոխուկներ, սակայն իսկույն էլ գլխի ընկավ, որ Կոռնելը կակաշների մշակությամբ չի զբաղվում, այլ զբաղվում է միայն մարդկանցով. մի բույս, որը ավելի անախորժ տեսք ունի և շատ դժվար է ծաղկում:

Եվ նա հանգեց այն մտքին, թե այդ ծրարը պարունակում է սոսկ թղթեր, և այդ թղթերն էլ ունեն քաղաքական բուլանդակություն:

Սակայն Կոռնելիուսի ինչի՞ն են պետք քաղաքականությանը վերաբերող այդ թղթերը: Չէ՞ որ դիտնական Կոռնելիուսը ոչ միայն չէր զբաղվում այդ գործով, այլ նույնիսկ պարծենում էր, որ չի հետաքրքրվում, այն համարելով ավելի մութ ու անհասկանալի, քան քիմիան, քան նույնիսկ ալքիմիան¹:

¹ Ալքիմիա — միջնադարյան կեղծ գիտություն: Ալքիմիկոսները փրենսում էին ինչպես «փիլիսոփայական քարը», որն իբր թե ի վիճակի է ոչ

Կասկած չկար, որ Կոռնել դե Վիտը, իր հայրենակիցների աչքում արդեն ժողովրդականությունը կորցնելու եզրին, իր սանիկ վան Բեռլեին հանձնեց ինչ-որ թղթեր պարունակող մի ծրար: Եվ դա մի խորամանկ քայլ էր Կոռնելի կողմից,



քանի ու՛ր ամենից քիչ հավանական էր, որ այդ թղթերը փնտրեին Կոռնելիուսի մոտ, որը հեռու էր քաղաքական բանասարկություններից:

Բացի այդ, եթե ծրարը պարունակեր սոխուկներ, ապա Կոռնելիուսը, որին Բոքստելը շատ լավ էր ճանաչում, չէր համբերի և անպատճառ կբացեր ու կնայեր, որպեսզի ըստ արժանվույն գնահատեր իրեն մատուցված նվերը: Այնինչ

աղնիվ մետաղները վերածել ոսկու, այնպես էլ «կյանքի էլիկսիրը», որն իրր թե մարդուն պետք է անմահություն շնորհի, «համադարման» դառնա ընդ որ հիվանդությունների և ալյն:

Կոռնելիուսը խիստ պատկառանքով վերցրեց ծրարը ամբարտաւանների տեսչի ձեռքից և նույնպիսի պատկառանքով էլ դրեց արկղի ամենախորքում, հաւանաբար, նրա համար, որպեսզի չերևա, և այն արկղում, որը նախատեսված էր սոխուկների համար, որպեսզի հաւանաբար, շատ տեղ չգրավի:

Երբ ծրարը դրեցին արկղի մեջ, Կոռնել դե Վիտը վեր կացավ, սեղմեց իր սանիկի ձեռքը և գնաց դեպի դուռը:

Կոռնելիուսը շտապով վերցրեց մոմակալը և նետվեց առաջ, որպեսզի լուսավորի նրա ճամփան:

Լույսն արագութեամբ հեռանում էր ապակեպատ սենյակից, այնուհետև փայլփլեց սանդուղքների գլխին, հետո՝ միջանցքում, և, վերջապես փողոցում, որտեղ դեռ հավաքված էին մարդկանց խմբեր, ցանկանալով տեսնել, թե ինչպես ամբարտաւանների տեսուչը նորից կառք կնստի:

Նախանձոտ մարդու կասկածներն իզուր չէին: Ծրարը, որը Կոռնելը հանձնեց իր սանիկին, և որը վերջինիս կողմից խնամքով թաքցվեց, իր մեջ պարունակում էր Յանի նամակագրութունը պարոն դե Լուվուայի հետ:

Սակայն, ինչպես այդ մասին Կոռնելը պատմեց եղբորը, ծրարը հանձնվել էր վան Բեռլեին այնպես, որ վերջինիս մոտ մազաշափ անգամ կասկած չէր ծագել ծրարի քաղաքական բուլանդակութեան վերաբերյալ:

Ըստ որում, ծրարը տալիս Կոռնելը միայն զգուշացրեց, որ այն կարելի է հանձնել ոչ այլ մեկին, եթե ոչ միայն իրեն, կամ իր ձեռքով գրված գրութուն ներկայացնող անձնավորութեանը:

Եւ Կոռնելիուսը, ինչպես տեսանք, ծրարը փակեց հազվագյուտ սոխուկներ սլարունակող արկղում:

Երբ ամբարտաւանների գլխավոր տեսուչը մեկնեց, ադամուկը դադարեց ու ճրագները մարեցին, մեր գիտնականը բոլորովին մոռացավ ծրարի գոյութիւնը: Սակայն դրա մասին շուտով Բոքստելը, նա փորձված նավավարի նման այդ ծրարում տեսնում էր մի հեռավոր ամպ, որը մոտենալով ու մեծանալով, փոթորիկ է կանխագուշակում:

Ահա և մեր պատմվածքի բոլոր կարևոր հանգույցները, որոնք ցրվելով այդ պարարտ հողի մեջ՝ ձգվում են Դորդրեխ-

տից մինչև Հաագա: Նա, ով ցանկանում է, կարող է մեզ հետ ճանապարհ ընկնել դեպի ապագան, որը բացահայտվելու է հաջորդ գլուխներում: Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք կատարեցինք մեր խոստումը՝ ապացուցելով, որ երբեք ամբողջ Հոլանդիայում ոչ Կոռնելը և ոչ էլ Յան դե Վիտը չունեին այնքան կատաղի թշնամի, ինչպիսին ուներ Վան Բեուլեն՝ ի դեմս իր հարևան մինգեր¹ Իսահակ Բոքստելի:

Բայց և այնպես, երանելի անիմացության մեջ, մեր ծաղկագործը Հաադեմ քաղաքի ծաղկագործների միության ներկայացրած ուղիով առաջ էր շարժվում և մուգ շագանակագույն կակաչից նա ստացավ այրած սուրճի գույն ունեցող կակաչ:

Այդ նույն օրը, երբ Հաագայում տեղի էին ունենում հիշված նշանավոր դեպքերը, մենք վերադառնալով վան Բեուլեի մոտ, նրան տեսնում ենք իր թմբերից մեկի մոտ: Նա թմբից հեռացնում էր այրված սուրճի գույն ունեցող անսերմ կակաչները. դրանք պետք է ծաղկեին 1673 թվականի գարնանը և պետք է աճեր այն նշանավոր սև կակաչը, որին ձրգտում էր Հաադեմ քաղաքի ծաղկագործների միությունը:

Այսպես ուրեմն, 1672 թվականի օգոստոսի 20-ին, ցերեկվա ժամը մեկին, Կոռնելիուսը գտնվում էր իր շորանոցում: Արմունկներով կոթնած սեղանին և ոտքերը հենած սեղանի ոտնատեղին, նա բավականությամբ դիտում էր երեք փոքրիկ սոխուկները, որոնք ստացել էր հողից հենց նոր հանած սոխուկից. սոխուկի գլխիկներ, որոնք անվթար էին ու կատարյալ, դիտության ու բնության ամենահրաշալի ու անգնահատելի ստեղծագործություններից մեկի սաղմերը, որոնք փորձի հաջող վախճանի դեպքում պետք է հավերժ անմահացնեին Կոռնելիուս վան Բեուլեի անունը:

— Ես կստանամ մեծ, սև կակաչ,— ասում էր ինքն իրեն Կոռնելիուսը, առանձնացնելով սոխուկի գլխիկները:—

¹ Մինգեր — Հոլանդիայում տարածված արտահայտություն, որով դիմում էին հարուստ, ունեոր դասի մարդկանց: Համապատասխանում է հայկական պարոնին:

Ես կստանամ խոստացված հարյուր հազար ֆլորին պարգևը։
Ես այդ փողը կբաժանեմ Դորդրեխտի աղքատներին և այդ-
պիսով այն ատելութունը, որ քաղաքացիական կոիւնների
շրջանում առաջացել էր աղքատների մոտ ամեն մի հարուստ
մարդու նկատմամբ, կկորցնի իր ուժը, իսկ ես, երկյուղ չու-
նենալով ո՛չ հանրապետականներից, ո՛չ էլ օրանժիստ միա-
պետականներից, կարող եմ առաջվա նման հրաշալի ձևով
պահել իմ ծաղկաթմբերը։ Այն ժամանակ ես այլևս չեմ վա-
խենա, որ ապստամբության ժամանակ Դորդրեխտի խանութ-
պաններն ու նավաստիները կհարձակվեն ու կպոկոտեն իմ
սոխուկները, որպեսզի դրանով կերակրեն իրենց ընտանիքնե-
րը, ինչպես երբեմն նրանք սպառնում են ինձ երբ լսում են,
որ ես երկու հարյուրից երեք հարյուր ֆլորին եմ վճարել ինչ-
որ մի սոխուկ ձեռք բերելու համար։ Դա վճռված է։ Ես
պետք է այդ հարյուր հազար ֆլորինը՝ Հաառլեմ քաղաքի
պարգևը, բաժանեմ աղքատներին։ Չնայած...

Այդ խոսքի վրա Կոռնելիուսը դադար տվեց և հոգոց
հանեց։

— Չնայած,— շարունակեց նա,— շատ ավելի հաճելի
կլիներ այդ հարյուր հազար ֆլորինը ծախսել ու ընդարձակել
իմ ծաղկանոցը կամ նույնիսկ ճանապարհորդել դեպի
արևելք, այդ ամենաքանչելի ծաղիկների հայրենիքը։ Սա-
կայն ավաղ, դրա մասին նույնիսկ երազել չի կարելի. հրա-
ցաններ, դրոշներ, թմրուկներ ու թոուցիկներ, ահա թե որոնք
են տիրապետողը տվյալ ժամանակաշրջանում։

Վան Բեռլեն հայացքը հառեց դեպի երկինք և հոգոց
հանեց։

Այնուհետև, նորից հայացքը հառելով սոխուկներին, ո-
րոնք ավելի շատ տեղ էին գրավում նրա մտքում, քան հրա-
ցանները, դրոշներն ու թոուցիկները, նա շարունակեց.

— Ահա և սքանչելի սոխուկները. ի՞նչ հարթ են, ինչ-
պիսի՜ գեղեցիկ ձև ունեն, ինչքան տխուր են սրանք, սա-
կայն խոստանում են դառնալ ածուխի նման սև կակաչներ։
Դրանց թերթերի երակներն այնքան նուրբ են, որ անզեն աչ-
քի համար նույնիսկ աննշմարելի են։ Օ՛հ, համոզված եմ, որ

ոչ մի բիծ անգամ չի խախտի սեպագրիս ծաղկի տեսքը, որն իր ծնունդով պարտական կմնա ինձ:

Իսկ ինչպե՞ս կոչել իմ երազանքների, իմ աշխատանքների, իմ մտքերի այդ մանկիկին: «*Tulipa nigra Barlaensis*»¹... Այո՛, *Barlaensis*: Հիանալի՜ անուն: Եվրոպայի բոլոր կակաչագետները, կասիւնքն, կարելի է ասել, ամբողջ լուսավորված Եվրոպան, կցնցվեն, երբ քամին այդ լուրը տանի հասցնի երկրի բոլոր ծայրերը:

— Սե մեծ կակաչը հայտնագործվել է:

— Նրա անո՞ւնը, — կհարցնեն սիրահարները:

— *Tulipa nigra Barlaensis*.

— Ինչո՞ւ:

— Ի պատիվ նրա ստեղծողի՝ վան Բեռլեի, — կլինի պատասխանը:

— Իսկ ո՞վ է վան Բեռլեն:

— Դա նա է, ով որ ստեղծել է կակաչների հինգ նոր տեսակներ. «Ժաննա», «Յան դե Վիտ», «Կոռնել» և այլն:

Դեհ, ի՞նչ արած, դա էլ իմ պարծանքն է: Ոչ մեկի արցունքի պատճառի դառնա: Իսկ իմ «*Tulipa nigra Barlaensis*»-ի մասին. կխոսեն և այն ժամանակ գուցե իմ կնքահայրը, այդ մեծ քաղաքագետը, իմ կակաչի շնորհիվ, որը ես կոչեմ նրա անունով, կհռչակվի:

Հիասքա՛նչ սոխուկներ:

— Երբ իմ կակաչը ծաղկի, — շարունակեց Կոռնելիուսը, — և եթե այդ ընթացքում Հոլանդիայում խռովությունները դադարեն, ես աղքատներին կբաժանեմ միայն հիսուն հազար ֆլորինը: Դե, վերջ ի վերջո, այդքանն էլ քիչ չէ մի մարդու համար, որն ըստ էության, ոչ մեկի ոչինչ պարտք չէ: Հիսուն հազարը ես կօգտագործեմ գիտական փորձերի համար: Այդ հիսուն հազար ֆլորինով ես կհասնեմ այն բանին, որ կակաչը բույր կարձակի: Օ՛հ, թե ինձ հաջողվեք,

¹ *Tulipa nigra* (լատ.) — սև կակաչ: Գիտնականները, որոնք հայտնագործել են բույսերի և կենդանիների նոր տեսակներ, հաճախ զրանք կոչել են իրենց իսկ սեփական անուններով՝ լատինական ձևափոխությամբ: Այստեղից էլ՝ «*Tulipa nigra Barlaensis*»:

որպեսզի կակաշն արձակեր վարդի կամ մեխակի բուրմունք, կամ ինչ-որ բոլորովին նոր, ավելի լավ բուրմունք: Եթե ես կարողանայի ծաղիկների աչդ արքային վերադարձնել իր բնական բուրմունքը, որը նա կորցրել է, երբ իր արևելյան գահից տեղափոխվել է եվրոպական գահի վրա, այն բուրմունքը, որը նա պետք է ունենա Հնդկաստանում, Գոալում, Բոմբեյում և Մադրասում¹ և հատկապես այն կղզում, որտեղ ինչ-որ ժամանակ, ինչպես պատմում են, եղել է երկրային դրախտ և որը կոչվել է Յեյլոն: Օ՛, ինչպիսի փառք: Երգվում եմ, որ այն ժամանակ... Այն ժամանակ ես կգերադասեմ լինել Կոռնելիոս վան Բեուե, քան թե Ալեքսանդր Մակեդոնացի, Կեսար և կամ Մաքսիմիլիան²:

Հիասքա՛նչ սոխուկներ:

Կոռնելիոսը շարունակում էր հիանալ և ամբողջովին տարվել էր իր քաղցր երազներով:

Հանկարծ նրա աշխատանոցի ղանգակը սովորականից ավելի ուժեղ հնչեց:

Կոռնելիոսը ցնցվեց, ձեռքով ծածկեց սոխուկները և շրջվեց:

— Ո՛վ է:

— Պարո՛ն,— պատասխանեց ծառան,— Հաագայից ռեզարկված մարդ է:

— Հաագայից ուղարկված մա՛րդ: Ի՞նչ է ցանկանում³—

— Պարոն, դա Կրակենն է:

— Կրակեն՛ն, Յան դե Վիտի հավատարիմ ծառանք լա՛վ, լա՛վ, լա՛վ, թող սպասի:

որ

¹ Ըստ երևույթին հոլանդացիները կակաշների հայրենիքը համարում էին Յեյլոն կղզին, իսկ հիշատակվող հնդկական քաղաքները՝ կակաշների առավել տարածված վայրերը:

² Ալեքսանդր Մակեդոնացի (IV դ. մ. թ. ա.) — մակեդոնական թագավոր, հնում մեծ հռչակ ստացած զորավար: Գայոս Հուլիոս Կեսար (I դ. մ. թ. ա.) — հռոմեական զորավար և քաղաքական գործիչ, որը սահմանեց միահեծան դիկտատորական իշխանություն: Մաքսիմիլիան — նկատի է առնվում Հաբսբուրգների դինաստիայից՝ Մաքսիմիլիան I-ը, ավստրիական էրցհերցոգը, «Հռոմեական սրբազան կայսրության» կայսրը (1493—1512), որը ղգալի ընդարձակեց իր տիրապետությունները:



— Ես չեմ կարող սպասել, — միջանցքում լսվեց մի
ձայն:

Եվ նույն վայրկյանին, շնայելով, որ արգելում են, Կրա-
կեն մտավ շորանոց:

Անսպասելի, համարյա թե բռնի այդ մուտքը Կոռնե-
լիուս վան Բեուլեի տանը սահմանված կարգ ու կանոնին
այնքան հակառակ մի երևույթ էր, որ նա ներս խուժած
Կրակեին տեսնելով, մի ջղաձիգ շարժում արեց այն ձեռքով,

որով ծածկել էր սոխուկները. սոխուկներից երկուսն ընկան հատակին, մեկը՝ հարեան սեղանի տակ, մյուսը՝ բուխարիի մեջ:

— Ախ, գրո՛ղը տանի,— գռչեց Կոռնելիուսը, նետվելով իր սոխուկների հետևից:— Ի՞նչ է պատահել, Կրակե:

— Ահա,— ասաց Կրակեն, մի գրություն դնելով այն սեղանին, որտեղ մնացել էր երրորդ սոխուկը:— Դուք պետք է առանց ժամանակ կորցնելու կարդաք այս գրությունը:

Եվ Կրակեն, որին թվաց, որ Դորգրեխտի փողոցներում նկատվում են հուզումների նշաններ, նման նրանց, որ ինքը տեսել էր Հաագայում, առանց նույնիսկ շուրջը նայելու՝ անհետացավ:

— Լա՛վ, լա՛վ, իմ սիրելի Կրակե,— ասաց Կոռնելիուսը, վերցնելով սեղանի տակ գլորված թանկարժեք սոխուկը,— կկարդանք, կկարդանք քո թուղթը:

Վերցնելով սոխուկը, Կոռնելիուսը դրեց ձեռքի ափի մեջ և սկսեց ուշադրությամբ զննել:

— Դե, ահա մեկն անվնաս է: Գրողի տարած Կրակե: Կատաղածի նման ներս ընկավ շորանոց: Իսկ հիմա տեսնենք՝ մյո՛ւսն ինչ վիճակում է:

Եվ ձեռքից բաց չթողնելով առաջին փախստական սոխուկը, վան Բեռլեն զնաց դեպի բուխարիկը և, ծնկի գալով, սկսեց մոխիրը խառնել, որը, բախտի բերմամբ, սառն էր: Շուտով նա գտավ նաև մյուս սոխուկը:

— Դե, ահա՛ և մյուսը:

Եվ նայելով սոխուկին համարյա թե հայթական քընքշությամբ, ասաց.

— Անվաս է, ինչպես և առաջինը:

Այդ պահին, երբ Կոռնելիուսը դեռևս ծնկի եկած դիտում էր սոխուկը, դուռն ուժեղ ցնցվեց և բացվեց այնպիսի մի աղմուկով, որ վան Բեռլեն զգաց, թե ինչպես իր այտերն ու ականջները զայրույթից, այդ վնասակար խորհրդատուից, միանգամից բռնկեցին:

— Նորից ի՞նչ պատահեց,— գոռաց նա,— ի՞նչ է, այս տանը բոլորը խելագարվե՞լ են:

— Պարոն, պարոն,— արագությամբ ներս բնկնելով շորանոց, բացականչեց ծառան: Նրա դեմքն ավելի գունատ էր, քան Կրակելինը, իսկ տեսքը՝ ավելի շփոթւած:

— Դե, ի՞նչ,— հարցրեց Կոռնելիուսը, իր սահմանած կարգ ու կանոնի այդ կրկնակի խախտման հետևում ինչ-որ դժբախտություն նախազգալով:

— Օ՛, պարոն, փախե՛ք, փախե՛ք, շո՛ւտ,— գոռում էր ծառան:

— Փախչե՛լ: Ինչո՞ւ:

— Պարոն, տունը լցւած է զինվորներով:

— Ի՞նչ են ուզում:

— Ձե՛զ են փնտրում:

— Ինչո՞ւ:

— Որպեսզի ձերբակալեն:

— Ձերբակալե՞ն, ի՞նչ:

— Այո, պարոն, և դատաւորն էլ նրանց հետ է:

— Ի՞նչ կարող է նշանակել այդ ամենը,— հարցրեց վան Բեռլեն, ձեռքում սեղմելով երկու սոխուկները և ցրւած հայացքով նայելով սանդուղքին:

— Նրանք գալիս են, նրանք գալիս են վերե:

— Օ՛, իմ ազնիւ պարոնս, օ՛, իմ թանկագին զաւակս,— գոչում էր դայակը, որը նույնպես մտել էր շորանոց:— Վերցրե՛ք ոսկին, զարդարանքներն ու փախե՛ք:

— Բայց ի՞նչ ճանապարհով կարող եմ փախչել,— հարցրեց վան Բեռլեն:

— Պատուհանից թռե՛ք:

— Քսանհինգ ոտնաչափ բարձրությունի՞ց:

— Դուք կընկնեք փափուկ հողի վրա:

— Այո, բայց ես կընկնեմ իմ կակաչների վրա:

— Միևնույն է, թռե՛ք:

Կոռնելիուսը վերցրեց երրորդ սոխուկը, մոտեցավ պատուհանին, բացեց, սակայն պատկերացնելով, թե ինչպիսի վնաս կհասնի իր թմբերին, սարսափեց ավելի, քան երբ տեսավ, թե ինչպիսի բարձրությունից պետք է նետվի ցած:

— Ո՛չ մի դեպքում,— ասաց նա ու ետ եկավ:

Հենց այդ ժամանակ սանդուղքի բազրիքների հետևում երևացին զինվորների սակրատեգերը:

Դայակը ձեռքերը մեկնեց դեպի սանիկը: Ինչ վերաբերում է Կոռնելիուսին, ապա պետք է ասել, որ ինչպես վայել է ոչ թե ընդհանրապես մարդուն, այլ հատկապես ծաղկագործին, ապա նա իր ամբողջ ուշադրությունը բեռել էր միայն իր թանկագին սոխուկներին: Նա աչքերով թուղթ էր փնտրում, որպեսզի դրանք փաթաթի մեջը և նկատելով ավետարանի մի թերթ, որը Կրակեն դրել էր սեղանի վրա, վերցրեց. այնքան ուժեղ էր նրա հուզմունքը, որ նա նույնիսկ չհիշեց, թե որտեղից հայտնվեց այդ թուղթը, և վերցնելով, երեք սոխուկներն էլ փաթաթեց դրա մեջ ու պահելով թևի տակ, սկսեց սպասել:

Այդ վայրկյանին դատավորի առաջնորդութամբ զինվորները ներս մտան:

— Այդ դո՞ւք եք ղոկտոր Կոռնելիուս վան Բեուեն,— հարցրեց դատավորը, չնայած այն բանին, որ շատ լավ ճանաչում էր այդ երիտասարդին: Նա գործում էր արդարադատության բոլոր կանոններով, որոնք, ինչպես հայտնի է, պահանջում են, որ հարցաքննությանը տրվի խիստ պաշտոնական բնույթ:

— Այո, ես եմ, պարոն վան Սպենեն,— պատասխանեց Կոռնելիուսը, հարգանքով խոնարհվելով դատավորի առաջ:— Եվ այդ ձեզ քաջ հայտնի է:

— Տվեք այն դավադրական փաստաթղթերը, որոնք պահում եք ձեզ մոտ:

— Դավադրական փաստաթղթե՞ր,— կրկնեց Կոռնելիուսը՝ ապշած այդ վերաբերմունքից:

— Օ՛, զարմացած մի՛ ձևացեք:

— Երդվում եմ, պարոն Սպենեն, որ չգիտեմ, թե ինչ եք ուղում ասել:

— Դե, այդ դեպքում, ղոկտոր, ես ձեզ կօգնեմ,— ասաց դատավորը:— Տվեք մեզ այն թղթերը, որոնք հունվար ամսին ձեզ մոտ թաքցրել է դավաճան Կոռնել դե Վիտը:

Կոռնելիուսի մտքում կարծես թե ինչ-որ բան արթնացավ:

— Օհո՛հ,— ասաց վան Սպենսենը,— ահա և դուք սկսում եք վերհիշել, այնպես չէ՞:

— Իհարկե, սակայն դուք խոսում եք ինչ-որ դավադրական թղթերի մասին, իսկ ինձ մոտ նման թղթեր չկան:

— Ուրեմն դուք ժխտո՞ւմ եք:

— Իհա՛րկե:

Դատավորը շուռ եկավ և մի հայացքով աչքի անցկացրեց ամբողջ աշխատասենյակը:

— Այդ ո՞ր սենյակն է, որ ձեր տանը կոշում են շորանոց:

— Մենք հենց այդտեղ ենք գտնվում:

Դատավորը հայացք գցեց փոքրիկ գրության վրա, որը նա այլ թղթերի հետ միասին բռնել էր ձեռքին:

— Կավ,— ասաց նա վստահ և դարձավ Կոռնելիուսին:— Դուք կտա՞ք այդ թղթերը:

— Բայց ես չեմ կարող, պարոն վան Սպենսեն, այդ թղթերն իմը չեն, դրանք ինձ են հանձնված պահելու նպատակով և այդ պատճառով անձևոնմխելի են:

— Դոկտոր Կոռնելիուս,— ասաց դատավորը,— կառավարության անունից հրամայում եմ բացել այս արկղը և ինձ հանձնել այն թղթերը, որ պահված են այստեղ:

Եվ դատավորը մատնացույց արեց վառարանի մոտ գտնվող պահարանի երրորդ արկղը:

Եվ իրոք, այդ արկղում էր գտնվում այն ծրարը, որը ամբարտակների գլխավոր տեսուչը հանձնել էր իր սանիկին. սլարզ էր, որ ոստիկանութանն ամեն ինչ քաջ հայտնի էր:

— Ա՛հ, դուք չե՞ք ուզում,— ասաց վան Սպենսենը, տեսնելով, որ ապշած Կոռնելիուսը տեղից չի շարժվում:— Այդ դեպքում ինքս կբացեմ:

Դատավորն արկղը լրիվ դուրս քաշեց և առաջին բանը, որ տեսավ այնտեղ, երկու տասնյակ սոխուկներ էին, որոնք խնամքով շարված էին և յուրաքանչյուրի մոտ կային առանձին պիտակներ. այնուհետև նա գտավ թղթերի ծրարը, որը գտնվում էր ճիշտ նույն վիճակում, ինչպես իր ժամանակ Կոռնել դե Վիտը հանձնել էր իր սանիկին:

Դատավորը պոկեց կնիքը, պատռեց ծրարը, մի ագահ

հայացք ձգեց առաջին իսկ պատահած թերթերին և բացականշեց։

— Նշանակում է արդարադատությանը հասած տեղեկությունները զուրկ չեն հիմքից։

— Ինչպե՞ս, — հարցրեց Կոռնելիուսը, — ինչումն է գործը։

— Օ՛, սլարոն վան Բեուլե, դադարեցեք անմեղ ձևանալուց և հետևեք ինձ։

— Ինչպե՞ս, հետևեմ ձե՞զ, — բացականչեց դոկտորը։

— Այո, քանի որ կառավարության անունից ձեզ ձերբակալում եմ։

Վիլհելմ Օրանցու անունից դեռևս ոչ մեկի չէին ձերբակալում, որովհետև նրա փոխարքա դառնալուց շատ քիչ ժամանակ էր անցել։

— Ձերբակալել ի՞նձ, — բացականչեց Կոռնելիուսը, — իսկ ես ի՞նչ եմ արել։

— Դա ինձ չի վերաբերում, դուք այդ մասին կհարցնեք ձեր դատավորներին։

— Որտե՞ղ։

— Հաագայում։

Կոռնելիուսը բոլորովին ապշած համբուրեց իր ուշադնաց դայակին, սեղմեց ծառաների ձեռքերը, որոնք հեկեկում էին, և հետևեց դատավորին։ Վերջինս նրան, որպես պետական հանցագործի, կառք նստեցրեց ու հրամայեց որ քան հնարավոր է շուտ հասցնել Հաագա։

8

Հարձակում

Հեշտությամբ կարելի է գլխի ընկնել, որ այս ամբողջը պարոն Իսահակ Բոքստելի ձեռքի գործն էր։

Մեզ հայտնի է, որ նա իր հեռադիտակով տեսել և ամենայն մանրամասնությամբ տեղյակ էր Կոռնել դե Վիտի և նրա սանիկի հանդիպմանը։

Մեզ հայտնի է, որ շնայած նա ոչինչ չէր լսել, սակայն ամեն ինչ տեսել էր:

Մեզ հայտնի է, որ այն բանից, թե ինչպիսի խնամքով Կոռնելիուսը վերցրեց ծրարն ու դրեց այն արկղի մեջ, որտեղ պահվում էին նրա ամենաթանկարժեք սոխուկները, այդ ամենից Բոքստելը գլխի ընկավ, որ այդ թղթերը, որոնք ամբարտականների գլխավոր տեսուչը վստահեց իր սանիկին, խիստ կարևոր արժեք էին ներկայացնում:

Հենց Բոքստելը, որը քաղաքականությանը շատ ավելի ուշադրով լսում էր նվիրում, քան նրա հարևան Կոռնելիուսը, իմացավ Կոռնել դե Վիտի ձերբակալության մասին, որին մեղադրում էին պետական դավաճանության մեջ, նա իսկույն լեթ մտածեց, որ ամենայն հավանականությամբ, բավական է իր մի խոսքը, որպեսզի սանիկն էլ իր կնքահոր նման ձերբակալվի:

Սակայն, որքան էլ Բոքստելը խանդավառվեր այդ ժողովից, այնուամենայնիվ, այն միտքը, որ իր մատնությունը Կոռնելիուսին կարող է հասցնել կախաղանի, սկզբում ցընցեց նրան:

Սակայն շատ մտքեր սարսափելի են հենց նրանով, որ չար հոգիները կամաց-կամաց հաշտվում են դրանց հետ:

Դրան ավելացնենք նաև այն, որ Բոքստելը ինքն իրեն ոգևորում էր հետևյալ սոփիզմով¹.

«Կոռնել դե Վիտը վատ քաղաքացի է, քանի որ նրան ձերբակալել են պետական դավաճանության մեղադրանքով: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես ազնիվ քաղաքացի եմ, քանի որ ինձ ոչ մի բանում չեն մեղադրում, և ազատ եմ ինչպես քամի: Այդ պատճառով, ուրեմն, եթե Կոռնել դե Վիտը վատ քաղաքացի է, որը անվիճելի փաստը է, քանի որ մեղադրվում է պետական դավաճանության մեջ և ձերբակալված է, հետևաբար նրա գործակից Կոռնելիուսը վան Բեուլենն ունի պետ նրանից ավելի լավ քաղաքացի չէ:

Այսպիսով, եթե ես ազնիվ քաղաքացի եմ, իսկ ազնիվ

¹ Սոփիզմ — դիտավորյալ սխալ կառուցված, սակայն ճիշտ թվացող ոչ ճիշտ մտահանգում:

քաղաքացիների պարտքն է վատ քաղաքացիների մասին տեղյակ պահել ում որ հարկն է, ուրեմն ես, Իսահակ Բոքստելս, պարտավոր եմ Կոռնելիուս վան Բեռլեի մասին հայտնելու»:

Սակայն, դուցե այդ դատողությունները, որքան էլ դրանք պատճառաբանված լինեին, այդքան բուռն կերպով չհամակերին Բոքստելին, գուցե այդ նախանձոտ մարդն այդքան չենթարկվեր իրեն այրող ու սիրտը կեղեքող վրիժառություններ, եթե նախանձի դեր չմիանար ժլատության դեի հետ:

Բոքստելին քաջ հայտնի էր, թե ինչպիսի արդյունքների էր հասել վան Բեռլեն սև կակաչի մշակման ուղղությամբ տարվող իր փորձերով:

Որքան էլ դոկտոր Կոռնելիուս վան Բեռլեն համեստ լիներ, համենայն դեպս, իր մոտիկներից նա չէր կարող թաքցրնել իր համոզվածությունն այն բանում, որ 1673 թվականին ինքը, անկասկած, կատանա Հաառլեմ քաղաքի այգեգործների ընկերության խոստացած հարյուր հազար ֆլորին պարգևը:

Կոռնելիուս վան Բեռլեի այդ համոզվածությունն էր ահա, որ Իսահակ Բոքստելին պահում էր այդպիսի տենդային վիճակում:

Կոռնելիուսի ձերբակալությունը նրա տանը մեծ շփոթություն կառաջացներ: Ձերբակալությունից հետո այդ գիշեր ոչ մեկի մտքով էլ չէր անցնի այգում պահպանելու նրա կակաչները:

Այդ գիշերը Բոքստելը կարող էր պարսպից անցնել և, քանի որ ինքը գիտեր, թե որտեղ է գտնվում նշանավոր սև կակաչի սոխուկը, ապա կարող էր հեշտությամբ վերցնել: Եվ սև կակաչը փոխանակ Կոռնելիուսի մոտ ծաղկելու, կծաղկեր իր մոտ, և հարյուր հազար ֆլորին պարգևն էլ Կոռնելիուսի փոխարեն ինքը կստանար, չհաշված արդեն այն մեծ պատիվը, որ ինքը իրավունք կունենար կակաչը կոչելու tulipa nigra Boxtellensis.

Մի արդյունք, որը կհագեցներ ոչ միայն նրա վրիժառության ծարավը, այլ նաև նրա ազահությունը:

Արթուն ժամանակ Բոքստելի բոլոր մտքերը զբաղված էին միայն սև կակաշով, իսկ երբ քնում էր, ապա զառանցում էր միայն դրա մասին:

Վերջապես, օգոստոսի 19-ին, մոտավորապես կեսօրվա ժամը երկուսին, գայթակղությունն այնքան ուժեղ էր, որ պարոն Իսահակն այլևս չկարողացավ դիմանալ: Նա գրեց անանուն մի ամբաստանագիր, ամեն ինչ այնքան ճշգրիտ նկարագրելով, որ այլևս կասկածի տեղիք չէր տալիս. այդ ամբաստանագիրը նա փոստով ուղարկեց:

Հենց նույն երեկոյան գլխավոր դատավորը ստացավ այդ նամակը: Նա իսկույն ևեթ հաջորդ օրը նիստ նշանակեց և իր պաշտոնակիցներին հայտնեց այդ: Առավոտյան նրանք հավաքվեցին, որոշեցին ձերբակալել վան Բեռլեին և այդ գործը հանձնարարեցին պարոն վան Սպենենին:

Վերջինս, ինչպես մենք ականատես եղանք, ազնիվ հռչանդացու նման կատարեց այդ հրամանը և Կոռնելիուս վան Բեռլեին ձերբակալեց հենց այն ժամանակ, երբ Հաադա քաղաքի օրանժիստները խոշտանգում էին Կոռնել և Յան դե Վիտերի դիակները:

Ամոթից, թե թույլ կամքի պատճառով, սակայն այդ օրը Իսահակ Բոքստելը չհամարձակվեց իր հեռադիտակն ուղղել ո՛չ դեպի այգի, ո՛չ դեպի լաբորատորիա, և ո՛չ էլ դեպի շորանոց: Առանց այդ էլ նա լավ էր պատկերացնում, թե ինչ կկատարվեր թշվառ դոկտոր Կոռնելիուսի տանը: Նա տեղից չշարժվեց նույնիսկ այն ժամանակ, երբ իր միակ ծառան, որը նույնքան նախանձում էր վան Բեռլեի ծառաներին, որքան Բոքստելը վան Բեռլեին, ներս մտավ Բոքստելի ննջասենյակը. վերջինս նրան ասաց.

— Ես այսօր վեր չեմ կենա, հիվանդ եմ:

Ժամը 10-ին մոտ նա փողոցից աղմուկ լսեց և ցրնցվեց: Այդ վայրկյանին նա իսկական հիվանդից էլ գունատ էր և այնպես էր դողում, որ թվում էր, թե տենդ ունի:

Ներս մտավ ծառան: Բոքստելը վերմակը քաշեց գլխին:

— Օ՛, պարոն,— գոչեց ծառան, որը գլխի էր ընկնում, թե իրենց հարևանին հասած դժբախտության լուրը հաճելի նորություն կլինի իր տիրոջ համար:

— Օ՛, պարոն, դուք չգիտեք, թե ի՞նչ է կատարւում հիմա:

— Ես որտեղի՞ց կարող եմ իմանալ,— պատասխանեց Բոքստելը հազիվ լսելի ձայնով:

— Պարոն, հիմա ձերբակալում են ձեր հարևան Կոռնելիուս վան Բեռլերին, որին մեղադրում են պետական դավաճանության մեջ:

— Ի՞նչ ես ասում,— թուլացող ձայնով քրթմնջաց Բոքստելը:— Մի՞թե դա հնարավոր բան է:

— Համենայն դեպս, այդպես են ասում. և հետո, ես ինքս տեսա, թե ինչպես դատավոր վան Սպենսերը պահակախմբի ուղեկցությամբ մտավ նրա տունը:

— Դե, եթե դու ես տեսել, այդ արդեն ուրիշ,— պատասխանեց Բոքստելը:

— Համենայն դեպս, ես մեկ անգամ էլ կգնամ հետախուզության,— ասաց ծառան:— Եվ մի՛ անհանգստանաք, պարոն, ես ձեզ ամեն ինչի մասին տեղյակ կպահեմ:

Բոքստելը գլխի թեթև շարժումով հավանություն տվեց իր ծառայի նախաձեռնությանը:

Ծառան դուրս եկավ ու մի տասնհինգ րոպեից վերադարձավ:

— Օ՛, պարոն,— ասաց նա,— այն բոլորը, ինչ ձեզ պատմեցի, զուտ ճշմարտություն է:

— Այդ ինչպե՞ս:

— Պարոն վան Բեռլեն ձերբակալված է. նրան նստեցրին կառք և տարան Հաագա:

— Հաագա:

— Այո՛, և այնտեղ, եթե հավատանք ասեկոսներին, նրա վերջը վատ կլինի:

— Իսկ ի՞նչ են խոսում:

— Պատկերացրեք, պարոն, ասում են, բայց դրանք առայժմ միայն խոսակցություններ են, ասում են, որ քաղաքացիները հենց հիմա սպանում են Կոռնել և Յան դե Վիտերին:

— Օ՛...— Բոքստելը տնքաց, ավելի ճիշտ, մի խուլոտ

Ճայն արձակեց ու աչքերը փակեց, որպեսզի չտեսնի այն սարսափելի տեսարանը, որը պատկերացավ նրան:

— Սատանա՛ն տանի,— դուրս պալու՛ նկատեց ծառան,— պարոն Իսահակ Բոքստեյլը, ինչպես երևում է, շատ հիվանդ է, քանի որ այդպիսի նորությունն անգամ նրան ոտքի չհանեց:

Եվ իրոք, Իսահակ Բոքստեյլը շատ հիվանդ էր, նա հիվանդ էր մի մարդու նման, որը սպանել էր մի ուրիշ մարդու: Սակայն նա սպանել էր մարդուն կրկնակի նպատակի համար: Առաջին նպատակին նա արդեն հասել էր, այժմ մնում էր երկրորդը:

Մոտենում էր գիշերը:

Բոքստեյլը սպասում էր գիշերվան:

Երբ գիշերը հասավ, նա վեր կացավ:

Այնուհետև նա բարձրացավ իր թխկենու վրա: Նրա հաշիվները ճիշտ դուրս եկան. ոչ մեկի մտքով անգամ չէր անցնում այգին պահպանել. տանն ամեն ինչ տակնուվրա էր արված:



Բոքստեյլը լսեց, թե ինչպես ժամը տասը դարձավ, այնուհետև՝ տասնմեկը, տասներկուը:

Կեսգիշերին բաբախող սրտով, դողացող ձեռքերով ու մեռելի նման գունատ դեմքով, նա իջավ ծառից, վերցրեց սանդուղքը, դրեց պարսպի մոտ և, բարձրանալով վրան, սկսեց ականջ դնել:

Չորս կողմը լուռ էր: Ոչ մի ձայն չէր խախտում գիշերային անդորրը: Ամբողջ տանը մի եղակի ճրագ էր վառվում, այն էլ միայն ծեր դայակի սենյակում:

Խալարն ու լուսթյունը քաջալերեցին Բոքստեյլին:

Նա ոտքը գցեց պարսպի մյուս կողմը, մի վայրկյան կանգ առավ ամենավերևում, այնուհետև, համոզվելով, որ ինքը վախենալու ոչինչ չունի, սանդուղքն իր այգուց տեղափոխեց Կռնեկիուսի այգին և վար իջավ:

Ճշտությամբ իմանալով այն տեղը, որտեղ ցանված

էին ապագա սե կակաշի սոխուկները, նա վազեց այդ ուղղութեամբ, բայց ոչ թե անմիջապէս թմբերի վրայով, այլ եղրերի ճանապարհներով, որպէսզի հետքեր չթողնի: Տեղ հասնելով, նա վայրենի ուրախութեամբ երկու ձեռքերը մխրձեց հողի մեջ:

Սակայն ոչինչ չգտավ և մտածեց, որ սխալ տեղ է փնտրում: Քրտինքը խոշոր կաթիլներով ծածկել էր նրա ճակատը: Նա քանդեց կողքի հողը, ոչինչ չկար: Քանդեց աջից, քանդեց ձախից. դարձյալ ոչինչ չգտավ:

Բոքստելը քիչ էր մնում խելագարվել, երբ հանկարծ նկատեց, որ հողը փորված էր դեռևս առավոտյան:

Եվ իրոք, այն ժամանակ, երբ Բոքստելն իր անկողնում պառկած էր, Կոռնելիուսն իջավ այդի, հողի միջից հանեց սոխուկի գլխիկը և, ինչպէս տեսանք, բաժանեց երեք փոքրիկ սոխուկների:

Բոքստելը չէր համարձակվում հեռանալ երազած վայրից: Նա ձեռքով տասը ոտնաչափից ավելի հող փորեց:

Վերջապէս համոզվեց իր դժբախտության մեջ:

Կատաղութունից խելքը թոցրած՝ նա վազեց մինչև սանդուղքը, անցավ պարսպի մյուս կողմը, սանդուղքը նորից Կոռնելիուսի մոտից քարշ տվեց իր այգին, շարտեց մի կողմ և հետո ինքն էլ ցած թռավ:

Հանկարծ մի վերջին հուշա լուսավորեց նրա ուղեղը:

Սոխուկները գտնվում են չորանոցում: Մնում է մի կերպ մտնել չորանոց: Այնտեղ անսլացման կգտնի:

Ըստ էութեան, դա ավելի դժվար բան չէր, քան այգի մտնելը: Չորանոցում պատուհանների ապակիները բարձրանում և իջնում էին: Կոռնելիուս վառ Բեռլեն այդ առավոտ պատուհանները բացել էր և ոչ մեկի մտքով չէր անցել փակել:

Ամբողջ հարցն այն էր, որ տասնհրկու ոտնաչափ երկարութեամբ սանդուղքի փոխարեն պետք է ձեռք բերեր քսան ոտնաչափ երկարութեամբ մի սանդուղք:

Մի անգամ Բոքստելը այն փողոցում, որտեղ ինքն էր ապրում, տեսել էր վերանորոգվող մի տուն: Տան պատին հենված էր հսկայական մի սանդուղք: Այդ սանդուղքը շատ

հարմար կլինեն, եթե միայն բանվորները վերցրած չլինեն:

Նա վաղեց դեպի այդ տունը: Սանդուղքը դրված էր նույն տեղում: Բոքստեղը վերցրեց սանդուղքը ու մեծ դժվարությամբ քարշ տվեց դեպի իր այգին: Ավելի մեծ դժվարությամբ հաջողվեց հենել այդ սանդուղքը Կոռնելիուսի տան պատին:

Սանդուղքն ուղղակի հասնում էր վերևի շարժական փեղկին: Բոքստեղը գրպանը դրեց վառված գաղտնալապտերը, բարձրացավ սանդուղքով և մտավ շորանոց:

Մտնելով այդ սրբավայրը, նա կանգ առավ ու հենվեց սեղանին: Նրա ծնկները ծավլում էին, սիրտն անասելի խփում էր:

Այստեղ ավելի սարսափելի էր, քան այգում: Լայն

ու արձակ տարածությունը կարծես թե զրկում էր սեփականությանը՝ նրա սուրբ անձեռնմխելիությունից: Նա, ով համարձակությամբ անցնում է պարսպի մի կողմից մյուսը կամ բարձրանում է պատի վրա, շատ հաճախ սենյակի պատուհանի կամ դռան առջև կանգ է առնում:

Այգում Բոքստեղը միայն կողոպտիչ էր, սենյակում նա դարձավ պարզապես գող: Նա երկար փնտրեց՝ բացելով ու փակելով արկղները, նույնիսկ այն ամենամիտրական արկղը,



որտեղ պահված էր Կոռնելիուսի համար ճակատագրական ծրարը: Նա գտավ «Ժամնան», «դե Վիտը», գորշ կակաչը, բոված սուրճի գույն ունեցող կակաչը, որոնք բոլորը, ինչպես բուսաբանական այգում՝ պիտակներով առանձնացված էին: Սակայն սև կակաչը, ավելի շուտ, այն սոխուկները, որոնք ծաղկելով պետք է դառնային հոյակապ սև կակաչ, անհետ չբացել էին:

Սակայն սերմերի ու սոխուկների գրանցման գրքերում, որոնք վան Բեռլեն կազմում էր հաշվեմատյանների մեթոդով և այնպիսի խնամքով, որ Ամստերդամի ամենաառաջավոր ֆիրմաների հաշվապահական մատյանները չէին կարող մրցել դրանց հետ, Բոքստելը կարդաց.

«Այսօր, 1672 թվականի օգոստոսի 20-ին, ես հողից հանեցի հրաշալի սև կակաչի սոխուկները, որոնցից ստացա երեք հիանալի գլխիկներ»:

— Սոխուկներ, սոխուկներ,— մոնչում էր Բոքստելը, ամեն ինչ տակնուվրա անելով շորանոցում:— Որտե՞ղ կարող են պահված լինել:

Հանկարծ ամբողջ ուժով նա հարվածեց իր ճակատին ու բացականչեց.

— Օ՛, դժբախտ: Օ՛, երիցս անիծյալ Բոքստել: Մի՞թե այդ սոխուկներից կարելի է բաժանվել: Մի՞թե դրանք կարող է թողնել Դորդրեխտում, երբ իրենք մեկնում են Հաագա: Մի՞թե կարելի է ապրել առանց այդ սոխուկների, եթե դրանցից պետք է ծաղկի նշանավոր սև կակաչը: Նա հասցրել է դրանք հետը վերցնել, սրիկա՛: Դրանք նրա մոտ են, նա տարե՛լ է Հաագա:

Դա մի ճառագայթ էր, որն ամբողջ խորությամբ լուսավորեց Բոքստելի անօգուտ հանցագործությունը:

Բոքստելը շանթահարվածի նման ընկավ այն նույն սեղանին, հենց այն նույն տեղը, որտեղ ընդամենը մի քանի ժամ առաջ դժբախտ վան Բեռլեն երկար ու հրապուրված հիանում էր իր սև կակաչի սոխուկներով:

— Դե, ի՞նչ արած,— ասաց նախանձոտ մարդը, բարձրացնելով իր գունատված դեմքը,— վերջ ի վերջս, եթե սո-

խուկնները նրա մոտ են, ապա նա կարող է իր մոտ պահել այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի է:

Եվ նա իր գարշելի միտքը վերջացրեց դեմքի մի ղզվելի ծամածռությամբ:

— Սոխուկները գտնվում են Հաադայում, — ասաց նա, — նշանակում է ես այլևս չեմ կարող Դորդեխտում մնալ:

Դեպի Հաադա, սոխուկների հետևից, դեպի Հաադա:

Եվ Բոքստելը, հաշվի չառնելով այն հսկայական հարստությունը, որ նա թողնում էր, տարված մի ուրիշ անգին դանձի տիր դառնալու մտքով, իր գողության գործիքը տարավ այնտեղ, որտեղից վերցրել էր և վայրի կենդանու նման մոնչալով վերադարձավ տուն:

9

Տոհմական խուցը

Կեսգիշերին մոտ կլիններ, երբ դժբախտ վան Բեռլեն նետվեց Բյուտենհոֆյան բանտը: Ռոզայի ենթադրություններն իրականացան: Կոռնելի խուցը դատարկ գտնելով՝ ամբոխն այնպես դավաղեց, որ եթե այդ ժամանակ ծերուկ Գրիֆուսն ընկներ այդ կատաղած մարդկանց ձեռքը, բանտարկյալի բացակայությունը, անկասկած, կհատուցվեր նրա կյանքով:

Սակայն մոլեգնած ամբոխի զայրույթը թափվեց երկու եղբայրների գլխին, որոնք Վիլհելմի՝ այդ խորաթափանց մարդու կանխագուշակության հետևանքով, որի հրամանով փակվել էին քաղաքի դարպասները, ընկան մարդասպանների ձեռքը:

Հասավ վերջապես այն պահը, երբ բանտը դատարկվեց, և սանդուղքներից լավող ամպրոպային ոռնոցից հետո ամեն ինչ խաղաղվեց:

Օգտվելով դրանից, Ռոզան ելավ իր թաքստոցից, գուրս բերելով նաև հորը: Բանտը բոլորովին դատարկ էր: Ինչո՞ւ մնալ բանտում, եթե արյունալի դատաստանը տեղի էր ունենում փողոցում:

Գրիֆուսը, ամբողջ մարմնով դողալով, անվախ Ռոդայի հետևից դուրս եկավ. նրանք գնացին մի կերպ փակելու դարպասը: Մենք ասում ենք մի կերպ, քանի որ դարպասը կիսով չափ ջարդված էր:

Երևում էր, որ այստեղով անցել է մոլեգնած ժողովրդի հզոր հեղեղը: Ժամի շորսին մոտ նորից աղմուկ լսվեց: Սակայն այդ աղմուկն արդեն Գրիֆուսի և նրա աղջկա համար վտանգավոր չէր: Ամբոխը դիակները քարշ էր տալիս այնտեղ, որտեղ սովորաբար մարդկանց մահապատժի էին ենթարկում:

Ռոդան նորից թաքնվեց, սակայն այս անգամ նրա համար, որպեսզի չտեսնի այդ սարսափելի տեսարանը:

Կեսգիշերին Բյուլտենհոֆի դարպասը կամ ավելի շուտ՝ դարպասին փոխարինող բարիկադը բախեցին:

Երբ Գրիֆուսն ընդունեց հյուրին ու ձերբակալության հրամանում կարդաց բանտարկյալի անունը, նա բանտապահի մոռյալ ժպիտով փնթփնթաց.

— Կոռնել դե Վիտի սաֆիկը: Ահա, երիտասարդ, այստեղ ձեզ համար տոհմական խուց կա. հենց այնտեղ էլ ձեզ կտեղավորենք:

Եվ իր սրամտությունից գոհ, նա՝ այդ անհաշտ օրանժիտը, վերցրեց բանալիներն ու լապտերը, որպեսզի Կոռնելիուսին առաջնորդի այն խուցը, որը Կոռնել դե Վիտը թողել էր դեռ առավոտյան:

Այսպես, ուրեմն, Գրիֆուսը պատրաստվում էր սանիկին տանել նրա կնքահոր խուցը: Խուց տանող ճանապարհին դժբախտ ծաղկագործը լսեց շան հաչոց և տեսավ մի երիտասարդ աղջկա դեմք:

Իր հետևից քարշ տալով հաստ շղթան, շունը դուրս եկավ պատի մեծ խորշից և սկսեց հոտոտել Կոռնելիուսին, որպեսզի հետագայում ճանաչի, երբ նրան հրամայվի վերջինիս դզվել:

Բանտարկյալի ձեռքերի ճնշման տակ սանդուղքների բազրիքները ճռճոացին, և երիտասարդ աղջիկը այդ աղմուկից բացեց սանդուղքների տակ գտնվող իր սենյակի պատուհանը: Լապտերը, որ նա բռնել էր աջ ձեռքում, լուսավորում էր

նրա վարդապետն, սքանչելի դեմքը՝ երիզված հրաշալի, ամուր հյուսված շիկավուն խուսուպներով: Ձախ ձեռքով նա բռնել էր իր գիշերային հագուստի կուրծքը, քանի որ Կոռնելիուսի անսպասելի այցը ընդհատել էր նրա քունը:

Ստացվում էր նկարչի համար սքանչելի մի տեսարան, որը լրիվ արժանի էր մեմբրանդտի վրձնին. սև, պարույրաձև սանդուղքներ, որոնք Գրիֆուսի լապտերից լուսավորվում էին կարմրավուն լույսով, ամենավերևում՝ բանտապահի խիստ դեմքը, նրա հետևից՝ Կոռնելիուսի դեմքը, որը բազրիքներին թեքված՝ ներքև էր նայում. ներքևում, պատուհանի լուսավորված փեղկից ներս՝ Ռոզայի սիրունիկ դեմքը և նրա ամոթխած շարժումը, գուցե և այն պատճառով, որ Կոռնելիուսի տխուր, ցրված հայացքը սահել էր երիտասարդ աղջեկա սպիտակ, կլորիկ ուսերի վրայով:

Նվելի ներքև, ամբողջովին թաքնված ստվերում, սանդուղքի այն տեղում, որտեղ խավարը ծածկում էր ամեն ինչ, բոցկլտում էին շղթան զնգզնգացնող հսկայական շան արյունակալած աչքերը. շղթայի օղակները կրկնակի լույսից՝ Ռոզայի ճրագից ու Գրիֆուսի լապտերից, փայլվում էին:

Սակայն ինքը՝ մեծ մեմբրանդտն անգամ չէր կարող ներկայացնել Ռոզայի դեմքը պարուրող այն տանջալից արտահայտությունը, երբ նա տեսավ սանդուղքներից բարձրացող գեղեցիկ երիտասարդին և լսեց այն խոսքերը, որոնցով հայրը դիմեց նրան. «Դուք կստանաք ձեր տոհմական խուցը»:

Սակայն այդ կենդանի պատկերը շարունակվեց միայն մեկ վայրկյան, ավելի կարճ, քան մենք վատնեցինք նկարագրելու համար: Գրիֆուսը շարունակում էր իր ճանապարհը, նրան ակամայից հետևում էր Կոռնելիուսը: Հինգ րոպե անց նա մտավ մի խուց, որը չարժե նկարագրել, քանի որ ընթերցողին արդեն ծանոթ է:

Գրիֆուսը բանտարկյալին մատնացույց արեց մահճակալը և դուրս եկավ. դա այն մահճակալն էր, որի վրա այնքան տառապել էր այդ օրը տանջամահ արված մեկ այլ թըշվառ:

Մենակ մնալով՝ Կոռնելիուսը նետվեց մահճակալին, սակայն քնել չկարողացավ: Նա աչքը չէր կտրում այն վանդակալատ փոքրիկ լուսամուտից, որը նայում էր դեպի Բյուլտենհոֆյան հրապարակ: Այդտեղից նա տեսնում էր լուսի առաջին շերտերը, որոնք երևալով բարձր ծառերի կատարներին, սպիտակ քողի նման ընկնում էին գետնին: Ժամանակ առ ժամանակ լսվում էր Բյուլտենհոֆյան հրապարակով քառատրոփ անցնող ձիերի արագ դոփյունը, լսվում էր քարե հրապարակով ետ ու առաջ գնացող ժամապահի ծանր քայլերի ձայնը, իսկ արկերուզի՝ պատրույգները արևմտյան քամուց բոցկլտալով, մինչև բանտի պատուհաններն էին հասցնում արագ-արագ երկինք թռչող իրենց կայծերը:

Սակայն, երբ վաղորդյան լուսը արծաթավուն փայլ նետեց քաղաքի տանիքների սրածայր կատարներին, Կոռնելիուսը մոտեցավ պատուհանին և տխուր սկսեց չորս կողմը դիտել՝ իմանալու համար, թե կա՞րդյոք թեկուզ մի կենդանի շուն:

Հրապարակի ծայրին, գորշ տների վրա ուրվագծվելով, անկանոն ստվերագծով ու սեին տալով, բարձրանում էր ինչ-որ բան, որը առավոտյան մշուշում ստացել էր մութ կապույտ երանգ:

Կոռնելիուսը հասկացավ, որ դա կախաղան է: Դրա վրա օրորվում էին երկու տձև դիակներ, որոնք ավելի շուտ արյունաշաղախ կմախքներ էին:

Հաագայի բարի քաղաքացիները խոշտանգել էին իրենց զոհերի մարմինները, սակայն դիակները ազնվությամբ քարշ էին տվել դեպի կախաղան. սպանվածների անունները փայլում էին հսկայական տախտակի վրա:

Կոռնելիուսին հաջողվեց տախտակի վրա կարդալ անշնորհ նկարչի վրձինով գրված հետևյալ տողերը.

«Այստեղ կախաղան են բարձրացվել Յան դե Վիտ անունով մի մեծ չարագործ և նրա եղբայրը՝ մի մանր, ստոր

¹ Արկերուզ — պատրույգավոր, փողից լիցքավորվող հրացան, որն օգտագործվում էր XIV դարում: XVI դարում փոխարինվեց մուշկետով:

արարած, որոնք լինելով իրենց ժողովրդի թշնամիներ, ֆրանսիական թագավորի մեծ բարեկամներն էին»:

Կոռնելիուսը սարսափից ճշաց և խելագար ինքնամոռացության մեջ սկսեց դուռը ոտքերով ու ձեռքերով այնպիսի ուժգնությամբ բախել, որ կատաղած Գրիֆուսը բանալիների մեծ կապոցը ձեռքին վազեց եկավ:

Նա դուռը բացեց, անեծքներ թափելով բանտարկյալի հասցեին, որը համարձակվել է այդ ժամին անհանդստացնել իրեն:

— Սա ի՞նչ բան է: Խելագարվե՞լ է, ինչ է, այս նոր դե՛վիտը,— բացականչեց նա,— թվում է, թե բոլոր դե՛վիտների մեջ դե է բույն դրել:

— Նայեցե՛ք, նայեցե՛ք,— ասաց Կոռնելիուսը՝ բռնելով բանտապահի թևից ու քարշ տալով դեպի լուսամուտը:— Տեսեք, թե ինչ կարդացի:

— Որտե՞ղ:

— Այն տախտակի վրա:

Եվ գոնատ, ամբողջովին դողալով ու շնչահեղձ լինելով, Կոռնելիուսը մատնացույց արեց կախաղանը, որը դարդարված այդ անամոթ գրությամբ, բարձրանում էր հրապարակի խորքում:

Գրիֆուսը հռհռաց:

— Ա՛,— պատասխանեց նա,— դուք կարդացի՞ք... Դե, ի՞նչ արած, սիրելի պարոն, ահա թե ուր են հասնում, երբ ծանոթություն են հաստատում Վիլհելմ Օրանցու թշնամիների հետ:

— Վիտերին սպանե՞լ են,— փակ աչքերով ընկնելով մահճակալին, շնչաց Կոռնելիուսը. նրա ճակատը պատվեց քրտինքով, ձեռքերն անօգնական կախվեցին:

— Պարոնայք Վիտերին պատժեց ժողովուրդը,— առարկեց Գրիֆուսը:— Դուք այդ անվանում եք սպանություն, իսկ ես անվանում եմ մահապատիժ:

Եվ տեսնելով, որ բանտարկյալը ոչ միայն հանգստացավ, այլև բոլորովին ուժաթափ եղավ, նա աղմուկով ծածկելով դուռը և ճռինչով ամրացնելով դռան նիզը, խցից դուրս եկավ:

Կոռնելիուսն ուշքի եկավ. նա սկսեց դիտել այն խուցը, Գրիֆուսի խոսքերով ասած՝ «տոհմական խուցը», որը ողբերգական մահվան ճակատագրական նախադուռն էր:

Եվ քանի որ Կոռնելիուսը փիլիսոփա էր և, բացի այդ՝ քրիստոնյա, նա սկսեց աղոթել իր կնքահոր և մեծ պենսիոնարիի հոգիների խաղաղության համար և որոշեց հաշտվել բոլոր այն դժբախտությունների հետ, որոնք նրան կուղարկի բախտը:

Նրկնքից գետին ընկնելով, հայտնվելով իր խցում և համոզվելով, որ այնտեղ, բացի իրենից, ուրիշ ոչ ոք չկա, նա թևի տակից հանեց սև կակաչի սոխուկները և թաքցրեց խցի մութ անկյունում՝ քարի հետևը, որի վրա սովորաբար դնում են ջրի ավանդական կճուճը:

Ապարդյուն աշխատանքի այդքա՛ն տարիներ: Խորտակվա՛ծ երազներ: Նրա հայտնագործությունը կկորչի անհայտության մեջ այնպես, ինչպես ինքը կիջնի գերեզման: Թանտում ո՛չ մի խոտի կտոր, ո՛չ մի պտղունց հող, արևի ո՛չ մի ճառագայթ չկա:

Այդ միտքը Կոռնելիուսին հասցրեց մռայլ հուսահատության, որից նա դուրս եկավ միայն շնորհիվ մի արտակարգ դեպքի:

Թե դա ի՞նչ արտակարգ դեպք էր: Դրա մասին մենք կպատմենք հաջորդ գլխում:

10

Բանտապահի աղջիկը

Այդ նույն գիշերը, երբ Գրիֆուսն ուտելիք էր բերում բանտարկյալին, խցի դուռը բանալիս նա սայթաքեց ու ընկավ: Աշխատելով հավասարակշռությունը պահել, նա անհարմար ձևով հենվեց թևին և դաստակից վերև ոսկորը կոտրեց:

Կոռնելիուսն ուզում էր նետվել դեպի բանտապահ, սակայն Գրիֆուսը սկզբում դեռևս չզգալով վնասվածքի լրջությունը, ասաց.

— Ոչ մի լուրջ բան չկա: Մի՛ մոտեցեք:

Եվ, ցանկանալով վեր կենալ, նա հենվեց վնասված ձեռքին, սակայն ձեռքը ծալվեց: Այդ ժամանակ Գրիֆուսն զգաց շատ ուժեղ ցավ ու ճշաց: Նա հասկացավ, որ ձեռքը կոտրել է: Եվ ուրիշների նկատմամբ այնքան դաժան ու անզգա մարդը գիտակցութունը կորցրած ընկավ շեմքին ու անշարժ, սառը դիակի նման մնաց պառկած:

Խցի դուռը մնաց բաց, և Կոռնելիուսը համարյա թե ազատության մեջ էր: Սակայն նրա մտքովն էլ շանցավ օգտվել դժբախտ դեպքից: Որպես բժիշկ, նա իսկույն գլխի ընկավ, որ եթե թևը ծալվելիս այդպիսի ճթոց լավեց, ուրեմն կոտրվել է ոսկորը, և կարող է մեծ ցավ պատճառել: Կոռնելիուսը մոռանալով այն թշնամական վերաբերմունքը, որ ցույց էր տվել այդ մարդը իրենց առաջին իսկ հանդիպման ժամանակ, պատրաստ էր օգնել տուժածին:

Գրիֆուսի վայր ընկնելուց ու նրա տնքոցներից առաջացած աղմուկից սանդուղքների վրա լավեց արագ քայլերի ձայն, և իսկույն ևեթ հայտնվեց աղջիկը: Նրան տեսնելով, Կոռնելիուսը զարմացական մի ճիշ արձակեց, իսկ աղջիկն իր հերթին թեթևակի տնքաց:

Դա մի սքանչելի ֆրիսլանդուհի էր: Տեսնելով հատակին ընկած հորը և նրա վրա թեքված բանտարկյալին, աղջիկն սկզբում ենթադրեց, թե Գրիֆուսը, որի կոպտութունն իրեն լավ հայտնի էր, բանտարկյալի հետ ունեցած ընդհարման զոհ է դարձել:

Կոռնելիուսը երիտասարդ աղջկա հայացքում իսկույն կարդաց այդ կասկածը:

Սակայն առաջին իսկ հայացքից աղջիկը հասկացավ ճշմարտութունը, իր հրաշալի աչքերով նայեց երիտասարդին և արտասվալից ասաց.

— Ներեցեք, պարոն: Շնորհակալ եմ: Ներեցեք վատ մտքերիս համար, և շնորհակալութուն ցույց տված օգնության համար:

Կոռնելիուսը կարմրեց:

— Մերձավորին օգնութուն ցույց տալով,— պատասխանեց նա,— ես միայն իմ պարտքն եմ կատարում:

— Այո, և ցույց տալով այդ օգնութիւնը երեկոյան, դուք մոռանում եք այն վիրավորանքները, որ այդ մարդը հասցրել է ձեզ առավոտյան: Դա ավելի քան մարդկային է, դա ավելի քան քրիստոնեական է, պարոն:

Կոռնելիուսը ապշած նայեց գեղեցկուհուն և զարմացալ, թե ինչպես մի հասարակ աղջկա շրթունքներ կարող են արտասնել այդքան աղնվագույն մտքեր:

Սակայն նա չհասցրեց հայտնել իր զարմանքը, քանի որ Գրիֆուսը ուշքի գալով՝ աչքերը բացեց, ու նրա սովորական կոսպտութիւնն էլ նրա հետ միասին արթնացաւ:

— Ահա,— ասաց նա,— ահա թե ինչ է ստացվում, երբ շտապում ես բանտարկյալին ընթրիք բերել. շտապելուց վայր ես ընկնում ու ձեռքդ կոտրում և այնուհետև, առանց որևէ օգնութեան, փռվում ես հատակին:

— Լո՛ւք,— ասաց աղջիկը:— Դուք անարդարացի եք երիտասարդի նկատմամբ, ես հասա այն պահին, երբ նա ձեզ օգնութիւն էր ցույց տալիս:

— Նա՞,— անվստահ տոնով հարցրեց Գրիֆուսը:

— Այո, այդպես է, և պատրաստ եմ այսուհետև էլ ձեզ բուժել:

— Դո՞ւք,— հարցրեց Գրիֆուսը:— Մի՞թե դուք բժիշկ եք:

— Այո, դա իմ հիմնական մասնագիտութիւնն է:

— Եվ դուք կարող եք իմ թևը բուժե՞լ:

— Անկասկած:

— Իսկ դրա համար ձեզ ի՞նչ է պետք:

— Երկու հարթ տախտակ և երկու փաթեթ վիրակապ:

— Դու լսո՞ւմ ես, Ռոզա,— ասաց Գրիֆուսը:— Բանտարկյալը կբուժի իմ թևը և մենք կազատվենք ավելորդ ծախսերից. օգնիր ինձ ոտքի կանգնեմ, ինձ կարծես թե արճիճով են լցրել:

Վիրավորը հենվեց Ռոզայի ուսին, մյուս առողջ ձեռքով դրկեց նրա վիզը և, ուժ գործադրելով, ոտքի ելաւ, իսկ Կոռնելիուսն այդ ժամանակ մոտեցրեց բաղկաթոռը, որպես-
դի նրան աղատի ավելորդ շարժումներից:

Գրիֆուար նստեց, հետո դարձավ իր աղջկան.

— Դե, չլսեցի՞ր, ինչ է: Գնա, բե՛ր բռնորը, ինչ պահանջ-
վում է:

Ռոզան վայր իջավ և շուտով վերադարձավ երկու տախ-
տակ ու երկար վիրակապը ձեռքին:

Կոռնելիուար բանտապահի վրայից բաճկոնը հանեց և
վերնաշապկի թևը բշտեց:

— Ձեզ ա՛յս էր հարկավոր, պարոն:



— Այո՛, օրիորդ,— պատասխանեց Կոռնելիուար, մի
հայացք գցելով աղջկա բերածին,— այո՛, դա հենց այն է,
ինչ անհրաժեշտ է:

Ռոզան մոտ քաշեց սեղանը: Կոռնելիուար Գրիֆուարի
կոտրված ձեռքը դրեց սեղանին այնպես, որ շշարժվի և
զարմանալի ճարպկությամբ միացնելով կոտրված ոսկոր-
ների ծայրերը, տախտակները հարմարեցրեց ու վիրակապով
կապեց:

Երբ ամեն ինչ վերջացած էր, բանտապահը նորից գի-
տակցությունը կորցրեց:

— Օրիորդ, գնացե՛ք քացախ բերե՛ք,— ասաց Կոռնե-
լիուար,— մենք կշփենք ձեր հոր քունքերը, և նա ուշքի կգա:

Սակայն այդ հանձնարարությունը կատարելու փոխա-

րեն Ռոզան, համոզվելով, որ հայրը իրոք անգիտակից վիճակում է, մոտեցավ Կոռնելիուսին:

— Պարոն, ասաց նա, — ծառայության դիմաց՝ ծառայություն:

— Ի՞նչ է նշանակում այս, սիրելի մանկիկս:

— Նշանակում է, պարոն, դատավորը, որը ձեզ վաղը պետք է հարցաքննի, եկավ իմանալու, թե դուք ո՞ր խցումն եք և, երբ իմացավ, թե այն խցում եք, որտեղ բանտարկված էր Կոռնել դե Վիտոր, մի տեսակ շարագուշակ քմծիծաղեց. ես վախենում եմ, որ ձեզ նույնպես ինչ-որ դժբախտություն է սպասում:

— Սակայն ինձ ի՞նչ կարող են անել, — հարցրեց Կոռնելիուսը:

— Դուք տեսնո՞ւմ եք այն կախաղանը:

— Բայց չէ՞ որ ես անմեղ եմ, — ասաց Կոռնելիուսը:

— Իսկ մի՞թե մեղավոր էին այն երկուսը, որոնք հիմա խոշտանգված, այլանդակված կախաղան են բարձրացվել:

— Այո՛, դա ճիշտ է, — մոռյվելով ասաց Կոռնելիուսը:

— Բացի այդ, — շարունակեց Ռոզան, — հասարակական կարծիքը ցանկանում է, որ դուք մեղավոր ճանաչվեք: Մեղավոր եք դուք, թե՞ ոչ՝ ձեր գործի հետաքննությունը կպարզի: Վաղը չէ մյուս օրը դուք կդատապարտվեք, իսկ մեր ժամանակներում այդպիսի գործերը արագ են արվում:

— Ի՞նչ հետևություններ եք անում այդ բոլորից, — հարցրեց Կոռնելիուսը:

— Ահա թե ինչ հետևություններ. ես մենակ եմ, թույլ կին եմ, հայրս ուշագնաց ընկած է, շան դնչկալը հագցված է, հետևապես ոչ ոք և ոչինչ չի խանգարում ձեզ թաքնվելու: Փախե՛ք ու փրկվեք. ահա թե ինչ հետևություններ եմ անում:

— Այդ ի՞նչ եք ասում:

— Ես ասում եմ, որ դժբախտաբար ինձ չհաջողվեց փրկել ո՛չ Կոռնել և ո՛չ էլ Յան դե Վիտերին, և շատ կցանկանայի փրկել գոնե ձե՛զ: Միայն թե շտապեք, ահա, հորս շնչառությունը կարծեք թե կանոնավորվում է, մի վայրկյա-

նից նա կարող է ուշքի գալ, աչքերը բացել, և այն ժամանակ արդեն ուշ կլինի: Դուք ի՞նչ է, տատանվո՞ւմ եք:

Կոռնելիուսը քարացածի նման կանգնել էր և նայում էր Ռոզային: Թվում էր, թե նա նայում է աղջկան, սակայն բոլորովին չի լսում, թե վերջինս ինչ է ասում:

— Դուք ի՞նչ է, մի՞թե չեք հասկանում,— անհամբերությամբ ասաց աղջիկը:

— Ոչ, հասկանում եմ,— պատասխանեց Կոռնելիուսը,— սակայն...

— Սակայն:

— Ես հրաժարվում եմ: Իմ փախուստի համար ձեզ կմեղադրեն:

— Իսկ մի՞թե դա որևէ նշանակություն ունի,— կարմրելով պատասխանեց Ռոզան:

— Շնորհակալություն, մանկիկս,— առարկեց Կոռնելիուսը,— սակայն ես կմնամ:

— Դուք մնո՞ւմ եք: Աստված իմ, աստված իմ: Մի՞թե չհասկացաք, որ ձեզ կդատապարտեն... Կդատապարտեն մահվան՝ կախաղանի միջոցով. կարող է պատահել նաև, որ ձեզ սպանեն, կտոր-կտոր անեն, ինչպես վարվեցին պարոն Յանի և պարոն Կոռնելի հետ: Հանո՞ւն ամեն սրբության: Ես ձեզ թախանձո՞ւմ եմ: Ինձ համար մի՛ անհանգստացեք և փախե՛ք այս անիծված խցից: Զգուշացեք, այս խուցը դե վիտերին դժբախտություն է բերում:

— Օ՛հ,— բացականչեց ուշքի եկող բանտապահը:— Այդ ո՞վ է այդտեղ արտասանում այդ ասիկար, ստոր, սրիկա, հանցագործ վիտերի անունը:

— Բարեկամս, մի՛ հուզվեք,— ասաց Կոռնելիուսը մեղմ ժպտալով:— Կոտրվածքի ժամանակ չի կարելի զայրանալ:

Դառնալով Ռոզային, նա շշուկով ասաց.

— Զավակս, ես անմեղ եմ և կսպասեմ իմ դատավորներին՝ անմեղ մարդու խաղաղ հանգստությամբ:

— Սը՛ս,— ասաց Ռոզան:

— Ինչո՞ւ:

— Հայրս չպետք է կասկածի, որ մենք ինչ-որ բանի մասին բանակցել ենք:

— Իսկ ի՞նչ կսլատահի:

— Կպատահի այն, որ ինձ այլևս թույլ չի տա այստեղ դալու:

Կոռնելիուսը ժպիտով ընդունեց այդ անմեղ խոստովանությունը: Կարծես թե դժբախտության մեջ փայլեց երջանկության մի ճառագայթ:

— Դե, այդ ինչի՞ մասին եք այդտեղ երկուսով քչփըշում,— վեր կենալով և ձախ ձեռքով աջը բռնելով, գոռաց Դրիֆուսը:

— Ոչ մի բանի,— պատասխանեց Ռոզան:— Պարոնը բացատրում է ինձ այն ոեժիմը, որին պետք է հետևեք:

— Ռեժիմ, որին ես պետք է հետևե՞մ: Ռեժիմ, որին ես պետք է հետևեմ: Դու, աղալնյակս, նույնպես ունես ոեժիմ, որին պետք է հետևես:

— Ի՞նչ ոեժիմ, հայրիկ:

— Չմտնել բանտարկյալների խցերը, իսկ մտնելու դեպքում երկար չմնալ: Ապա, փաստփուսադ հավաքիր, արա՛գ:

Ռոզան ու Կոռնելիուսը հայացքներ փոխանակեցին:

Ռոզայի հայացքն ասում էր. «Տեսնո՞ւմ եք»: Կոռնելիուսի հայացքը նշանակում էր. «Թող լինի այնպես, ինչպես բախտը կհրամայի»:

11

Կոռնելիուս վան Բեռլեի կտակը

Ռոզան չէր սխալվում: Հաջորդ առավոտյան դատավորները Բյուտենհոֆ եկան և Կոռնելիուս վան Բեռլեին հարցաքննեցին: Սակայն հարցաքննությունը երկար չտևեց: Հաստատվեց, որ Կոռնելիուսն իր մոտ պահել է Ֆրանսիայի հետ դե Վիտերի ունեցած ճակատագրական գրագրությունը:

Նա չէր էլ հերքում այդ բանը:

Դատավորները միայն վստահ չէին այն հարցում, թե

իրո՞ք այդ նամակները իր սանիկին է հանձնել Կոռնել դե Վիտը: Սակայն, քանի որ այդ թշվառներն արդեն մեռած էին, ապա Կոռնելիուսը հարկ չհամարեց որևէ բան թաքցնել և ամենայն մանրամասնությամբ պատմեց, թե ինչպիսի հանգամանքներում Կոռնել դե Վիտը անձամբ իրեն է հանձնել այդ թղթերը:

Խոստովանությունն ապացույց էր այն բանի, որ սանիկը նույնպես մասնակից է իր կնքահոր դեմ հարուցվող մեղադրանքին: Կոռնելիուսի մեղսակցությունն այդ գործին բոլորի համար վերջնականապես պարզ էր:

Կոռնելիուսը, սակայն, չբավարարվեց այդ խոստովանությամբ: Նա մանրամասն պատմեց իր հակումների, սովորությունների ու զբաղմունքների մասին: Նա պատմեց, թե ինքը որքան անտարբեր է քաղաքականության նկատմամբ, սակայն ինչպիսի սեր է տածում դեպի արվեստները, գիտությունները և ծաղիկները: Նա ասաց, որ այն ժամանակից ի վեր, երբ Կոռնելն այցելեց Դորդրեխտ և վստահեց իրեն այդ թղթերը, ինքը երբեք ձեռք չի տվել և նույնիսկ մոռացել է դրանց գոյությունը:

Այդտեղ Կոռնելիուսին առարկեցին և ասացին, որ նա ճշմարտությունը չի ասում, քանի որ ծրարը փակված էր հենց այն դարակում, որը նա ամեն օր նայում, ստուգում էր և որի պարունակության հետ շարունակ գործ ուներ:

Կոռնելիուսը պատասխանեց, որ դա ճիշտ է, բայց ինքը բացում էր այդ դարակը միայն նրա համար, որպեսզի համոզվի՝ չո՞ր են արդյոք սոխուկները և արդյոք ծիլեր չեն տվել:

Նրան առարկեցին ասելով, թե ողջամիտ չէ այն դատողությունը, իբր նա անտարբեր է եղել ծրարի նկատմամբ, անհավատալի է իր կնքահոր ձեռքից ստանալով այդքան կարևոր մի ծրար, Կոռնելիուսը ծանոթ շլիներ դրա բովանդակությանը:

Դրան նա պատասխանեց, որ իր կնքահայր Կոռնելը շատ զգույշ մարդ էր և հետո՝ իրեն այնքան էր սիրում, որ դժվար թե պատմեր ծրարի բովանդակության մասին, որը կարող էր միայն անհանգիստ վիճակում պահել դրա պահպանողին:

Կոռնելիուսին առարկեցին՝ ասելով, որ եթե դա այդպես լի-
լինեք, ապա պարոն դե Վիտոր, համենայն դեպս, ծրարին կը-
կցեք մի գրություն, որը կվկայեք այն մասին, թե սանիկը
բոլորովին անտեղյակ է այդ գրագրությանը և կամ այն ժա-
մանակ, երբ Կոռնել դե Վիտին մեղադրում էին, նա կարող
էր մի նամակ գրել, որը հիմա Կոռնելիուսի համար կծառա-
յեր որպես արդարացնող միջոց:

Կոռնելիուսը պատասխանեց, որ ամենայն հավանակա-
նությամբ, կնքահայրը մտածում էր, որ այդ ծրարին ոչ մի
վտանդ չի սպառնում, քանզի պահված էր մի պահարա-
նում, որը վան Բեռլեի տանը համարվում էր ավանդական
տապանի՝ նման մի սրբություն. հենց այդ պատճառով էլ
Կոռնել դե Վիտոր որևէ գրություն թողնելը համարել է ավե-
լորդ: Ինչ վերաբերում է նամակին, ապա ինքը կարծես թե
հիշում է, ինչպես ձերբակալությունից առաջ, երբ ինքը
գտնվում էր չորանոցում և տարված էր շատ հազվագյուտ
իր սոխուկներից մեկի գննությամբ, հանկարծ չորանոց
մտավ Յան դե Վիտի ծառան Պեյրեն հանձնեց ինչ-որ մի
նամակ. սակայն այդ բոլորի մասին նա շատ աղոտ է հի-
շում, որպես վայրկենական մի տեսիլք: Ծառան իսկույն ան-
հետացավ, իսկ նամակը լավ փնտրելու դեպքում գուցե
գտնվի:

Սակայն Կրակեին անհնար եղավ գտնել. նա չքացել էր
Հոլանդիայից: Նամակը գտնելու հնարավորությունները այն-
քան քիչ էին, որ նույնիսկ չփորձեցին գտնել:

Կոռնելիուսն ինքն էլ առանձնապես չէր պնդում, որ այդ
թուղթը փնտրեն, քանի որ հավատացած չէր, թե այն ինչ-
որ կապ ունի իրեն ներկայացվող մեղադրանքի հետ:

Դատավորները ձևացնում էին, թե իրենք շահագրգռված
են, որպեսզի Կոռնելիուսն ավելի ակտիվ պաշտպանվի: Նը-
րանք մի տեսակ բարեհոգի համբերություն էին ցուցաբերում
նրա նկատմամբ, որը լինում է այն դեպքում, երբ քննիչը
շահագրգռված է լինում մեղադրյալի բախտի մեջ կամ, երբ

¹ Ուխտի տապանակ — ըստ ավետարանական առասպելի՝ մի արկղ,
որի մեջ պահվում էին կրոնական սրբություններ:

մեղադրյալն իրեն նախօրոք հաղթող է գտւմ, քանի որ արդեն կոտրել է թշնամու ինքնավստահությունը և նրան ամբողջովին իր ձեռքերի մեջ է պահում. դրա համար էլ այլևս նա ավելորդ է համարում մեղադրյալի նկատմամբ իզուր խստություն գործադրել:

Կոռնելիուսը շրնդունելով այդ կեղծավոր բարեգործությունը, իր վերջին խոսքում, որը նա արտասանեց նահատակի վեհությամբ ու քարոզչի անվրդովությամբ, ասաց.

— Դուք, պարոններ, ինձ այնպիսի բաներ եք հարցնում, որոնց մասին, բացի մաքուր ճշմարտությունից, ես ուրիշ ոչինչ ասել չեմ կարող: Եվ ահա՛ այդ ճշմարտությունը: Ծրարն ինձ մոտ է ընկել այն ձևով, ինչպես բացատրեցի. և ես ասածո առաջ երդվում եմ, որ չգիտեի ու հիմա էլ չգիտեմ դրա բովանդակությունը: Միայն ձերբակալության օրը ինձ հայտնի դարձավ, որ դա իր մեջ պարունակում է մեծ պենսիոնարի գրագրությունը մարկիզ Լուվուայի հետ: Ես հավատացնում եմ վերջապես, որ ինձ համար առեղծվածային է նույնպես, թե ի՞նչ ձևով է հայտնի դարձել ծրարի ինձ մոտ լինելու փաստը և չեմ կարող հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է հանցանք համարել այն բանը, որ ես իմ դժբախտ ու նշանավոր կնքահորից պահպանելու նպատակով ընդունել եմ ինչ-որ մի բան:

Սրանով էլ վերջացավ Կոռնելիուս վան Բեռլեի պաշտպանական խոսքը: Դատավորները գնացին խորհրդակցելու:

Նրանք որոշեցին. քաղաքացիական խռովությունների ամեն մի սաղմ վտանգավոր է, քանի որ այն բորբոքում է պատերազմի կրակը: Բոլորի շահերից ելնելով՝ այդ կրակը պետք է մարել:

Դատավորներից մեկը, որը խորաթափանց մարդու համբավ ուներ, որոշեց, որ այդ երկտասարդը արտաքինից ֆլեգմատիկ, իրականում պետք է որ վտանգավոր մեկը լինի. իր սառը արտաքինի տակ նա թաքցնում է իր ազգականներ, պարոններ դե Վիտերի համար վրիժառու լինելու բուռն ցանկությունը: Մի ուրիշը նկատեց, որ կակաչների նկատմամբ ունեցած սերը և քաղաքականությունն իրար հետ խիստ համատեղելի են. պատմականորեն ապացուցված է, որ շատ ու

շատ շարադործներ աշնպիտի կրքոտությամբ էին զբաղվում
այգեգործությամբ, որ թվում էր, թե դա նրանց միակ զբաղ-
մունքն է, այնինչ այդ նույն ժամանակ նրանք զբաղվում էին
բոլորովին այլ գործով: Որպես ապացույց կարող են ծառա-
յել Գոռոզ Տարկվինիոսը¹, որը Գաբինքում կակաշներ էր
մշակում, և մեծ Կոնդեն², որը Վենսենյան աշտարակում մե-
խակներ էր աճեցնում, մինչդեռ սրանցից առաջինը մշա-
կում էր իր Հոռոմ վերադառնալու ծրագիրը, իսկ մյուսը՝
բանտից ազատվելու նախագիծը:

Եվ որպես հետևություն, դատավորը ներկայացրեց հե-
տևյալ դիլեման³. Կամ պարոն Կոնենլիուս վան Բեուկեն շատ
է սիրում իր կակաշները, կամ նա շատ է սիրում քաղաքա-
կանությունը. երկու դեպքում էլ նա մեղ ճշմարտությունը չի
ասում, որովհետև՝ նախ և առաջ՝ նրա մոտ գտնված նամա-
կագրությունից ապացուցվեց, որ նա զբաղվել է նաև քաղա-
քականությամբ. այնուհետև ապացուցվեց, որ նա զբաղվել
է նաև կակաշներով. այստեղ գտնված սոխուկները խոսում
են այդ մասին: Վերջապես այն հանգամանքը, որը և դիտ-
վում է որպես ամենամեծ ստորություն, Կոնենլիուս վան Բեու-
կեն զբաղվել է միաժամանակ և՛ կակաշներով, և՛ քաղաքա-
կանությամբ, ապացույց է այն բանի, որ մեղադրյալը իր
էությունը երկատված է ու երկերեսանի, քանի որ նա ի վիճա-
կի է հրապուրվել և՛ քաղաքականությամբ, և՛ ծաղկագործու-
թյամբ: Հենց դա էլ բնութագրում է մարդուն, որպես ժողո-
վրդի հանգստությունը խանգարող մի շատ վտանգավոր
անձնավորության: Եվ կարելի է որոշ, ավելի շուտ՝ լրիվ հա-
մեմատություն անցկացնել նրա և Գոռոզ Տարկվինիոսի ու
Կոնդենի միջև, որոնց մասին վերևում նշեցինք:

1 Գոռոզ Տարկվինիոս (IV դ. մ. թ. ա.) — համաձայն ավանդության,
հին Հոռոմի վերջին կայսրը: Խառնալուծում նվաճել է Գաբի քաղաքը:

2 Արքայազն Կոնդեն (1621—1686) — ֆրանսիական զորավար: Ֆրանսիայի փաստական կառավարող կարգինալ Մազարինիի հետ ունեցած թըշ-
նամանքի ժամանակ, ոչ երկար ժամանակով, բանտարկվել էր Վենսենի
ամրոցում:

3 Դիլեմա — երկու ոչ ցանկալի հնարավորություններից որևէ մեկի
ընտրության անհրաժեշտություն:

Այս բոլոր դատողությունների վերջում ասվում էր, որ Հոլանդիայի փոխարքա արքայազնը անսահման երախտապարտ կլինի Հաագա քաղաքի կառավարչությանը, որ վերջինս արմատախիլ անելով նրա իշխանության դեմ ուղղված ամեն մի դավադրություն, հեշտացնում է Յոթ նահանգների կառավարման գործը:

Այս փաստարկը հանդիսացավ ամենից ուժեղը: Որպեսզի արմատից վերջնականապես կտրեն դավադրության բոլոր սաղմերը, դատավորները միաձայն որոշեցին մահվան դատապարտել Կոռնելիուս վան Բեուլեին, որը մերկացվել և մեղադրվում էր այն բանում, որ նա՝ Կոռնելիուս վան Բեուլեն, կակաշներ սիրողի անմեղ անվան տակ քողարկված, մասնակցություն է ունեցել այն ստոր բանսարկություններին ու զայրացուցիչ դավադրությանը, որ ձեռնարկել էին պարոններ դե վիտերը հոլանդական ժողովրդի դեմ, վերջինիս թշնամիների՝ ֆրանսիացիների հետ ունեցած հարաբերությունների ու կապերի միջոցով:

Բացի այդ, դատավճռում ասվում էր, որ վերոհիշյալ Կոռնելիուս վան Բեուլեն դուրս կբերվի Բյուլտենհոֆ բանտից և կուղարկվի կառափնարան, որը գտնվում է նույն այդ անունը կրող հրապարակում: Այնտեղ դատական որոշումներն ի կատար ածող մարդը կկտրի նրա գլուխը: Քանի որ խորհրդակցությունը խիստ լուրջ էր, ապա տեղի մոտավորապես մեկեկես ժամ: Այդ ընթացքում բանտարկյալին տարան իր խուցը: Այնտեղ էլ եկավ դատական քարտուղարը, որպեսզի հրապարակի դատավճիռը:

Գրիֆուսը ձեռքի կոտրվածքի պատճառով բարձր ջերմություն ուներ և ստիպված անկողնուց վեր չէր կացել: Նրա բանալիները հանձնվել էին մի ծառայողի, որը և քարտուղարին առաջնորդեց խուց, նրա հետևից եկավ և շեմքին կանգնեց գեղեցիկ ֆրիսլանդուհի Ռոզան: Նա թաշկինակը առահել էր բերանի մոտ, որպեսզի խլացնի իր հառաչանքներն ու հեկեկանքը:

Կոռնելիուսը դատավճիռը մինչև վերջ լսեց ավելի շուտ

ղարմանքով, քան թե վշտով: Քարտուղարը նրան հարցրեց, թե որեւէ առարկություն չունի՞ արդոք:

— Ոչ,— պատասխանեց Կոռնելիուսը:— Միայն խոստովանում եմ, որ մահւման բոլոր հնարավոր պատճառներից սա այն շնախատեսւածն էր, որը հեռատես մարդը կարող էր կանխել, եթե միայն մի փոքր կասկածեր դրա հնարավորության մասին:

Կոռնելիուս վան Բեռլիի այդպիսի պատասխանից հետո քարտուղարը վերջինիս խոնարհվեց այնպիսի պատկառանքով, ինչպես այդ աստիճանավորները ցույց են տալիս բոլոր խավերի շատ խոշոր հանցագործներին:

Երբ քարտուղարը պատրաստւում էր դուրս գալու, Կոռնելիուսը կանգնեցրեց նրան.

— Ի միջի այլոց, պարոն քարտուղար, ասացեք խնդրեմ, ո՞ր օրն է նշանակված մահապատժի ի կատար ածումը:

— Այսօր,— պատասխանեց քարտուղարը մի քիչ շփոթված դատապարտչալի սառնասրտությունից:

Դուան հետևից լսվեցին հեկեկոցներ:

Կոռնելիուսը կռացավ, որպեսզի տեսնի, թե այդ ո՞վ է հեկեկում, սակայն Ռոզան զուշակելով վերջինիս միտքը՝ ետ քաշվեց:

— Իսկ ո՞ր ժամին է նշանակված մահապատժը,— ավելացրեց Կոռնելիուսը:

— Կեսօրին, պարոն:

— Սատանան տանի,— նկատեց Կոռնելիուսը,— թվում է, թե քսան բոպե առաջ լսեցի, թե ինչպես զանգերն ազդարարեցին ժամը տասը: Ես ոչ մի բոպե չպետք է կորցնեմ:

— Որպեսզի մեղքերի թողություն խնդրեք, այնպես չէ՞, պարոն,— ցածր խոնարհվելով՝ ասաց քարտուղարը:— Եվ դուք կարող եք պահանջել ցանկացած հոգևորականին:

Այս խոսքերով նա ետ-ետ գնալով՝ դուրս եկավ, իսկ բանտապահի օգնականը պատրաստվելով դուռը փակել Կոռնելիուսի վրա, նույնպես դուրս եկավ: Այդ միջոցին սակայն, սպիտակ, դողացող մի ձեռք խցկվեց այդ մարդու և ծանր դուան միջև:

Կոռնելիուսը տեսավ միայն սպիտակ, ժանյակավոր

ականջիկներով ոսկեգույն գլխարկը, որը սքանչելի ֆրիս-
լանդուհինների գլխանոցն է, այնուհետև լսեց դռնասլանի
ականջին շշուկով ասված մի քանի խոսք։ Վերջինս դրանից
հետո ծանր բանալիները դրեց իրեն մեկնած սպիտակ ձեռ-
քի մեջ և մի քանի աստիճան վայր իջնելով, նստեց սան-
դուղքների մեջտեղում, այսպիսով սանդուղքները պահպանե-
լով վերելից։ Ներքեից դրանք պահպանում էր շունը։

Ոսկե գլխարկը շուռ եկավ, և Կոռնելիուսը տեսավ գեղեց-
կուհի Ռոզալի փոքրիկ, լացակումած դեմքն ու հրաշալի, խո-
շոր, արցունքներով լի հրկնագույն աչքերը։

Երիտասարդ աղջիկը ձեռքերը սեղմելով կրծքին, մո-
տեցավ Կոռնելիուսին։

— Օ՛հ, պարոն, պարոն,— ասաց նա և շվերջացրեց իր
խոսքը։

— Սիրելի մանկիկ,— հուզմունքով ասաց Կոռնելիու-
սը,— Ի՞նչ եք պահանջում ինձանից։ Հիմա ես զրկված եմ
ամեն իրավունքից, նախազգուշացնում եմ ձեզ։

— Պարո՛ն, ես ձեզանից խնդրում եմ մի բան,— ասաց
Ռոզան, իր ձեռքերը կիսով չափ Կոռնելիուսին մեկնելով,
կիսով չափ՝ դեպի երկինք։

— Մի՛ արտասովեք, Ռոզա,— ասաց Կոռնելիուսը,—
ձեր արցունքներն ինձ ավելի են հուզում, քան մոտալուտ
մահը։ Եվ դուք գիտեք, թե որքան բանտարկյալն անմեղ է,
այնքան ավելի հանդիստ պետք է ընդունի իր մահը։ Նա
պետք է մահվանը դիմավորի նույնիսկ խնդուխտմբ, ինչ-
պես այդ անում են նահատակները։ Դե՛, դադարեք լաց լի-
նելուց, սիրելի Ռոզա, և ասեք ինձ, թե ի՞նչ էիք ցանկա-
նում։

Աղջիկը ծնկի եկավ։

— Ներեցեք իմ հորը,— ասաց նա։

— Ձեր հո՞րը,— դարմանքով հարցրեց Կոռնելիուսը։

— Այո՛, նա այնպես դաժան էր վարվում ձեզ հետ։

Այդպիսին է նրա բնույթը։ Նա կոպիտ է բռնորի հետ։

— Նա պատժված է, Ռոզա, ավելի քան պատժված՝
իր ձեռքի ջարդվածքով, և ես նրան ներում եմ։

— Շնորհակալ եմ,— ասաց Ռոզան։— Իսկ հիմա



ասացեք՝ չե՞մ կարող արդյոք
որևէ բանով օգտակար լինել,
օգնել ձեզ:

— Դուք կարող եք շորաց-
նել ձեր սքանչելի աչքերը, թան-
կագին մանկիկ,— մեղմ ժպի-
տով ասաց Կոռնելիուսը:

— Ձե՛զ համար... ձե՛զ
համար...

— Սիրելի Ռոզա, նա, որին
սպրելու մնացել է ընդամենը
մեկ ժամ, չափազանց սիրա-
րիտ¹ պետք է լինի, որսփեսզի
ինչ-որ ցանկություններ ունենա:

— Օրինակ՝ հոգևորական,
որ ձեզ առաջարկեցին:

— Ես միշտ հավատացել
եմ աստծուն, Ռոզա, և երբեք
չեմ հակառակել նրա կամքին:
Ես կարիք չունեմ նրա հետ
հաշտվելու, այդ պատճառով էլ
ձեզանից հոգևորական չեմ պա-
հանջի: Իմ ամբողջ կյանքում ես
հափազել եմ մի բան, Ռոզա՛:

Ծթն դուք օգնեի՛ք ինձ իրականացնելու:

— Օ՛, պարոն Կոռնելիուս, ասացե՛ք, ասացե՛ք,— բա-
ցականչեց աղջիկը հեկեկալով:

— Տվե՛ք ինձ ձեր սիրունիկ ձեռքը և խոստացե՛ք, որ
վրաս չեք ծիծաղի, մանկիկս...

— Ծիծաղե՛լ,— հուսահատությամբ բացականչեց աղ-
ջիկը:— Այսպիսի ըոպերին ծիծաղե՛լ: Դուք, ինչպես երևում
է, մինչև անգամ ինձ վրա չեք էլ նայել, պարոն Կոռնելիուս:

— Ո՛չ, նայել եմ, Ռոզա, նայել եմ մարմնի ու հոգու
աչքերով: Ես դեռ երբեք չեմ հանդիպել ավելի սքանչելի մի

¹ Սիրարիտ — երես առած, ճոխություն ու հաճույք սիրող մարդ:

կնոջ, ավելի ազնիւ մի հոգու, և, եթե այս բուսական եւ այլեւ չեմ նայում ձեզ, ապա միայն այն պատճառով, որ պատ-
րաստուելով կյանքից հեռանալ, ես չէի ցանկանա այնտեղ
թողնել որեւէ բան, որից բաժանվելն ինձ համար ծանր լիներ:
Ռոզան ցնցվեց: Երբ բանտարկյալն ասում էր այդ
խոսքերը, Բյուլտենհոֆյան զանգերը խփեցին ժամը սասնը-
մեկը: Կոռնելիուսը սթափվեց:

— Այո՛, այո՛, — ասաց նա, — դուք իրավացի եք
Ռոզա, պետք է շտապել:

Այնուհետեւ նա թևի տակից հանեց թղթի մեջ փաթաթ-
ված սոխուկները:

— Իմ սիրելի բարեկամ, ես շատ եմ սիրում ծաղիկներ:
Այդ այն ժամանակ էր, երբ չգիտեի, թե բացի ծաղիկներից,
կարելի է սիրել ինչ-որ մի ուրիշ բան: Օ՛, մի՛ կարմրեք,
Ռոզա, եթե նույնիսկ լսեք իմ խոստովանութունը ձեզ սի-
րելու մասին: Միևեւսն է, իմ սիրելի մանկիկ, դա ոչ մի
հետեանք չի ունենա: Այնտեղ՝ Բյուլտենհոֆյան հրապարա-
կում կա մի պողպատյա զենք, որը ուղիղ վաթսուն բուսե-
հետո իմ այդ համարձակության համար ինձ կպատժի:
Այսպես ուրեմն, Ռոզա, ես սիրում էի ծաղիկներ և հայտ-
նագործեցի, համենայն դեպս ինձ այդպես է թվում, նշանա-
վոր սև կակաշի գաղտնիքը, որի աճեցնելը մինչև հիմա հա-
մարում էին անհնարին բան և որի համար, ինչպես ձեզ
հայտնի է, գուցե և անհայտ, Հառուեմ քաղաքի ծաղկա-
գործների ընկերության կողմից նշանակված է հարյուր հա-
զար ֆլորին պարգև: Այդ հարյուր հազար ֆլորինը, աստ-
ծուն հայտնի է, թե այդ չէ, որ ափսոսում եմ, այժմ գտնը-
վում է այս թղթի մեջ: Դրանք ձեռք են բերվել այն երեք
սոխուկներով, որոնք գտնվում են այս թղթի մեջ, և դուք,
Ռոզա, կարող եք վերցնել ձեզ: Ես նվիրում եմ:

— Պարոն Կոռնելիուս:

— Օ՛, դուք կարող եք վերցնել, Ռոզա: Դուք ո՛չ մե-
կին ո՛չ մի վնաս չեք տա: Ամբողջ աշխարհում ես ոչ ոք
չունեմ: Հայրս ու մայրս մեռել են, ես երբեք ոչ եղբայրներ
եմ ունեցել, ոչ էլ քույրեր, երբեք ոչ ոքի չեմ սիրահարվել,
իսկ եթե որեւէ մեկն ինձ սիրել է, ապա այդ մասին տեղյակ

չեմ եղել: Ասենք, դուք էլ, Ռոզա, տեսնում եք, թե որքան եմ մենակ. մահվան այս նախամուտին միայն դուք եք, որ գտնվում եք իմ խցում և մխիթարում ու հուսադրում եք ինձ:

— Սակայն, պարո՛ն, հարյուր հազար ֆլորինը...

— Ա՛խ, ավելի լրջմիտ լինենք, թանկագին մանկիկըս,— ասաց Կոռնելիուսը:— Հարյուր հազար ֆլորինը հիանալի օժիտ կլինի ձեր գեղեցկության համար: Այդ հարյուր հազար ֆլորինը կստանաք, քանի որ իմ սոխուկների նկատմամբ ես մեծ վստահություն ունեմ: Դրանք ձերն են, թանկագին Ռոզա, փոխարենը կխնդրեի միայն, որ դուք խոստանայիք ամուսնանալ ազնիվ երիտասարդի հետ, որը կըսիրեր ձեզ այնպիսի ուժով, ինչպես ես սիրում էի ծաղիկներ: Մի՛ ընդհատեք ինձ, Ռոզա, ինձ մնացել է միայն մի քանի րոպե...

Խեղճ աղջիկը խեղդվում էր հեծկտոցից: Կոռնելիուսը բռնեց նրա ձեռքը:

— Լսեք ինձ,— շարունակեց նա:— Ահա թե ինչ պետք է անեք: Դորդրեխտի իմ այգուց դուք կվերցնեք հող: Խնդրեք իմ այգեպան Բյուտրյուլիսհեյմին, որ իմ № 6 թրմբից հող տա: Լցրեք այդ հողը մի խոր արկղի մեջ և տնկեք սոխուկները: Դրանք հաջորդ մայիսին, այսինքն՝ յոթ ամիս անց, կծաղկեն, և հենց որ ցողունի վրա ծաղիկ տեսնեք, աշխատեք դիշերը պահպանել քամուց, իսկ ցերեկը՝ արևից: Կակաչը պետք է լինի սև գույնի, ես համոզված եմ: Այդ ժամանակ դուք այդ մասին կհայտնեք Հաառլեմ քաղաքի ծաղկագործների ընկերությանը: Հանձնաժողովը կորոշի կակաչի գույնը և ձեզ կհանձնեն այդ հարյուր հազար ֆլորինը:

Ռոզան ծանր հոգոց հանեց:

— Հիմա,— շարունակեց Կոռնելիուսը՝ թեթևակի սրբելով թերթերունքի վրա դողդողացող արցունքի կաթիլը (արցունքը ավելի շուտ սև կակաչի համար էր, որն ինքը բախտ չէր ունենալու տեսնելու, քան թե այն մտքի, որ շուտով ինքը հեռանալու է կյանքից), հիմա ես այլևս ոչ մի ուրիշ ցանկություն չունեմ, բացի այն, որ այդ կակաչը կոչվի *Rosa Barlaensis*, այսինքն՝ միաժամանակ կհիշեցնի և՛

ձեր, և՛ իմ անունը: Եվ, քանի որ դուք, ամենայն հավանականութեամբ, լատիններեն չգիտեք և կարող է մոռանաք այդ անունը, ապա աշխատեք գտնել մի թուղթ ու մատիտ և ես կգրեմ այն, ինչ ասացի:

Ռոզան հեկեկաց և նրան մեկնեց շազրենի՝ կազմով մի գիրք, որի վրա գրված էին Կ. Վ. սկզբնատառերը:

— Սա ի՞նչ է, — հարցրեց բանտարկյալը:

— Այլա՞ղ, — պատասխանեց Ռոզան, — սա ձեր կնքահոր՝ Կոռնել դե Վիտի ավետարանն է: Թշվառ նահատակի մահից հետո գտա նրա խցում: Եվ ես այն պահում եմ ինչպես մի մասունք: Գրեք դրա վրա ձեր ցանկությունները, պարոն Կոռնելիուս, և շնայած ես, դժբախտաբար, կարդալ չգիտեմ, սակայն, միևնույն է, ինչ որ դուք գրեք, ճշտութեամբ կկատարվի:

Կոռնելիուսը վերցրեց ավետարանն ու պատկառանքով համբուրեց.

— Իսկ ինչո՞վ գրեմ, — հարցրեց նա:

— Ավետարանի մեջ մատիտ կա, — ասաց Ռոզան: — Ինչպես եղել է, այնպես էլ թողել եմ:

Դա այն մատիտն էր, որը Յան դե Վիտը տվեց իր եղբորը:

Կոռնելիուսը վերցրեց մատիտը և երկրորդ էջի վրա, որովհետև առաջին էջը, ինչպես գիտենք, պոկված էր, իր կնքահայր Կոռնելի նման, ամենայն վստահութեամբ ու ամուր ձեռքով, իր մահվանից առաջ, գրեց.

«1672 թվականի օգոստոսի 23-ին ես, բոլորովին անմեղ, կառավարատուն գնալուց առաջ, ժառանգում եմ Ռոզա Գրիֆուսին երկրի երեսին պահպանված իմ միակ ունեցվածքը, քանի որ մնացած ամեն ինչը բռնագրավված է, երեք սոխուկներ, որոնցից (ես այդ բանում խորապես համոզված եմ) մայիս ամսին կծաղկի մեծ, սև մի կակաչ. վերջինիս համար Հաառլեմ քաղաքի այգեգործների ընկերությունը նշանակել է հարյուր հազար ֆլորին պարգև: Իմ ցանկությունն է, որպեսզի Ռոզա Գրիֆուսը, որպես միակ

3 Շազրեն — թանկարժեք կաշվի տեսակ:

ժառանգորդուն հին, իմ փոխարեն ստանա այդ պարգևը, մեկ պայմանով միայն. որպեսզի նա ամուսնանա մոտավորապես իմ տարիքի տղամարդու հետ, որը նրան կսիրի և ինքն էլ այդ մարդուն կսիրի. իսկ նշանավոր սև կակաչը, որը կակաչների մեջ կստեղծի նոր տեսակ, թող անվանվի իմ և իր անուններից զուգակցված *Rosa Barlaensis* անունով:

Թող առաված խնայի ինձ և պարգևի նրան քաջառողջություն:

Կոռնելիուս վան Բեռլե»:

Այնուհետև ավիտարանը տալով Ռոզային, նա ասաց.

— Կարդացե՛ք:

— Ավա՛ղ,— պատասխանեց աղջիկը,— ձեզ արդեն ասացի, որ կարգալ չգիտեմ:

Այդ ժամանակ Կոռնելիուսը ինքը կարդաց իր կտակը: Խեղճ աղջկա հեկեկանքներն ուժեղացան:

— Դուք ընդունո՞ւմ եք իմ պայմանները,— հարցրեց բանտարկյալը՝ տխուր ժպտալով և համբուրելով սքանչելի ֆրիսլանդուհու դողացող մատների ծայրերը:

— Օ՛, պարոն, ես չե՛մ կարող,— շնչաց աղջիկը:

— Դուք չե՞ք կարող, մանկիկա: Իսկ ինչո՞ւ:

— Որովհետև մի պայման կա, որը չեմ կարող իրագործել:

— Այդ ո՞ր պայմանն է: Ինձ թվում էր, սակայն, որ մենք ամեն ինչի մասին պայմանավորվել ենք:

— Դուք այդ հարյուր հազար ֆլորինը ինձ որպես օժի՞տ եք տալիս:

— Այո:

— Եվ որպեսզի ամուսնանամ սիրած մարդու հե՞տ:

— Անպայմա՛ն:

— Դե, տեսնո՞ւմ եք, պարոն, որ այդ փողերը չեն կարող իմս լինել: Ես երբեք ոչ մեկին չեմ սիրի և երբեք էլ չեմ ամուսնանա:

Եվ, մեծ դժվարությամբ արտաբերելով այս խոսքերը, Ռոզան օրորվեց ու վշտից համարյա թե ուշաթափվեց:

Աղջկա գունատությունից և կիսաուշագնաց վիճակից վախեցած Կոռնելիուսը ձեռքերը մեկնեց, որ նրան բռնի,

երբ հանկարծ սանդուղքների վրա լսվեցին ծանր ոտնա-
ձայներ, շարագուշակ ինչ-որ ուրիշ ձայներ և շան հաչոց:

— Ձեր հետեւի՞ց են գալիս,— բացականչեց Ռոզան,
կոտորտելով ձեռքերը:— Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ: Գուցե
ձեզ էլի ինչ որ բա՛ն է հարկավոր ասել:

Եվ նա ընկնելով ծնկների վրա ու ձեռքերով ծածկելով
դեմքը, հեկեկաճախներից խեղդվում էր, իսկ արցունքները
հեղեղի նման թափվում էին:

— Ես ուզում եմ ասել, որ դուք ամենայն խնամքով
պահեք այդ երեք սոխուկները և խնամեք՝ համաձայն իմ
ցուցումների: Արե՛ք այդ հանուն իմ սիրո: Մնաք բարո՛վ,
Ռոզա՛:

— Օ՛, այո՛,— ասաց աղջիկը՝ գլուխը չբարձրացնե-
լով,— օ՛, այո՛, բոլորը, ինչ որ դուք ասացիք, ճշտու-
թյամբ կկատարվի, բացի մեկից՝ ամուսնությունից,— ավե-
լացրեց նա շատ ցածր ձայնով.— Երգվում եմ ձեզ, որ այդ
անհնարին բան է:

Եվ նա իր թպրտացող կրծքի տակ պահեց Կոռնելիուսի
թանկարժեք գանձը:

Աղմուկը, որ լսեցին Կոռնելիուսն ու Ռոզան, առաջա-
ցել էր քարտուղարի վերադարձի հետևանքով, որը դահճի,
կառափնարանը հսկող զինվորների և հետաքրքրասեր ամ-
բոխի, բանտի այդ մշտական այցելուների ուղեկցությամբ,
եկել էր մեղադրյալի հետևից:

Կոռնելիուսն առանց փոքրոգության, սակայն միաժա-
մանակ առանց ընդգծված քաջության, նրանց ընդունեց
ավելի շուտ բարեկամաբար, քան թշնամաբար և թույլ տվեց
կատարել իրենց պարտականություններն այնպես, ինչպես
որ նրանք անհրաժեշտ էին գտնում:

Նա իր փոքրիկ, վանդակավոր պատուհանից նայեց
հրապարակին և տեսավ կառափնարանը, իսկ մի քսան
քայլի վրա՝ նաև կախաղանը, որի վրայից փոխարքայի հրա-
մանով արդեն իջեցրել էին այն, ինչ մնացել էր դե Վիտ եղ-
բայրների անարգված դիակներից:

Պահակների ուղեկցությամբ բանտից դուրս գալուց
Կոռնելիուսը աչքերով փնտրեց Ռոզայի հրեշտակային հա-

յացքը, սակայն սրերի ու տապարատեգերի հետեւից նա կարողացաւ տեսնել միայն փայտե նստարանի վրա ընկած մի մարմին ու քարացած մի դեմք, որը կիսով չափ ծածկված էր երկար մազերով:

Սակայն ուշագնաց վիճակում անգամ Ռոզան ձեռքը դրել էր իր թավշյա կրծկալին ու անգիտակից վիճակում անգամ բնազդաբար պահպանում էր Կոռնելիուսի վստահած անգին նվերը:

Խցից դուրս գալիս երիտասարդը Ռոզայի մատների արանքում նկատեց ավետարանի դեղնած մի թերթ, որի վրա Կոռնել դե Վիտը այնքան դժվարութեամբ գրել էր մի քանի տող, որոնք եթե միայն Կոռնելիուսը կարդար, անկասկած, կփրկեին և՛ իրեն, և՛ կակաչը:

12

Մահապատիժ

Բանտից կառափնարան հասնելու համար Կոռնելիուսին հարկավոր էր անցնել ընդամենը երեք հարյուր քայլ:

Երբ նա սանդուղքներից ցած իջավ, շունը հանգիստ նրան դուրս թողեց: Կոռնելիուսին նույնիսկ թվաց, թե շունն իրեն նայեց մի տեսակ հեզութեամբ ու ցավակցութեամբ:

Գուցե շունը ճանաչում ու կծում էր միայն այն հանցագործներին, որոնք այստեղից դուրս էին գալիս ազատված:

Հասկանալի է, թե որքան բանտից կառափնարան տանող ճանապարհը կարճ էր, այնքան հետաքրքրասերների ամբոխը մեծ էր: Նույն այն մարդիկ, որոնք իրենց արյան ծարավը դեռևս չէին հագեցրել երեք օր առաջ թափված արյունով, այժմ հավաքված՝ սպասում էին նոր զոհի:

Հենց որ Կոռնելիուսը երևաց, փողոցում կատաղի ոռնոց լսվեց: Ոռնոցը տարածվեց հրապարակով, լցվեց կառափնարանին մոտիկ փողոցները: Կառափնարանը նմանվեց մի կղզու, որի ափերին զարնվում էին չորս կամ հինգ զետերի ալիքները:

Որպեսզի չլսի սպառնալիքները, դոռոցներն ու ոռնոցը, Կոռնելիուսն ընկղմվեց իր մտքերի մեջ:

Ինչի՞ մասին էր մտածում այդ քարոզիչը՝ քայլելով դեպի կառափնարան:

Նա չէր մտածում ո՛չ իր թշնամիների, ո՛չ իր դատավորների, ո՛չ իր դահիճների մասին:

Նա երազում էր իր սքանչելի կակաչների մասին, որոնց ինքը կտեսնի այն աշխարհում:

«Սրի մեկ հարված, — ինքն իրեն ասում էր այդ փիլիսոփան, — և իմ գեղեցիկ երազը կիրականանա»:

Սակայն դեռևս հայտնի չէր, թե արդյոք մեկ հարվածով դահիճը վերջ կդնի նրա կյանքին, թե՞ կակաչների թըշվառ սիրահարի տանջանքները կերկարեն: Համենայն դեպս, վան Բեուլեն վճռական քայլերով բարձրացավ կառափնարանի աստիճաններով:

Նա բարձրացավ կառափնարան հպարտ այն մտքից, որ ինքը նշանավոր Յան դե Վիտի բարեկամն ու ազնվագույն Կոռնելի սանիկն է եղել, որոնց ամբոխը խոշտանգեց. այժմ այդ նույն ամբոխը հավաքվել է, որ իրեն նայի:


Նա ծնկի եկավ, աղոթք շնջաց և մի հայտնադործությունից հանկարծ նրա սիրտը համակվեց խնդությամբ. եթե ինքը գլուխը դնի կառափնակոճղի վրա բաց աչքերով, ապա մինչև վերջին վայրկյանը կարող է տեսնել Բյուլտենհոֆյան բանտի փոքրիկ վանդակավոր պատուհանը:

Վերջապես հասավ այդ սարսափելի շարժումը անելու ժամանակը: Կոռնելիուսն իր ծնոտը դրեց սառը, խոնավ կոճղին, սակայն այդ ըրպեին նրա աչքերը փակվեցին. դա կօղներ ավելի քաջաբար ընդունելու այն հարվածը, որը պետք է իջներ գլխին ու զրկեր կյանքից:

Կառափնարանի հատակին փայլեց լույսի մի շերտ. փայլեց այն սուրը, որ բարձրացրել էր դահիճը:

Վան Բեուլեն հրաժեշտ տվեց իր սև կակաչին, համոզված լինելով, որ դնում է մի ուրիշ աշխարհ, որը լուսավորված է այլ լույսով ու ներկված այլ գույներով:

Երեք անգամ նա իր դողացող պարանոցի վրա դգաց սրի սառը շունչը: Սակայն ինչպիսի անսպասելի բան: Նա



ո՛չ հարված, ո՛չ էլ ցավ զգաց: Նա շտեպով գուլների փոփոխություն:

Վան Բեռլեի գիտակցությանը հասավ այն բանը, որ ինչ-որ մեկի ձեռքերը, հայտնի չէ ում, բավական զգուշությամբ իրեն բարձրացրին և ինքը՝ թեթևակի օրորվելով, ոտքի կանգնեց: Կոռնելիուսը բացեց աչքերը: Նրա մոտ մեկը մի մեծ մազաղաթյա, կարմիր կնիքով կնքած թուղթ էր կարդում:

էլի նույն դեղին, գունատ արեւը, ինչպես սովորաբար լինում է Հոլանդիայում, փայլում էր երկնքում, և նույն վանդակավոր սխառուհանը Բյույտենհոֆյան բանտից նայում էր իրեն:

Չորս կողմը նայելով և ունկնդրելով, վան Բեռլեն հասկացավ հետեւյալը:

Նորին մեծութուն Վիլհելմը, Օրանի արքայազնը, վախենալով, ամենայն հավանականությամբ, որ տասնյոթ ֆունտ արյունը, որ հոսում էր վան Բեռլի երակներում, կարող է լցնել երկնային արդարության բաժակը, խղճացել է նրա քաջությանը և հավանական անմեղությանը: Դրա հիման վրա նորին մեծութունը նրան կյանք է պարգևել: Ահա թե ինչու սուրը, որ շարագուշակ փայլով բարձրացել ու շարագուշակ թռչունի նման երեք անգամ թռել էր նրա գլխի վրայով, ցած շիջավ նրա պարանոցն ու շղիպավ ողնաշարին:

Ահա թե ինչու չկար ո՛չ ցավ, ո՛չ էլ հարված: Ահա թե ինչու արեւը շարունակում էր ժպտալ նրան, ճիշտ է, ոչ շատ պայծառ, սակայն, համենայն դեպս, երկնակամարի հաճելի կապույտում:

Կոռնելիուսը, որ հույս ուներ տեսնել աստծուն և ամբողջ տիեզերքի կակաչները, մի քիչ հիասթափվեց, սակայն շուտով մխիթարվեց նրանով, որ հնարավորություն ստացավ վզի վրա գլուխը աղատ շարժելու:

Բացի այդ, Կոռնելիուսը հույս ուներ, որ ներումը կլինի լրիվ, իրեն աղատ կարձակեն, և ինքը հնարավորություն կունենա վերադառնալ Դորդրեխտ՝ դեպի իր ծաղկաթմբերը:

Սակայն նա սխալվում էր: Ինչպես կասեր արևիկին դե Սեինիեն¹, մոտավորապես նույն այդ ժամանակաշրջանում նամակին կից սովորաբար լինում է նաև մի գրություն: Այդպիսին կար նաև փոխարքայի հրամանում, որը և ամենակարեւորն էր: Վիլհելմը՝ Հոլանդիայի փոխարքան, դատապարտում էր Կոռնելիուս վան Բեռլին ցմահ բանտարկության:

¹ Տիկին դե Սեինիեն (1626—1696) — ֆրանսիական գրող, հայտնի է իր գրական «նամակներով»:

Նա բավականաչափ մեղավոր չէր, որպեսզի մահապատժի ենթարկվեր, սակայն բավականաչափ անմեղ չէր, որպեսզի մնար ազատության մեջ:

Կոռնելիուսը մինչև վերջ լսեց, և այն ամիսսանքը, որ առաջացել էր հիասթափությունից, շուտով ցրվեց.

«Դե, ինչ արած,— մտածեց նա,— դեռ ամեն ինչ կորած չէ: Յմահ բանտարկությունն էլ իր լավ կողմերն ունի: Յմահ բանտարկության մեջ կա Ռոզան: Կան նաև իմ սեկակաշի սոխուկները»:

Սակայն Կոռնելիուսը մոռացել էր, որ Յոթ նահանգները կարող են ունենալ յոթ բանտեր, յուրաքանչյուր նահանգում մեկական բանտ, իսկ բանտարկյալի սնունդը մեկ այլ տեղում ավելի էժան կնստի, քան Հաագայում, որը երկրի մայրաքաղաքն է:

Նորին մեծություն Վիլհելմը, որը, ըստ երևույթին, միջոցներ չունեի վան Բեուլեին Հաագայում պահելու, նրան ցմահ բանտարկության ուղարկեց Լեեշտեյնի բերդը, որը, ճիշտ է, Դորդրեխտից հեռու չէր, սակայն ավա՛ղ, միաժամանակ շատ էր հեռու: Լեեշտեյնը, աշխարհագետների խոսքերով ասած, տեղավորված էր այն կղզու ծայրին, որը առաջացել էր Հորկումի հանդիպակաց կողմից հոսող Վաալու Մաաս¹ գետերի միացումից:

Վան Բեուլեն բավականաչափ ծանոթ էր իր երկրի պատմությանը և գիտեր, որ նշանավոր Հրոցիոսին² Բարնեվելտի³ մահից հետո բանտարկել էին այդ բերդում և, կառավարությունը մեծահոգություն ցուցաբերելով այդ մեծ հրապա-

¹ Վաալ, Մաաս — գետեր Հոլանդիայում:

² Հրոցիոս, Հուգո (1583—1645) — հոլանդացի գիտնական, իրավաբան և քաղաքագետ, միջադպյին իրավունքի գիտության հիմնադիրներից մեկը: 1619 թ. կրոնական-քաղաքական պայքարին մասնակցելու համար դատապարտվեց ցմահ բանտարկության: 1621 թ. բանտից փախավ:

³ Նկատի է առնվում Օլդենբարնեվելտ Յանը (1547—1619) — Հոլանդական նահանգի փաստական կառավարողը, որը պայքարում էր փոխարքայի միապետական ձգտումների դեմ: Հ. Հրոցիոսի հետ միասին բուրժուազիայի դիրքերից մասնակցել է կրոնա-քաղաքական պայքարին: Խոսքերն ունենում էր բարձրացնելու փորձի համար մահապատժի է ենթարկվել:

րակախոսի, իրավաբան-խորհրդատուի, պոետի ու աստվածաբանի նկատմամբ, մեկ օրվա ապրուստի համար տալիս էր քսանշորս հոլանդական սու¹:

«Իսկ ինձ, Հրոցիոսից շատ ավելի փոքր մի մարդու,— մտածեց վան Բեուլեն,— երևի տասներկու սուն էլ մեծ դժվարությամբ կտան, և ես հազիվ կկարողանամ գոյությունս պահպանել: Համենայն դեպս, մի կերպ կապրեմ»:

Եվ հանկարծ նրան շանթահարեց սարսափելի մի միտք.

— Ա՛խ,— բացականչեց Կոռնելիուսը,— այնտեղ խոնավ է ու մշուշոտ: Այնքա՛ն անբարենպաստ պայմաններ կապաշների համար: Եվ այնուհետև Ռոզան, Ռոզան, որն այլևս չէի շտեյնում չի լինի,— շնչում էր նա՝ գլուխը թեքելով կրծքին, այն գլուխը, որը քիչ էր մնացել ցած գլորվեր:

13

Այդ ժամանակ ի՞նչ էր կատարվում մի հանդիսատեսի հոգում

Այն ժամանակ, երբ Կոռնելիուսը մտածմունքների մեջ էր, կառափնարանին մոտեցավ մի կառք: Կառքը նախատեսված էր բանտարկյալի համար: Նրան առաջարկեցին նստել: Նա հնազանդեց:

Կոռնելիուսի վերջին հայացքն ուղղված էր Բյուլտենհոֆին: Նա հուշս ուներ պատուհանում տեսնել Ռոզայի հանգըստացած դեմքը, սակայն կառքին լծված էին ուժեղ ձիեր, որոնք վան Բեուլենին թափով դուրս բերին՝ ամբողջ միջից. ամբողջ ոռնոցով արտահայտում էր իր հավանութունը փոխարքայի ցույց տված մեծահոգությանը և միաժամանակ հայհոյանք էր թափում դե Վիտերի ու մահից փրկված նրանց սանիկի հասցեին: Հանդիսատեսները հետևյալ ձևով էին դատում. «Բախտի բերմամբ մենք շտապեցինք ու ժամանակին այդ սրիկաներից սրիկաների՝ Յանի և խաբեբա Կոռնելի հախից եկանք: Թե չէ՝ կասկած չի կարող,

¹ Հոլանդական սու — մանր մեջաղե դրամ:

յր նորին մեծության բարեհոգությունը նրանց էլ կխլեր մեր ձեռքից, ինչպես խլեց այս մեկին»:

Հանդիսատեսների մեջ, որոնց Բյուլտենհոֆյան հրապարակ էր բերել վան Բեուլեի մահապատիժը և որոնք մի քիչ հիասթափված էին դործի այդ վախճանից, ամենից ավելի հիասթափված էր մի լավ հագնված քաղաքացի: Առավոտից նա այնպիսի կրքոտությամբ էր աշխատել արմունկներով ու ոտքերով, որ հիմա կառափնարանից նրան բաժանու՞մ էր միայն մահապատժի վայրը շրջապատած զինվորների շարքը:

Շատերն էին տենչում տեսնել, թե ինչպես կհոսի հանցագործ Կռնելիուսի կեղտոտ արյունը, սակայն այդ վայրենի ցանկությունը ոչ ոք այնպիսի մոլեգնությունամբ չէր ցույց տալիս, որքան վերը հիշված քաղաքացին:

Առավել կատաղիները եկել էին Բյուլտենհոֆ դեռևս լուսաբացին, որպեսզի գրավեն ամենալավ տեղերը. սակայն այդ քաղաքացին կանխել էր նույնիսկ ամենամոլեգնածներին և ամբողջ դիշերը անց էր կացրել բանտի դռանը, իսկ առավոտյան, ինչպես արդեն ասացինք, ոտքերով ու արմունկներով հրմշտելով, սիրաշահելով մեկին ու հարվածելով մյուսին, նա ընկել էր առաջին կարգը:

Եվ երբ դահիճը դատապարտվածին տանում էր դեպի քառափնարան, այս քաղաքացին, որպեսզի ամեն ինչ լավ տեսնի, և ինքն էլ լավ երևա, բարձրացավ շատրվանի մոտի թմբին և դահիճին մի նշան արեց, որը նշանակում էր.

— Ամեն ինչ որոշված է, այնպես չէ՞:

Ի պատասխան դրա, դահիճը նույնպես նշան արեց.

— Հանդիստ եղեք:

Ո՞վ էր այդ քաղաքացին, որը դահճի հետ, ըստ երևույթին, մոտիկ հարաբերությունների մեջ էր, և ի՞նչ էր ասում նշանների այդ փոխանակումը:

Շատ պարզ. այդ քաղաքացին պարոն Իսահակ Բոքստելն էր, որը Կռնելիուսի ձերբակալությունից անմիջապես հետո եկել էր Հաագա, որպեսզի մի կերպ ձեռք գցի սև կակաչի սոխուկները:

Բոքստելը սկզբում փորձեց օգտագործել Գրիֆուսին,

սակայն վերջինս, որն օժտված էր լավ բուդդոգ շան հավատարմությամբ, միաժամանակ ուներ շան կասկածամտություն ու շարություն: Գրիֆուսը Բոքստելի ատելության մեջ տեսավ բոլորովին հակառակ բան. նա կասկածեց, որ այդ մարդը Կոռնելիուսին նվիրված մեկն էր և զանազան դատարկ բաների մասին հարցուփորձ է անում, որպեսզի թաքցրենի դատապարտյալի փախուստը կազմակերպելու իսկական նպատակը:

Այդ պատճառով, երբ Բոքստելն առաջարկեց ձեռք բերել սոխուկները, որոնք, ամենայն հավանականությամբ, պետք է պահված լինեն մեղադրյալի կամ կրծքին, կամ էլ բանտի խցի որևէ անկյունում, Գրիֆուսը խիստ զայրացավ և շանը բաց թողնելով նրա վրա՝ վռնեց:

Սակայն այն, որ իր անդրավարտիքի մի կտորը մնաց շան ատամների արանքում, չշփոթեց Բոքստելին: Նա վերսկսեց հարձակումը: Այդ ժամանակ Գրիֆուսը կոտրված ձեռքով պառկած էր անկողնում ու տենդի մեջ էր: Նա այցելուին նույնիսկ չընդունեց: Բոքստելն այդ ժամանակ դիմեց մոզային և երեք սոխուկների դիմաց աղջկան խոստացավ մաքուր ոսկուց մի զլխանոց: Չնայած ազնիվ աղջկան դեռևս հայտնի չէր, թե որքան մեծ արժեք էր ներկայացնում այն, ինչը խնդրում էին գողանալ և որի համար որպես փոխհատուցում առաջարկում էին չլսված մեծ գին, նա այդ գայթակղիչ մարդուն ուղարկեց դահճի մոտ, որը դատապարտյալի ոչ միայն վերջին դատավորն էր, այլև վերջին ժառանգորդը: Մոզայի խորհուրդը նոր միտք ծնեց Բոքստելի զլխում:

Այդ ընթացքում դատավճիռը հայտարարվեց և, ինչպես տեսանք, ամեն ինչ արվեց խիստ հապճեպ: Իսահակն այլևս որևէ մեկին կաշառելու ժամանակ չունեցավ, այնպես որ նա կանգ առավ մոզայի հուշած մտքի վրա և գնաց դահճի մոտ:

Իրականում Բոքստելը չկարողացավ զլխի ընկնել երկու բան. մոզայի, այսինքն՝ սիրո առկայությունը և Վիլհելմի բարեհոգությունը:

Այսպես, ուրեմն, պարոն Բոքստելն ուղևորվեց դահճի մոտ, իրեն ներկայացրեց որպես դատապարտյալին շատ

մոտիկ բարեկամ և ավելի քան հարյուր ֆլորինով, մի շափազանց մեծ գին, զնեց ապագա հանգուցյալի ամբողջ հագուստը, առանց սակայն, ոսկյա և արծաթյա զարդարանքների, որոնք անհատույց անցնում էին դահճին:

Սակայն ի՞նչ էր այդ հարյուր ֆլորինը մի մարդու համար, որը համարյա հավատացած էր, որ այդ գումարով ինքը զնում է Հաաուլեմ քաղաքի ծաղկագործների ընկերության պարգևը: Դա նշանակում էր իր ծախսած դրամների գիմաց ստանալ հազար տոկոս շահ, որը, համաձայնեք, վատ գործարք չէր:

Դահիճն էլ իր հերթին, առանց որևէ նեղության կամ համարյա թե առանց նեղության, ստանում էր հարյուր ֆլորին: Մահապատիժն ի կատար ածելուց հետո նա պետք է պարոն Բոքստեյլին ու նրա ծառաներին թույլ տար բարձրանալ կառափնարան և վերցնել իր բարեկամի անշունչ դիակը:

Ըստ որում Բյուլտենհոֆի կառափնարանում իր կյանքն ավարտած ամեն մի քաղաքական գործչի համախոհների մոտ այս երևույթը տարածված էր: Կոռնելիուսի նման մի մոլեռանդ մարդ, իհարկե, կարող էր ունենալ իր նման մոլեռանդ մի բարեկամ, որը նրա դիակի համար պատրաստ էր տալ հարյուր ֆլորին:

Այսպես, ուրեմն, դահիճը ընդունեց առաջարկությունը: Նա միայն մեկ պայման դրեց՝ վարձը ստանալ սկզբից: Բոքստեյլը այն մարդկանցից էր, որոնք տոնավաճառային կրկեսներին ներկա լինելով՝ ներկայացումից դժգոհ են մնում և իրենց հաճույքի համար էլ չեն վճարում:

Սակայն Բոքստեյլը դրամը սկզբից տվեց ու սկսեց սպասել:

Այս բոլորից հետո կարելի է պատկերացնել, թե նա որքա՞ն հուզված էր և ինչպե՞ս էր հետևում պահակների, քարտուղարի ու դահճի ամեն մի շարժումին, ինչպե՞ս էր նրան հուզում վան Բեռլեի ամեն մի շարժումը. թե ինչպես նա կառափնակոճղի վրա կպառկի, ինչպես վայր կընկնի, ու ընկնելիս չի՞ ճզմի արդյոք անդին սոխուկները. արդյոք նա հոգացե՞լ էր այն բանի համար, որ սոխուկները, ապահո-

վության համար դրվելին ոսկյա տուփի մեջ, քանի որ ոսկին մետաղների մեջ ամենից ամուրն է:

Մենք վստահություն չենք գտնում նկարագրելով այն տպավորությունը, որը Բոքստելի վրա թողեց մահապատժի ի կատար ածման ձգձգումը: Հանուն ինչի՞ է դահլիճն այդքան ժամանակ կորցնում և ինչո՞ւ դուրսը միանգամից կրտսրելու փոխարեն, սուրբ միայն ճոճում է դատապարտյալի գլխին: Սակայն երբ Բոքստելը տեսավ, թե ինչպես դատարանի քարտուղարը բռնեց դատապարտյալի ձեռքից, վեր բարձրացրեց և զրպանից մի թուղթ հանելով՝ սկսեց կարդալ, երբ լսեց փոխարքայի շնորհած ներման հրապարակային ընթերցումը, նա կորցրեց մարդկային կերպարանքը: Բոքստելի աչքերը վազրի, օձի, բորենու աչքերի նման կատաղի փայլեցին: Եթե նա մոտ լիներ վան Բեռլեին, կհարձակվեր ու տեղնուտեղը կսպաներ նրան:

Այդպես, ուրեմն, նշանակում է Կոռնելիուսը պետք է ապրի: Կոռնելիուսին պետք է տեղափոխեն Լեհշտեյն, նա իր հետ սոխուկները բանտ կտանի և գուցե այնտեղ էլ այդի լինի, ուր վան Բեռլեին կհաջողվի աճեցնել իր սև կակաչը:

Լինում են իրադարձություններ, որոնք թշվառ գրողի դրիչն ի վիճակի չէ նկարագրելու, և նա ստիպված է դրանք հանձնել իր ընթերցողի երևակայությանը:

Բոքստելը կիսաուշաթափ վիճակում ընկավ այն թմրի վրայից, որտեղ մի խումբ օրանժիստների հետ բարձրացել էր. նրանք նույնպես դժգոհ էին դեպքերի այդպիսի շրջադարձից: Վերջիններս կարծելով, թե Բոքստելի արձակած ձիշը ուրախության ճիշ էր, նրա գլխին այնպիսի բռնցքահարվածներ տեղացին, ինչպիսիք կտային անգլիացի ամենակատաղի բռնցքամարտիկները:

Սակայն մի քանի բռնցքահարվածներն ի՞նչ կարող էին ավելացնել Բոքստելի տանջանքներին: Նա նետվեց կառքի հետևից, որը տարավ Կոռնելիուսին ու նրա կակաչի սոխուկները: Սակայն շտապելուց Բոքստելը չնկատեց առջևի քարը և սայթաքելով՝ հավասարակշռությունը կորցրեց ու մի տասը քայլ թռավ մի կողմ. տրոբված ու ծեծված, նա կարողացավ վեր կենալ միայն այն ժամանակ, երբ Հաագայի

ամբողջ կեղտոտ ամբոխն անցալ նրա վրայով: Բոքստելը, որին բառացիորեն հետապնդում էր դժբախտությունը, շահեց միայն այն, որ նրա հազուստները քրքրվեցին, մեջքը տրորվեց ու ձեռքերը քերծվեցին:

Կարելի էր կարծել, որ այս բոլոր անհաջողությունները կարող էին դաս լինել Բոքստելի համար: Սակայն այդպես մտածելը սխալ կլիներ:

Ոտքի կանգնելով՝ նա իր գլխից պոկեց ճիշտ այնքան մազ, որքան ի վիճակի էր և դրանք զոհաբերեց դաժան ու անզգա աստվածուհուն, որին անվանում են նախանձ: Զոհաբերումը, անկասկած, ընդունվեց աստվածուհու կողմից, որի գլխին, ինչպես դիցաբանության մեջ է ասվում, մազի փոխարեն օձեր են¹:

14

Դորդրեխտի աղավանները

Կոռնելիոս վան Բեռլեի համար, իհարկե, մեծ պատիվ էր, որ իրեն ուղարկեցին այն բանտը, որտեղ մի ժամանակ բանտարկված է եղել Հուգո Հրոցիոս գիտնականը:

Բանտում նրան սպասվում էր ավելի մեծ պատիվ: Պատահել էր այնպես, որ Օրանի արքայազնի մեծահոգության շնորհիվ, երբ վան Բեռլե ծաղկագործին ուղարկեցին Լեեշտեյնի բանտը, այնտեղ այդ ժամանակ ազատ էր այն խուցը, որտեղ իր ժամանակին փակված էր եղել Բարնսվելտի նշանավոր բարեկամը: Ճիշտ է, այն ժամանակից ի վեր, երբ Հրոցիոսը օդտազսրծելով կնոջ ֆելագրած միտքը և գրքերի դատարկ արկղները, որոնք աչքաթող էին արել ստուգել, կազմակերպել էր իր փախուստը, այդ ժամանակից ի վեր այդ խուցն ամբողջ ամբողջում վատ համբավ էր վայելում:

Մյուս կողմից, այդ խուցն իրեն հատկացնելու մեջ վան

¹ Նախանձը Հին Հունաստանում պատկերվում էր գլխին մազերի փոխարեն օձեր ունեցող կնոջ կերպարանքով:

Բեռլին տեսնում էր մի բարի նախախնամություն, քանի որ, նրա կարծիքով, ոչ մի բանտապահ չպետք է փորձեր երկրորդ աղավնուն փակել մի վանդակի մեջ, որտեղից այդպիսի հեշտությամբ առաջինը փախել էր:

Դա պատմական խուց էր: Սակայն մենք ժամանակ չենք կորցնի մանրամասնությունները նկարագրելու վրա, միայն կհիշեցնենք պատի մեջ արված այն փորվածքի մասին, որը սարքել էին Հրոցիոսի կնոջ համար: Դա մի սովորական բանտային խուց էր, որն ի տարբերություն մյուսների, գուցե մի քիչ ավելի բարձր առամտաղ ուներ: Խցի վանդակապատ պատուհանից բացվում էր մի հրաշալի տեսարան:

Ի միջի այլոց, մեր պատմության հետաքրքրական կողմն այն չէ, որ մենք նկարագրենք ինչ-որ սենյակներ:

Վան Բեռլեի համար կյանքը չէր սահմանափակվում միայն շնչելով: Թշվառ բանտարկյալին, բացի իր թոքերից, թանկ էին երկու բան, որոնց նա կարող էր տիրանալ միայն երեակայությամբ. դրանք էին՝ կինը և ծաղիկը, որոնցից նա ընդմիշտ զրկված էր:

Բարեբախտաբար, մեր բարեհոգի վան Բեռլեն սխալվում էր: Բախտը, որը կառափնարան գնալու ժամանակ այդքան բարի գտնվեց նրա նկատմամբ, այդ նույն բախտը բանտում, Հրոցիոսի խցում, վան Բեռլեի համար սահղծեց ապրումներով լեցուն գոյության այնպիսի պայմաններ, որոնց մասին կակաչների սիրահարը նույնիսկ երազել չէր համարձակվի:

Մեկ անգամ առավոտյան, երբ Կոռնելիուսը լուսամուտի մոտ կանգնած շնչում էր Վաալի հովտից փչող թարմ օդը և հիանում էր հորիզոնում երևացող իր հարազատ Դորգրեխտի ջրաղացներով, հանկարծ նկատեց, որ այդտեղից արևի տակ փայլփլելով թռչում է աղավնիների մի ամբողջ երամ ու նրստում լեեշտեյնի սրածայր աշտարակներին:

«Այդ աղավնիները, — մտածեց վան Բեռլեն, — թռչում են Դորգրեխտից և, հետևաբար, կարող են նորից վերադառնալ: Եթե որևէ մեկը մի աղավնու թևին գրություն կապեր, ապա հնարավոր է, որ նա թռչեր մինչև Դորգրեխտ և ինձ ցավակցողներին լուր տաներ»:

Եվ որոշ ժամանակ այդպես երազելով, վան Բեռլեն ավելացրեց. «Այդ «որեւէ մեկը» ես կլինեմ»:

Եթե դուք քսանութ տարեկան եք և դատաստարտված եք ցմահ, այսինքն՝ մոտավորապես քսաներկու թե քսաներեք հազար օրվա բանտարկության, ապա զինվեք համբերությամբ:

Վան Բեռլեն ոչ մի վայրկյան չէր դադարում մտածելուց երեք սոխուկների մասին. ինչպես մարդու սիրտն է բաբախում կրծքի տակ, այնպես էլ այդ հիշողությունն էր ապրում Կոռնելիուսի մոտ: Այսպես, ուրեմն, վան Բեռլեն անընդհատ մտածում էր իր սոխուկների մասին. նա աղավինների համար թակարդ պատրաստեց և սկսեց զանազան միջոցներով հրապուրել նրանց դեպի իր փոքրիկ սեղանը, որի վրա ամեն օր դրվում էր տասնութ հոլանդական սփռ, որը հավասար էր ֆրանսիական տասներկու սուր: Մեկամսյա անհետևանք փորձերից հետո, վերջապես, Կոռնելիուսին հաջողվեց բռնել մի էգ աղավինի:

Նա մի երկու ամիս էլ վատնեց այն բանի վրա, որպեսզի բռնի արու աղավինի: Վան Բեռլեն երկուսին էլ փակեց մի վանդակի մեջ և 1673 թվականի սկզբին, երբ էգը ձուածեց, նրան բաց թողեց: Վստահ, որ իր արուն լավ կխնամի ձվերը, էգը ուրախությամբ թռավ դեպի Դորդրեխտ՝ թևի տակ տանելով Կոռնելիուսի գրությունը:

Երեկոյան աղավինին հտ եկավ: Գրությունը թևի տակ էր: Այդպիսով, աղավինին այդ գրությունը տասնհինգ օր թևի տակ պահեց, որը սկզբում հիասթափեցրեց վան Բեռլին, իսկ հետո բոլորովին հուսահատեցրեց:

Տասնվեցերորդ օրը աղավինին հտ եկավ առանց գրության:

Գրությունը Կոռնելիուսը հասցեագրել էր իր դայակին՝ պառավ ֆրիսլանդուհուն, և գրության մեջ դիմելով նրան, ում ձեռքը որ կանցներ գրությունը, խնդրում էր բարի գտնվել և, որքան կարելի է շուտ, այն հանձնել հասցեատիրոջը:

Դայակին ուղղված գրության մեջ կար մեկ ուրիշը՝ հասցեագրված Ռոդային:

Դայակը ստացավ այդ նամակը: Եվ ահա թե ինչ ձևով:

Դորդրեխտից Հաագա մեկնելիս, և Հաագայից էլ՝ Հորկում, պարոն Իսահակ Բոքստելը թողեց իր տունը, և ոչ միայն իր տունը, այլ նաև իր ծառային, իր դիտակետը, իր հեռադիտակն ու աղավինները:

Մառան, որը մնացել էր առանց աշխատավարձի, սկզբում սկսեց ծախսել իր տնտեսած ոչ այնքան շատ դրամը, իսկ հետո սկսեց ուտել աղավիններին: Ս՛դ բանը տեսնելով՝ աղավիններն սկսեցին Իսահակ Բոքստելի տանիքից թռչել դեպի Կոռնելիուս վան Բեռլեի տան տանիքը:

Դայակը բարի կին էր և շարունակ ինչ-որ մեկին սիրելու պահանջ էր զգում: Նա կապվեց աղավինների հետ, որոնք եկել էին նրա մոտ ապաստարան խնդրելու: Երբ Իսահակի ծառան ետ պահանջեց վերջին տասներկու թե տասնհինգ աղավինները, որպեսզի դրանք էլ ուտի, դայակը ծառային առաջարկեց վաճառել, յուրաքանչյուրը վեց հոլանդական սուռով: Դա աղավնու արժեքից երկու անգամ թանկ էր: Մառան, իհարկե, մեծ ուրախությամբ համաձայնեց: Այդպիսով, դայակը դարձավ նախանձ մարդու աղավինների իսկական տերը:

Աղավինները, ամենայն հավանականությամբ, ավելի համեղ ցորենի ու կանեփի հատիկներ գտնելու նպատակով, միացան ուրիշ աղավինների և սկսեցին թռչել մինչև Հաագա, Լևեհտեյն ու Ռոտերդամ: Բախտի քմահաճությամբ Կոռնելիուս վան Բեռլեն բռնեց հենց այդ աղավիններից մեկին:



Պարզ է, որ եթե նախանձուտ մարդը չշտապեր հեռանալ Դորդրեխտից, որպեսզի իր մրցակցի հետևից հասնի սկզբում Հաագա, այնուհետև՝ Հորդուս կամ Լեշտեյն, ապա Կոռնելիուս վան Բեռլեի գրությունը կընկներ ոչ թե դայակի, այլ հենց իր՝ Բոքստեիի ձեռքը։ Եվ այն ժամանակ մեր թշվառ բանտարկյալը իզուր կորցրած կլիներ և՛ իր ժամանակը, և՛ իր աշխատանքը։ Եվ մենք էլ նկարագրելու փոխարեն դանապան իրադարձություններ, որոնք պես-պես գույներով գորգի նման պետք է հյուսվեին մեր գրչի տակ, ստիպված կլինեինք նկարագրելու մի ամբողջ շարք տխուր, գիշերվա խավարի նման գորշ ու մուսյլ օրեր։

Այսպես, ուրեմն, գրությունն ընկավ վան Բեռլեի դայակի ձեռքը։ Եվ ահա, մեկ անգամ, փետրվարի առաջին օրերին, երբ երկնքից, իր հետև թողնելով ծագող աստղերը, երկրի վրա էր իջնում մթնաշաղը, Կոռնելիուսը աշտարակի սանդուղքների վրա լսեց մի ձայն, որը նրան ստիպեց ցնցվել։

Նա ձեռքը դրեց սրտին ու սկսեց ականջ դնել։ Դա Ռոզայի փափուկ, երգեցիկ ձայնն էր։

Խոստովանենք, որ Կոռնելիուսի համար դա այնքան էլ անսովասելի մի իրադարձություն չէր, և նրա զարմանքն ու ուրախությունն ավելի արտակարգ կլինեին, եթե չլիներ աղավտիկների հետ կապված պատմությունը։ Աղավտին նրա նամակի փոխարեն իր թևի տակ բերեց հույս, և Կոռնելիուսը ճանաչելով Ռոզային, ամեն օր սպասում էր իր սիրեցյալի ու իր սոստոկների մասին մի լուրի, եթե միայն, իհարկե, նրա գրությունները տեղ էին հասել։

Նա վեր կացավ, հենվեց դռանն ու սկսեց ականջ դնել։ Այո՛, կասկած չկար, դա այն ձայնն էր, որն այնքան քնքշորեն հուզել էր նրան Հաագայում։

Մինչ Կոռնելիուսը գլուխ էր կոտրում այդ հարցերի վրա, հուզվում ու անհանգստանում էր, նրա խցի փոքրիկ պատուհանը բացվեց և Ռոզան երջանկությունից փայլելով ու հինգ ամիսների ընթացքում կրած ապրումներից ու վշտից մի փոքր գունատված աչտերով և ավելի գեղեցկացած, իր գլուխը խոնարհեց պատուհանի վանդակներին ու ասաց.

— Օ՛, պարոն, պարոն, ահա և ես։

Կոռնելիուսը ձեռքերը մեկնեց, աչքերը բարձրացրեց երկինք ու խնդովթյամբ բացականչեց.

— Օ՛, Ռոզա, Ռոզա:

— Սը՛ս, շշուկով խոսեցեք, հայրս հետևիցս գալիս է,— ասաց աղջիկը:

— Ձեր հա՛յրը:

— Այո, այստեղ՝ բակում է, ներքևում, սանդուղքների մոտ: Նա պարետից հրահանգ է ստանում: Հիմա կբարձրանա վեր:

— Պարետից հրահա՛նգ է ստանում:

— Կսեցեք, ես կաշխատեմ մի քանի խոսքով ձեզ ամեն ինչ բացատրել: Փոխարքան մի կալվածք ունի Լեյդենից մի մղոն հեռավորության վրա: Փաստորեն, դա կաթի մի մեծ ֆերմա է: Այնտեղ բոլոր անասուններին խնամում է իմ մորաքույրը, որը նրա դայակն է: Հենց որ ես ձեր նամակը ստացա, որը, ավա՛ղ, ես չկարողացա կարդալ, և այն ինձ համար կարդաց ձեր դայակը, ես իսկույն Լեթ վազեցի իմ մորաքրոջ մոտ ու մնացի այնքան, մինչև որ այնտեղ այցելեց արքայազնը: Երբ նա եկավ, ես խնդրեցի նրան՝ իմ հորը Հաագայի բանտապահի պաշտոնից տեղափոխել Լեյդենի ամրոցը որպես բանտապահ: Նա նույնիսկ չկասկածեց իմ խնդրանքի վրա. եթե իմանար, գուցե մերժեր, սակայն, ընդհակառակը, բավարարեց իմ ցանկությունը:

— Այսպիսով, դուք այստե՛ղ եք:

— Ինչպես տեսնում եք:

— Այսպիսով, ես ձեզ ամե՛ն օր կտեսնեմ:

— Այնքան հաճախ, որքան իմ հնարավորությունները կներեն:

— Օ՛, Ռոզա, իմ սքանչելի աստվածամայր, Ռոզա,— բացականչեց Կոռնելիուսը,— ուրեմն, նշանակում է, դուք ինձ մի փոքր սիրո՞ւմ եք:

— Մի փո՛քր...,— ասաց աղջիկը.— Օ՛, դուք բավականաչափ պահանջկոտ չեք, պարոն Կոռնելիուս:

Կոռնելիուսը կրքոտորեն ձեռքերը մեկնեց դեպի աղջիկը, սակայն վանդակների արանքից նրանց ձեռքերի մատները միայն կարողացան հանդիպել միմյանց:

— Հայրս դալիս է,— ասաց աղջիկը:

Եվ նա արագ հեռանալով դռներից, գնաց դեպի ծեր Գրիֆուսը, որն այդ ժամանակ երևաց սանդուղքի գլխին:

15

Պատուհանը

Գրիֆուսին հետևում էր նրա շունը: Նա շանը ման էր ածում բանտով մեկ, որպեսզի անհրաժեշտության դեպքում շունը կարողանա ճանաչել բանտարկյալներին:

— Հայր,— ասաց Ռոզան,— ահա այն նշանավոր խուցը, որտեղից փախավ Հրոցիոսը. դուք գիտե՞ք ով էր Հրոցիոսը:

— Գիտե՛մ, գիտե՛մ, ավագակ Հրոցիոսը, այն չարագործ Բարնվելտի ընկերը, որի մահապատիժը դեռ երեխա ժամանակս տեսել եմ: Հրոցիո՞ս: Ա՛յս խցից է նա փախել: Դե, ես վստահեցնում եմ, որ այստեղից այլևս ո՛չ ոք չի փախչի:

Եվ դուռը բացելով, նա խավարի մեջ բանտարկյալին դիմեց մի մեծ ճառով:

Շունն այդ միջոցին գոմուսով հոտոտում էր բանտարկյալի ոտքերը, կարծես հարցնելով, թե այդ ի՞նչ իրավունքով է նա կենդանի մնացել, քանի որ ինքը տեսավ, թե ինչպես դատարանի քարտուղարն ու դահիճը նրան տարան:

Սակայն գեղեցկուհի Ռոզան շանն իր մոտ կանչեց:

— Պարոն,— սկսեց Գրիֆուսը, բարձրացնելով լապտերը, որպեսզի շորս կողմը մի քիչ լուսավորվի,— ձեր նոր բանտապահն եմ: Ես այստեղի ավագն եմ և բոլոր խցերը գտնվում են իմ հսկողության տակ: Ես չար մարդ չեմ, սակայն անշեղորեն կատարում եմ այն, ինչ վերաբերում է կարգապահությանը:

— Ձեզ շատ լավ եմ ճանաչում, իմ սիրելի Գրիֆուս,— ասաց բանտարկյալը՝ կանգնելով լապտերի լուսավորության տակ:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք, պարոն վան Բեռլե,— ասաց Գրիֆուսը,— ուրեմն՝ այդ դո՞ւք եք, ահա թե ինչպես ես հանդիպում մարդկանց:

— Այո, և ես, հուրախություն ինձ, տեսնում եմ, որ ձեր ձեռքը, սիրելի Գրիֆուս, հիանալի վիճակում է, քանի որ այդ ձեռքով դուք լապտեր եք բռնել:

Գրիֆուսը հոնքերը կիտեց:

— Ահա տեսնում եք,— ասաց նա,— քաղաքականության մեջ միշտ սխալներ են թույլ տալիս: Նորին մեծությունը ձեզ կյանք շնորհեց, բայց նրա փոխարեն ես այդ շէի անի:

— Ահա թե ի՞նչ: Իսկ ինչո՞ւ,— հարցրեց Կոռնելիուսը:

— Որովհետև դուք այսուհետև էլ դավադրություններ կնյութեք: Ձե՞ որ դուք, գիտնականներդ, սատանաների հետ եք գործակցում:

— Ա՛խ, Գրիֆուս, Գրիֆուս,— ծիծաղելով ասաց երիտասարդը,— չլինի՞ դուք բարկացած եք այն բանի համար, որ ես ձեր ձեռքը վատ եմ բուժել կամ բուժման համար շատ վճար եմ վերցրել:

— Ընդհակառակը, սատանան տանի, ընդհակառակը,— մրթմրթաց բանտապահը,— դուք ինձ շատ լավ բուժեցիք և դրա մեջ ինչ-որ մի կախարդություն կա. վեց շաբաթ չանցած ես սկսեցի այնպես աշխատել այդ ձեռքով, որ կարծես ոչինչ էլ չէր պատահել: Այնքան լավ էիք բուժել, որ Բյուլտենհոֆի բժիշկն ինձ առաջարկեց ձեռքս նորից կոտրել ու բոլոր կանոններով նորից բուժել, խոստանալով, որ այս դեպքում ամենաքիչը երեք ամիս ես չեմ կարողանա այդ ձեռքով գործ անել:

— Եվ դուք համաձայնեցի՞ք:

— Ասացի՞ ո՛չ: Թ՛քած սատանայի վրա, քանի դեռ այդ ձեռքով կարողանում եմ խաչակնքել (Գրիֆուսը կաթուղի էր), քանի դեռ այդ ձեռքով խաչակնքում եմ, թքած սատանայի վրա:

— Սակայն, եթե դուք թքում եք սատանայի վրա, պարոն Գրիֆուս, ապա, ուրեմն, բոլորովին չպետք է վախենաք գիտնականներից:

— Օ՛, գիտնականները, գիտնականները,— բացական-
չեց Գրիֆուսը, չալատափանելով հարցին,— ես կնախընտ-
րեի հսկել տասը զինվորականի՝ մեկ գիտնականի փոխա-
րեն։ Զինվորականները ծխում են, խմում, հարբում։ Նրանք
զառան նման հեզահամբույր են դառնում, երբ նրանց վիսկի
կամ մոզելվեյն են տալիս։ Իսկ մի՞թե գիտնականը կծխի,
կխմի կամ կհարբի։ Օ՛, իհարկե, նրանք զգաստ մարդիկ են,
ոչինչ չեն վատնի, նրանք իրենց՝ զլուխը միշտ թարմ են պա-
հում, որպեսզի հետո զանազան դավեր նյութեն։ Սակայն
ես նախազգուշացնում եմ, որ ձեզ համար այնքան էլ հեշտ
չի լինի դավեր նյութել։ Ամենից առաջ՝ ո՛չ մի գիրք, թուղթ
կամ նման սատանայական բաներ։ Հենց գրքերն օգնեցին
Հրոցիոսին փախչելու։

— Հավատացնում եմ, պարոն Գրիֆուս,— ասաց վան
Բեռլեն,— եղավ այնպիսի ժամանակ, երբ ես սկսեցի
մտածել փախչելու մասին, բայց հիմա վստահեցնում եմ, որ
նման բան մտքովս էլ չի անցնում։

— Լա՛վ, լա՛վ,— ասաց Գրիֆուսը,— հետևեցեք ձեզ,
ես նույնպես կհետևեմ։ Միևնույն է, նորին մեծությունը մեծ
սխալ է թույլ տվել։

— Իմ զլուխը չկտրելո՞ւ։ Շնորհակալ եմ, շնորհակալ,
պարոն Գրիֆուս։

— Իհարկե։ Տեսնո՞ւմ եք, թե ինչպես են հիմա խա-
ղաղվել պարոնայք դե վիտերը։

— Ի՜նչ սարսափելի բաներ եք ասում, պարոն Գրի-
ֆուս,— ասաց Կոռնելիուսը և երեսը շուռ տվեց, որպեսզի
թաքցնի իր զգվանքը։— Դուք մոռանում եք, որ այդ դըժ-
բախտներից մեկը իմ լավ բարեկամն էր, իսկ մյուսը...
մյուսն իմ երկրորդ հայրն էր։

— Այո, սակայն ես չեմ մոռացել, որ նրանք երկուսն էլ
ղավաղիրներ էին։ Եվ հետո ես այսպես եմ խոսում ավելի
շուտ ցավակցելուց։

— Ահա թե ի՜նչ։ Դե, բացատրեք ինձ, թանկագին Գրի-
ֆուս, ես չգիտեմ ինչու, վատ եմ հասկանում։

— Այո, եթե դուք մնայիք դահիճ Հերբերուկի կառավար-
նակոճղի վրա...

— Ի՞նչ կյիներ:

— Կլիներ այն, որ դուք
ավելի քիչ կտանջվեիք:
Մինչդեռ այստեղ, ես այդ
չեմ թաքցնում, ձեր կյանքն
անտանելի կդարձնեմ:

— Շնորհակալ եմ
խոստման համար, սլարոն
Գրիֆուս:

Եվ, երբ բանտարկյալը
հեգնանքով ժպտաց բան-
տապահին, Ռոդան դռան
հետևից սփռփռեցով լի մի
ժպիտ ուղարկեց նրան:

Գրիֆուսը մոտեցավ
պատուհանին:

Դեռ բավական լույս էր, և
առանց դժվարության կարե-
լի էր տեսնել լայն հորիզոնը, որը կորչում էր գորշ մշուշում:

— Այստեղից ինչպիսի՞ տեսարան է բացվում,— հարց-
րեց բանտապահը:

— Սքանչելի՞,— պատասխանեց Կոռնելիուսը՝ նայելով
Ռոդային:

— Այո՛, այո՛, չափազանց լայն ու արձակ տարածու-
թյուն է, չափազանց լայն ու արձակ:

Այդ միջոցին անձանոթ ձայնից անհանգստացած աղավ-
նիները դուրս թռան իրենց բնից ու վախեցած՝ անհետացան
մշուշում:

— Օ՛, այս ի՞նչ է:

— Իմ աղավնիներն են,— պատասխանեց Կոռնելիուսը:

— Իմ աղավնիներ՞ըր,— բղավեց բանտապահը,— ի՞մ
աղավնիները: Դե, մի՞թե բանտարկյալը կարող է ինչ-որ բան
ունենալ:

— Այդ դեպքում,— պատասխանեց Կոռնելիուսը,— դը-
րանք աղավնիներ են, որոնց աստված ինքն է ուղարկել:

— Ահա արդեն կանոնների մի խախտում,— շարունա-



կեց Գրիֆուսը:— Աղաժնինե՞ր: Ա՛խ, երիտասարդ, երիտասարդ, ես նախազգուշացնում եմ, որ ոչ ուշ, քան վաղը, այդ թռչունները կեփւլեն իմ կաթսայում:

— Դուք նախ պետք է դրանք բռնեք, պարոն Գրիֆուս,— առարկեց Կոռնելիուսը:— Դուք գտնում եք, որ ես իրավունք չունեմ աղաժնիներ ունենալու, երդվում եմ, որ նրանց նկատմամբ ձեր իրավունքներն իմից ավելի քիչ են:

— Այն, ինչ հետաձգված է, դեռևս կորած չէ,— մըթմըրթաց բանտապահը,— և ամենաուշը վաղը ես դրանց վիզը կոլորեմ:

Եւ այդ շար խոստումը տալով, Գրիֆուսը թեքվեց պատուհանից դուրս՝ տեսնելու, թե որտեղ է աղաժնիների բույնը: Դա Կոռնելիուսին հնարավորություն տվեց վազել դռան մոտ և Ռոզայի ձեռքը բռնել, որը հասցրեց շշնջալ:

— Այսօր երեկոյան ժամը իննին:

Գրիֆուսն ամբողջովին կլանված աղաժնիներին, իր խոստման համաձայն, իսկույն ևեթ, հենց վաղը բռնելու ցանկությամբ, ոչինչ չսեց ու չտեսավ, և փակելով պատուհանը, աղջկա ձեռքը բռնեց ու դուրս եկավ, դուռը հետևից կողպելով: Նա ուղևորվեց մի ուրիշ բանտարկյալի մոտ, նրան էլ նման խոստումներ տալու:

Հենց որ նա դուրս եկավ, Կոռնելիուսը մոտ՝ վազեց դռանն ու սկսեց ականջ դնել հեռացող քայլերին: Երբ դրանք բոլորովին մարեցին, մոտեցավ պատուհանին և աղաժնիների բույնը քանդեց:

Կոռնելիուսը նախընտրեց ընդմիշտ բաժանվել իր փետրավոր բարեկամներից, քան թույլ տալ, որ այդ սիրելի լրաբերները, որոնց ինքը պարտական էր՝ Ռոզային տեսնելու երջանկությամբ, կործանվեն:

Ո՛չ բանտապահի այցելությունները, ո՛չ նրա կուպիտ սալառնալիքները, ո՛չ նրա հսկողության մոռյլ հեռանկարը, հսկողություն, որը բանտապահը շարաշահում էր, ոչինչ չէր կարող խանգարել Կոռնելիուսին համակած այն անուշ երազները և հատկապես այն քաղցր հույսը, որը նրան ներշնչել էր Ռոզան:

Կոռնելիուսն անհամբերությամբ սպասում էր, թե ե՞րբ Ղեկշտեյնի աշտարակի ժամացույցը կխփի ժամը ինը:

Ռոզան ասաց. «Սպասեք ինձ ժամը իննին»։ Բրոնզե զանգակի վերջին դողանքը դեռ հնչում էր, երբ Կոռնելիուսը սանդուղքների վրա լսեց թեթև ոտնաձայն ու սքանչելի ֆրիս-լանդուհու փարթամ հագուստի շրշյունը. դռան վանդակը, որին զամված էր Կոռնելիուսի վառվող հայացքը՝ լուսավորվեց:

Դռան վրա գտնվող փոքրիկ պատուհանը դրսից բացվեց:

— Ահա՛ և ես, — բացականչեց Ռոզան, շնչակտուր լինելով սանդուղքներով արագ բարձրանալուց: — Ահա և ես:

— Օ՛, սիրելի Ռոզա:

— Ուրեմն, դուք գո՞հ եք, որ տեսնում եք ինձ:

— Դեռ հարցնո՞ւմ եք: Դե, պատմեք, թե ինչպես հաջողվեց ձեզ այստեղ գալ:

— Լսե՛ք, իմ հայրը սովորաբար այս ժամին ընթրիքից հետո քնելու սովորություն ունի, ես էլ նրան պառկեցնում եմ և, օղուց մի քիչ հարբած, նա քնում է: Ոչ մեկին այդ մասին մի՛ պատմեք, քանի որ միայն դրա շնորհիվ է, որ կարող եմ ամեն երեկո այցելել ու զրուցել ձեզ հետ:

— Օ՛, շնորհակալ եմ, Ռոզա, թանկագին Ռոզա:

Այս խոսքերով Կոռնելիուսն իր դեմքն այնքան մոտեցրեց պատուհանի վանդակներին, որ Ռոզան ետ քաշվեց:

— Ես բերել եմ ձեր սոխուկները, — ասաց նա:

Կոռնելիուսի սիրտը թրթռաց. նա չէր համարձակվում հարցնել, թե ի՞նչ է արել նա այդ թանկարժեք զանձերը, որոնք ինքը հանձնեց աղջկան:

— Ա՛, նշանակում է պահել եք դրանք:

— Մի՞թե դուք ինձ չհանձնեցիք՝ որպես ձեզ համար շատ թանկարժեք բաներ:

— Այո, բայց քանի որ ձեզ հանձնեցի, ուրեմն դրանք այսուհետև ձերն են:

— Դրանք իմը կլինեին միայն ձեր մահից հետո, իսկ դուք, բարեբախտաբար, կենդանի եք: Օ՛, որքան ես երախտապարտ եմ նորին մեծությանը: Եթե աստված արքայազն Վիլհելմին պարգևի այն ամենը, ինչ ես ցանկացել եմ, ապա

Վիլհելմ թագավորը ոչ միայն ամբողջ թագավորության մեջ, այլև ամբողջ աշխարհի ամենաներջանիկ մարդը կլինի¹։ Պուք կենդանի եք, ասում էի ինքս ինձ, և ինձ մոտ պահելով ձեր կնքահոր ավետարանը, որոշեցի վերադարձնել սոխուկները։ Միայն չգիտեի, թե ինչպե՞ս այդ անեմ։ Եվ ես արդեն որոշել էի խնդրել փոխարքային Հորկումի բանտապահի պաշտոնը, երբ եկավ ձեր դայակն ու բերեց նամակը։ Օ՛, հավատացնում եմ, որ մենք նրա հետ միասին շատ արցունք թափեցինք ձեզ համար։ Սակայն ձեր նամակը միայն ավելի համոզեց ինձ իմ որոշման մեջ և ես ուղևորվեցի Լեյդեն։ Մնացածն արդեն ձեզ հայտնի է։

— Ինչպե՞ս թե, թանկագին Ռոզա, դուք մինչև իմ նամակն էիք մտադրվել տեղափոխվել այստեղ։

— Մտադրվե՞լ էի արդյոք, — պատասխանեց Ռոզան (սերը հաղթահարել էր նրա ամոթխածությունը), — իմ ամբողջ մտքերը զբաղված էին միայն դրանով։

Ռոզան այնքան սքանչելի էր, որ Կոռնելիուսը երկրորդ անգամ իր դեմքն ու շրթունքները հպեց վանդակին, հավանաբար նրա համար, որպեսզի իր երախտագիտությունը հայտնի երիտասարդ աղջկան։

Ռոզան, ինչպես և առաջին անգամ, ետ քաշվեց։

— Ճիշտ է, — ասաց նա սեթևեթելով, ինչպես այդ հատուկ է ամեն մի ջահել աղջկա, — ճիշտ է, ես հաճախ էի ցավում, որ կարգալ չգիտեմ, սակայն ամենից շատ ափսոսացի այն ժամանակ, երբ դայակը հանձնեց ձեր նամակը։ Ես նամակը բռնել էի ձեռքիս, այն նամակը, որ ուրիշների համար օժտված էր կենդանի խոսքի ուժով, ինձ համար, այս խեղճ հիմարիկիս համար, համր էր։

— Դուք հաճախ էիք ափսոսում, որ կարգալ չգիտեք, — հարցրեց Կոռնելիուսը։ — Ինչո՞ւ։

— Օ՛, — ժպտալով պատասխանեց աղջիկը, — որովհետև ես կարգալ էի ուզում այն բոլոր նամակները, որոնք ուղարկվում էին ինձ։

¹ Վիլհելմ III Օրանցու ձգտումը՝ Հոլանդիայում սահմանել ժառանգական միապետություն, հաջողությամբ չպատկերաց։ Նրա մահից, հետո փոխարքայի պաշտոնը վերացվեց։

— Դուք նամակն՝եր եք ստանում, Ռոզա:

— Հարյուրներով:

— Իսկ ովքե՞ր են ձեզ գրում:

— Ովքե՞ր: Դե, այն բոլոր ուսանողները, որոնք անցնում են Բյուլտենհոֆով, բոլոր սպաները, որոնք գնում են դինավարժությունների, բոլոր գործակատարները և հուլյնիսկ առևտրականները, որոնք ինձ տեսնում են իմ փոքրիկ պատուհանի մոտ:

— Իսկ ի՞նչ էիք անում, սիրելի Ռոզա, այդ նամակները:

— Անաշ դրանք ինձ համար կարդում էր իմ ընկերուհիներից որեւէ մեկը, և դա շատ էր զվարճացնում, սակայն որոշ ժամանակից ի վեր ևս չեմ ուզում լսել այդ հիմարությունները: Որոշ ժամանակից ի վեր ես դրանք ուղղակի այրում եմ:

— Որոշ ժամանակից ի վե՞ր, — բացականչեց Կոռնելիուսը և նրա աչքերը սիրուց ու երջանկությանից փայլեցին: Ռոզան կարմրելով աչքերը խոնարհեց:

Նա չնկատեց, թե ինչպես Կոռնելիուսի շուրթերը մոտեցան և, ավաղ, հպվեցին միայն վանդակներին: Սակայն, չնայած այդ արգելքին, երիտասարդ աղջկա շրթունքներին հասավ այն տաք շունչը, որը ամենաքնքուշ համբույրի նման այրեց նրան:

Ռոզան ցնցվեց և այնպիսի արագությունով փախավ, որ մոռացավ Կոռնելիուսին վերադարձնել նրա սև կակաչի սոխուկները:

16

Ուսուցիչը և աշակերտուհին

Ինչպես մենք տեսանք, ծերուկ Գրիֆուսը բոլորովին չէր բաժանում Կոռնել դե Վիտի սանի նկատմամբ իր աղջկա ունեցած վերաբերմունքը:

Էեհշտեյնում միայն հինգ բանտարկյալներ կային և նրանց հսկելը դժվար գործ չէր, այնպես որ բանտապահի

սլաշտոնը Գրիֆուսին տրվել էր որպէս ծերութեան հասակի սինեկուրա¹:

Սակայն արժանավոր բանտապահը այնպիսի բարեխղճութեամբ էր ծառայում, որ իրեն հանձնարարված գործը երևակայության ուժով անշափ բարդացրեց: Նրա պատկերացմամբ Կոռնելիուսը առաջին կարգի խոշոր հանցագործ էր: Այդ պատճառով նրա աչքում՝ բոլոր բանտարկյալներից ամենից վտանգավորը: Գրիֆուսը հետևում էր վան Բեռլեի ամեն մի քայլին, նրան վերաբերվում էր ամենախիստ ձևով և ստիպում էր պատիժը կրել, ինչպէս ինքն էր ասում, ի հատուցումն փոխարքայի բարեգործության:

Օրը երեք անգամ Գրիֆուսը մտնում էր վան Բեռլեի խուցը այն հուշսով, որ վերջինիս կրոնի հանցանքի վայրում, սակայն Կոռնելիուսը այն ժամանակից, երբ իր թրդթակցուհին անմիջապէս իր կողքին էր, հրաժարվել էր ամեն մի նամակագրութիւնից: Հնարավոր էր, որ եթե նույնիսկ Կոռնելիուսը ազատութիւն ստանար և իրավունք ունենար ապրելու այնտեղ, որտեղ ինքն է ուզում, նա կնախընտրեր նորից իր կյանքը շարունակել բանտում՝ Ռոզայի և իր սոխուկների հետ, քան թե մի այլ տեղում, առանց Ռոզայի ու սոխուկների:

Ռոզան խոստացել էր ամեն երեկո ժամը իննին գալ զրուցելու բանտարկյալի հետ և, ինչպէս տեսանք, հենց առաջին իսկ երեկո նա կատարեց իր խոստումը:

Մյուս օրը նա նախորդ օրվա նման զգուշութեամբ ու խորհրդավորութեամբ նորից եկավ: Ռոզան իրեն խոսք էր տվել դեմքը շատ շմոտեցնել պատուհանի վանդակներին: Եվ, որպէսզի իսկույն ևեթ սկսի այն խոսակցութիւնը, որը կաջող էր հետաքրքրել վան Բեռլեին, աղջիկն սկսեց նրանից, որ վանդակների արանքից Կոռնելիուսին մեկնեց նույն այն թրդթի մեջ փաթաթած երեք սոխուկները:

Սակայն, ի մեծ զարմանս Ռոզայի, վան Բեռլեն զգու-

¹ Սինեկուրա — աշխատանք չպահանջող, սակայն լավ եկամուտ քերող սլաշտոն:

շությամբ իր մատների ծայրերով հտ հրեց աղջկա սպիտակ ձեռքը:

Երիտասարդն ամեն ինչ խորհել էր:

— Ի՛նձ լսեք,— ասաց նա,— ես կարծում եմ, որ մեր ամբողջ կարողությունը մեկ պարկի մեջ ամփոփելը մեր կողմից շատածված քայլ է: Դուք հասկանո՞ւմ եք, թանկագին Ռոզա, մենք պատրաստվում ենք իրագործել մի խնդիր, որը մինչև հիմա համարվում էր անլուծելի: Մենք պետք է աճեցնենք նշանավոր սև կակաշը: Ուրեմն ձեռք առնենք բոլոր նախազգուշական միջոցները, որպեսզի անհաջողության դեպքում ինքներս մեզ չմեղադրենք: Ահա թե ինչ ճանապարհով մենք հաջողության կհասնենք:

Ռոզան լարել էր իր ամբողջ ուշադրությունը, որպեսզի լսի ու հասկանա, թե բանտարկյալն իրեն ինչ կասի, և ոչ թե այն պատճառով, որ ինքն էր դրան մեծ նշանակություն տալիս, այլ որովհետև բանտարկյալն ինքը շատ մեծ նշանակություն էր տալիս այդ հարցին:

Կոռնելիուսը շարունակեց.

— Ահա՛ թե ինչպես եմ ես մտածում կազմակերպել մեր համագործակցությունը:

— Ես լսում եմ,— ասաց Ռոզան:

— Այս ամբողջում, ամենայն հավանականությամբ, կա մի որևէ այգի և, եթե այգի չկա, ապա գոնե բակ կա կամ թեկուզ հողի մի կտոր:

— Մենք հրաշալի այգի ունենք,— ասաց Ռոզան,— ձրգվում է գետի երկարությամբ և ամբողջովին ծածկված է հին, սքանչելի ծառերով:

— Զե՞ք կարող արդյոք, թանկագին Ռոզա, ինձ այնտեղից մի քիչ հող բերել, տեսնեմ լա՞վն է, թե՞ ոչ:

— Հենց վաղը կբերեմ:

— Դուք վերցրեք մի քիչ ստվերոտ մասից և մի քիչ էլ արևոտ մասից, որպեսզի ես այդ նմուշներով կարողանամ որոշել հողի խոնավության ու չորության աստիճանը:

— Հանգի՛ստ եղեք:

— Երբ ես արդեն կընտրեմ հողը, մենք սոխուկները կբաժանենք: Մի սոխուկը դուք կվերցնեք և իմ նշանակած

որը կցանեք այն հողի մեջ, որը ես կընտրեմ: Եթե դուք իմ ցուցումների համաձայն խնամեք, սոխուկը, իհարկե, պետք է ծաղկի:

— Ես ո՛չ մի վայրկյան չեմ հեռանա նրանից:

— Մյուս սոխուկը դուք կթողնեք ինձ մոտ, և ես կաշխատեմ այստեղ՝ իմ խցում, աճեցնել. դա ինձ համար կլինի նաև զբաղմունք այն ժամերին, երբ ես կլինեմ մենակ, առանց ձեզ: Խոստովանում եմ, որ ես շատ քիչ հույսեր եմ կապում այդ սոխուկի հետ, և այդ թշվառին նայում եմ որպես իմ եսասիրության զոհի: Սակայն երբեմն-երբեմն ինձ մոտ էլ է արև թափանցում. ամենայն վարպետությամբ ես կաշխատեմ օգտվել դրանից: Վերջապես, մենք, ավելի ճիշտ՝ դուք, երրորդ սոխուկը կպահեք որպես պահեստային, դա կլինի մեր վերջին հույսը, եթե հանկարծ առաջին երկու փորձերը անհաջող անցնեն: Այս ձևով, սիրելի Ռոզա, չի կարող պատահել, որ մենք չշահենք հարյուր հազար ֆլորինը՝ ձեր օժիտը, և չհասնենք մեր նպատակին, որը ձեզ երջանկացնելն է:

— Ես հասկացա, — պատասխանեց Ռոզան: — Վաղը ես հող կբերեմ, և դուք կընտրեք ինձ համար էլ, ձե՛զ համար էլ: Իսկ ինչ վերաբերում է ձեր հողին, ապա ես ստիպված պետք է լինեմ ծախսել դրա վրա շատ երեկոներ, քանի որ յուրաքանչյուր անգամ ես հնարավորություն կունենամ բերելու մի քիչ:

— Օ՛, մենք շտապելու ոչինչ չունենք, սիրելի Ռոզա: Մեր կակաշները պետք է տնկվեն մեկ ամսից ոչ շուտ: Ինչպես տեսնում եք, մենք բավականին ժամանակ ունենք: Միայն թե ձեր կակաշը տնկելու ժամանակ դուք ճշտորեն պետք է պահպանեք իմ ցուցումները, այնպես չէ՞:

— Ես խոստանում եմ:

— Եվ երբ արդեն սոխուկը տնկված կլինի, դուք պետք է ամենայն մանրամասնությամբ հաղորդեք ինձ բոլոր այն հանգամանքները, որոնք կվերաբերեն մեր սանիկին. այսինքն՝ ջերմության փոփոխությունը, հետքեր՝ ծառուղում, հետքեր՝ թմբի վրա: Գիշերները դուք պետք է ականջ դնեք՝ կատունները չե՞ն այցելում արդյոք ձեր այգին: Երկու թըշ-

վառ կատուններ Դորդրեխտում փշացրին իմ երկու թմբերը:

— Լավ, ես ականջ կդնեմ:

— Իսկ լուսնյակ գիշերներին... Ձեր սենյակից երևո՞ւմ է այգին, սիրելի մանկիկս:

— Իմ ննջարանի պատուհանները նայում են այգուն:

— Հիանալի է: Լուսնյակ գիշերներին դուք պետք է հետևեք, թե արդյոք պարսպի արանքներից առնետներ դուրս չե՞ն գալիս. ես հանդիպել եմ այնպիսի ծաղկագործների, որոնք բողոքում էին Նոյից միայն նրա համար, որ նա իր տապանի վրա մի զույգ առնետներ էլ է վերցրել¹:

— Ես կհետևեմ և, եթե այնտեղ առնետներ կամ կատուներ կան...

— Ամեն ինչ պետք է նախօրոք հաշվի առնել: Այնուհետև, — շարունակեց վան Բեռլեն, որը բանտում գտնվելուց ի վեր դարձել էր շատ կասկածամիտ, — այնուհետև կա մի կենդանի, որը առնետից ու կատվից էլ ավելի վտանգավոր է:

— Դա ի՞նչ կենդանի է:

— Դա մարդն է: Դուք հասկանո՞ւմ եք, սիրելի Ռոզա, աչքի առաջ ունենալով նույնիսկ, որ կարող են բանտ ընկնել, գողանում են անգամ մեկ ֆլորինը, այդ չնչին գումարը, առավել ևս կգողանան կակաչի սոխուկը, որն արժե հարյուր հազար ֆլորին:

— Բացի ինձանից, ո՛չ ոք այգի չի մտնի:

— Դուք այդ խոստանո՞ւմ եք:

— Ես երդվում եմ:

— Շատ բարի, Ռոզա: Շնորհակա՞լ եմ, սիրելի Ռոզա: Հիմա դուք իմ ամբողջ խնդության աղբյուրն եք:

Եվ քանի որ վան Բեռլեի շրթունքները նույնպիսի ջերմությամբ, ինչպես նախօրոք օրը, հավեցին պատուհանի վանդակներին, և միաժամանակ արդեն գնալու ժամն էր, Ռոզան գլուխը հտ քաշեց և ձեռքը մեկնեց:

¹ Ավետարանի առասպելում պատմվում է, որ Նոյ նահապետը, համաշխարհային ջրհեղեղից ազատվելով, իր տապանի վրա վերցրեց յուրաքանչյուր տեսակի կենդանուց մեկական զույգ: Այդ շրջահայեցության շնորհիվ, իբր թե, հետագայում էլ բոլոր կենդանիները շարունակեցին իրենց գոյությունը:

Աղջկա դեղեցիկ ձեռքում կակաչի սոխուկն էր: Կոռնելիուսը կրքոտորեն համբուրեց նրա մատների ծայրերը: Արդյո՞ք նրա համար, որ այդ ձեռքը բռնել էր նշանավոր սև կակաչի սոխուկներից մեկը, թե՞ նրա համար, որ այդ ձեռքը պատկանում էր Ռոզային: Դա մենք թողնում ենք գուշակելու նրանց, ովքեր մեղանից ավելի փորձված են:

Այսպես, ուրեմն, Ռոզան մնացած երկու սոխուկներն ամուր սեղմած կրծքին՝ հեռացավ:

Արդյո՞ք նրա համար էր այդպես սեղմում կրծքին, որ դրանք նշանավոր սև կակաչի սոխուկներն էին, թե՞ նրա համար, որ սոխուկները տվել էր Կոռնելիուս վան Բեռլեն: Մեզ թվում է, որ այս խնդիրը նախորդից ավելի հեշտ է վճռել:

Ինչ էլ որ լինի, համենայն դեպս, այդ վայրկյանից սկսած, բանտարկյալի կյանքը դառնում է հաճելի և իմաստավորված:

Ռոզան, ինչպես տեսանք, նրան հանձնեց սոխուկներից մեկը:

Ամեն երեկո աղջիկը նրան բերում էր մի բուռ հող, որը վերցված էր այգու ամենալավ համարվող հատվածից:

Բերեց մի մեծ կճուճ, որի վերևի մասը ջարդելով՝ Կոռնելիուսը հիանալի թաղար դարձրեց: Նա թաղարը կիսով չափ լցրեց Ռոզայի բերած հողով, խառնեց գետի շորացրած տիղմին և հրաշալի սևահող ստացավ:

Ապրիլի սկզբներին նա տնկեց առաջին սոխուկը:

Մենք չենք կարող նկարագրել այն ջանքերն ու հնարանքները, որոնց դիմում էր Կոռնելիուսը՝ Գրիֆուսից թաքցնելու համար իր ուրախ տրամադրությունը: Փիլիսոփա բանտարկյալի համար կես ժամը մտքերի ու զգացմունքների մի ամբողջ հավերժություն է:

Ռոզան ամեն օր գալիս էր Կոռնելիուսի հետ զրուցելու:

Կակաչները, որոնց մասին այդ ընթացքում Ռոզան մի ամբողջ դասընթաց անցավ, նրանց խոսակցության հիմնական թեման էր: Սակայն, ինչքան էլ հետաքրքիր լինեք այդ թեման, չէր կարելի շարունակ միայն կակաչների մասին խոսել: Այսպիսով, նրանք խոսում էին նաև այլ բաների մա-

սին և, կակաշների սիրահարը, ի զարմանս իրեն, նկատեց, թե ինչպես իրենց զրույցի սահմանները զնալով ընդարձակվում են:

Միայն թե Ռոզան, որպես կանոն, իր գեղեցիկ գլուխը սկսել էր պատուհանից կես դյույմ հեռու պահել, հավանաբար, սքանչելի ֆրիսլանդուհին ինքն իրենից էր վախենում, մանավանդ այն դեպքից հետո, երբ զգաց, որ բանտարկյալի շունչը նույնիսկ վանդակների արանքից կարող է այրել երիտասարդ աղջկա սիրտը:

Մի հանգամանք այդ ժամանակ անհանգստացնում էր Կոռնելիուսին համարյա թե այնքան, որքան նրա սոխուկները, և նա շարունակ դրա մասին էր մտածում:

Նրան շփոթեցնում էր Ռոզայի կախվածությունն իր հորից:

Մի խոսքով, վան Բեուլեի, այդ նշանավոր բժշկի, հիանալի նկարչի, բարձր կրթության տեր, այդ վան Բեուլե-ծաղկագործի կյանքը, մի մարդու, որը, անկասկած, առաջինը էաճեցների այն հրաշալիքը, որը, ինչպես նախօրոք վճռված էր, պետք է ստանար *Rosa Barlaensis* անունը, վան Բեուլեի կյանքը և առավել քան կյանքը՝ նրա բարեկեցությունը, կախված էր մեկ այլ մարդու ամենափոքր քմահաճույքից: Եվ այդ մարդը օժտված էր ամենանվաղ մտավոր կարողություններով: Մարդ-բանտապահն ավելի քիչ գիտակցություն ուներ, քան այն կողմերը, որով նա փակում է դուռը, և ավելի կարծր էր, քան այն երկաթը, որով նա ամրացնում էր դռները:

Այսպես, ուրեմն, Կոռնելիուսի բարեկեցությունը կախված էր այդ մարդուց: Մի գեղեցիկ առավոտ Լեշտեյնը նրան կարող էր շատ տխուր թվալ կամ կարող էր մտածել, որ օդն այդտեղ բավականաչափ լավ չէ, օդին այնքան էլ համեղ չէ, և կարող էր հեռանալ ամրոցից՝ տանելով իր հետ նաև աղջկան: Եվ նորից Ռոզան ու Կոռնելիուսը կբաժանվեին:

— Եվ այն ժամանակ, թանկագին Ռոզա, ինչի՞ պետք են փոստային աղավնիները, քանի որ դուք չեք կարող կարգալ իմ նամակները և ոչ էլ կարող եք ձեր մտքերը շարադրել:

— Դե, ի՞նչ արած,— պատասխանեց Ռոզան, որն իր

հոգու խորքում նույնպես վախենում էր հնարալուր բաժանումից, — մեր տրամադրության տակ ամեն երեկո մեկ ժամ կա, կարող ենք օգուտ քաղել դրանից:

— Սակայն, ինձ թվում է, — նկատեց Կոռնելիուսը, — որ մենք հիմա էլ անօգուտ չենք անցկացնում ժամանակը:

— Ավելի շատ օգուտ կարող ենք քաղել, — ժպտալով կրկնեց Ռոզան: — Ինձ գրել-կարդալ սովորեցրեք: Հավատացնում եմ, որ ձեր դասերն ինձ օգտակար կլինեն, և երբ որևէ ժամանակ մենք բաժանվենք, ապա դա կպատահի միայն իմ սեփական կամքի թելադրանքով:

— Օ՛հ, — բացականչեց Կոռնելիուսը, — այդ դեպքում մեր առջև հավերժությունն է:

Թեթևակի թոթվելով ուսիրը՝ Ռոզան ժպտաց:

— Մի՞թե դուք հավերժ պետք է բանտում մնաք, — պատասխանեց նա, — մի՞թե ձեզ կյանք պարգևելով, նորին մեծությունը ձեզ ազատություն չի շնորհի: Մի՞թե դուք չեք վերադառնալու ձեր կալվածքները: Մի՞թե դուք նորից հարուստ չեք լինելու: Եվ երբ ազատության մեջ լինեք ու հարուստ, մի՞թե դուք ձիով կամ կառքով անցնելիս՝ մի հայացքի չեք արժանացնի փոքրիկ Ռոզային, բանտապահի, այսինքն՝ համարյա թե դահճի աղջկան:

Կոռնելիուսը փորձում էր բողոքել և, անկասկած, կբողոքեր ամբողջ սրտով, սիրով լեցուն իր հոգու ամբողջ անկեղծությամբ:

Երիտասարդ աղջիկը նրան ընդհատեց.

— Ինչպե՞ս է ձեր կակաչը, — ժպտալով հարցրեց նա:

Կոռնելիուսի հետ կակաչների մասին խոսելը Ռոզայի համար դարձել էր մի միջոց՝ ստիպելու նրան մոռանալ ամեն ինչ, նույնիսկ իրեն՝ Ռոզային:

— Վատ չէ, — պատասխանեց Կոռնելիուսը, — կաշին սևանում է, խմորումն արդեն սկսվել է, սոխուկի երակներն արդեն ջերմանում են ու լցվում. մի շաբաթից, գուցե և ավելի շուտ, կարելի է նկատել ծլելու առաջին նշանները: Իսկ ձեր կակա՞չը, Ռոզա:

— Օ՛հ, ես գործը շատ լավ եմ սկսել և ճշտորեն հետևել եմ ձեր ցուցումներին:

— Կսե՛ք ինձ, Ռոզա, իսկ ի՞նչ եք արել,— հարցրեց Կոռնելիուսը: Նրա աչքերը բոցկլտում էին և շունչն այնքան ջերմ էր, որքան այն երեկո, երբ նրա աչքերն այրեցին Ռոզայի դեմքը, իսկ շունչը՝ նրա սիրտը:

— Նա,— սկսեց ժպտալ աղջիկը, քանի որ հոգու խորքում նա տեսնում էր բանտարկյալի երկակի սերը իր և սև կակաչի նկատմամբ,— ես գործը լավ հիմքերի վրա եմ դրել. բաց տեղում, ծառերից ու պարսպից հեռու, ես մի թումբ եմ պատրաստել, որը մի քիչ ավազախառն է, ավելի խոնավ է, քան շոր, և շունի ամենափոքր քարի կտոր անգամ: Թումբը սարքել եմ այնպես, ինչպես դուք նկարագրեցիք:

— Բարի՛, բարի՛, Ռոզա:

— Այսպիսով, պատրաստ հողը սպասում է ձեր կարգադրությանը: Առաջին իսկ տաք օրը դուք կհրամայեք ինձ տնկել սոխուկը, և ես կտնկեմ: Չէ՞ որ իմ սոխուկը կարելի է ձերինից ուշ ցանել, քանի որ իմս կունենա ավելի շատ օդ, արև ու հողային հյութեր:

— Ճի՛շտ է, ճի՛շտ,— Կոռնելիուսը ուրախությունից ծափ տվեց:— Դուք հրաշալի աշակերտուհի եք, Ռոզա, և դուք, իհարկե, կշահեք ձեր հարյուր հազար ֆլորինը:

— Մի՛ մոռացեք,— ծիծաղելով ասաց աղջիկը,— որ ձեր աշակերտուհին, ինչպես ինձ անվանեցիք, պետք է, բացի կակաչներ աճեցնելուց, մեկ այլ բան էլ սովորի:

— Այո՛, այո՛, ես էլ շահագրգռված եմ այնքան, որքան դուք, որպեսզի գրել-կարդալ սովորեք:

— Ե՞րբ ենք սկսելու:

— Հիմա՛:

— Ոչ, վա՛ղը:

— Ինչո՞ւ:

— Որովհետև մեր ժամն արդեն ավարտվեց և պետք է ձեզ մենակ թողնեմ:

— Արդե՛ն: Իսկ ի՞նչ ենք կարդալու:

— Օ՛հ,— պատասխանեց Ռոզան,— ես մի գիրք ունեմ, որը, հուսով եմ, թե մեզ երջանկություն էրերի:

— Ուրեմն, մինչև վաղը:

— Մինչև վաղը:

17

Առաջին սոխուկը


Հաջորդ օրը Ռոզան եկավ՝ հետը բերելով Կոռնել դե Վիտի ավետարանը:

Նվ սկսվեց ուսուցչի ու աշակերտուհու միջև այն հիասքանչ տեսարաններից մեկը, որն այնքան ուրախություն է պատճառում վիպագրին, եթե, իհարկե, նրա բախտից, գրանք դառնում են նրա գրչի նյութ:

Պատուհանը, այն միակ անցքը, որի օգնությամբ սիրահարները միմյանց տեսնում էին, շափազանց բարձր էր այն բանի համար, որ մինչև հիմա սոսկ միմյաց երես տեսնելով և միմյանց հետ խոսելով բավարարվող երիտասարդները կարողանային Ռոզայի բերած գրքերը հեշտությամբ կարգալ:

Այդ պատճառով երիտասարդ աղջիկը ստիպված էր հենվել պատուհանին՝ գլուխը թեքելով գրքի վրա, որը նա աջ ձեռքով բռնում էր այնպես, որ լապտերի լույսը ընկնի էջերին: Որպեսզի ձեռքը շատ շփոթնի, Կոռնելիուսը լապտերը թաշկինակով կապեց պատուհանի վանդակին: Այսպիսով, Ռոզան մատով կարող էր հետևել տառերին ու վանկերին, որոնք նա Կոռնելիուսի պահանջով պետք է կրկներ: Վերջինս գինված եղեգնյա մի փայտիկով, վանդակի արանքից իր ուշիմ աշակերտուհուն ցույց էր տալիս տառերը:

Լապտերը լուսավորում էր Ռոզայի վարդագույն գեմքը, նրա խոր, կապույտ աչքերը, բաց շագանակագույն մազերը, որոնք ֆրիսլանդուհիներին հատուկ ոսկեկար գլխանոցի տակ ավելի մուգ էին երևում: Նրա վեր բարձրացրած մատները, որոնցից արյունը երակներով ետ էր հոսում, դառնում էին բոլորովին բաց վարդագույն և շարունակ փոփոխվող գույնը:



կարծես թե բաց էր անում այդ նուրբ կաշվի տակ բաբախող
կյանքի զաղտնիքները:

Ռոզայի ընդունակությունները արագությամբ զարգա-
նում էին Կոռնելիուսի կենսատու խելքի ազդեցության տակ,
և, երբ դժվարությունները թվում էին բավականաչափ մեծ,
ապա նրանց միմյանց մեջ խորասուզվող աչքերը, մեղմու-
թյամբ իրար հպվող թերթերունքները, նրանց միմյանց խառ-
նըվող մազերը արձակում էին այնպիսի էլեկտրական կայ-

ծեր, որոնք ի վիճակի էին լույս սփռելու նույնիսկ ամենա-
անհասկանալի խոսքերի ու արտահայտութիւնների վրա:

Եւ Ռոզան այնուհետեւ իջնելով իր սենյակը՝ մտքում մե-
նակ կրկնում էր դասը, միաժամանակ սրտում կրկնելով իր
սիրո գաղտնի դասը:

Մի անգամ երեկոյան նա սովորականից կես ժամ ուշ
եկավ:

Կես ժամվա այդ ուշացումը չափազանց մեծ իրադար-
ձութիւնն էր, և Կոռնելիուսն անմիջապէս հարցրեց պատ-
ճառը:

— Օ՛, մի՛ նախատեք ինձ, — ասաց աղջիկը, — դա իմ
մեղքով չէր: Հայրս Լեւշտեյնում վերականգնել է իր հին ծա-
նոթութիւնը մի մարդու հետ, որը Հաագայում հաճախ էր
այցելում նրան, խնդրելով, որ հայրս իրեն ցույց տա բան-
տը: Դա մի լավ երիտասարդ է, խմելու մեծ սիրահար, որ
շատ ուրախ պատմութիւններ է պատմում և, բացի այդ,
առանց խնայելու, առատորեն վճարում է:

— Դուք նրան առաջ չէի՞ք ճանաչում, — զարմանքով
հարցրեց Կոռնելիուսը:

— Ոչ, — պատասխանեց երիտասարդ աղջիկը, — ահա
արդեն երկու շաբաթ է, ինչ հայրս պոկ չի գալիս այդ նոր ծա-
նոթից, որը իր հերթին շատ ջանասիրութեամբ այցելում է մեզ:

— Օ՛, — նկատեց Կոռնելիուսը՝ անհանգստութեամբ գլուխն
օրորելով, քանի որ ամեն մի նոր իրադարձութիւն նրան
թվում էր ինչ-որ փորձանքի սկիզբ, — նա, հավանաբար, այն
լրտեսներից է, որոնց բանտ են ուղարկում՝ հետեւելու և՛ բան-
տարկյալներին, և՛ նրանց հսկող պահակներին:

— Ես կարծում եմ, — ասաց Ռոզան ժպիտով, — որ
այդ հաճելի մարդն այստեղ կարող է հետեւել բոլորին, միայն
ոչ իմ հորը:

— Իսկ ո՞ւմ կարող է նա հետեւել այստեղ:

— Օրինակ, ինձ:

— Ձե՞ղ:

— Իսկ ինչո՞ւ ոչ, — ասաց աղջիկը ծիծաղելով:

— Ախ, այո՛, դա ճշմարիտ է, — հոգոց հանելով նկա-
տեց Կոռնելիուսը, — ձեր ոչ բոլոր երկրպագուները պետք է

դատարկածեան վերադառնան, Ռոզա, այդ մարդը կարող է դառնալ ձեր ամուսինը:

— Ես չեմ ասում «ոչ»:

— Ասացեք խնդրեմ, ինչո՞վ եք հիմնավորում այդ ուրախությունը:

— Ասացեք ավելի շուտ՝ այդ վտանգը, պարոն Կոռնելիուս...

— Շնորհակալություն, Ռոզա, դուք իրավացի եք, այդ վտանգը...

— Ահա թե ինչով եմ հիմնավորում:

— Ես ձեզ լսում եմ, խոսե՛ք:

— Այդ մարդն արդեն Հաագայում մի քանի անգամ եկել էր Բյուլտենհոֆ. հենց այն ժամանակ, երբ դուք այնտեղ բանտարկված էիք: Երբ ես դուրս էի գալիս, ինքն էլ էր դուրս գալիս. երբ ես եկա այստեղ, ինքն էլ եկավ: Հաագայում նա գալիս էր ձեզ տեսնելու:

— Ինձ տեսնելո՞ւ:

— Այո: Բայց դա, անկասկած, պատրվակ էր. հիմա, երբ դուք նորից բանտարկյալ եք, ավելի ճիշտ՝ երբ իմ հայրը նորից ձեր բանտապահն է, նա այլևս ցանկություն չի հայտնում ձեզ տեսնելու: Ես լսեցի, թե ինչպես երեկ նա հորս ասում էր, որ ձեզ չի ճանաչում:

— Ռոզա, ես խնդրում եմ, շարունակեք: Ես կաշխատեմ որոշել, թե դա ի՞նչ մարդ է և ի՞նչ է ցանկանում:

— Դուք հավատացած եք, պարոն Կոռնելիուս, որ ձեր բարեկամներից ոչ մեկը չի կարող ձեզանով հետաքրքրվել:

— Ես բարեկամներ չունեմ, Ռոզա: Իմ դայակից բացի, ուրիշ մարդ չունեմ. դուք նրան եք ճանաչում, նա էլ ձեզ է ճանաչում: Ավա՛ղ: Այդ թշվառ կինը, առանց որևէ խորամանկության, կգար և արտասովորով ձեզ կամ ձեր հորը կասեր. «Սիրելի պարո՛ն, կամ սիրելի օրիորդ, իմ զավակը գտնվում է ձեզ մոտ. տեսնո՞ւմ եք, թե ես ինչպիսի հուսահատ վիճակում եմ, թույլ տվեք ինձ մի ժամով նրա մոտ գնալ, և ես ամբողջ կյանքում կաղոթեմ ձեզ համար»: Օ՛հ, ո՛չ, — շարունակեց Կոռնելիուսը, — բացի իմ բարի դայակից, ես ուրիշ բարեկամներ չունեմ:

— Այդպէս, ուրեմն, մնում է կարծել այն, ինչ ես ենթադրում էի, մանավանդ, որ երեկ մայրամուտին, երբ ես փորում էի այն թումբը, որտեղ պետք է ձեր սոխուկը ցանեմ, նկատեցի մի ստվեր, որ սողաց անցալ կաղամախու հետեի դռնակի ու թանթրվենու արանքից: Ես ձևացրի, որ չեմ տեսնում: Դա մեր այդ տղան էր: Նա թաքնվել ու նայում էր, թե ես ինչպէս եմ հողը փորում և, իհարկե, ինձ էր հետևում: Նա ինձ էր հետևում: Նա հետևում էր իմ բահի ամեն մի շարժմանը, թափած ամեն բուռ հողին:

— Օ՛, այո՛, այո՛, դա, իհարկե, երկրպագու է,— ասաց Կոռնելիուսը:— Իսկ ի՞նչ է, նա երիտասա՛րդ է, գեղեցի՞կ:

Եւ նա աղահուլթյամբ նայելով Ռոզային, անհամբերությամբ նրա պատասխանին էր սպասում:

— Երիտասա՛րդ, գեղեցի՞կ,— փոթկալով բացականչեց Ռոզան:— Նա զզվելի դեմք ունի, նրա մարմինը ծովոված է, նա մոտավորապէս հիսուն տարեկան է և դեռ համարձակվում է նայել իմ դեմքին ու ինձ հետ բարձրաձայն խոսել:

— Իսկ ինչպե՞ս է նրա անունը:

— Յակոբ Հիդելս:

— Նա ինձ անծանոթ է:

— Հիմա համոզվեցի՞ք, որ նա ձեզ համար չէ, որ այստեղ է գալիս:

— Համենայն դեպս, Ռոզա, եթե նա ձեզ սիրում է, իսկ դա շատ հավանական է, քանի որ ձեզ տեսնել՝ նշանակում է սիրել, դուք նրան չեք սիրում, այնպէս չէ՞:

— Օ՛, իհարկե, ո՛չ:

— Դուք ուզո՞ւմ եք, որ ես չկասկածեմ:

— Ես պահանջո՞ւմ եմ այդ:

— Դե լավ, հիմա, Ռոզա, դուք կարողանում եք մի քիչ կարդալ և կկարգաք, չէ՞, եթե ես ամեն ինչ գրեմ խանդի ու անշատման տանջանքների մասին:

— Ես կկարգամ, եթե դուք գրեք խոշոր տառերով:

Քանի որ խոսակցությունը ստացաւ այն ընթացքը, որը հենց անհանգստացնում էր Ռոզային, ապա նա որոշեց խոսքը շուտ տալ:

— Իսկ ինչպե՞ս է ձեր կակաչը,— ասաց նա:

— Ինքներդ պատկերացրեք իմ ուրախությունը, Ռոզա՛: Այսօր առավոտյան ես զգուշությամբ քանդեցի հողի վերին շերտը, որ ծածկում է սոխուկը, արևի լույսի տակ լավ զննեցի և տեսա, որ երևում է առաջին ծիրը: Ա՛խ, Ռո՛զա, իմ սիրտն ուրախությունից հալչում էր: Այդ աննկատելի, սպիտակավուն բողբոջը, որին ճանճի թևի մի շարժումը կարող է պոկել, այդ կյանքի նշույլը, որը դրսևորվում է համարյա թե ինչ-որ անշոշափելի ձևով, ինձ հուզեց ավելի շատ, քան նորին մեծության հրամանը, որը Բյուլտենհոֆյան կառավարանում կես ճամփից ետ դարձրեց զահճի սուրբ և վերափարձրեց իմ կյանքը:

— Ուրեմն, դուք հույս ունե՞ք, — ժպտալով հարցրեց Ռոզան:

— Օ՛հ, այո՛, հույս ունեմ:

— Իսկ ե՞րբ պետք է իմ սոխուկը տնկեմ:

— Առաջին իսկ բարեհաջող օրը: Ես այդ մասին կհայտնեմ: Սակայն ոչ մեկի ձեզ օգնական չվերցնեք: Գլխավորն այն է, որ երկրիս երեսին ո՛չ մեկին, ո՛չ մեկին չվստահեք խոյ գաղտնիքը: Բանն այն է, որ գիտակ մարդը սոխուկին հայելուն պես, կարող է նրա արժեքն իմանալ: Եվ գլխավորը, սիրելի Ռոզա, գլխավորը, շատ խնամքով պահեք ձեզ մոտ եղած երրո՛րդ սոխուկը:

— Փաթաթված է հենց այն թղթի մեջ, ինչով որ տվեցիք, պարոն Կոռնելիուս, և թաքցված է իմ պահարանի ամենախորքում, իմ ժանյակների մեջ, որոնք, առանց ծանրություն պատճառելու, ջերմացնում են նրան: Դե, ցտեսություն, իմ խեղճ բանտարկյալ:

— Ինչպես, արդե՞ն:

— Պետք է գնալ:

— Այդքան ուշ գալ և այդքան շուտ գնա՞լ:

— Հայրս կարող է անհանգստանալ, որ ես այդքան ուշ եմ տուն գնում. իսկ երկրպագուն կարող է կասկածել, որ ինքը մրցակից ունի:

Հանկարծ նա անհանգստացած ականջ դրեց:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց վան Բեռլեն:

— Ինձ թվաց, որ ես լսում եմ...

— Ի՞նչ եք լսում:

— Ինչ-որ քայլերի նմանվող ձայն սանդուղքի վրա:

— Այո, ճիշտ է,— ասաց Կոռնելիուսը,— բայց դա, համեմայն դեպք, Գրիֆուսը չէ, նրա քայլերը դեռ շատ հեռավոր լսվում են:

— Ոչ, դա հայրս չէ, ես հավատացած եմ: Սակայն...

— Սակայն...

— Դա կարող է պարոն Ֆակոբը լինել:

Ռոզան նետվեց դեպի դուռը և, իրոք, մինչև աղջիկը կիջներ առաջին տասն աստիճանները, լսվեց դռան արագ փակվելու ձայն:

Կոռնելիուսը շատ անհանգստացավ, սակայն դա նրա համար դեռևս միայն նախերգանք էր:

Երբ շար ճակատագիրը սկսում է իրագործել իր վատ նպատակները, շատ սակավ է պատահում, որ նա այդ մասին չի նախազգուշացնում իր զոհին, նման այն կովարար մարդուն, որը նախազգուշացնում է իր հակառակորդին, որպեսզի վերջինս համապատասխան միջոցներ ձեռք առնի:

Համարյա թե միշտ, այդ նախազգուշացումները, որ մարդ բնազդաբար կամ էլ որոշ անշունչ առարկաների միջոցով ընկալում է, համարյա թե միշտ դրանք մարդկանց կողմից հաշվի չեն առնվում:

Հաջորդ օրն անցավ առանց իրադարձությունների: Գրիֆուսը երեք անգամ ստուգեց խցերը: Սակայն ոչինչ չգտավ: Երբ Կոռնելիուսը լսում էր բանտապահի մոտեցող քայլերի ձայնը, իսկ Գրիֆուսն այն հույսով, որ բանտարկյալի գաղտնիքը կբացի, միշտ տարբեր ժամերի էր գալիս, երբ Կոռնելիուսը լսում էր իր բանտապահի ոտնաձայնը, նա կճուճը սկզբում դնում էր տանիքի քիվին, այնուհետև անմիջապես՝ իր պատուհանների տակ ցցված քարերին: Այդ նա անում էր իր հնարած մի սարքավորման միջոցով, որը նման էր ֆերմաներում պարկերով ցորենն իջեցնող ու բարձրացնող հարմարանքին: Ինչ վերաբերում է պարանին, որի օգնությամբ այդ սարքավորումը գործի էր դրվում, ապա մեր մեքենագործը խորամանկություն էր ունեցել դա թաքցնելու մամուռի մեջ, որով ծածկված էին աղյուսներն ու քարերը:

Գրիֆուսը ոչինչ չէր կասկածում:

Սակայն մի առաւելատ Կոռնելիուսը տարւած իր սոխուկի զննումով, որի ծիւն արդեն դուրս էր եկել, շսեց, թե ինչպես ծեր Գրիֆուսը վեր բարձրացաւ: Այդ օրը ուժեղ քամի էր և աշտարակում ամեն ինչ ճոճոռում էր: Հանկարծ դուռը բացվեց, և Կոռնելիուսը, որը կճուճը դրել էր ծնկներին, ջընցվեց անսպասելիութունից:

Գրիֆուսը բանտարկյալի ձեռքին տեսնելով անհայտ, հետեապես անթույլատրելի առարկա, ավելի արագ, քան բազին կարող էր նետվել իր զոհի վրա, նետվեց դեպի Կոռնելիուսը:

Պատահաբար, թե ճակատագրական ճարտկությամբ, որով հրեման շար ոգին օժտում է շարամիտ մարդկանց, նա իր հսկայական կոշտուկավոր ձեռքով ընկավ կճուճի ուղղակի մեջտեղը, սևահողի վրա, որտեղ թաղված էր թանկարժեք սոխուկը: Եվ ընկավ հենց այն ձեռքով, որը դաստակի մոտ ջարդված էր և որը վան Բեռլեն այնքան լավ բուժեց:

— Այս ի՞նչ է այստեղ, — դռաց նա, — վերջապես ձեզ բռնեցի՞:

Եվ նա իր ձեռքը մխրճեց հողի մեջ:

— Ես ոչինչ չունեմ, ոչինչ չունեմ, — ամբողջ մարմնով զողալով բացականչեց Կոռնելիուսը:

— Ա՛, բռնեցի ձեզ: Հողով կճուճ, այստեղ ինչ-որ հանցագործ գաղտնիք կա:

— Թանկագին Գրիֆուս... — աղաչում էր վան Բեռլեն, նման այն լորին, որի բույնը հնձվորը ձվերի հետ միասին, հնձել էր:

Սակայն Գրիֆուսն իր ճանկերի նման մատներով սկսեց հողը փորփրել:

— Գրիֆուս, Գրիֆուս, զգո՛ւյշ, — գունատվելով ասաց Կոռնելիուսը:

— Ի՞նչ կա, սատանա՛ն տանի, — փնթփնթում էր բանտապահը:

— Զգո՛ւյշ, ասում եմ, դուք նրան կսպանե՛ք:

Արագ շարժումով, հուսահատված, նա բանտապահի

ձեռքից խլեց կճուճը և, ինչպես մի թանկարժեք գանձ, ձեռքերով ծածկեց:

Համառ Գրիֆուսը համոզված, որ ինքը բաց է արել Օրանի արքայազնի դեմ ուղղված մի դավադրություն, իր փայտը բարձրացրեց՝ բանտարկյալին հարվածելու նպատակով: Սակայն տեսնելով, որ Կոռնելիուսը վճռել է ամեն զնով պահպանել իր ծաղկամանը, հասկացավ, որ բանտարկյալի համար այդ կճուճն ավելի թանկ արժե, քան գլուխը:

Եվ նա աշխատում էր բանտարկյալի ձեռքից խլել կրճուճը:

— Ա՛հ,— գոչեց նա,— նշանակում է դուք ապստամբում եք:

— Ձեռք մի՛ տվեք իմ կակաչին,— գոռում էր վան Բեռլեն:

— Այո՛, այո՛, կակա՛չ,— գոռում էր ծերուկը:— Մեզ ծանոթ են պարոնայք բանտարկյալների խորամանկությունները:

— Սակայն, ես երդվում եմ...

— Տվե՛ք,— կրկնում էր Գրիֆուսը՝ ոտքը խփելով գետնին:— Տվե՛ք, թե չէ կկանչեմ պահակներին:

— Կանչե՛ք ում ցանկանում եք, սակայն դուք այս խեղճ ծաղիկը ձեռք կբերեք իմ կյանքի հետ մեկտեղ:

Գրիֆուսը կատաղած նորից իր ձեռքը մխրճեց հողի մեջ և այս անգամ դուրս հանեց սոխուկը: Վան Բեռլեն երջանիկ էր, որ իրեն հաջողվեց փրկել կճուճը, սակայն նա չէր կասկածում, որ կճուճի պարունակությունն իր հակառակորդի ձեռքին է: Գրիֆուսն ամբողջ ուժով գետին խփեց փափկած սոխուկը, որը զարնվելով քարե սալահատակին՝ ճխլվեց և խառնվելով հողի հետ՝ ճզմվեց բանտապահի կոպիտ կոշիկների տակ:

Այդ ժամանակ միայն վան Բեռլեն տեսավ ոճրագործությունը, նկատեց սոխուկի թաց հետքերը, հասկացավ Գրիֆուսի վայրենի ուրախության պատճառը և հուսահատ մի ճիշարձակեց: Վան Բեռլեի ուղեղով կայծակի նման մի միտք անցավ. սպանել այդ հրեշավոր մարդուն: Արյունը խփեց նրա գլխին, աչքերի առաջ սևացավ և Կոռնելիուսը երկու ձեռքով

բարձրացրեց ծանր, աշտմ
արդեն անպետք հողում
լցված կճուճը: Մի վայր-
կյան, և կճուճը կիջեցներ
ծեր Գրիֆուսի ճաղատ
գլխին: Նրան կանգնեց-
րեց մի ճիշ, ճիշ, որի
մեջ միախառնված էին
արցունքներն ու սարսա-
փը: Այդ Ռոզան էր ճշում
վանդակապատ պատու-
հանի հետևից, գունատ,
դողդողացող ձեռքերը եր-
կինք տարածած Ռոզան:
Նա ուզում էր նետվել
հոր և իր բարեկամի
միջև:



Երբ Գրիֆուսը հաս-
կացավ, թե ինչպիսի
վտանգի էր ենթարկվել, նա սկսեց սարսափելի սպառնալիք-
ներ տեղալ:

— Օ՛հ, — նկատեց Կոռնելիուսը, — պետք է շատ ստոր
ու բուժ մարդ լինել, որպեսզի թշվառ բանտարկյալից խել
ներա միայ մխիթարությունը՝ կակաշի սոխուկը:

— Օ՛հ, այդ ինչպիսի հանցագործությունն կատարեցիք,
հայրի՛կ, — ասաց Ռոզան:

— Ա՛խ դու, շաղակրատ, — շուռ գալով դեպի աղջիկը,
գոռաց կատաղությունից փրփրած ծերուկը: — Քիթդ մի՛ խո-
թիր այնտեղ, որտեղ քո կարիքը չեն զգում և, որ կարևորն է,
կորի՛ր այստեղից, արա՛գ:

— Ստո՛ր, ստո՛ր, — հուսահատորեն կրկնում էր Կոռ-
նելիուսը:

— Վերջ ի վերջո, դա միայն մի կակաշ է, — ավելաց-
րեց Գրիֆուսը մի քիչ շփոթված: — Ես կարող եմ ձեզ, որ-
քան ցանկանաք, կակաշներ տալ, տանիքում ես մի երեք
հարյուր հատ ունեմ:

— Գրողի ծոցը ձեր կակաշները,— գոռաց Կոռնելիուսը:— Դուք իրար արժեք: Եթե ես հարյուր միլիարդ ունենայի, այդ բոլորը կտայի այն մեկի համար, որը ճգմեցիր:

— Ահա՛,— հաղթանակած ասաց Գրիֆուսը:— Ահա՛, տեսնո՞ւմ եք, ձեզ համար կարևորը բոլորովին էլ կակաշ չէ: Ահա՛, տեսնո՞ւմ եք, որ այն փոքրիկ բանը միայն տեսքով էր կակաշ. իրականում իր մեջ թաքցնում էր ինչ-որ սատանայական մի բան, զուցի ինչ-որ միջոց, որով դուք պետք է գրագրության մեջ մտնեիք նորին մեծության թշնամիների հետ, այն մարդու թշնամիների, որը ձեզ կյանք պարգևեց: Ես ճիշտ էի ասում, որ իզուր ձեր գլուխը չկտրեցին:

— Հայրի՛կ, հայրի՛կ,— բացականչեց Ռոզան:

— Դե ի՞նչ, ավելի լավ,— կրկնում էր Գրիֆուսը՝ ավելի ու ավելի գրգռվելով,— ես դա ոչնչացրի, ես դա ոչնչացրի: Եվ այդ կիրկնվի ամեն անգամ, եթե նորից ձեռնարկեք այդ գործը: Այո՛, այո՛, ձեզ նախազգուշացնում եմ, հենց որ նորից ձեռնարկեք այդ գործը: Այո՛, այո՛, ես ձեզ, սիրելի բարեկամս, զգուշացրի, որ կաշխատեմ, որքան կարելի է ձեր կյանքն անտանելի դարձնել:

— Անիծվե՛ս դու, անիծվե՛ս,— քրթմնջում էր բոլորովին հուսահատված Կոռնելիուսը և դողացող մատներով շոշափում էր սոխուկի մնացորդները, որն այնքան ուրախության թյունների ու հույսերի աղբյուր էր:

— Մենք վաղը մյուսը կտնկենք, պարոն Կոռնելիուս,— շշուկով ասաց Ռոզան, որին հասկանալի էր ծաղկագործի անմխիթար վիշտը:

Եվ նրա քնքուշ խոսքերը բալզամի կաթիլների նման ընկան Կոռնելիուսի արյունակալած վերքին:

Ռոզայի երկրպագուն

Ռոզան դեռ չէր վերջացրել այս խոսքերը, երբ սանդուղքներից մի ձայն լսվեց: Ինչ-որ մեկը հարցնում էր Գրիֆուսին, թե ի՞նչ է պատահել:

— Գուք լսո՞ւմ եք, հայրիկ,— ասաց Ռոզան:

— Ի՞նչը:

— Պարոն Յակոբը ձե՛զ է կանչում: Նա անհանգստանում է:

— Ահա թե ինչպիսի աղմուկ բարձրացրիք,— նկատեց Գրիֆուսը:— Կարելի էր կարծել, որ այս գիտնականն սպանում է ինձ: Օ՛, այս գիտնականները միշտ մարդկանց մեծ նեղություններ են պատճառում:

Այնուհետև Ռոզային մատնացույց անելով սանդուղքները, ասաց.

— Հապա, առաջ անցիր, տիրուհիս:— Եվ կողպելով դուռը, նա գոչեց.— Յակո՛բ, բարեկամս, զալիս եմ:

Գրիֆուսը հեռացավ՝ տանելով իր հետ Ռոզային, և թըշվառ Կոռնելիուսին թողնելով խոր վշտի ու մենակության մեջ:

— Օ՛, դու ինձ սպանեցիր, ծեր դահիճ: Ես այս վիշտը տանել չե՛մ կարող:

Եվ ճիշտ որ, խեղճ գիտնականը կհիվանդանար, եթե նախախնամությունն ուղարկած չլիներ այն մեկին, որը իմաստավորում էր նրա կյանքը և որի անունը Ռոզա էր:

Նույն երեկոյան աղջիկը եկավ:

Առաջին բանը, որ նա հայտնեց, այն էր, թե իր հայրն այլևս Կոռնելիուսին չի խանգարելու ծաղիկներ ցանել:

— Այդ որտեղի՞ց է ձեզ հայտնի,— խղճալի ձայնով հարցրեց բանտարկյալը:

— Ես այդ գիտեմ, քանի որ այդ մասին ինքն ասաց:

— Գուցե նրա համար, որ ինձ խաբի՞:

— Ոչ, նա զղջում է:

— Օ՛, այո՛, այո՛, սակայն չափազանց ուշ է:

— Նա զղջաց ոչ իր կամքով:

— Իսկ ինչպե՞ս պատահեց:

— Եթե իմանաք, թե նրա բարեկամը դրա համար ինչպե՞ս նրան պախարակեց:

— Ա՛, պարոն Յակոբը: Ինչպես երևում է, այդ պարոն Յակոբը ձեզանից բոլորովին չի հեռանում:



— Համենայն դեպս, նա մեզ շատ սակավ է մենակ թողնում:

Եվ աղջիկը ժպտաց այնպիսի ժպիտով, որը իսկույն ևեթ մի պահ ցրեց Կոռնելիուսի դեմքը ծածկող խանդի ստվերը:

— Այդ ինչպե՞ս պատահեց, — հարցրեց բանտարկյալը:

— Ահա թե ինչպես: Ընթրիքի ժամանակ հայրս իր բարեկամի խնդրանքով պատմեց կակաշի, ավելի ճիշտ՝ սոխուկների հետ կապված պատմությունը, և պարծեցավ իր հերոսություններ, որ ճզմել, ոչնչացրել է սոխուկը:

Կոռնելիուսը մի հառաչ արձակեց, որ նման էր տնքոցի:

— Եթե դուք այդ վայրկյանին տեսնեի՞ք մեր Յակոբին, — շարունակեց Ռոզան: — Ծղմարիտ, ինձ թվաց, թե նա բերդը կրակի կտա. նրա աչքերն այրվում էին, ինչպես երկու ճրագներ, նրա մազերը բիզ-բիզ կանգնեցին. նա ջղաձգորեն սեղմում էր բռունցքները. եղավ մի պահ, երբ ինձ թվաց, թե նա կխեղդի հորս: «Դո՛ւք այդ արեցիք, — գոռաց նա, — դուք ճզմեցիք սոխու՛կը»: — «Իհարկե», — պատասխանեց հայրս: «Դա անազնի՛վ բան է, — շարունակում էր գոռալ Յակոբը: — Դա ստորություն է: Դուք հանցագործ եք»: «Ի՞նչ է, դուք էլ խելքներդ թոցրել եք», — հարցրեց հայրս իր բարեկամին:

— Օ՛, ինչ ազնիվ մարդ է այդ Յակոբը, — շնչաց Կոռնելիուսը: — Նա մեծ սիրտ ունի և աղնիվ հոգի:

— Համենայն դեպս, նախատել մեկին այնքան, որքան նա՝ նախատեց իմ հորը, ավելին հնարավոր չէ,— ավելացրեց Ռոպան:

— Նա բառացիորեն կաշվից դուրս էր եկել: Շարունակ կրկնում էր. «Ոչնչացնել սոխո՞ւկը, ոչնչացնե՞լ: Օ՛, աստված իմ, աստված իմ, ոչնչացնե՞լ»:

Այնուհետև դառնալով ինձ, նա հարցրեց. «Բայց չէ՞ որ նա մեկ սոխուկ չուներ»:

— Նա այդպես հարցրե՞ց,— անհանգստանալով հարցրեց Կոռնելիուսը:

«Դուք կարծում եք, որ նա էլի՞ ունի,— հարցրեց հայրս:— Շատ լավ, կփնտրենք նաև մնացածները»:

«Դուք մտադիր եք մնացածներն էլ փնտրել»,— բացականչեց Յակոբը՝ բռնելով հորս օձիքից, սակայն իսկույն ևեթ բաց թողեց:

Այնուհետև նա դարձավ ինձ.

«Իսկ ի՞նչ պատասխանեց դրան թշվառ երիտասարդը»:

Ես չգիտեի ինչ պատասխանել: Դուք ինձ խնդրել էիք ոչ ոքի չասել, թե որքա՞ն մեծ նշանակություն եք տալիս այդ սոխուկներին: Բարեբախտաբար, հայրս հանեց ինձ այդ դժվար կացությունից:

«Ինչ ասա՞ց: Դե, կատաղությունից փրփրել էր»:

Ես ընդհատեցի հորս. «Իհա՛րկե, նա սկսեք է կատաղեր: Զէ՛ որ նրա հետ վարվեցին այդքան դաժան ու կոպիտ»:

«Ահա՛ թե ի՞նչ, դու գժվե՞լ ես, ի՞նչ է,— գոռաց իր հերթին հայրս:— Ասացեք խնդրեմ, ինչպիսի՞ դժբախտություն, ճղմե՛լ կակաչի մի սոխուկ: Մի ֆլուրինով Հորհումի շուկայում կարելի է հարյուր հատ գնել»:

«Սակայն, գուցե ավելի քիչ արժեքավորները, քան այդ սոխուկն էր»,— ի դժբախտություն ինձ, ավելացրի ես:

— Ի՞նչ տպավորություն թողեցին այդ խոսքերը Յակոբի վրա,— հարցրեց Կոռնելիուսը:

— Պետք է ասեմ, որ այս խոսքերը լսելիս Յակոբի աչքերը կայծակներ արձակեցին:

— Այո, սակայն դա բոլորը չէր,— նկատեց Կոռնելիուսը,— նա երևի էլի ինչ-որ բան ասաց:

— «Նշանակում է, գեղեցկուհի Ռոզա,— ասաց նա դանդաղ,— դուք կարծում եք, որ դա շատ արժեքավոր սոխուկ էր»:

Ես զգացի, որ սխալ եմ թույլ տվել:

«Որտեղի՞ց իմանամ,— անփույթ պատասխանեցի ես,— մի՞թե կակաշներից բան եմ հասկանում: Ես գիտեմ միայն, քանի որ մենք ստիպված ենք մեր ամբողջ կյանքի ընթացքում, ավա՛ղ, ապրել բանտարկյալների հետ, ապա գիտենք, որ նրանց համար ամեն մի վբառեցնող բան մեծ արժեք է ներկայացնում: Այդ վան Բեուլեն զվարճանում էր թշվառ սոխուկներով: Եվ ահա, ես ասում եմ, որ դաժանություն էր նրան այդ վբառումներից զրկելը»:

«Սակայն ամենից առաջ անդրադառնանք նրան,— նկատեց հայրս,— թե ինչպե՞ս էր նա ձեռք բերել այդ սոխուկը: Ինձ թվում է, որ վատ չէր լինի իմանալ»:

Ես աչքերս հեռացրի, որ շհանդիպեմ հորս հայացքին, սակայն իմ աչքերը հանդիպեցին Յակոբի աչքերին: Թվում էր, թե նա ջանում է թափանցել իմ մտքերի ամենախորքը:

Հաճախ գրգռված վիճակը ազատում է մեզ ուղղակի պատասխանից: Ես թափ տվի ուսերս, շուռ եկա և ուղղվեցի դեպի դուռը:

Սակայն ինձ կանգնեցրեց մի խոսք, որը, չնայած շատ ցածր ասվեց, բայց ես լսեցի:

Յակոբն ասաց հորս. «Դա այնքան էլ դժվար չէ, սատանա՛ն տանի»: «Այո՛, խուզարկել նրան, և, եթե էլի սոխուկներ կան, ապա մենք դրանք կգտնենք»,— պատասխանեց հայրս:

«Այո, սովորաբար սոխուկները երեքն են լինում»:

— Երե՛քն են լինում,— բացականչեց Կոռնելիուսը:— Նա ասաց, որ ինձ մոտ երե՛ք սոխուկներ կան:

— Դուք պատկերացնո՞ւմ եք, որ այդ խոսքերը ինձ էլ ապշեցրին այնքան, որքան ձեզ: Ես շուռ եկա: Նրանք երկուսն էլ այնպես կլանված էին, որ չնկատեցին իմ շարժումը: «Սակայն, կարող է պատահել, որ նա այդ սոխուկներն իր մոտ չի պահում»,— նկատեց հայրս: «Այդ դեպքում ինչ-որ պատրվակով դուրս բերեք նրան խցից, իսկ ես այդ ժամանակ կխուզարկեմ»:

— Օ՛հ,— ասաց Կոռնելիուսը,— ձեր այդ Յակոբը ստորի մեկն է:

— Այո, ես էլ դրանից եմ վախենում:

— Ասացեք ինձ, Ռոզա... — մտախոհ շարունակեց Կոռնելիուսը:

— Ի՞նչ:

— Դուք ասացիք չէ՞, այն օրը, երբ թումբ էիք պատրաստում, այդ մարդը հետևում էր ձեզ:

— Այո՛:

— Որ նա ստվերի նման թաքնվեց թանթրվենու հետևում:

— Ճիշտ է:

— Որ նա ձեր բահի ամեն մի շարժումին հետևում էր:

— Ամեն մի:

— Ռոզա,— գունատվելով ասաց Կոռնելիուսը:

— Դե, ի՞նչ:

— Նա ձե՛զ չի հետևում:

— Իսկ ո՞ւմ է հետևում:

— Նա ձե՛զ չի սիրահարված:

— Իսկ այդ դեպքում ո՞ւմ է սիրահարված:

— Նա հետևում է իմ սոխուկին: Նա սիրահարված է իմ կակաչին:

— Ա՛հ, դա շատ հնարավոր է,— համաձայնեց Ռոզան:

— Ուզո՞ւմ եք դրանում համոզվել:

— Իսկ ինչպե՞ս:

— Դա շատ հեշտ է:

— Ինչպե՞ս:

— Վաղը գնացեք այգի, աշխատեք այնպես անել, որ Յակոբն այդ մասին, ինչպես նախորդ անգամ, իմանա և հետևի: Ձևացրեք, որ դուք սոխուկ եք տնկում, հետո այգուց դուրս եկեք և դռնակից նայեք. դուք կտեսնեք, թե այդ մարդն ի՞նչ կանի:

— Լավ, իսկ հետո՞:

— Դե, հետո մենք, համաձայն նրա վարմունքի, կորոշենք մեր անելիքը:

— Ա՛խ,— հառաչեց Ռոզան,— դուք, պարոն Կոռնելիուս, շատ եք սիրում ձեր կակաչները:

— Այո՛, — պատասխանեց բանտարկյալը, — այն պահից, երբ ձեր հայրը տրորեց այդ դժբախտ սոխուկը, ինձ թվում է, թե իմ կյանքի մի մասը խլեցին:

— Լսեցեք, ցանկանո՞ւմ եք փորձել մեկ միջոց ևս:

— Ի՞նչ միջոց:

— Ցանկանո՞ւմ եք ընդունել իմ հոր առաջարկը:

— Ի՞նչ առաջարկ:

— Ձե՛ն որ նա ձեզ առաջարկեց կակաշների հարյուրից ավելի սոխուկներ:

— Այո, դա ճշմարիտ է:

— Վերցրեք երկուսը կամ երեքը և այդ երկու-երեքի միջև կարող եք աճեցնել նաև ձեր սոխուկը:

— Այո, դա վատ չէր լինի, — հոնքերը հավաքելով ասաց Կոռնելիուսը, — եթե միայն ձեր հայրը մենակ լիներ, սակայն այն մյուսը... այդ Յակոբը, որը ձեզ հետապնդում է...

— Ա՛խ, այո՛, ճիշտ որ: Համենայն դեպս, մտածեք: Ինչպես տեսնում եմ, դրանով ձեզ մեծ հաճույքից եք զրկում:

Այդ խոսքերը նա ասաց ժպիտով, որը զուրկ չէր ծաղրից:

Կոռնելիուսը մի պահ մտասուզվեց: Երևում էր, որ նա պայքարում է մի մեծ ցանկության դեմ:

— Համենայն դեպս, ո՛չ, — բացականչեց նա իմաստուն ստոիկի նման: — Ո՛չ: Դա կլինեն թուլություն, դա կլինեն անմտություն: Ստորություն կլինեն զայրույթի, նախանձի ու քմահաճույքի բախտին հանձնել մեր վերջին հույսը: Ո՛չ, Ռոզա, ո՛չ: Վաղը մենք որոշում կընդունենք ձեր սոխուկի վերաբերյալ: Հետևելով իմ ցուցումներին՝ դուք կաճեցնեք այն: Իսկ ինչ վերաբերում է երրորդին, պահեք ձեր պահարանում, ինչպես ժլատն է պահում իր առաջին կամ վերջին ոսկյա դրամը, ինչպես մայրը պահում է իր որդուն, ինչպես վիրավորը պահում է իր երակներում հոսող արյան վերջին կաթիլը: Պահե՛ք այն, Ռոզա: Ես նախազգում եմ, որ դա է մեր փրկությունը, մեր հարստությունը: Պահպանեք, իսկ եթե երկնային կրակը թափվի Լեռնտեյնի վրա, երգվե՛ք ինձ, Ռոզա, որ ձեր մատանիների, ձեր թանկարժեք զարդերի,

ձեր հրաշալի ոսկյա գլխանոցի, որն այդպես զարդարում է ձեր դեմքը, երգվե՛ք, Ռոզա, որ այդ բոլորի փոխարեն դուք կփրկեք այդ վերջին սոխուկը, որն իր մեջ կրում է իմ սև կակաշը:

— Հանգիստ եղեք, պարոն Կոռնելիուս, — մեղմ ձայնով ու հանդիսավոր տխրությամբ ասաց Ռոզան: — Հանգիստ եղեք, ձեր ցանկություններն ինձ համար սրբություն են:

— Եվ նույնիսկ, — շարունակեց երիտասարդը ավելի ու ավելի ոգեշնչվելով, — եթե դուք նկատեք, որ ձեզ հետևում են, որ ձեր ամեն մի քայլը հետապնդվում է, որ ձեր խոսակցությունները ձեր հոր կամ այդ սարսափելի Յակոբի մոտ, որին ես ատում եմ, կասակածներ են հարուցում, այն ժամանակ, Ռոզա, առանց վարանելու զոհեք ի՛նձ, յո՛ւնձ, որ միայն ձեզանով է ապրում, որը բացի ձեզանից երկրի երեսին ուրիշ ո՛չ մի մարդ չունի. զոհեք ինձ, և այլևս մի՛ այցեւեք:

Ռոզան զգաց, թե ինչպես նրա սիրտը կրծքի տակ կուչ է գալիս. աչքերը լցվեցին արցունքներով:

— Այլա՞ղ, — ասաց նա:

— Ի՞նչ, — հարցրեց Կոռնելիուսը:

— Ես տեսնում եմ...

— Դուք ի՞նչ եք տեսնում:

— Ես տեսնում եմ, — հեկեկալով ասաց աղջիկը, — որ դուք կակաշներն այնքան ուժեղ եք սիրում, որ ուրիշ զգացմունքի համար ձեր սրտում այլևս տեղ չկա:

Եվ նա փախավ:

Աղջկա գնալուց հետո Կոռնելիուսն անցկացրեց իր կյանքի ամենածանր գիշերներից մեկը:

Ռոզան նրա վրա բարկացավ և իրավացի էր: Գուցե նա այլևս չգա բանտարկյալի մոտ և ճիշտ կանի. ինքն այլևս ոչինչ չի իմանա ո՛չ Ռոզայի, ո՛չ էլ իր կակաշների մասին:

Սակայն մենք պետք է խոստովանենք, որ համոթ մեր հերոսի և այգեգործի, Կոռնելիուսի երկու հրապուրանքներից ավելի ուժեղ էր Ռոզայի հրապուրը: Եվ երբ գիշերվա

ժամը երեքին մոտ տանջված ու խղճի խայթի երկյուղից հետապնդվող Կոռնելիուսը վերջապես քնեց, նրա երազներում սև կակաչը իր տեղը զիջեց շիկահեր ֆրիսլանդուհու սքանչելի կապույտ աչքերին:

19

Կինը և ծաղիկը

Սակայն խեղճ Ռոզան, իր սենյակում փակված, չէր կարող իմանալ, թե Կոռնելիուսը ինչի՞ և ո՞ւմ մասին էր երազում: Նրա խոսքերը հիշելիս Ռոզան հակված էր մտածելու, որ վան Բեռլեն ավելի շատ երազում է կակաչի, քան իր մասին: Սակայն նա սխալվում էր:

Բայց չկար մեկը, որ ասեր, թե սխալվում է, այդ պատճառով էլ Կոռնելիուսի անզգույշ խոսքերը թույնի կաթիլների նման թունավորել էին աղքատ հոգին և նա այժմ ոչ թե երազում, այլ լաց էր լինում:

Լինելով խելոք և բավական զգայուն աղջիկ, Ռոզան իրեն գնահատում էր ըստ արժանվույն. նա նկատի ուներ ոչ թե իր բարոյական ու ֆիզիկական հատկանիշները, այլ սոցիալական դրությունը:

Կոռնելիուսը գիտնական է, Կոռնելիուսը հարուստ է կամ, համենայն դեպս, մինչև գույքի բռնագրավումը եղել է հարուստ: Կոռնելիուսը առևտրական բուրժուազիայից էր սերում, որն իր ցուցափեղկերը դիրքի նման նկարագարդելով՝ ավելի էր հպարտանում, քան կարող էր հպարտանալ տոհմիկ ազնվականությունն իր իսկական գերբով: Այդ պատճառով Կոռնելիուսը Ռոզային չէր կարող նայել որպես սոսկ զվարճալիքի, բայց եթե հարկ լիներ նվիրելու իր սիրտը, նա, իհարկե, ավելի շուտ կնվիրեր կակաչին՝ ծաղիկներից ազնվագույնին ու ամենանվիրականին, քան Ռոզային, բանտապահի համեստ աղջկան:

Ռոզան հասկանում էր, թե ինչու Կոռնելիուսը նախընտ-

թությունը տալիս է սև կակաչին. հենց դրանից էլ նրա հուսահատությունն ավելի էր խորանում:

Եվ ահա, անքուն գիշեր անցկացնելուց հետո, Ռոզան որոշում ընդունեց՝ այլևս չմոտենալ փոքրիկ պատուհանին:

Սակայն մի կողմից նրան հայտնի էր, թե Կոռնելիուսն ինչպիսիք բուն անձկությամբ է սպասում սև կակաչի

մասին տեղեկություններ ստանալուն. մյուս կողմից նա չէր ցանկանում իրեն վտանգի ենթարկել և գնալ մի մարդու մոտ, որի նկատմամբ եղած խղճահարության զգացմունքը հաղթահարելով համակրանքին, շատ արագ քայլերով փոխվում էր սիրո. և քանի որ չէր ցանկանում վշտացնել այդ մարդուն, Ռոզան որոշեց իր դասերը շարունակել մենակ:

Բարեբախտաբար, նա իր ուսման մեջ այնքան առաջ էր գնացել, որ այլևս ուսուցչի կարիք չուներ, մանավանդ որ այդ ուսուցիչը Կոռնելիուսն էր:

Ռոզան սկսեց մեծ խանդավառությամբ կարդալ Կոռնել գե Վիտի ավետարանը, որի երկրորդ էջում (այն ժամանակից ի վեր, երբ առաջինը պոկել էին, դա դարձել էր առաջին) գրված էր Կոռնելիուս վա՛ն. Բեռլեի կտակը:

— Ա՛խ,— շնչում էր աղջիկը թերթելով կտակը, որի ընթերցումը միշտ վերջացնում էր նրանով, որ նրա հստակ աչքերից արցունքները գունատ այտերով վայր էին գլորվում,— ա՛խ, այն ժամանակ, սակայն, եղավ մի պահ, երբ ինձ թվաց, որ նա սիրո՞ւմ է ինձ:

Խեղճ Ռոզա, նա սխալվում էր: Երբեք բանտարկյալի սերը չէր զգացվել այդպիսի ուժով, որքան այն ժամանակ, որի մասին մենք խոսում էինք և որի մասին մենք որոշ վար-



մանքով պատմեցինք, թե ինչպես սև կակաչի ու Ռոզայի պայքարից հաղթված դուրս եկավ սև կակաչը:

Սակայն, կրկնում ենք, որ Ռոզային սև կակաչի պարտութունը հայտնի չէր:

Վերջացնելով ընթերցումը, որի մեջ Ռոզան հասել էր մեծ հաջողությունների, նա վերցրեց գրիչը և նույնպիսի գովելի բարեխղճությամբ ձեռնարկեց մի ավելի դժվար գործի՝ գրելուն:

Ռոզայի ձեռագիրը արդեն համարյա ընթեռնելի էր դարձել, երբ այդ ժամանակ Կոռնելիուսն անզգուշություն ունեցավ ցույց տալու իր զգացմունքը: Աղջիկն արդեն հույս ուներ, որ ինքն ավելի շատ հաջողություններ կունենա գրելու գործում և ոչ ուշ, քան մեկ շաբաթ հետո կկարողանա կակաչի վիճակի վերաբերյալ գրավոր հաշվետվություն ներկայացնել:

Նա Կոռնելիուսի տված ցուցումներն ամենայն մանրամասնությամբ հիշում էր: Ըստ էության Ռոզան նրա ասած ոչ մի խոսքը չէր մոռանում, եթե նույնիսկ դրանք ցուցմունքի բնույթ էլ չէին կրում:

Կոռնելիուսն էլ իր հերթին առավոտյան արթնացավ՝ սիրահարված մինչև ականջների ծայրը: Ճիշտ է, նրա երևակայության մեջ կակաչը դեռևս շատ վառ էր ու կենդանի, սակայն դա արդեն չէր դիտվում որպես մի բան, որին պետք է զոհաբերել ամեն ինչ, նույնիսկ Ռոզային: Կակաչը վառ Բեռլիի կողմից դիտվում էր արդեն որպես թանկարժեք մի ծաղիկ, բնության և արվեստի մի հրաշալի զուգակցում, մի բան, որին աստված ստեղծել է զարդարելու համար իր սիսեցյալի կրծկալը:

Ամբողջ օրը Կոռնելիուսին հետապնդում էր մի գաղտնի անհանգստություն: Նա այն մարդկանցից էր, որոնք օժտված են բավականաչափ մեծ կամքի ուժով և ի վիճակի են մի որոշ ժամանակ մոռանալ նախորդ երեկոյան կամ այդ օրը իրենց սպառնացող վտանգը: Հաղթահարելով այդ անհանգըստությունը, նրանք շարունակում են ապրել իրենց սովորական կյանքով: Միայն ժամանակ առ ժամանակ նրանց սիրտը ճմլվում է այդ մոռացած վախից: Նրանք ցնցվում են,

իրենք իրենց հարցնում են պատճառների մասին և այնուհետև հիշում են այն, ինչ մոռացել էին: «Օ՛, այո,— ասում են նրանք իրենք իրենց,— սա այն է»:

Կոռնելիուսի համար այդ «այն»-ը վախ էր, որ Ռոզան սովորականի նման երեկոյան տեսակցության չի գա:

Երեկոն մոտենալու հետ մեկտեղ այդ վախը համառորեն ուժեղանում էր, մինչև որ ամբողջովին համակեց Կոռնելիուսին և դարձավ նրան զբաղեցնող միակ միտքը: Սրտի բաբախյունով նա դիմավորեց մոտեցող մթնշաղը: Եվ որքան խավարը թանձրանում էր, այնքան նրա մոտ իրենց ամբողջ հասակովյամբ հնչում էին նախորդ օրն ասած խոսքերը և նա իրեն հարց էր տալիս, թե ինչպես կաքող էր իր միակ ապավենին առաջարկել զոհելու ամեն ինչ՝ ի սեր կակաչի, այսինքն՝ անհրաժեշտության դեպքում հրաժարվել իր հետ տեսակցելուց, այն դեպքում, երբ Կոռնելիուսի համար Ռոզային տեսնելը դարձել էր կենսական պահանջ:

Կոռնելիուսի խցից լսվում էին ամբողջի ժամացույցի զարկերը: Խփեց ժամը յոթը, ութը, այնուհետև՝ ինը: Դեռ երբեք ժամացույցի մետաղյա ղողանջն այդքան խոր չէր թափանցել որևէ մեկի սիրտը, ինչպիսի խորությամբ որ մուրձի այդ իններորդ զարկը թափանցեց Կոռնելիուսի սիրտը:

Ամեն ինչ լուռ էր: Կոռնելիուսը ձեռքը դրեց կրծքին՝ խլացնելու համար սրտի բաբախյունը և սկսեց ականջ դնել: Ռոզայի քայլերի աղմուկը, սանդուղքների աստիճանների քսվող նրա հագուստի շրշյունը այնքան, ծանոթ էին Կոռնելիուսին, որ հենց աղջիկը ոտքը դնում էր առաջին աստիճանին, նա ասում էր.

— Ահա՛, գալիս է Ռոզան:

Այդ երեկո ոչ մի ձայն չէր խանգարում միջանցքի լուսթյունը. խփեց ժամը ինն անց քառորդ րոպե, այնուհետև՝ ինը անց քառասունհինգ րոպե. հետո ժամացույցը ոչ միայն ամբողջի հյուրերին, այլև ամբողջ Լեհշտեյնին հայտնեց, որ ժամը արդեն տառն է:

Դա այն ժամն էր, երբ Ռոզան սովորաբար արդեն հեռանում էր Կոռնելիուսի մոտից: Ժամն անցավ, իսկ Ռոզան չկար:

Նշանակում է, ուրեմն, որ Կոռնելիուսի նախազգացումը նրան չէր խաբում: Ռոզան զայրացել էր, մնացել էր իր սենյակում և նրան թողել էր մենակ:

— Օ՛, ես, անկասկած, արժանի եմ այս պատժին: Նա չի գա, և լա՛վ կանի, որ չգա: Նրա փոխարեն, ես էլ, իհարկե, այդպես կվարվեի:

Համենայն դեպս, Կոռնելիուսն ականջ էր դնում, սպասում էր և հուշար չէր կորցնում:

Այդպես նա մինչև կեսգիշեր ականջ դրեց, սակայն կեսգիշերին արդեն հուշար կորցրեց և առանց հանվելու ընկավ անկողնու վրա:

Գիշերը երկար էր, տխուր: Լուսացավ, սակայն առավոտը նույնպես ոչ մի հուշար չէր ներշնչում:

Ժամը ութին խցի դռները բացվեցին, սակայն Կոռնելիուսը նույնիսկ գլուխը չբարձրացրեց, նա լսեց միջանցքում Գրիֆուսի ծանր քայլերի ձայնը և շատ լավ գիտեր, որ դրանք միայն մեկ մարդու քայլեր են:

Նա նույնիսկ չնայեց բանտապահի կողմը: Բայց և այնպես Կոռնելիուսը ցանկություն ուներ խոսելու նրա հետ, որպեսզի իմանա Ռոզայի որպիսությունը: Եվ, որքան էլ այդ հարցը աղքատ հորը տարօրինակ թվար, նա պատրաստվել էր արդեն տալու: Իր հասարկությունից դրդված՝ Կոռնելիուսը հուշար ուներ հորից լսել, որ աղջիկը հիվանդ է:

Ռոզան, չհաշված խիստ եղակի բացառությունները, ցերեկները երբեք չէր գալիս: Եվ քանի դեռ ցերեկ էր, Կոռնելիուսը նրան չէր սպասում: Սակայն այն բանից, թե ինչպես նա ունկնդրում էր դռնից եկող ամեն մի ձայնի, թե ինչպիսի արագ հայացքներ էր գցում պատուհանին, այդ ամենից երևում էր, որ բանտարկյալը մի ազոտ հուշար էր տաժում. արդյոք Ռոզան չի՞ խախտի իր սովորությունը:

Գրիֆուսի երկրորդ այցելության ժամանակ Կոռնելիուսը սովորականին հակառակ, ամենաքնքուշ ձայնով բանտապահին հարցրեց նրա առողջության մասին: Սակայն Գրիֆուսը սպարտացու նման լակոնիկ պատասխանեց.

— Գերազանց:

Երրորդ այցելության ժամանակ Կոռնելիուսը փոխեց հարցի ձևը:

— Լեւշտեյնում ոչ ոք հիվանդ չէ՞, — հարցրեց նա:

— Ո՛չ ոք, — առաջվանից ավելի լակոնիկ պատասխանեց Գրիֆուսը և բանտարկյալի հենց բթի առաջ դուռը փակեց:

Գրիֆուսը, որը սովոր չէր Կոռնելիուսի կողմից նման սիրալիրությունների, դրանց մեջ տեսնում էր իրեն կաշառելու փորձեր:

Կոռնելիուսը մենակ մնաց: Երեկոյան ժամը յոթն էր, և բանտարկյալի համար սկսվեցին նախորդ օրվանից, որ մենք փորձեցինք նկարագրել, ավելի ծանր, տանջալից պահեր: Սակայն, ինչպես նախորդ օրը, ժամերը հոսում էին, իսկ սիրելի տեսիլքը, որը լուսավորում էր Կոռնելիուսի փոքրիկ պատուհանը և հեռանալուց հետո էլ այնտեղ էր թողնում իր լույսը, այդ սիրելի տեսիլքը չկար ու չկար:

Վան Բեռլեն գիշերն անցկացրեց բոլորովին հուսալքված վիճակում: Առավոտյան Գրիֆուսը նրան թվում էր սովորականից ավելի այլանդակ, ավելի կոպիտ, ավելի անհույս: Կոռնելիուսի մտքում կամ ավելի շուտ՝ սրտում ծագեց մի հեռավոր կասկած, որ հենց այդ մարդն էլ Ռոզային արգելել է իր մոտ գալ:

Նրան համակեց մի կատաղի ցանկություն. խեղդե՛լ Գրիֆուսին: Սակայն, եթե Կոռնելիուսը Գրիֆուսին խեղդեր, ապա աստվածային և մարդկային բոլոր օրենքներով Ռոզան ալլևա երբեք չէր գա նրա մոտ: Այսպիսով, բանտապահը չէր էլ կարող կասկածել, որ իր կյանքին շատ մեծ վտանգ էր սպառնում և որից ինքը փրկվեց:

Գիշերը իջավ, և հուսահատությունը փոխվեց մեղամաղձո՞ւթյան: Այդ զգացումն ավելի խորացավ, երբ բոլոր տանջանքների հետ մեկտեղ, վան Բեռլեի կամքից անկախ, նրան սկսեց տանջել խեղճ կակաչի մասին եղած միտքը: Վրա էին հասել հենց այն ապրիլյան օրերը, որոնք շատ փորձված այգեգործների կողմից մատնանշվում էին որպես կակաչների տնկման համար ամենից հարմար ժամանակ: Նա Ռոզային ասաց. «Ես կասեմ ձեզ այն օրը, երբ դուք ձեր սոխուկը

պետք է տնկեր հողի մեջ»։ Մյուս օրն էլ նա մտադիր էր նշանակել սոխուկի տնկման ժամանակը։ Եղանակը հիանալի էր, օդը, չնայած թեթևակի խոնավության, արդեն ջերմանում էր ապրիլյան արևի ճառագայթներով, որոնք, չնայած իրենց դուռնատուփյանը, միշտ էլ հաճելի են։ Իսկ եթե հանկարծ Ռոզան բաց թողնի տնկելու ժամանակը, եթե իր բոլոր վշտերին, որոնք առաջացել են աղքատ հետ ունեցած անջատումից, ավելանա նաև սոխուկի անհաջող տնկելը, եթե շափազանց ուշ տնկվի կամ բոլորովին չտնկվի։

Այո՛, այդպիսի երկու դժբախտությունների միահյուսվելը հեշտությամբ կարող էին նրան ախորժակից զրկել, որը և պատահեց նրա հետ շորորող օրը։ Կոռնելիուսը խղճալի տեսք ուներ, երբ վշտից ընկձված ու գունատ, վտանգելով իր գլուխը, որը կարող էր պատուհանի վանդակների արանքից ետ չբաշվել, պատուհանից դուրս էր կախվում՝ ձգտելով տեսնել այն փոքրիկ այգին, որի մասին Ռոզան պատմում էր և, որի պարիսպը, ինչպես աղջիկն էր ասում, անցնում էր գետի ափով։ Նա դուրս էր նայում՝ հուսալով այգում տեսնել ապրիլյան արևի ճառագայթների տակ երիտասարդ աղջկան կամ կակաշը, իր երկու խորտակված երազանքները։

Երեկոյան Գրիֆուսը ետ տարավ Կոռնելիուսի և՛ նախաճաշը, և՛ ճաշը։ Նա դրանք հազիվ էր դիպել։ Հաջորդ օրը նա ուտելիքին բոլորովին մոտ չեկավ, և Գրիֆուսը դրանք ետ տարավ՝ ձեռք չդիպցրած։

Կոռնելիուսն ամբողջ օրվա ընթացքում անկողնից վեր չեկավ։

— Հրաշալի՛ է,— ասաց Գրիֆուսը, վերջին անգամ վերադառնալով Կոռնելիուսի մոտից,— հրաշալի է՛, ինձ թվում է, որ մենք շուտով կազատվենք այդ զխտնականից։

Ռոզան ցնցվեց։

— Դե՛,— նկատեց Յակոբը,— իսկ ի՞նչ ձևով։

— Նա այլևս ոչինչ չի՛ ուտում, չի՛ խմում և անկողնից վեր չի կենում։ Նա մեզնից կհեռանա Հրոցիոսի նման՝ արկղի մեջ, սակայն դա կլինի ոչ թե գրքերի արկղ, այլ դա՛գաղ։

Ռոզան մեռելի նման գունատվեց։

— Օ՛հ,— շշնջաց նա,— ես հասկանում եմ, նա իր կա-
կաչի մասին է մտածում:

Նա ընկճված գնաց իր սենյակը, վերցրեց թուղթ, գրիչ և
ամբողջ գիշերը փորձում էր նամակ գրել:

Առավոտյան Կոռնելիուսը վեր կացավ և ուզում էր մո-
տենալ պատուհանին, երբ նկատեց թղթի մի կտոր, որ խցկը-
ված էր դռան տակի ճեղքը: Նա նետվեց դեպի գրությունը և
կարդաց մի քանի խոսք, որոնք գրված էին այնքան լավ, որ
նա մեծ դժվարությամբ ճանաչեց Ռոզայի ձեռագիրը, այն-
քան որ փոխվել էր յոթ օրվա ընթացքում:

«Հանգի՛ստ եղեք, ձեր կակաչը լավ վիճակում է»:

Չնայած Ռոզայի գրությունը մի փոքր մեղմացրեց Կոռ-
նելիուսի տանջանքները, սակայն նա չէր կարող շնկատել
աղջկա թաքնված ծաղրը: Այդպես ուրեմն, Ռոզան հիվանդ
չէ: Ռոզան վիրավորված է. նշանակում է Ռոզային ոչ ոք չի
խանգարում գալու այն մարդու մոտ, որը մեռնում է այդ ան-
ջատման վշտից:

Կոռնելիուսի մոտ թուղթ և մատիտ կար, որը նրան բերել
էր Ռոզան: Նա գիտեր, որ աղջիկն սպասում է պատասխանի,
և ոք գիշերը կգա տանելու: Այդ պատճառով հենց նույն թղթի
վրա նա գրեց.

«Ինձ անհանգստացնողը կակաչը չէ: Ինձ հիվանդացրել
է մեր անջատումը»:

Այնուհետև, երբ Գրիֆուսը գնաց, և երեկոն իջավ, նա
գրությունը խցկեց դռան տակ և սկսեց սպասել: Սակայն,
որքան էլ նա իր լսողությունը լարեց, ոչ մի ոտնաձայն, շրջա-
դեպստի ոչ մի շրջյուն չսեց: Միայն մի ձայն, շնչի նման
թեթև, քնքուշ, ինչպես շոյանք, հնչեց պատուհանում:

— Մինչև վաղը:

Վաղը արդեն ութերորդ օրն էր:

Կոռնելիուսը չէր տեսել Ռոզային ամբողջ ո՛ւթ օր:

Ի՞նչ էր տեղի ունեցել ուր օրվա ընթացքում

Հաջորդ օրը, սովորական ժամին վառ թեղին լսեց, թե ինչպես ինչ-որ մեկը ճանկոտում է թր պատուհանը. իրենց ընկերության երջանիկ օրերին Ռոզան սովորաբար այդպես էր անում: Դժվար չէր գլխի ընկնել, որ Կոռնելիուսը դռնից հեռու չէր և վանդակների արանքից կարող էր տեսնել երկար ժամանակ անհետացած սիրելի դեմքը:

Հապտերը ձեռքին սպասող Ռոզան չկարողացավ պահել իր հուզմունքը, երբ տեսավ գունատ ու տխուր բանտարկյալին:

— Դուք հիվանդ եք, պարոն Կոռնելիուս,— հարցրեց նա:

— Այո, օրիորդ, ես հիվանդ եմ և՛ ֆիզիկապես, և՛ բարոյապես:

— Տեսնում եմ; որ դուք ոչինչ չեք ուտում,— խոստովանեց Ռոզան,— հայրս ինձ ասաց, թե դուք հիվանդ եք և անկողնից վեր չեք կենում. այդ ժամանակ ես գրեցի ձեզ անհանգստացնող թանկարժեք առարկայի մասին, որպեսզի դուք հանգիստ լինեք:

— Ես էլ ձեզ պատասխանեցի,— ասաց Կոռնելիուսը:— Եվ, քանի որ եկաք, ապա կարծում եմ, ստացել եք իմ գրությունը:

— Այո, ճշմարիտ է, ստացել եմ:

— Հիմա դուք չեք կարող ասել, թե կարդալ չգիտեք: Հիմա ոչ միայն ազատ ընթերցում եք, այլև մեծ հաջողությունների եք հասել գրելու ասպարեզում:

— Այո, ճշմարիտ է, ես ո՛չ միայն ստացել եմ ձեր գրությունը, այլև կարդացել եմ: Այդ պատճառով էլ եկա, որպեսզի ձեզ բուժեմ:

— Բուժել ի՞նձ,— բացականչեց Կոռնելիուսը:— Նշանակում է դուք ինձ հաճելի նորություններ ունեք հայտնելու:

Այս խոսքերի հետ երիտասարդը աչքերը, որոնք վառվում էին հույսով, հառեց աղջկա երեսին: Թե Ռոզան չհասկացավ

այդ հայացքը, թե շուգեց հասկանալ, համենայն դեպս, նա խիստ պատասխանեց.

— Ես կարող եմ պատմել ձեզ միայն ձեր կակաչի մասին, որը, ինչքան ինձ հայտնի է, ամենից շատ է ձեզ հետաքրքրում:

Ռոզան այս խոսքերն ասաց այնպիսի սառը տոնով, որ Կոռնելիուսը ցնցվեց:

Տաքարյուն ծաղկագործը չհասկացավ, թե Ռոզան ինչ էր թաքցնում այդ անտարբերության քողի տակ, Ռոզան, որը շարունակ պայքարի մեջ էր իր մրցակցի՝ սև կակաչի հետ:

— Ա՛խ,— շշնջաց Կոռնելիուսը,— նորի՛ց, նորի՛ց... Աստվա՛ծ իմ, մի՞թե չեմ ասել, Ռոզա, որ միայն ձե՛ր մասին էի մտածում, միայն ձե՛զ էի կարոտում, որ միայն ձե՛ր սպակասությունն էի զգում, որ միայն ձե՛ր բացակայությունն էր զրկել ինձ օդից, լույսից, ջերմությունից ու կյանքից...

Ռոզան թախծոտ ժպտաց:

— Ա՛խ, իսկ գիտե՞ք ինչպիսի վտանգ էր սպառնում ձեր կակաչին,— ասաց նա:

Կոռնելիուսն ակամա ցնցվեց և ընկավ թակարդի մեջ, եթե միայն, իհարկե, այն լարվել էր:

— Մեծ վտա՛նգ,— կրկին հարցրեց նա՝ ամբողջ մարմնով դողալով:— Աստվա՛ծ իմ, ի՞նչ է պատահել:

Ռոզան ցավակցությունամբ նայեց նրան և հասկացավ, այն, ինչ ինքը պահանջում էր այդ մարդուց, նրա ուժերից վեր էր և նրան պետք էր ընդունել այնպես, ինչպես կար:

— Այո,— ասաց նա,— դուք ճիշտ գուշակեցիք. երկըրպագուն՝ սիրահարված Յակոբը, բոլորովին էլ ինձ համար չէ. որ գալիս էր այստեղ:

— Իսկ ո՞ւմ համար էր գալիս,— հարցրեց Կոռնելիուսն անհանգստացած:

— Նա գալիս էր ձեր կակաչի համար:

— Օ՛հ,— ասաց Կոռնելիուսը գունատվելով ավելի շատ, քան երկու շաբաթ առաջ, երբ Ռոզան նրան հայտնեց, թե Յակոբն իր համար է գալիս:

Ռոզան նկատեց Կոռնելիուսին համակած այդ սարսափը,

խակ Կոռնելիուսն աղջկա դեմքին կարդաց հենց այն մտքերը, որոնց մասին մենք նոր խոսում էինք:

— Օ՛, ներեք ինձ, Ռոզա,— ասաց նա:— Ձեզ լավ եմ ճանաչում, գիտեմ, թե դուք ի՞նչ բարի ու ազնիվ սիրտ ունեք: Բնությունը ձեզ շնորհել է խեղճ, միտք, ուժ և հնարամտություն, մի խոսքով այն ամենը, ինչ անհրաժեշտ է ինքն իրեն պաշտպանելու համար, իսկ իմ խեղճ կակաչը, որին վտանգ է սպառնում՝ անօգնական է:

Ռոզան բանտարկյալի այս զղջման խոսքերին ոչինչ չպատասխանեց. նա շարունակեց պատմել.



— Քանի որ այդ մարդը, որին ճանաչեցի, իմ հետևից եկավ այգի և դա ձեր մեջ կասկածներ հարուցեց, սկսեցի նրանից ավելի շատ վախենալ: Եվ ես վարվեցի այնպես, ինչպես դուք ասացիք: Այն օրվա հաջորդ առավոտյան, երբ մենք վերջին անգամ տեսնվեցինք և դուք ինձ ասացիք...

Կոռնելիուսը նրան ընդհատեց.

— Նորից ներողություն եմ խնդրում, Ռոզա,— ասաց նա:— Ես չպետք է ձեզ ասեի այն, ինչ ասացի: Ես ձեզնից արդեն ներողություն եմ խնդրել իմ այն ճակատագրական խոսքերի համար, նորից եմ խնդրում: Մի՞թե դուք ինձ երբեք չեք ներելու:

— Այն օրվա հաջորդ առավոտյան,— շարունակեց Ռոզան,— հիշելով, որ մենք խոսում էինք այն խորամանկ քայլի մասին, որին պետք է դիմեի, ստուգելու, թե այդ ստորմարդը ի՞նչ է հետևում, թե՞ կակաշին...

— Այո՛, ստո՛ր... Դուք ատում եք նրան, Ռոզա, այնպես չէ՞:

— Օ՛, ատո՛ւմ եմ նրան,— ասաց Ռոզան,— որովհետև նրա պատճառով ես ութ օր շարունակ տանջվել եմ:

— Ա՛: Ուրեմն, դուք նույնպե՞ս, նույնպե՞ս տանջվել եք: Շնորհակալ եմ բարի խոսքերի համար, Ռո՛զա:

— Այդպես ուրեմն, այն անիծված օրվա հաջորդ առավոտյան,— շարունակեց Ռոզան,— ես իջա այգի և ուղղվեցի դեպի թումբը, ուր պետք է տնկեի կակաշը: Ետ նայեցի՝ ստուգելու համար, արդյոք նորից այն մարդը նախորդ անգամվա նման ինձ չի՞ հետևում:

— Եվ ի՞նչ,— հարցրեց Կոռնելիուսը:

— Ինչ պիտի, նույն սովերը սողաց անցավ պարսպի և դռնակի արանքով և նորից թաքնվեց թանթրվենու հետևում:

— Եվ դուք ձևացրիք, թե նրան չեք նկատում, այնպես չէ՞,— հարցրեց Կոռնելիուսը, վերհիշելով Ռոզային տված իր խորհուրդը ամենայն մանրամասնությամբ:

— Այո, ես կռացա թմբի վրա և մկսեցի բահով փորել, այնպես, կարծես թե պատրաստվում էի սոխուկը տնկել:

— Իսկ նա՞, իսկ նա՞... այդ ժամանակ:

— Ծառերի ճյուղերի արանքից ես նկատեցի, որ նրա աչքերը վազբի աչքերի պես վառվում էին:

— Ահա՛, տեսնո՞ւմ եք: Ահա՛, տեսնո՞ւմ եք,— ասաց Կոռնելիուսը:

— Հետո ձևացրի, թե վերջացրի ինչ-որ գործ և հեռացա:

— Սակայն դուք հեռացաք մինչև դռնակը, այնպես չէ՞, և սկսեցիք դռնակի արանքից նայել, թե ի՞նչ պետք է անի ձեր հեռանալուց հետո:

— Նա որոշ ժամանակ սպասեց, հավանաբար, որպեսզի համոզվի, թե կվերադառնա՞մ արդյոք. հետո միայն գողեգող դուրս եկավ իր թաքստոցից, գնաց դեպի թումբը, մի մեծ շրջան արեց և, վերջապես, մոտեցավ այն տեղին, որտեղ հո-

դը հենց նոր փորված էր: Այնտեղ նա կանդ առավ և անտար-
րեր տեսքով սկսեց շորս կողմը նայել, ղննեց այգու բոլոր
տնկյունները, նայեց հարևան տների բոլոր պատուհաններին,
հայացքը գցեց գետին, այնուհետև՝ երկնքին և, համոզվելով,
որ ինքը բոլորովին մենակ է, որ շուրջը ոչ ոք չկա և ոչ ոք
նրան չի տեսնում, նետվեց դեպի թումբը, ձեռքերը մխրձեց
փափուկ հողի մեջ, այնտեղից վերցրեց մի քիչ հող ու սկսեց
զգուշությամբ տրորել, որպեսզի գտնի սոխուկը: Երեք անգամ
նա կրկնեց այդ և ամեն անգամ ավելի ջանասիրությամբ, մին-
չև հասկացավ, թե ինքը դարձել է ինչ-որ խաբեության զոհ:
Այնուհետև նա հաղթահարելով իրեն կրծող զայրույթը, վերց-
րեց բաճը, հողը հավասարեցրեց, որպեսզի նրան նախկին
տեսքը տա և շփոթված, ամոթահար ուղղվեց դեպի դուռը,
աշխատելով ընդունել զբոսնող մարդու անմեղ տեսք:

— Օ՛, գարշելի,— քրթմնջում էր Կոռնելիուսը, ճակա-
տից սրբելով գետի նման հոսող քրտինքը:— Օ՛, գարշելի:
Իսկ ի՞նչ արիք սոխուկը, Ռոզա: Ավաղ, հիմա արդեն
քիչ ուշ է ցանկելու համար:

— Սոխուկն արդեն վեց օր է, ինչ հողի մեջ է:

— Որտե՞ղ: Ինչպե՞ս,— բացականչեց Կոռնելիուսը:—
Օ՛, աստված իմ, ինչպիսի անզգուշություն: Որտե՞ղ եք տնկել:
Ինչպիսի՞ հողում: Վտանգ չկա՞ արդյոք, որ այդ սարսափելի
Յակոբը կգողանա:

— Սոխուկը հեռու է վտանգից, եթե միայն Յակոբը
չկոտորի իմ սենյակը տանող դուռը:

— Ա՛, ձե՛ղ մոտ է, ձե՛ր սենյակում, Ռոզա,— մի քիչ
հանգստացած ասաց Կոռնելիուսը:— Սակայն ինչպիսի՞ հո-
ղում է: Ի՞նչ ամանի մեջ: Ես հուսով եմ, որ դուք ջրի մեջ չեք
պահում, ինչպես այդ անում են Հաաուլեմի և Դորգրեխտի սա-
նամայրերը, որոնք համառորեն կարծում են, թե ջուրը կա-
րող է փոխարինել հողին. կարծես թե ջուրը, որ իր մեջ պա-
րունակում է թթվածնի երեսուներեք մաս և ջրածնի վաթսուն-
վեց մաս կարող է փոխարինել... Սակայն ես այս ի՞նչ եմ
գուրս տալիս, Ռո՛զա:

— Այո, դա ինձ համար չափից ավելի բարդ է,— ժղպ-
տալով պատասխանեց երիտասարդ աղջիկը:— Դրա համար

ես կսահմանափակվեմ նրանով, որ ձեզ հանգստացնելու համար կասեմ, ձեր սոխուկը ջրի մեջ չէ:

— Ախ, ինձ համար շնչելն ավելի հեշտ է դառնում:

— Կավե կճուճի մեջ է, որը հենց այն շափսի է, ինչպիսին ձերն էր: Սոխուկը հողի մեջ է, որը կազմված է երկրմաս սովորական հողից՝ վերցված այգու ամենալավ տեղից. և մի մաս այնպիսի հողից, որը վերցված է փողոցից: Օ՛հ, ես այնքան հաճախ եմ լսել ձեզնից և այդ գարշելի, ինչպես դուք եք անվանում՝ Յակոբից, թե ինչպես պետք է ցանել կակաչը, որ հիմա այդ բաները գիտեմ այնքան լավ, որքան Հաառլեմի առաջին կարգի ծաղկագործը:

— Դե, հիմա միայն մեկ հարց է մնում. նրա դիրքի մասին: Ինչպե՞ս է դրված, Ռոզա:

— Հիմա նա ամբողջ օրը գտնվում է արևի տակ: Սակայն ծլելուց հետո, երբ արևը ավելի տաքանա, ես կանեմ այնպես, ինչպես դուք էիք արել, թանկագին պարոն Կոռնելիուս: Ես կդնեմ պատուհանի գոգին, որը նայում է դեպի արևելք, առավոտյան ժամը ութից մինչև ցերեկվա տասնմեկը, հետո կտեղափոխեմ արևմուտք նայող պատուհանին՝ ցերեկվա երեքից մինչև ժամը հինգը:

— Այդպե՛ս, այդպե՛ս, — բացականչեց Կոռնելիուսը: — Դուք հիանալի՜ այգեգործ եք, իմ հիասքա՛նչ Ռոզա: Սակայն վախենում եմ, որ իմ կակաչը խնամելը ձեր ամբողջ ժամանակը կխլի:

— Այո, ճշմարիտ է, — ասաց Ռոզան, — բայց դա կարելիոր չէ: Ձեր կակաչը իմ զավակն է: Ես նրան այնքան ժամանակ կտրամադրեմ, որքան իմ երեխային կտրամադրելի, եթե մայր լինեի: Սակայն նրա մայրը դառնալով, — ավելացրեց նա ժպտալով, — ես կղաղաբեմ նրա մրցակցուհին լինելուց:

— Սիրելի՛, թանկագին՝ Ռոզա, — շշնջաց Կոռնելիուսը, նայելով աղջկան մի հայացքով, որն ավելի սիրահարի, քան ծաղկագործի հայացք էր. դա մի փոքր հանգստացրեց Ռոզային:

Կարճ լռությունից. հետո, որի ընթացքում Կոռնելիուսն

աշխատում էր պատուհանի վանդակի արանքից բռնել Ռոզայի ձեռքը, նա շարունակեց.

— Նշանակում է՝ արդեն վեց օր է, որ սոխուկը հողի մեջ է:

— Այո, պարոն Կոռնելիուս,— ասաց աղջիկը,— արդեն վեց օր է:

— Եվ դեռևս չի՞ ծլել:

— Ո՛ր, սակայն կարծում եմ, որ վաղը կերևա առաջին ծիլը:

— Վաղը երեկոյան ինձ կպատմեք և՛ կակաչի, և՛ ձեր մասին, այնպես չէ՞, Ռոզա: Ես շատ եմ անհանգստանում երեխայի համար, ինչպես դուք անվանում եք ծաղիկին, բայց ավելի շատ անհանգստանում եմ նրա մոր համար:

— Վա՛ղը, վա՛ղը,— նկատեց Ռոզան՝ թեք նայելով Կոռնելիուսին,— չգիտեմ՝ կկարողանա՞մ արդյոք վաղը:

— Աստված իմ, իսկ ինչո՞ւ չեք կարող:

— Պարոն Կոռնելիուս, ես հազա՛ր ու մի գործեր ունեմ:

— Այն դեպքում, երբ ես միայն մե՛կն ունեմ,— շշնջաց Կոռնելիուսը:

— Այո՛, սիրել կակաչը:

— Սիրել ձե՛զ, Ռոզա:

Ռոզան գլուխն օրորեց:

Նորից տիրեց լռություն:

— Ի միջի այլոց,— խախտելով լռությունը, շարունակեց Կոռնելիուսը,— բնության մեջ ամեն ինչ փոխվում է. գարնան ծաղիկներին փոխարինում են ուրիշ ծաղիկներ, և մենք տեսնում ենք, թե ինչպես մեղուները, որոնք քնքշությամբ շոյում են մանուշակն ու մեխակը, նույնպիսի քնքշությամբ իջնում են ցախկեռասի, վարդի, հասմիկի, ոսկեծաղկի, խորդենու վրա:

— Ի՞նչ է նշանակում այդ,— հարցրեց աղջիկը:

— Դա նշանակում է, սիրելի օրիորդս, որ առաջ ձեզ դուր էր գալիս իմ ուրախությունների ու տխրությունների պատմությունները լսել, դուք փայփայում էիք իմ ու ձեր ջահելության ծաղիկը. սակայն իմս ստվերում թառամեց: Բանտարկյալի հույսերի ու խնդությունների այդին ծաղկում է

միայն մեկ անգամ: Նման այն հիասքանչ այգիներին, որոնք փռված են արևի տակ, թարմ օդում: Քանի որ մայիսյան հունձն ավարտված է, բերքը հավաքված, մեղուններն էլ, Ռոզա, ձեզ նման՝ բարակ մեջքով, ոսկեգույն բեղիկներով ու թափանցիկ թևերով, վանդակների արանքից դուրս են թռչում, փախչում են ցրտից, մենակությունից ու տխրությունից, մեկ ուրիշ տեղում փնտրելու նոր բուրմունքներ ու ջերմ շունչ: Վերջապե՛ս, երջանկություն փնտրելու:

Ռոզան ժպտալով նայում էր Կոռնելիուսին, սակայն վերջինս այդ չէր տեսնում, քանի որ նրա աչքերը հռոած էին երկնքին:

Հոգոց հանելով՝ Կոռնելիուսը շարունակեց.

— Դուք հեռացա՛ք ինձանից, օրիորդ Ռոզա, որպեսզի տարվա բոլոր շորս եղանակներից էլ հաճույք ստանաք: Լա՛վ արեցիք, չեմ բողբոլում: Ես ի՞նչ իրավունք ունեմ ձեզանից հավատարմություն պահանջելու:

— Իմ հավատարմությո՞ւնը, — բացականչեց աղջիկը հեկեկալով և այլևս չթաքցնելով իր արցունքները, որոնք հոսում էին աչքերից: — Իմ հավատարմությո՞ւնը: Այդ ե՞ս ձեզ հավատարիմ չեմ եղել:

— Այո՛, — բացականչեց Կոռնելիուսը: — Մի՞թե դա հավատարմություն է, երբ ինձ լքում են, երբ թողնում, որ մենակության մեջ մեռնեմ:

— Սակայն, պարոն Կոռնելիուս, մի՞թե ես ամեն ինչ չեմ անում, որպեսզի աճեցնեմ ձեր կակաչը և դրանով ձեզ հաճույք պատճառեմ:

— Որքա՛ն դառնություն կա ձեր խոսքերում, Ռոզա: Դուք նախատում եք ինձ այն միակ ուրախության համար, որ մատչելի է այս աշխարհում:

— Ես ձեզ ոչնչով չեմ նախատում, եթե չհաշվենք այն խոր վիշտը, որ ես ապրեցի Բյուլտենհոֆում, երբ ինձ ասացին, թե դուք դատապարտված եք մահվան:

— Ձեզ դուր չի՞ գալիս, Ռոզա, իմ սիրելի Ռոզա, ձեզ դուր չի՞ գալիս, որ ես ծաղիկներ եմ սիրում:

— Ո՛չ, ոչ թե ինձ դուր չի գալիս, որ ծաղիկներ եք սիրում, այլ շատ տխրում եմ, որ դուք ծաղիկներ ավելի եք սիրում, քան ինձ:

— Ա՛խ, սիրելի՛ս, թանկագի՛նս, անուշի՛կս,— բացա-
կանչեց Կոռնելիոսը,— տեսե՛ք, թե ինչպէս են դողում ձեռ-
քերս, տեսե՛ք՝ ինչ գունատ է դեմքս, լսե՛ք, լսե՛ք, թե ինչպե՛ս
է բաբախում սիրտս: Այո՛, և այդ բոլորը ոչ թե այն պատ-
ճառով, որ իմ կակաչը ժպտում ու կանչում է ինձ: Ո՛չ, դրա
պատճառն այն է, որ դուք եք ժպտում ինձ, որովհետև դուք
խոնարհել եք ձեր գլուխը, որովհետև ինձ թվում է, չգիտեմ
որքանով այդ ճիշտ է, բայց ինձ թվում է, թե ձեր ձեռքերը,
որ շարունակ թաքնվում են, այնուամենայնիւ, ձգտում են
դեպի իմ ձեռքերը, որ ես վանդակների սառնության հետեից
զգում եմ ձեր հիասքանչ այտերի ջերմությունը: Ռոզա, իմ
սե՛ր: Ճզմեցե՛ք սև կակաչի սոխուկը, կործանե՛ք այդ ծաղկի
հետ կապված բոլոր հուշները, հանգցրե՛ք այդ կուսական,
սքանչելի երազի ճրագը, որը ես այնպես փայփայում էի,
թող այդպես լինի: Պետք չեն այլևս ծաղիկները շքեղ հա-
գուստների մեջ, լի աղնվագույն գեղանիությամբ ու աստվա-
ծային հրաշքներով: Խլե՛ք ինձանից այդ բոլորը, դուք, որ
ծաղիկ եք և խանդում եք մնացած ծաղիկներին, զրկե՛ք այդ
բոլորից, սակայն մի՛ զրկե՛ք ինձ ձեր ձայնից, ձեր շարժում-
ներից, խուզ սանդուղքների վրա ձեր քայլերի աղմուկից, մի՛
զրկե՛ք ինձ մութ միջանցքում ձեր աչքերի կրակներից, ձեր
սիրո հուշից, որն անընդհատ ջերմացնում է իմ սիրտը:
Սիրե՛ք ինձ, Ռոզա, քանզի զգում եմ, որ սիրո՞ւմ եմ ձեզ:

— Սև կակաչից հետո,— հոգոցով ասաց երիտասարդ
աղջիկը, որի տաք, քնքուշ ձեռքերը վերջապես վանդակների
արանքից դիպան Կոռնելիոսի շրթունքներին:

— Ամենի՛ց առաջ, Ռոզա...

— Հավատա՞մ արդյոք ձեզ:

— Այնպես, ինչպես ասածուն եք հավատում:

— Լավ: Ձէ՞ որ այդ սերը չի պարտավորեցնում:

— Ավա՛ղ, դժբախտաբար, չի պարտավորեցնում, Ռո-
զա, սակայն ձեզ պարտավորեցնում է:

— Ի՞նձ,— հարցրեց Ռոզան:— Իսկ ինչի՞ նկատմամբ է
պարտավորեցնում:

— Ամենից առաջ, դուք չպե՛տք է ամուսնանաք:

Աղջիկը ժպտաց:

— Ա՛խ, ահա թե դուք ինչպիսին եք,— ասաց նա,— դուք՝ տիրակալներդ: Դուք ունեք. պաշտելի գեղեցկուհի, որի մասին եք շարունակ երազում. դուք դատաւարտվում եք մահվան և կառափնարան գնալիս նրա անունն եք տալիս. միաժամանակ դուք ինձանից՝ մի խեղճ աղջկանից, պահանջում եք, որ ես ձեզ համար գոհեմ իմ երազները, իմ հույսերը:

— Այդ ի՞նչ գեղեցկուհու մասին եք խոսում, Ռոդա,— ասաց Կոռնելիուսը՝ աշխատելով իր հիշողության մեջ վերարտադրել այն կնոջը, որին Ռոդան նկատի ուներ:

— Այն թխահեր գեղեցկուհու, պարո՛ն, այն թխահեր գեղեցկուհու, ճկուն իրանով, ուղղաձիգ ոտքերով ու հպարտ զլխիկով: Ես խոսում եմ ձեր սև կակաշի մասին:

Կոռնելիուսը ժպտաց:

— Սքանչելի՛, հնարամիտ, իմ սիրելի Ռոդա, դուք չե՞ք արդյոք, որ, չհաշված ձեր թե իմ սիրահար Յակոբին, այդ դուք չէի՞ք շրջապատված երկրպագուներով, որոնք սիրահետում են ձեզ: Հիշո՞ւմ եք, Ռոդա, որ պատմում էիք Հաագայի ուսանողների, սպաների ու առևտրականների մասին: Մի՞թե լեհշտեյնում չկան ուսանողներ, սպաներ ու առևտրականներ:

— Օ՛, իհարկե, կան և նույնիսկ շատ,— պատասխանեց Ռոդան:

— Եվ նրանք գրո՞ւմ են ձեզ:

— Գրում են:

— Եվ հիմա՞, երբ դուք արդեն կարդալ դիտեք...

Կոռնելիուսը խոր հոգոց քաշեց և մտածեց, որ իր՝ դժբախտ բանտարկյալի շնորհիվ է, որ Ռոդան հիմա կարողանում է կարդալ իրեն հասցեագրված սիրային նամակները:

— Դե ի՞նչ արած,— ասաց Ռոդան,— ինձ թվում է, պարոն Կոռնելիուս, որ իմ երկրպագուներին զննելով ըստ իրենց նամակների, ես հետևում եմ ձե՛ր խորհուրդներին:

— Ինչպես թե իմ խորհուրդներին:

— Այո, ձե՛ր խորհուրդներին: Դուք մոռացել եք,— ասաց Ռոդան իր հերթին հոգոց հանելով,— դուք մոռացել եք ձեր կտակը, որ գրեցիք Կոռնել դե Վիտի ավետարանին: Ես

չեմ մոռացել, քանի որ հիմա, երբ արդեն կարգալ գիտեմ, ամեն օր, նույնիսկ օրը երկու անգամ կարդում եմ: Դե հա՛ա, ուրեմն այնտեղ դուք ինձ կտակում եք սիրել և ամուսնանալ քսանվեց-քսանութ տարեկան մի երիտասարդի հետ: Ըս փնտրում եմ այդ երիտասարդին, և քանի որ ամբողջ ցերեկը ես կորցնում եմ ձեր կակաչը խնամելով, ապա դուք պետք է ինձ հնարավորություն տաք այդ փնտրումները կատարել գիշերը:

— Օ՛, Ռոդա, կտակը գրվել է մահվան սպասելիս, սակայն բախտի կամքով ես կենդանի մնացի:

— Դե լավ, այդ դեպքում կդադարեմ փնտրելուց այդ քսանվեց, քսանութ տարեկան հրաշալի երիտասարդին և կայցեղեմ ձե՛ղ:

— Եկե՛ք, եկե՛ք, Ռոդա:

— Այո, սակայն մի պայմանով:

— Նախօրոք արդեն ընդունված է:

— Եթե միայն առաջիկա երեք օրերի ընթացքում սև կակաչի մասին խոսակցություն չի լինի:

— Մենք այլևս երբեք կակաչի մասին չենք խոսի, Ռոդա, եթե այդպես եք պահանջում:

— Օ՛, ո՛չ, — ասաց երիտասարդ աղջիկը, — չպետք է պահանջել անհնարինը:

Եվ կարծես թե ակամայից, նա իր թավշյա դեմքը մոտեցրեց վանդակապատ պատուհանին այնպես, որ կոռնեկիուսը կարողացավ շրթունքներով դիպչել նրա այտին: Ռոդան սիրո շնչից հարրած՝ մեղմ ճշաց ու անհետացավ:

Երկրորդ սոխուկը

Գիշերը հրաշալի էր, իսկ հաջորդ օրը՝ առավել հրաշալի:

Նախորդ օրերին բանտը թվում էր մռայլ, ծանր ու ճրնշող: Իր ամբողջ օանրությամբ նա կարծես թե ընկնում էր

բանտարկյալի ուսերին: Պատերը սև էին, օդը սառը, պատուհանի վանդակներն այնքան խիտ էին, որ լույսը հազիվ-հազ էր ներս թափանցում:

Սակայն, երբ Կոռնելիուսն արթնացավ, երկաթե վանդակների վրա խաղում էր առավոտյան արևի ճառագայթը, մի քանի աղավիններ իրենց տարածած թևերով օդն էին ճեղքում, մյուսները սիրահարների նման ճուլողում էին դեռևս փակ պատուհանի սուղե:

Կոռնելիուսը վաղեց դեպի պատուհանը, բացեց ու նրան թվաց, թե կյանքն ու խնդությունը, նույնիսկ աղատությունը արևի ճառագայթների հետ միասին ներս լցվեցին նրա մոռյլ խուցը:

Այդ սե՛րն էր, որ ծաղկում էր ու ծաղկեցնում շրջապատում ամեն ինչ, սե՛րը, այդ երկնային ծաղիկը, որը բոլոր երկրային ծաղիկներից ամենից փայլունն էր ու ամենից բուրավետը:

Երբ Գրիֆուսը մտավ բանտարկյալի խուցը, փոխանակ նրան գտնելու նախորդ օրերի նման մոռյլ, անկողնում պառկած, տեսավ, որ վերջինս արդեն ոտքի վրա է և օպերային ինչ-որ մեներգ է սուլում:

— Գրիֆուսն աչքի տակով նրան նայեց:

— Դե ինչ,— ասաց Կոռնելիուսը,— ինչպե՞ս ենք ապրում:

Գրիֆուսը ծուռ նայեց նրան:

— Դե, ինչպե՞ս են ապրում շունը, պարոն Յակոբը և գեղեցկուհի Ռոզան:

Գրիֆուսն ատամները կրճտացրեց:

— Ահա՛ ձեր նախաճաշը,— ասաց նա:

— Շնորհակալություն, Քերբեր, բարեկամս,— ասաց բանտարկյալը:— Ճիշտ ժամանակին հասավ, ես շա՛տ քաղցած եմ:

— Ա՛, դուք քաղցած եք:

— Իսկ ինչո՞ւ ոչ,— հարցրեց վան Բեռլեն:

— Թվում է, թե դավադրությունը մոտենում է,— ասաց Գրիֆուսը:

— Ի՞նչ դավադրություն,— հարցրեց Կոռնելիուսը:



— Լավ, գիտենք, թե ինչն ինչոց է: Սակայն մենք կհետևենք, սլարոն գիտնական, կհետևենք, հանգիստ եղեք:

— Հետևե՛ք բարեկամս, Գրիֆուս, հետևե՛ք,—ասաց վան Բեռլեն:— Իմ դավադրությունը, ինչպես նաև իմ անձնավորությունը ամբողջովին ձեր տրամադրության տակ են:

— Ոչինչ, կեսօրին մենք այդ կպարզենք:

Գրիֆուսը գնաց:

— «Կեսօրին»,— կրկնեց Կոռնելիուսը,— ի՞նչ էր ուզում գրանով ասել: Դե ինչ, կսպասենք մինչև կեսօր, կեսօրին կտեսնենք:

Կոռնելիուսին դժվար չէր սպասել մինչև կեսօր, չէ՞ որ նա սպասում էր երեկոյան ժամը իննին:

Խփեց կեսօրվա ժամը տասներկուսը, և սանդուղքների վրա լսվեցին ոչ միայն Գրիֆուսի, այլև երեք-չորս զինվորների քայլերի ձայներ:

Դուռը բացվեց, մտավ Գրիֆուսը, մարդկանց ներս թողեց և դուռը նրանց հետևից փակեց:

— Դե՛, հիմա սկսենք խուզարկությունը:

Նրանք խուզարկեցին Կոռնելիուսի գրպանները, փնտրեցին բաճկոնի ու ժիլետի, ժիլետի ու վերնաշապկի, վերնաշապկի ու մարմնի վրա և ոչինչ չգտան: Փնտրեցին սավանի տակ, ներքնակի մեջ և ոչինչ չգտան:

Կոռնելիուսը շատ ուրախ էր, որ ժամանակին չհամաձայնեց իր մոտ թողնել երրորդ սոխուկը: Ինչքան էլ լավ թաքցրած լիներ, այս խուզարկության ժամանակ Գրիֆուսը կգտներ և կվարվեր այնպես, ինչպես վարվեց առաջինի հետ: Ի միջի այլոց, դեռ երբեք ո՛չ մի բանտարկյալ իր բնակարանի խուզարկության ժամանակ իրեն այդքան հանգիստ չէր պահել:

Գրիֆուսը հեռացավ, տանելով մատիտը և Ռոզայի տված երկու-երեք թերթ թղթերը: Դրանք նրա միակ ավարն էին:

Ժամը վեցին Գրիֆուսը վերադարձավ արդեն մենակ: Կոռնելիուսը ցանկացավ նրան մեղմացնել, սակայն վերջինս մրթմրթաց, ցույց տալով իր ցցված կտրիչ ատամը և ետ-ետ գնաց, կարծես թե վախենալով, որ իր վրա կարող են հարձակվել:

Կոռնելիուսը ծիծաղեց:

Գրիֆուսը պատուհանի հետևից գոռաց.

— Լա՛վ, Լա՛վ, ծիծաղում է նա, ով վերջի՛նն է ծիծաղում:

Վերջինը, համենայն դեպս, այդ օրը ծիծաղելու էր Կոռնելիուսը, քանի որ սպասում էր Ռոզային:

Ժամը իննին Ռոզան եկավ, սակայն այս անգամ առանց լապտերի: Ռոզային այլևս լապտեր պետք չէր, նա արդեն կարդալ գիտեր:

Բացի այդ, լապտերը կարող էր Ռոզային մատնել, իսկ Յակոբը հիմա Ռոզային այնպես էր լրտեսում, ինչպես երբեք: Բացի այդ, լապտերը մատնում էր Ռոզային, երբ վերջինս կարմրում էր:

Ինչի՞ մասին էին խոսում այդ երեկո երիտասարդները: Այնպիսի բաների մասին, որոնց մասին Ֆրանսիայում խոսում են տան շեմքին, Իսպանիայում՝ երկու հարևան պատրշ-

գամբներից, Արևելքում՝ տների տանիքներից: Նրանք խոսում էին այնպիսի բաների մասին, որոնք թեւավորում են ժամերի վազքը, կրճատում են ժամանակի թոփշը: Նրանք խոսում էին ամեն ինչի մասին, բացառութեամբ սև կակաչի: Ժամը տափին սովորականի նման երիտասարդները բաժանվեցին:

Կոռնելիուսը երջանիկ էր, այնպես երջանիկ, ինչպես կարող է երջանիկ լինել մի ծաղկագործ, որին ոչինչ չասվեց իր կակաչի մասին: Նա գտնում էր, որ Ռոզան սքանչելի է, նա գտնում էր, որ աղջիկը հմայիչ է, սլացիկ ու սիրելի:

Սակայն ինչո՞ւ էր Ռոզան արգելում խոսել սև կակաչի մասին:

Դա Ռոզայի համար մեծ թերություն էր: Եվ Կոռնելիուսը հոգոց հանելով խոստովանեց, որ կինը ոչ կատարյալ էակ է:

Գիշերվա մի մասը նա անցկացրեց այդ ոչ կատարյալ էակի մասին մտածելով: Դա նշանակում է, որ քանի դեռ նա արթուն էր, ամբողջ ժամանակ մտածում էր միայն Ռոզայի մասին:

Իսկ երբ քնեց, երազում տեսավ նրան: Սակայն նրա երազներում Ռոզան ավելի կատարյալ էր, քան իրականութեան մեջ. այդ երազների Ռոզան ոչ միայն խոսում էր սև կակաչի մասին, այլև չինական մի սափորի մեջ Կոռնելիուսին բերեց մի հրաշալի ծաղկած սև կակաչ:

Կոռնելիուսն արթնացավ ուրախութունից ամբողջովին դողալով ու մրմնջաց.

— Ռոզա՛, Ռոզա՛, սիրո՞ւմ եմ քեզ:

Եվ քանի որ արդեն լույս էր, նա ավելորդ համարեց նորից քնել: Ամբողջ օրը նա չէր բաժանվում այն մտքերից, որոնցով նա արթնացավ:

Ա՛խ, եթե միայն Ռոզան խոսեր կակաչի մասին, Կոռնելիուսը նրան Շամիրամից, Կլեոպատրայից, Ելիզավետա թա-

գուհուց, Աննա Ավստրիացուց¹ էլ կգերադասեր, այսինքն՝ աշխարհի ամենանշանավոր և ամենասքանչելի այդ թագուհիներին: Սակայն Ռոզան արգելել էր խոսել կակաչի մասին, սպառնալով՝ հակառակ դեպքում դադարեցնել իր այցելութունները: Ռոզան արգելել էր երեք օր կակաչի մասին որևէ բան հիշատակել:

Ճիշտ է, դրանք այն յոթանասուներկու ժամերն էին, որոնք աղջիկը նվիրել էր իր սիրեցյալին, սակայն դրանք նաև այն յոթանասուներկու ժամերն էին, որոնք խել էին ծաղկագործից: Ճիշտ է, այդ յոթանասուներկուսից երեսունվեցն արդեն անցել էին: Մնացած երեսունվեցը նույնպես արագ կանցնեն. տասնութը՝ սպասումի, տասնութը՝ վերհուշերի մեջ:

Ռոզան եկավ նույն ժամին: Կոռնելիուսը այս անգամ էլ հերոսաբար տարավ իր սուջե դրված փորձությունը:

Ի միջի այլոց, հրաշագեղ այցելուհին շատ լավ հասկանում էր, որ նման սլայմաններ ղնելով, ինքն էլ իր հերթին պետք է որոշ գիշումների դիմի: Ռոզան Կոռնելիուսին թույլ էր տալիս պատուհանի վանդակների արանքից դիպչելու իր մատներին: Ռոզան նրան թույլ էր տալիս վանդակների արանքից համբուրելու իր մազերը: Խեղճ երեխա, բոլոր այդ քնքշությունները նրա համար ավելի վտանգավոր էին, քան սև կակաչի մասին եղած խոսակցությունները:

Նա հասկացավ այդ, երբ բաբախող սրտով, այրվող այտերով, շոր շրթունքներով ու խոնավ աչքերով վերադարձավ իր սենյակը:

¹. Շամիրամ — ասորական առասպելական կայսրուհի, որը փառաբանվում էր, իբր, իր իմաստությամբ: Կլեոպատրա (69—30 մ. թ. ա.), Պտղոմեոսի դինաստիայից եգիպտական վերջին կայսրուհին: Համաձայն ավանդության՝ նշանավոր էր իր գեղեցկությամբ: Ելիզավետա Թյուդոր — անգլիական թագուհի (1558—1603): Ելիզավետայի թագավորության տարիները համընկան Անգլիայի տնտեսական հզորության և քաղաքական ազդեցության ամրապնդման հետ, միաժամանակ անգլիական գրականության ծաղկման ժամանակշրջանին (Շեքսպիր, Մաուլո և ուրիշներ): Աննա Ավստրիացի (1601—1666) — Ֆրանսիայի թագուհի և կյուդովիկոս XIV-ի մանկության օրերին ժամանակավոր կառավարող՝ ղեկենտ:

Հաջորդ օրը, առաջին իսկ ողջույններից, առաջին իսկ քնքշանքներից հետո Ռոդան վանդակների արանքից այնպիսի հայացքով նայեց Կոռնելիուսին, որ շնայած մթությանը, այդ կարելի էր գգալ:

— Դիտե՛ք,— ասաց աղջիկը,— ծլել է:

— Ծլե՞լ է, ո՞վ, ի՞նչը,— հարցրեց Կոռնելիուսը, չհամարձակվելով հավատալ, որ նա իր սեփական նախաձեռնությամբ կարճացրել է փորձության ժամկետը:

— Կակաչը,— ասաց Ռոդան:

— Այդ ինչպե՞ս: Ուրեմն դուք թո՞ւյլ եք տալիս:

— Այո՛, թույլ եմ տալիս,— ասաց Ռոդան մայրական այնպիսի տոնով, որն իր հրեխային թույլ է տալիս զվարճանալ:

— Ա՛խ, Ռոդա,— բացականչեց Կոռնելիուսը, շրթունքները մոտեցնելով վանդակապատ պատուհանին այն հույսով, որ դրանք կհանդիպեն աղջկա այտին, ձեռքին, ճակատին կամ էլի ինչ-որ բանի:

Եվ նա թեթևակի հույվեց կիսաբաց շրթունքների Ռոդան մեղմ ճշաց:

Կոռնելիուսը հասկացավ, որ պետք է շտապել, քանի որ այդ անսպասելի համբույրը Ռոդային հուզեց:

— Իսկ ինչպե՞ս է ծլել: Ուղի՞ղ:

— Ուղիղ, ինչպես ֆրիսլանդական իլիկ,— ասաց Ռոդան:

— Եվ նրա հասակն արդեն բա՞րձր է:

— Առնվազն երկու դյույմ¹ բարձրություն ունի:

— Օ՛հ, Ռոդա, խնամքով հետևեք, և դուք կտեսնեք, թե ինչպիսի՜ արագությամբ այն կաճի:

— Կարո՞ղ եմ արդյոք ավելի խնամքով հետևել,— ասաց Ռոդան:— Ես հիմա միայն նրա մասին եմ մտածում:

— Միայն նրա մասի՞ն: Զգուշացեք, Ռոդա, հիմա ես կսկսեմ խանդել:

— Դե, դուք շատ լավ գիտեք, որ նրա մասին մտա-

¹ Դյույմ — երկարության չափ, հավասար է 2,54 սմ:

ծելը նշանակում է ձեր մասին մտածել: Ես երբեք աչքաթող չեմ անում: Իմ անկողնից երևում է: Դա առաջին բանն է, որ արթնանալուս պես տեսնում եմ. դա վերջին բանն է, որ քնելուց առաջ ծածկվում է իմ հայացքից: Յերեկը ես նստում կողքին ու աշխատում եմ, քանի որ այն օրվանից, երբ ծաղիկը իմ սենյակում է, նրանից չեմ հեռանում:

— Դուք այդ լավ եք անում, Ռոզա: Ձե՞ որ ձեզ հայտնի է, որ դա ձեր օժիտն է:

— Այո՛, որի շնորհիվ ես կարող եմ ամուսնանալ քսանվեց-քսանութ տարեկան մի երիտասարդի հետ, որին ես կսիրեմ:

— Լո՛ւք, չարամիտ աղջիկ:

Եվ Կոռնելիուսին հաջողվեց բռնել երիտասարդ աղջկա մատները, որը հիմն չփոխեց էլ խոսակցության նյութը, համենայն դեպս, ընդհատեց:

Այդ երեկո Կոռնելիուսը աշխարհի ամենաերջանիկ մարդն էր: Ռոզան թույլ էր տվել բռնելու իր ձեռքը այնքան, որքան ինքը կցանկանար, և միաժամանակ նա կարող էր խոսել կակաշի մասին:

Հաջորդ յուրաքանչյուր օրը մի նոր բան էր մտցնում կակաշի աճի և մեր երիտասարդների սիրո մեջ: Մի դեպքում դրանք նոր բացվող տերևներն էին, մյուս դեպքում հենց ինքը՝ ծաղիկը, որ արդեն սկսել էր կաղմավորվել:

Այդ լուրը Կոռնելիուսին մեծ ուրախություն պատճառեց. նա սկսեց այնպիսի արագություն՝ հարցեր տեղալ, որը ցույց էր տալիս, թե դրանք որքան կարևոր են:

— Սկսել է կաղմավորվել,— բացականչեց Կոռնելիուսը,— սկսել է կաղմավորվել:

— Այո, կաղմավորվում է,— կրկնում էր Ռոզան:

Ուրախությունից Կոռնելիուսի գլուխը պտտվում էր, և նա ստիպված էր բռնել պաշտուհանի վանդակներից:

— Օ՛, աստված իմ:

Հետո սկսեց նորից հարցուփորձ անել:

— Իսկ նրա ձվաձևությունը կանոնավոր է: Կոկոնի գլուխիկը ճիլտված չէ՞: Թերթերի ծայրերը կանաչ են:



— Ձվաձեռութիւնը բութ մատի մեծութիւն ունի և սրածայր վերջավորութիւն, գլխիկը կողքերից լայնանում է, տերեւների ծայրերը ուր որ է պետք է բացվեն:

Այդ գիշեր Կոռնելիուսը քիչ քնեց: Հասավ վճռական ըրոպեն, երբ կոկոնները պետք է բացվեին:

Երկու օրից հետո Ռոզան հայտարարեց, որ թերթերը կիսաբացվեան:

— Կիսաբացվե՛լ են, Ռոզա, կիսաբացվե՛լ,— բացականչեց Կոռնելիուսը:— Նշանակում է արդեն հնարավոր է տարբերել...

Բանտարկյալի շունը կտրվեց, և նա չկարողացավ շարունակել:

— Այո՛,— պատասխանեց Ռոզան,— այո՛, կարելի է տարբերել ուրիշ գույնի մի այլ շերտ, որը մազի նման բարակ է:

— Իսկ ի՞նչ գույնի,— դողալով հարցրեց Կոռնելիուսը:

— Օ՛, շատ մուգ է,— պատասխանեց Ռոզան:

— Դարչնագո՞ւյն է:

— Օ՛, ո՛չ, ավելի մուգ:

— Ավելի մո՞ւգ, թանկագին Ռոզա, ավելի մո՞ւգ: Շնորհակալութիւն: Մուգ է, ինչպես սև փա՛յտը, մուգ, ինչպես...

— Մուգ, ինչպես թանաքը, որով ես ձեզ գրել եմ:

Կոռնելիուսը խելահեղ ուրախության ճիչ արձակեց:

— Օ՛,— ասաց նա,— ձեզ նման հրեշտակ գոյութիւն չունի:

— Ճի՞շտ,— այդ հիացմունքին ժպիտով պատասխանեց Ռոզան:

— Ռոզա, դուք այնքա՛ն աշխատեցիք, այնքա՛ն շատ բան արիք ինձ համար. Ռոզա, իմ կակաչը կծաղկի, իմ կակաչը սև գույն կունենա: Ռոզա, Ռոզա, դուք բնության ամենակատարյալ ստեղծագործություններից եք:

— Իհարկե, կակաչից հետո:

— Ա՛խ, լոեցե՛ք, անպիտա՛ն աղջիկ, լոեցեք գոնե ցավակցությունից, մի՛ փշացրեք իմ ուրախությունը: Սակայն, ասացեք, Ռոզա, եթե կակաչը այդ վիճակի է հասել, ուրեմն մի երկու, ամենաուշը երեք օրից կծաղկի, չէ՞:

— Այո, վաղը կամ վաղը չէ մյուս օրը:

— Օ՛, ես չե՛մ տեսնի,— ետ ընկնելով բացականչեց Կոռնելիուսը,— ես չե՛մ համբուրի բնության այդ հրաշալիքը, ինչպես համբուրում եմ ձեր ձեռքերը, Ռոզա, համբուրում եմ ձեր մաղերը, ձեր այտերը, երբ դրանք պատահաբար պատուհանին մոտ են լինում, իսկ դա պետք է երկրպագել:

Ռոզան իր այտը մոտեցրեց վանդակներին, սակայն ոչ թե պատահաբար, այլ դիտավորյալ. երիտասարդի շրթունքներն ազահորեն հպվեցին աղջկա այտին:

— Դե ինչ, եթե ուղում եք, ես ծաղիկը կկտրեմ,— ասաց Ռոզան:

— Օ՛, ո՛չ, ո՛չ. հենց որ ծաղկի, Ռոզա, դրեք մի ստվերոտ տեղ և հենց նույն վայրկյանին, հենց նույն վայրկյանին ուղարկեք Հաառլեմ, և ծաղկագործների ընկերության նախագահին հայտնեք, որ մեծ, սև կակաչը ծաղկել է: Հաառլեմը հեռու է, գիտեմ, սակայն դուք փողով մի սուրհանդակ կգտնեք: Ռոզա, դուք փող ունե՞ք:

Ռոզան ժպտաց:

— Օ՛, այո՛,— ասաց նա:

— Կբավարարի՞,— հարցրեց Կոռնելիուսը:

— Ես երեք հարյուր ֆլորին ունեմ:

— Օ՛, եթե դուք երեք հարյուր ֆլորին ունեք, Ռոզա, ուրեմն, դուք չպետք է սուրհանդակ ուղարկեք, ինքներդ պետք է գնաք Հաառլեմ:

— Սակայն այդ ժամանակ ծաղիկը...

— Օ՛, ծաղիկը պետք է ձեզ հետ վերցնեք, իմացեք, որ ոչ մի բույս չպետք է բաժանվեք ծաղկից:

— Սակայն նրանից չբաժանվելով, ես ձեզանից եմ բաժանվում, պարոն Կոռնելիուս,— տխուր ասաց Ռոզան:

— Ա՛յ, այդ ճշմարիտ է, իմ սիրելի, իմ թանկագին Ռոզա: Աստված իմ, ինչ շար են մարդիկ: Ես նրանց ի՛նչ եմ արել, որ ինձ ազատությունից զրկել են: Դուք ճի՛շտ եք, Ռոզա, առանց ձեզ ես չե՛մ կարող ապրել: Դե, ինչ, դուք որևէ մեկին Հաաուլեմ կուղարկեք, ահա և բոլորը. բացի այդ, այդ հրաշքը այնքան մեծ է, որ արժե, որպեսզի նախագահն ինքը նեղություն կրի ու անձամբ գա Լեռնային՝ կակաչը տեսնելու:

Հետո նա հանկարծ կանգ առավ և դողացող ձայնով ասաց.

— Ռոզա, Ռոզա, իսկ եթե կակաչը սև չլինի՞:

— Դե ինչ, դրա մասին դուք վաղը կամ վաղը չէ մյուս օրը կիմանաք:

— Սպասել մինչև երեկո, որպեսզի դրա մասին իմանալ, Ռոզա: Ես անհամբերությունից կմեռնեմ: Ձե՛նք կարող արդյոք մի որևէ պայմանական նշան սահմանել:

— Ես ավելի լավ միջոց դիտեմ:

— Ի՛նչ միջոց:

— Եթե ծաղիկը գիշերը ծաղկի, ես կգամ. ես ինքս կգամ, որպեսզի այդ մասին հայտնեմ: Եթե ցերեկը ծաղկի, ես հորս առաջին և երկրորդ այցելությունների միջև ձեր դռան առջևից կանցնեմ և դռան կամ պատուհանի արանքով մի գրություն կխցկեմ ներս:

— Այդպե՛ս, այդպե՛ս, Ռոզա, ձեր մի խոսքը, որ տեղեկություն կտա դրա մասին, ինձ համար կրկնակի երջանկություն կլինի:

— Ահա արդեն ժամը տառն է, ես պետք է հեռանամ:

— Այո՛, այո՛, Ռոզա, գնացեք:

Ռոզան հեռացավ վշտացած: Կոռնելիուսը նրան համարյա թե վռնդեց: Ճիշտ է, նա այդ արեց միայն այն բանի համար, որպեսզի Ռոզան կարողանա հետևել սև կակաչին:

Կակաչը ծաղկեց

Կոռնելիուսն անցկացրեց շատ հաճելի, սակայն միա-
ժամանակ շատ անհանգիստ գիշեր: Ամեն վայրկյան նրան
թվում էր, թե իրեն կանչում է Ռոզայի քնքուշ ձայնը: Նա
հանկարծակի արթնանում էր, վազում դեպի դուռը, դեմքը
հպում պատուհանին, սակայն պատուհանի մոտ ոչ ոք չկար,
միջանցքը դատարկ էր:

Ռոզան նույնպես քնած չէր, սակայն նա Կոռնելիուսից
երջանիկ էր. նա կակաչին էր հետևում: Նրա առջև, նրա աչ-
քերի առաջ դրված էր այդ ալնիվ ծաղիկը, հրաշքներից
հրաշքը, որը ոչ միայն մինչև այդ գոյություն չունեի, այլև
համարվում էր անհասանելի մի բան:

Ի՞նչ կասի աշխարհը, եթե իմանա, որ սև կակաչը ծաղ-
կել է, որ գոյություն ունի և աճեցրել է վան Բեռլեն, ինչ-որ
մի բանտարկյալ:

Ինչպիսի՞ վճռականություն մը Կոռնելիուսը կ'ունդեր այն
մարդուն, որը կակաչի փոխարեն նրան ազատություն կ'սոս-
տանար:

Հաջորդ օրն իր հետ ոչ մի նորություն չբերեց: Կակաչը
դեռևս չէր ծաղկել:

Օրն անցավ այնպես, ինչպես գիշերը:

Գիշերը եկավ և հայտնվեց Ռոզան, ուրախ ու թեթև,
ինչպես թռչուն:

— Դե, ի՞նչ կա, — հարցրեց Կոռնելիուսը:

— Ամեն ինչ հիանալի է գնում: Այս գիշեր, անկասկած,
ձեր կակաչը կ'ծաղկի:

— Եվ կ'իսի սև գույնի՞:

— Սև, ինչպես ածուխը:

— Առանց որևէ այլ բծի՞:

— Առանց որևէ բծի:

— Օ, ուրախություն: Ռոզա, ես ամբողջ գիշերն անց
եմ կացրել սկզբում ձեր մասին երազելով...

Ռոզան մի շարժում արեց, որր անվստահություն էր արտահայտում:

— Հետո այն մասին, թե մենք ինչպե՞ս պետք է վարվենք:

— Ինչպե՞ս:

— Ինչպե՞ս: Ես որոշեցի: Հենց որ կակաչը կծաղկի, հենց որ մենք կհամոզվենք, որ սև է, դուք իսկույն լեթ պետք է սուրհանդակ գտնեք:

— Եթե հարցը միայն դրանում է, ապա արդեն սուրհանդակ գտել եմ:

— Սուրհանդակ, որին կարելի է վստահե՞լ:

— Սուրհանդակ, որի համար ես պատասխանատու եմ: Իմ երկրպագուներից մեկը:

— Հուսով եմ, որ դա Յակոբը չէ:

— Ոչ, հանդստացեք. դա մի նավաստի է Լեշտեյնից, մի քաջ տղա, քսանհինգ-քսանվեց տարեկան:

— Օ՛, գրո՛ղը տանի:

— Հանգի՛ստ եղեք,— ծիծաղելով ասաց Ռոզան,— նա դեռ չի հասել ձեր նշանակած տարիքին՝ քսանվեցից քսանութ տարեկանի:

— Մի խոսքով, դուք գտնում եք, որ այդ երիտասարդի վրա կարելի՞ է հույս դնել:

— Այնպես, ինչպես ինձ վրա: Նա իրեն նավակից վաալը կամ Մասսը կնետի, եթե միայն կամենամ:

— Դե լավ, Ռոզա, տասը ժամից այդ տղան Հաաուլեմում կլինի: Դուք ինձ թուղթ ու մատիտ կամ ավելի լավ կլինի թանաք ու գրիչ տաք, ես կգրեմ, սակայն, ավելի լավ է ինքներդ գրեք. եթե ես գրեմ, ո՛վ գիտե ձեր հոր նման ինչե՞ր կասկածեն: Դուք գրեք ծաղկագործների ընկերության նախագահին, և ես համոզված եմ, որ կգա:

— Իսկ եթե նա դանդաղի՞:

— Ենթադրենք, թե նա դանդաղի մե՛կ օր, նույնիսկ երկո՛ւ օր: Սակայն դա անհնար է. կակաչների սիրահարը ոչ մի ժամ, ոչ մի րոպե, ոչ մի վայրկյան չի հապաղի և իսկույն լեթ ճանապարհ կընկնի, որպեսզի տեսնի աշխարհի:

ութերորդ հրաշալիքը¹։ Սակայն, ինչպես ես ասացի, թող նա ուշանա մեկ օր, երկու օր, միևնույն է, կակաչը դեռևս կպահպանի իր ամբողջ շքեղութունը։ Երբ նախագահը տեսնի կակաչը, երբ նա այդ արձանագրի, ամեն ինչ վերջացած կլինի, դուք ձեզ մոտ կպահեք արձանագրության սլատճենը, իսկ կակաչը կհանձնեք իրեն։ Ա՛խ, Ռոզա, եթե դուք կարողանայիք անձամբ տանել, ապա այն միայն իմ ձեռքից ձեր ձեռքը կանցնեք։ Սակայն դրանք երազներ են, որոնց չպետք է ենթարկվել,— հոգոց հանելով շարունակեց Կոռնելիուսը,— օտար աչքերը կտեսնեն, թե ինչպես կթառամի։ Եվ որ կարեւորն է, Ռոզա, նախագահից առաջ ծաղիկը ո՛չ ոք չպետք է տեսնի։ Աստված իմ, եթե որևէ մեկը տեսնի, անկասկած, կգողանա։

— Օ՛հ։

— Դուք չէի՞ք արդյոք, որ ասում էիք, թե շատ եք վախենում Յակոբից։ Մեկ ֆլորինը զողանում են, չէ՞, իսկ ինչո՞ւ չգողանալ հարյուր հազար ֆլորինը։

— Ես կպահպանեմ, հանգիստ եղեք։

— Իսկ չի՞ կարող պատահել, որ մինչ դուք այստեղ եք, կակաչը արդեն ծաղկել է։

— Այդ քմահաճ ծաղկից սպասելի է,— ասաց Ռոզան։

— Եթե դուք գնաք ձեր սենյակը և տեսնեք, որ ծաղկե՞լ է։

— Հետո ի՞նչ։

¹ Աշխարհի յոթ հրաշալիքներ հնում կոչվում էին յոթ առավել փառաբանված ճարտարապետության ու քանդակագործության կոթողները. եգիպտական փարավոնների բուրգերը, Շամիրամի առասպելական կախված ալգիները, Աֆրոդիտի տաճարը, զահի վրա նստած Զևսի արձանը՝ գործ Ֆիդիասի (V դ. մ. թ. ա.), Մավզոլ կայսեր դամբարանը Հալիկառնասում, այստեղից էլ՝ «մավզոլեյ» բառը, Հռոդոսյան Կոլոսը (պղնձե արձան՝ 72 մետր բարձրությամբ, որը, ըստ ավանդության, կանգնած էր Հռոդոսի նավահանգստի մուտքի մոտ), Ալեքսանդրիայում մ. թ. ա. III դարում կանգնեցված 180 մետր բարձրությամբ փարոս-աշտարակը։ «Աշխարհի ութերորդ հրաշալիքը» արտահայտությունը օգտագործվում է կոնկրետ իմաստով, ցանկանալով ընդգծել արվեստի տվյալ ստեղծագործության անսովոր գեղեցկությունը։

— Ա՛խ, Ռոզա, եթե դուք գտնեք ծաղկած, մի՛ մոռա-
նաք, որ առանց ոչ մի բույսի կորցնելու, իսկույն կեթ պետք
է ղգուշացնել նախագահին:

— Եվ ղգուշացնել ձեզ: Այո՛, ևս հասկանում եմ:—
Ռոզան խոր հոգոց հանեց, սակայն առանց դառնանալու,
նման այն կանանց, որոնք սկսում են հասկանալ կամ էլ ըն-
տեղանալ սիրելի մարդու թուլություններին:

— Ես վերադառնում եմ կակաշի մոտ, պարոն վան
Քեռլե. հենց որ ծաղկի, դուք տեղյակ կապահվեք, հենց որ դուք
տեղեկանաք, սուրհանդակը կմեկնի:

— Ռոզա, Ռոզա, ես չգիտեմ, թե երկրային կամ երկ-
նային ուրիշ էլ ինչ գանձի հետ ձեզ համեմատեմ:

— Համեմատեցեք ինձ սև կակաշի հետ, պարոն Կոռնե-
լիուս, և ես շատ շոյված կլինեմ, երգվում եմ ձեզ: Ուրեմն,
հրաժեշտ եմ տալիս, պարոն Կոռնելիուս:

— Ո՛չ, ասացեք ցտեսություն, բարեկա՛մս:

— Ցտեսություն, բարեկամս,— ասաց Ռոզան մի քիչ
մխիթարված:

— Ասացեք՝ իմ սիրելի բարեկամ:

— Իմ բարեկամ...

— Սիրելի, Ռոզա, աղաչում եմ ձեզ, սիրելի, սիրելի,
այնպես չէ՞:

— Այո, սիրելի, սիրելի,— կրկնում էր Ռոզան անհուն
երջանկությունից դողալով:

— Դե, Ռոզա, քանի որ դուք ասացիք «սիրելի», ասա-
ցեք նույնպես՝ «չափից դուրս երջանիկ», ասացե՛ք «երջա-
նիկ», որովհետև ոչ ոք դեռևս երկրի երեսին ինձ նման եր-
ջանիկ չի եղել: Ինձ միայն մի բան է պակասում, Ռոզա:

— Ի՞նչ:

— Ձեր աշտիկը, ձեր քնքուշ աշտիկը, ձեր վարդագույն
աշտիկը, ձեր թավշյա աշտիկը: Օ՛, Ռոզա, ձեր բարի կամքով
և ոչ թե պատահաբար, Ռոզա:

Բանտարկյալը հառաչանքով վերջացրեց իր խնդիրքը:
Նա հանդիպեց երիտասարդ աղջկա շրթունքներին, սակայն
ոչ պատահաբար: Ռոզան փախավ:

Կոռնելիուսն ուրախությունից ու երջանկությունից շնչա-

հեղձ էր լինում: Նա բացեց պատուհանը և խնդությամբ լեցուն սրտով սկսեց դիտել պարզ երկինքը, լուսինը, արծաթին տվող երկու գետերը, որոնք հոսում էին բլուրներից այն կողմ:

Թշվառ հիվանդն առողջացել էր. խեղճ բանտարկյալն իրեն զգում էր ազատության մեջ:

Գիշերվա մի մասը Կոռնելիուսը անցկացրեց իր վանդակապատ պատուհանի մոտ, իր հինգ զգայարանները կենտրոնացրած մեկ, ավելի շուտ՝ երկուսի մեջ՝ լսողության ու տեսողության:

Նա հայում էր երկնքին, ունկնդրում էր հողին:

Այնուհետև ժամանակ առ ժամանակ հայացք նետելով միջանցքի կողմը, նա ասում էր.

— Այնտեղ Ռոզան է, Ռոզան, որն ինձ նման չի քնած, ինձ նման սպասումի մեջ է: Այնտեղ Ռոզայի աչքերի տուփ խորհրդավոր ծաղիկն ապրում է, բացվում ու ծաղկում: Գուցե հենց այս րոպեին Ռոզան իր տաք, քնքուշ մատներով բռնել է կակաչի ցողունը: Գուցե հիմա նա իր շրթունքներով հպվել է ծաղկի կիսաբաց բաժակին: Զգույշ դիպիր նրան, Ռոզա. Ռոզա, քո շրթունքներն այրվում են:

Այդ վայրկյանին հարավում բոցավառվեց մի աստղ, կտրեց ամբողջ հորիզոնը, հասավ մինչև բերդ և ընկավ Լեհշտեյնի վրա:

Կոռնելիուսը ցնցվեց:

— Ա՛խ, — ասաց նա, — երկինքն իմ ծաղկին հոգի է առաքում:

Կարծես թե նա գուշակել էր. համարյա այդ նույն վայրկյանին բանտարկյալը միջանցքում լսեց թեթև, սիլֆիդները¹ հիշեցնող, քայլերի ձայն և թռչունի թևերի թափահարումը հիշեցնող շրջազգեստի շրշյուն. մի շատ ծանոթ ձայն ասում էր.

— Կոռնելիուս, բարեկամս, իմ սիրելի բարեկամ, իմ երջանիկ բարեկամ, շո՛ւտ, շո՛ւտ:

1. Սիլֆիդներ — միջնադարյան ավանդություններում՝ օդում սավառնող բարի հոգիներ:



Կոռնելիուսը մի ոստյունով հասավ պատուհանին: Այս անգամ նրա շրթունքները նորից հանդիպեցին Ռոզայի շրթունքներին, որը համբուրելով շնչում էր նրան.

— Նա ծաղկե՛լ է: Սև է: Այստեղ է:

— Ինչպե՞ս թե այստեղ է,— բացականչեց Կոռնելիուսը՝ շրթունքները հեռացնելով աղջկա շրթունքներից:

— Այո՛, այո՛, այս մեծ երջանկության համար արժե վտանգի ենթարկվել: Ահա՛, նայեցե՛ք:

Եվ նա մի ձեռքով բարձրացրեց լապտերն ու մոտեցրեց պատուհանին, իսկ մյուս ձեռքով բարձրացրեց ու պատուհանին մոտեցրեց սքանչելի կակաչը:

Կոռնելիուսը ճշաց, նրան թվաց, թե ինքը կորցնում է գիտակցությունը:

— Օ՛, աստված իմ, աստված իմ,— շնչաց նա,— այս երկու ծաղիկները, որ ծաղկում են իմ խցի պատուհանի առջև՝ իմ անմեղության և իմ բանտարկության պարզեն են:

— Համբուրեք նրան,— ասաց Ռոզան, — ես էլ հենց նոր համբուրեցի:

Կոռնելիուսը շունչը պահած, ղզուշությամբ, շրթունքներով դիպավ ծաղկին. և երբեք ոչ մի կնոջ համբույր, նույնիսկ Ռոզայի համբույրը, այդքան խոր չէր թափանցել հոգու մեջ:

Կակաչը սքանչելի էր, հրաշալի, հոյակապ. ցողունը տասնութ դյույմ բարձրություն ուներ: Ուղղածիզ վեր էր բարձրանում երկու կանաչ, հարթ ու նետի նման ուղիղ տերևների միջով: Ծաղիկն ամբողջովին սև էր և սաթի նման փայլում էր:

— Ռոզա,— շնչահեղձ լինելով ասաց Կոռնելիուսը,— ոչ մի ըոպե չպետք է կորցնել, հարկավոր է նամակ գրել:

— Արդեն գրված է, իմ սիրելի Կոռնելիուս,— ասաց աղջիկը:

— Ծձմարի՞տ:

— Մինչ կակաչը բացվում էր, ես գրում էի, քանի որ ոչ մի ըոպե չէի ուզում կորցնել: Միայն թե նայեք ու ասեք, արդյոք ճիշտ եմ գրել:

Կոռնելիուսը վերցրեց նամակը, գրված մի ձեռագրով, որը Ռոզայի առաջին գրությունից հետո նկատելի լավացել էր, և կարդաց:

«Պարոն նախագահ, սև կակաչը, ամենայն հավանականությամբ, տասը ըոպեից հետո կծաղկի: Իսկույն ևեթ, հենց որ ծաղկի, ձեզ մոտ մարդ կուղարկեմ, որպեսզի խնդրի ձեզ՝ անձամբ գալու Լեհշտեյնի բերդը: Ես բանտապահ Գրիֆուսի աղջիկն եմ և իմ հոր բանտարկյալների նման համարյա

թե ես էլ եմ բանտարկված: Այդ պատճառով չեմ կարող գալ և ինքս չեմ կարող բնության այդ հրաշալիքը բերել ձեզ մոտ: Ահա թե ինչու համարձակվում եմ խնդրել ձեզ, որ ինքներդ անձամբ գաք:

Իմ ցանկությունն է, որ կոչվի *Rosa Barlaensis*.

Մաղիկը բացվեց: Բռնորովին սև է... Եկե՛ք, պարոն նախագահ, եկե՛ք... Պատիվ ունեմ ձեր խոնարհ աղախինը լինելու՝ Ռոզա Գրիֆուս»:

— Այդպե՛ս, այդպե՛ս, սիրելի Ռոզա, սա հրաշալի նամակ է: Ես այսպիսի պարզությամբ չէի կարող գրել: Համագումարում դուք կտաք բոլոր այն տեղեկությունները, ինչ որ ձեզանից կպահանջեն: Այն ժամանակ կիմանան, թե ինչպես է մշակվել ու խնամվել կակաչը, ինչքա՛ն անքուն գիշերներ, երկյուղ ու անհանգստություն է պատճառել: Դե, իսկ հիմա, Ռոզա, ոչ մի բույս մի կորցրեք: Սուրհանդա՛կ, սուրհանդա՛կ:

— Ինչպե՞ս է նախագահի անունը:

— Տվեք, ես հասցեն գրեմ: Օ՛հ, նա շատ հայտնի մարդ է: Դա պարոն Սիստենսն է, Հաառլեմի քաղաքագլուխը: Տվեք, Ռոզա, ավեք,— և Կոռնելիուսը նամակի վրա դողացող ձեռքերով գրեց. «Պարոն Պետերս վան Սիստենսին, քաղաքագլխին և Հաառլեմ քաղաքի ծաղկագործների ընկերության նախագահին»:

— Իսկ հիմա, Ռոզա, դնացե՛ք, գնացե՛ք,— առաց Կոռնելիուսը,— հանձնվեք բախտի կամքին, որը մինչ հիմա հովանավորում էր մեզ:

23

Նախանձոտը

Իրոք որ այդ խեղճ երիտասարդները բախտի հովանավորության կարիքը շատ էին զգում: Դեռ երբեք նրանց այդպիսի վտանգ չէր սպառնացել, ինչպես այդ ժամանակ, երբ այդքան վստահ էին իրենց երջանկության մեջ:

Մենք չենք կասկածում մեր ընթերցողների գուշակելու ունակությունների մեջ այնքան, որպեսզի հավատացած չլի-

նենք, թե նրանք գլխի չեն բնկել այն, որ մեր ծեր բարեկամ, կամ ավելի ճիշտ՝ չարակամ Յակոբը ոչ այլ ոք էր, եթե ոչ ինքը՝ Իսահակ Բոքստելը:

Ընթերցողը, իհարկե, գլխի է բնկնում, որ Բոքստելը Բյուլտենհոֆից եկավ Լեեշտենյն իր կրքերի ու ատելության առարկայի հետևից՝ սև կակաչի և վան Բեռլեի հետևից:

Այն, որը բացահայտվեց կամ, համենայն դեպս, ենթադրվեց Բոքստելի կողմից երեք սոխուկների գոյության և վերջիններիս վերաբերյալ դիտավորությունների մասին, ոչ ոք, բացի կակաչների սիրահարից, այն էլ նախանձոտ սիրահարից, չէր կարող ենթադրել: Մենք տեսանք, որ վերջինիս բախտը ավելի շուտ Յակոբ, քան Բոքստել անվան տակ ավելի շուտ բանեց և նա բարեկամացավ Գրիֆուսի հետ: Օգտվելով նրանց հյուրընկալությունից, մի քանի ամիս էր արդեն, ինչ Բոքստելը ծեր բանտապահին խմեցնում էր ամենալավ օղին, որը հնարավոր էր ձեռք բերել Թեքստելից մինչև Անտվերպեն ընկած ամբողջ շրջակայքում. Բոքստելը բթացրել էր Գրիֆուսի կասկածները, իսկ ծեր Գրիֆուսը շատ կասկածոտ էր. նա բթացրել էր, ասում ենք, Գրիֆուսի կասկածները նրանով, որ վերջինիս համոզել էր, թե ինքը նպատակ ունի ամուսնանալ Ռոդայի հետ:

Բոքստելը միաժամանակ շոյում էր բանտապահի ինքնասիրությունը և նրա հայրական հպարտությունը: Նա շոյում էր բանտապահի ինքնասիրությունը նրանով, որ բանտարկյալ գիտնականին, որին Գրիֆուսը պահում էր փականքի տակ, ներկայացնում էր ամենամոգայլ գույներով, որպես մեկը, որը հարաբերության մեջ էր մտել սատանայի հետ և նպատակ էր դրել դրանով վնասել նորին մեծություն Օրանի արքայազնին:

Սկզբում Բոքստելը Ռոդայի մոտ նույնպես հաջողություն ուներ և ոչ թե այն պատճառով, որ աղջիկը նրա նրկատմամբ համակրանք էր տաժում, երբեք Յակոբը Ռոդային շատ դուր չի եկել, սակայն նա այնքան շատ էր խոսում դեպի աղջիկն ունեցած իր բոցավառ սիրո, նրա հետ ամուսնանալու իր բուռն ցանկության մասին, որ սկզբում աղջկա մեջ ոչ մի կասկածանք չհարուցեց:

Մենք տեսանք, թե ինչպես Ռոզային այգում անդգուշ
հետապնդելով՝ նա իրեն մատնեց, և ինչպես Կոռնելիուսի
նապոյային երկյուղը երկու երիտասարդներին ստիպեց
վելի զգուշ լինել:

Սակայն բանտարկյալին հատկապես անհանգստաց-
եց, մեր ընթերցողը հավանաբար կհիշի, այն անդուսպ
արկությունը, որը համակել էր Յակոբին, երբ վերջինս իմա-
նել էր, որ Գրիֆուսը տրորել է սոխուկը:

Այն ժամանակ այդ բարկությունը շատ մեծ էր, քանի որ
Բոքստելը կասկածելով հանդերձ, որ Կոռնելիուսը երկրորդ
ոխուկն էլ պետք է ունենա, դրանում լրիվ համոզված չէր:
Հենց այդ ժամանակ էլ նա սկսեց Ռոզային հետևել. հետա-
յունդում էր նրան ոչ միայն այգում, այլև միջանցքում: Սա-
այն, քանի որ միջանցքում նա հետևում էր մթության մեջ
բոբիկ ոտքերով, ապա նրան ոչ ոք չէր տեսնում ու չէր
սում, բացառությամբ այն մեկ անգամի, երբ Ռոզային
վազ, որ ինքը սանդուղքների գլխին սովերի պես ինչ-որ
ան տեսավ:

Սակայն միևնույն է, արդեն ուշ էր. Բոքստելը հենց իր՝
անտարկյալի բերանից լսեց, որ գոյություն ունի նաև երկ-
որդ սոխուկը:

Հիմարացած Ռոզայի խորամանկությունից, որը ձևաց-
ել էր, թե սոխուկը տնկում է հողի մեջ և, համոզվելով, որ
այդ կատակերգությունը խաղացվել էր իրեն մերկացնելու
պատակով, Բոքստելը կրկնապատկեց իր զգուշությունը և
ործի դրեց իր ամբողջ խորամանկությունը, որպեսզի իր հե-
տապնդումների ժամանակ աննկատ մնա: Նա տեսավ, թե
ինչպես Ռոզան հոր խոհանոցից իր սենյակը բերեց մի մեծ
ավել կճուճ:

Նա տեսավ, թե ինչպես Ռոզան լվանում է իր հողոտված,
պիտակ ձեռքերը, որոնցով նա, ըստ երևույթին, հունցել ու
լատրաստել էր կակաչի համար ընտրած ամենալավ հողը:

Վերջապես, նա Ռոզայի պատուհանների ուղիղ դիմացը
հեղավորված շենքի տանիքում վարձեց մի փոքրիկ սենյակ:
Նյութեղ նա գտնվում էր այնպիսի հեռավորության վրա, որ-
տեղից նրան սովորական աչքով չէին տեսնի, սակայն այդ,

հռավորութիւնը բավարար էր, որպեսզի ինքը՝ Բոքստելը, լիտակով ղինված, կարողանար հետիւ այն ամենին, ինչ տեղի էր ունենում Հեշտեյնում, Ռոզայի սենյակում, այնպես, ինչպես Դորդրեխտում հետևում էր Կոռնելիուսի լաբորատորիայում կատարվող ամեն շարժմանը:

Բոքստելի տեղափոխման ժամանակից երեք օր էլ չէր սնցել, երբ նրա կասկածները լրիվ հաստատվեցին:

Առավոտվանից, հենց արևը ծագելու հետ միասին, Կալե կճուճը դրվում էր պատուհանին, իսկ Ռոզան Միրիսի և Մետսյուի՝ հմայիչ կանանց նման նույնպես երևում էր լայրի խաղողի ու ցախկեռասի առաջին կանաչող տերևներով ծածկված պատուհանի առջև:

Այն հայացքից, որով Ռոզան նայում էր Կալե կճուճին, Բոքստելը կարող էր ենթադրել, թե ինչպիսի թանկարժեք արստութիւն է պարունակում: Կալե կճուճում տնկված էր րկրորդ սոխուկը, այսինքն՝ բանտարկյալի վերջին հույսը:

Եթե գիշերները ցուրտ էին լինում, Ռոզան կճուճը վերցնում էր պատուհանից: Նա այդ անում էր համաձայն Կոռնելիուսի ցուցումների, որը վախենում էր սոխուկի սառչելուց:

Երբ արևը չափազանց տաք էր լինում, Ռոզան առավոտան ժամը տասնմեկից մինչև կեսօրվա երկուսը Կալե կճուճը պատուհանից վերցնում էր: Դա նույնպես արվում էր Կոռնելիուսի ցուցումների համաձայն, որը վախենում էր կճուճի մեջ հողի չափազանց չորանալուց:

Երբ ծաղկի ցողունը երևաց հողի երեսին, Բոքստելն արեն վերջնականապես համոզվեց. դեռևս մի դյույմ բարձրության էլ չէր հասել, երբ հեռադիտակի օգնութեամբ այդ ախանձոտ մարդու բոլոր կասկածները փարատվեցին:

Կոռնելիուսի մոտ երկու սոխուկներ կային, որոնցից րկրորդը նա վստահել էր Ռոզայի սիրուն ու խնամքին: Ոկու երիտասարդների սերը Բոքստելի համար արդեն աղտնիք չէր:

1. Գաբրիել Մետսյու (1629—1667) — հոլանդական նշանավոր նկարիչ:

Այսպես, ուրեմն, պետք է միջոց գտնել և ձեռք բերել Կոռնելիուսի սիրո ու Ռոզայի խնամքի տակ գտնվող այդ առարկան: Միայն թե դա հեշտ խնդիր չէր:

Ռոզան այնպես էր պահպանում իր սոխուկը, ինչպես մայրը կպահպանի իր զավակին. ոչ, ավելի խնամքով. նման այն աղավնուն, որը պահպանում է իր ձագուկներին: Ամբողջ օրերով Ռոզան չէր հեռանում իր սենյակից և, որ ավելի դարմանալի էր, Ռոզան երեկոներն էլ չէր հեռանում իր սենյակից:

Յոթն օր շարունակ Բոքստելն իզուր լրտեսում էր Ռոզայի սենյակը, սակայն Ռոզան չէր հեռանում:

Դրանք այն յոթ օրերն էին, որոնք Կոռնելիուսին այնպես դժբախտ էին դարձրել, զրկելով նրան տեղեկություններից ինչպես Ռոզայի մասին, այնպես էլ կակաչի մասին: Սակայն չէ՞ որ Ռոզան անընդհատ Կոռնելիուսից խոսված չի մնա: Կակաչը փախցնելն ավելի դժվար էր, քան Իսահակը ենթադրում էր:

Մենք ասում ենք փախցնելը, որովհետ Իսահակը որոշել էր պարզապես գողանալ կակաչը: Եվ քանի որ կակաչի աճեցնելը մեծ գաղտնիք էր, քանի որ երիտասարդները նրա գոյություն փաստը խնամքով թաքցնում էին, պարզ է, որ ավելի շուտ Բոքստելին, այդ հայտնի ծաղկագործին կհամարեին կակաչի աճեցնող, քան ինչ-որ մի երիտասարդ աղջկա, որին անհայտ են ծաղկագործություններից, և կամ մի բանտարկյալի, որը պետական դավաճանության համար դատապարտված է և բանտում գտնվելով՝ չէր կարողանա իր իրավունքները սլաշտպանել: Բացի այդ, քանի որ կակաչի տերը փաստորեն Բոքստելը կդառնա, իսկ երբ գործը վերաբերում է տնային գործածության իրերին, և, ընդհանրապես, շարժական գույքին, փաստական տիրապետումը համարվում է սեփականության արպացույց, ասյա սլարդեն էլ, իհարկե, նա կստանա, իսկ կակաչն էլ փոխանակ անվանվելու Tulipa nigra Barlaensis կանվանվի Tulipa nigra Boxtellensis կամ Boxtella.

Պարոն Իսահակը դեռ չէր որոշել, թե այդ երկու անուններինց ո՞ր մեկը կտա սե կակաչին, բայց քանի որ դրանք երկուսն էլ միևնույն նշանակությունն ունեին, ապա այդ հարցը այնքան էլ կարևոր չէր:

Հիմնական հարցը կակաչի գողանալն էր:

Սակայն, որպեսզի Բոքստեիը կարողանար կակաչը գողանալ, պետք էր, որ Ռուփան ղուրս գար իր սենյակից: Դրա համար Իսահակը կամ Յակոբը, որը ձեռք ավելի հարմար է թվում, անկեղծ ուրախացավ, երբ համոզվեց, որ գիշերային ժամադրությունները նորից սկսվել են:

Ռողայի բացակայության առաջին օրերը Բոքստեին օգտագործեց նրա սենյակի դռներն ուսումնասիրելու համար:

Դուռը փակվում էր մի հասարակ փականքի երկու շրջումով, ոչ այնքան ամուր, և միակ բանալին գտնվում էր Ռողայի մոտ:

Սկզբում Բոքստեիի զլխում միտք ծագեց Ռողայի մոտից բանալին գողանալ, սակայն երիտասարդ աղջկա դրպանք մտնելը այնքան էլ հեշտ բան չէր, եթե նույնիսկ այդ հաջողվեր Բոքստեիին, այս բոլորից բացի, և թե Ռողան հայտնաբերեր բանալու կորուստը, նա խսկույն ևեթ կպատվիրեր այլ փականք, ղուրս չէր գա իր սենյակից այնքան ժամանակ, մինչև որ հին փականքը չփոխարինվեր նորով: Այդպիսով Բոքստեիի հանցագործությունը կմնար անհետևանք:

Ավելի լավ է փորձել մեկ այլ միջոց:

Նա հավաքեց մեծ թվով բանալիներ, ինչքան որ կարողացավ ձեռք բերել, և, մինչ Ռուփան ու Կոռնելիուսը երջանիկ ժամանակ էին անցկացնում պատուհանի մոտ, փորձեց դրանցով դուռը բացել: Բանալիներից երկուսը մտան փականքի մեջ. դրանցից մեկը մեկ պտույտ կատարեց անցքում, սակայն երկրորդի վրա կանդ առավ:

Նշանակում է այդ բանալին շատ հեշտությամբ կարելի էր հարմարեցնել:

Բոքստեիը բանալին պատեց մոմի բարակ շերտով և նորից մտցրեց փականքի մեջ: Այն արգելքը, որն առաջանում էր բանալու երկրորդ շրջանի ժամանակ, մոմի վրա թողեց իր հետքը:

Բոքստեիլին մնում էր միայն այդ մոմի հետքերով այդ-
տեղը մի բարակ, ածելու նման խարտոցով թևթև խարտո-
ցել: Երկու օրվա աշխատանքից հետո Բոքստեիլի բանալին
հեշտությամբ մտավ փականքի մեջ:

Ռոզայի դուռը հեշտությամբ բացվեց, և Բոքստեիլը իրեն
գտավ Ռոզայի սենյակում մենակ, երես առ երես կակաչի
հետ:

Բոքստեիլն իր առաջին հանցագործությունը կատարել էր
այն ժամանակ, երբ պարսպից անցել էր մյուս կողմը, որ-
պեսզի կակաչի սփռուկը հողից հանի, երկրորդ հանցագոր-
ծությունը այն էր, երբ մտել էր Կոռնելիուսի շրանոցը, եր-
րորդն արդեն այս էր, երբ կեղծ, սարքած բանալիով բացեց
Ռոզայի սենյակը և ներս մտավ: Մենք տեսնում ենք, թե
ինչպես նախանձը Բոքստեիլին հրում էր դեպի հանցանքի
ուղին:

Այսպես, ուրեմն, Բոքստեիլը երես առ երես մնաց կա-
կաչի հետ: Սովորական գողը կվերցնեք կճուճը, կդնեք թևի
տակ ու դուրս կգար: Սակայն Բոքստեիլը սովորական գող
չէր. նա մտածում էր: Գաղտնի լապտերի միջոցով ղննելով
կակաչը, նա գտավ, որ կակաչը դեռ բավականաչափ բաց-
ված չէ, որպեսզի հնարավոր լինի համոզվել, թե սև գույ-
նի է, չնայած բոլոր տվյալները հօգուտ դրա էին խոսում:

Նա խորհում էր այն մասին, որ եթե կակաչը սև չլինի
կամ էլ վրան որևէ մի բիծ ունենա, ապա նրա գողությունը
ապարդյուն կլինի:

Նա մտածում էր այն մասին, որ գողության լուրը կտա-
րածվի, և այն բանից հետո, ինչ տեղի էր ունեցել այգում,
գողության մեջ անպայմանորեն նրան կկասկածեն ու կսկսեն
փնտրել, և որքան էլ ինքը լավ թաքցրած լինի կակաչը, միև-
նույն է, կգտնեն:

Բոքստեիլը մտածում էր այն մասին, որ եթե նույնիսկ
իրեն հաջողվի կակաչը թաքցնել այնպես, որ ոչ ոք չկարո-
ղանա գտնել, ապա բոլոր այն տեղափոխությունները, որոնց
կակաչը կենթարկվի, կարող են վերջինիս վնասել: Նա մտա-
ծում էր, վերջապես, այն մասին, թե քանի որ ինքն արդեն Ռո-

զայի սենյակի բանալին ունի, ասլա ամենից ճիշտ կլինի, եթե սպասի մինչև կակաչի լրիվ բացվելը և բացվելուց մեկ ժամ առաջ կամ մեկ ժամ հետո, առանց մի վայրկյան անգամ ուշացնելու, ծաղկի հետ միասին մեկնի Հաաուլեմ, որտեղ ավելի շուտ, քան որևէ մեկը, կհասցնի կակաչի նկատմամբ իրավունքներ ներկայացնել: Եվ, եթե այդ ժամանակ որևէ մի կին կամ տղամարդ ինչ-որ իրավունքներ ներկայացնի ծաղկի նկատմամբ, ինքը նրան կմեղադրի գողության մեջ:

Դա լավ մտածված ծրագիր էր, և լրիվ արժանի իր հեղինակին:

Եվ ահա, ամեն երեկո, այն ժամանակ, երբ երիտասարդներն իրենց քաղցր պահն էին անցկացնում բանտի պատուհանի մոտ, Բոքստելը մտնում էր երիտասարդ աղջկա սենյակը, որպեսզի հետևի սև կակաչի բացվելուն:

Մեր նկարագրած վերջին երեկոն նա հենց այն է՝ ուղում էր մտնել սենյակ, սակայն, ինչպես տեսանք, երիտասարդ սիրահարները միայն մի երկու խոսք փոխանակեցին և կոռնելիուսը Ռոզային ուղարկեց կակաչին հետևելու:

Տեսնելով, որ Ռոզան դնալուց տասը ըոպե չանցած հտ եկավ, Բոքստելը հասկացավ, որ կակաչը կամ ծաղկել է և կամ ահա ուր որ է պետք է ծաղկի: Նշանակում է այդ գիշեր պետք է տեղի ունենային վճռական իրադարձություններ: Բոքստելը եկավ Գրիֆուսի մոտ՝ բերելով իր հետ երկու անգամ ավելի շատ օղի, քան սովորաբար բերում էր, այսինքն՝ յուրաքանչյուր դրոպանում մեկական շիշ:

Երբ Գրիֆուսը հարբի, Բոքստելը կդառնա ամբողջ բանտի լրիվ տերը:

Ժամը տասնմեկի մոտերքը Գրիֆուսը մեռածի նման հարբած էր. ժամը երկուսին Բոքստելը տեսավ, թե ինչպես Ռոզան դուրս եկավ իր սենյակից ու մեծ զգուշությամբ բռնած մի առարկա էր տանում: Դա, անկասկած, սև կակաչն էր, որը հենց նոր ծաղկել էր:

Սակայն ի՞նչ է պատրաստվում անելու: Մի՞թե ցանկանում է հենց հիմա ծաղիկը Հաաուլեմ տանել: Անհավատալի է, որ աղջիկը զիշերով ձեռնարկի այդպիսի մի ճանապարհ-

հորդություն: Գուցե նա տանում է Կոռնելիուսին ցույց տալու կակաչը: Դա հնարավոր է:

Բոքստեիլը բոբիկ, մատների ծայրերի վրա, հետևեց Ռոզալին:

Նա տեսավ, որ աղջիկը մոտեցավ պատուհանին: Նա չսեց, որ Ռոզան կանչեց Կոռնելիուսին:

Գաղտնի լապտերի լույսի տակ նա տեսավ բացված կակաչը, որն իրեն շրջապատող գիշերվա նման սև էր:

Նա լսեց, որ Ռոզան ու Կոռնելիուսը որոշեցին սուրհանդակ ուղարկել Հաադելմ: Նա տեսավ, թե ինչպես երիտասարդ մարդկանց շուրթերը մոտեցան իրար և աշնուհետև Կոռնելիուսը Ռոզալին ուղարկեց տուն:

Նա տեսավ, որ Ռոզան հանգցրեց գաղտնի լապտերը և ուղղվեց դեպի իր սենյակը:

Նա տեսավ, թե ինչպես աղջիկը մտավ իր սենյակը:

Աշնուհետև նա տեսավ, թե ինչպես մի տասը բոպեից հետո նա դուրս եկավ իր սենյակից ու խնամքով, բանալու կրկնակի պտույտով դուռը իր հետևից փակեց:

Ինչո՞ւ էր նա այդքան ժամանակ խնամքով դուռը կողպում: Որովհետև այդ դռան հետևում փակված էր սև կակաչը:

Բոքստեիլը, որը թաքնվելով մի հարկ վերև գտնվող աստիճանավանդակում՝ հետևում էր այդ ամենին, իր հարկից մի աստիճան ցած իջավ, հրե Ռոզան սկսեց իր հերթին սանդուղքներից իջնել:

Այսպիսով, երբ Ռոզան ձախ ոտքով թեթև իջնում էր սանդուղքի վերջին աստիճանին, Բոքստեիլը ավելի թեթև դիպչում նրա սենյակի դռանը:

Ձեռքում, ինչպես կարելի է գուշակել, նա բռնել էր կեղծ բանալին, որը նույնպիսի թեթևություն էր, ինչպես իսկական բանալին, բացեց Ռոզալի սենյակի դուռը:

Ահա թե ինչու մենք այս գլխի սկզբում ասացինք, որ երիտասարդ մարդիկ խիստ կարիք ունենին բախտի հովանավորությունը:

Ան կակաչը փոխում է իր տիրոջը

Կոռնելիուսը մնաց կանգնած այն տեղում, որտեղ որ Ռոզային հրաժեշտ տալու ժամանակ կանգնած էր, և աշխատում էր իր մեջ ուժ գտնել՝ տանելու համար իր կրկնակի երջանկությունը:

Անցավ կես ժամ:

Առաջին ճառագայթների թափանցիկ լույսն արդեն թափանցել էր Կոռնելիուսի խցից ներս, երբ հանկարծ նա վեր թռավ սանդուղքներով բարձրացող քայլերի աղմուկից ու գոչումից: Նույն վայրկյանին նա դեմ առ դեմ հանդիպեց Ռոզայի գունատ, սլալալված դեմքին:

Կոռնելիուսը վախից գունատվելով՝ հտ ընկրկեց:

— Կոռնելիո՛ւս, Կոռնելիո՛ւս, — ճշում էր նա՝ շնչահեղձ լինելով:

— Աստված իմ, ի՞նչ է պատահել, — հարցրեց բանտարկյալը:

— Կոռնելիո՛ւս: Կակա՛չը...

— Կակաչը ի՞նչ:

— Ես չգիտեմ ինչպե՞ս ասեմ ձեզ:

— Դե, խոսե՛ք, Ռոզա, խոսե՛ք:

— Մեղանից տարե՛լ են կակաչը: Գողացե՛լ են:

— Գողացե՛լ են: Տարե՛լ են, — գոռաց Կոռնելիուսը:

— Այո՛, — ասաց Ռոզան, հենվելով դռանը, որպեսզի չընկնի: — Այո՛, տարե՛լ են, գողացե՛լ են:

Եվ ուժերը դավաճանեցին նրան: Նա ընկավ ծնկների վրա:

— Սակայն այդ ինչպե՞ս պատահեց, — հարցրեց Կոռնելիուսը: — Պատմե՛ք ինձ, բացատրե՛ք...

— Օ՛, ես դրանում մեղք չունեմ, բարեկա՛մս:

Խեղճ Ռոզա, նա չհամարձակվեց ասել իմ սիրելի բարեկամ:

— Դուք ծաղիկը մենա՞կ էիք թողել, — տխուր ասաց Կոռնելիուսը:

— Միայն մեկ վայրկյան, որպեսզի գնայի մեր սուր-

հանդակի մոտ, որը մեղանից մի հինգ քայլի վրա է ապրում, վաալի ափին:

— Եվ այդ ընթացքում, չհետևելով իմ խորհուրդներին, դո՛ւք բանալին թողել էիք դռան փականքո՞ւմ, դժբախտ զավակս:

— Ո՛չ, ո՛չ, հենց դա էլ ինձ զարմացնում է. բանալին փականքի մեջ չէի թողել, ես ամբողջ ժամանակ պահում էի ձեռքիս մեջ, ամուր սեղմել էի, վախենալով թի կկորցնեմ:

— Այդ դեպքում ինչպե՞ս պատահեց:

— Ինքս էլ չգիտեմ: Նամակը տվեցի իմ սուրհանդակին. նա իմ ներկայությամբ մեկնեց: Ես վերադարձա, սենյակիս դուռը փակ էր, ներսում ամեն ինչ իր տեղում էր, բացի կակաչից, որը անհետացել էր: Ինչ-որ մեկը, ամենայն հավանականությամբ, ձեռք է բերել իմ բանալուց կամ էլ պատրաստել է:

Արցունքները խեղդում էին նրան, շունչը կտրվում էր:

Կոռնելիուսը ալլալված դեմքով, անշարժ կանգնած, համարյա թե անգիտակից վիճակում լսում էր նրան ու քրթմընջում.

— Գողացված է, գողացված է, գողացված է, ես կործանված եմ...

— Օ՛, պարոն Կոռնելիուս, խնայեցե՛ք, — գոռում էր Ռոզան: — Ես վշտից կմեռնե՛մ:

Այս սպառնալիքից հետո Կոռնելիուսը բռնեց պատուհանի վանդակից և կատաղորեն սեղմելով՝ բացականչեց.

— Մեզ կողոպտել են, Ռոզա, դա այդպես է, սակայն մենք չպետք է ընկճվենք: Ո՛չ: Դժբախտություներ շատ մեծ է, սակայն գուցե հնարավոր է ուղղել: Մենք գիտե՛նք գողին:

— Ավա՛ղ: Ես համոզված չեմ գրանում:

— Օ՛, իսկ ես համոզված եմ, ձեզ ասում եմ, որ դա սրիկա Յակոբն է: Մի՞թե մենք թույլ կտանք, Ռոզա, որ նա մեր աշխատանքի արդյունքը, մեր խնամքի, մեր սիրո առարկան տանի Հաաուլիմ: Ռոզա, պետք է հասնե՛լ նրա հետևից:

— Սակայն ինչպե՞ս անել, առանց հորս բացահայտելու մեր գործակցությունը: Ես, որ կախման մեջ գտնվող մի կին

եմ և, բացի այդ, նաև անփորձ, ինչպե՞ս կարող եմ այդ անել, մի բան, որը, երևի, դուք էլ չկարողանայիք անել:

— Բացե՛ք այս դուռը, Ռոզա, բացեք և կտեսնեք, թե ես ինչպես կանեմ այդ: Դուք կտեսնեք, ես կգտնե՛մ գողին: Կտեսնեք, որ ես կստիպեմ խոստովանել իր հանցանքը: Դուք կտեսնեք, թե նա ինչպե՞ս թողություն կխնդրի:

— Ավա՛ղ,— հեկեկալով ասաց Ռոզան,— ինչպե՞ս կարող եմ դուռը բանալ: Մի՞թե բանալի ունեմ: Եթե բանալին մոտս լիներ, մի՞թե դուք վաղուց արդեն աղատության մեջ չէիք լինի:

— Բանալիները ձեր հոր մոտ են, ձեր գարշելի հոր մոտ, որ արդեն իմ կակաչի առաջին սոխուկը ոչնչացրեց: Օ՛, ստոր արարած: Նա Յակոբի դավակիցն է:

— Սը՛ս, սը՛ս, աղաչում եմ, կամա՛ց:

— Օ՛, եթե դուք դուռը չբանաք,— կատաղած բղավեց Կոռնելիուսը,— ես վանդակը կկոտրեմ և բանտում ամենը, ինչ որ ձեռքիս տակ ընկնի, ջարդ ու փշուր կանեմ:

— Բարեկամս, խղճացե՛ք ինձ:

— Ես ասում եմ, Ռոզա, որ քա՛րը քարի վրա չեմ թողնի: Եվ թշվառը երկու ձեռքերով, որոնց ուժը նրա դայրույթից կրկնապատկվել էր, սկսեց մեծ աղմուկով դուռը ծեծել, առանց ուշադրություն դարձնելու իր ահարկու ձայնին, որը պտուտածև սանդուղքներով տարածվում էր ներքև:

Վախեցած Ռոզան իզուր էր ջանում հանգստացնել այդ ահեղ փոթորիկը:

— Զեղ ասում եմ, որ կսպանե՛մ այդ սրիկա Գրիֆուսին,— ոռնում էր վան Բեռլեն,— ձեզ ասում եմ, որ կթափե՛մ նրա արյունը, ինչպես նա թափեց իմ սև կակաչի արյունը:

Թշվառը սկսեց գիտակցությունը կորցնել:

— Կավ, լավ,— ասում էր հուզմունքից դողացող Ռոզան,— լավ, լավ, միայն թե հանգստացեք: Կա՛վ, ես կվերցնեմ բանալիները, ձեզ համար կբացեմ դուռը, միայն թե, իմ Կոռնելիուս, հանգստացեք:

Նա չվերջացրեց իր խոսքը. հանկարծակի լավող մրթմըրթոցը ընդհատեց աղջկան:



— Հայրս,— ճշաց Ռոզան:

— Գրիֆուս,— ոռնաց վան Բեռլեն:— Ա՛խ դու, ճիւղադ:

Այդ աղմուկի մեջ Գրիֆուսն աննկատ բարձրացել էր: Նա կոպիտ քաշեց իր աղջկա ձեռքից:

— Ա՛խ, դու կվերցնես իմ բանալինե՞րը,— դռնաց նա շարունթյունից խեղդվող ձայնով:— Ա՛խ, այդ սրիկան, այդ ճիւղաղը, այդ դավադիրը, որ կախաղանի է արժանի: Քո այդ Կոռնելիո՛ւսը: Ուրեմն դու պետական հանցագործի համախո՞հն ես: Լա՛վ:

Ռոզան հուսահատ ձեռքերը միահփուսեց:

— Ա՛հ,— շարունակում էր Գրիֆուսը, կատաղի ու զայրալից տոնից անցնելով հաղթողի սառը, ծաղրական

տոնի:— Ա՛, անմեղ պարոն ծաղկագործ: Ա՛, սիրելի պարոն գիտնական: Դուք ինձ կսպանեք, դուք կթափեք իմ արյունը: Շա՛տ լավ, ոչինչ ավելի լավ լինել չի կարող: Եվ իմ աղջկա համագործակցութ՜յամբ: Աստվա՛ծ իմ, նշանակում է հս ավաղակների որջում եմ: Դե լա՛վ: Այսօր ևեթ այդ բոլորի մասին կզեկուցվի պարոն պարետին, իսկ վաղը այդ մասին կիմանա նորին մեծութ՜յունն փոխարքան: Մեզ հայտնի են օրենքները: Վեցերորդ հոդվածում խոսվում է բանտում խռովութ՜յուն բարձրացնելու մասին: Մենք ձեզ, պարոն գիտնական, ցույց կտանք Բյուտենհոֆի երկրորդ շենքը, և այս անգամ դա շատ լավ շենք կլինի: Այո՛, այո՛, կրծեցեք ձեր

բռնունջքները, ինչպես վանդակն ընկած արջը, իսկ դուք, գեղեցկուհիս, աչքերով կերեք ձեր Կոռնելիուսին: Նախազգուշացնում եմ, աղավնյակներս, որ հիմա արդեն ձեզ չի հաջողվի նույն բարեհաջողութեամբ զբաղվել դավադրութեամբ: Ապա մի իջիր սենյակդ, անպիտան աղջիկ: Իսկ ձեզ, պարոն գիտնական, ցտեսություն, հանգիստ մնացեք, ցտեսություն:

Վախից ու հուսահատությունից խելքը կորցրած Ռոզան իր բարեկամին օգային համբույր ուղարկեց. այնուհետ, ամենայն հավանականութեամբ, անսպասելի մի միտք լուսավորեց նրա ուղեղը, նա նետվելով դեպի սանդուղքը, ասաց.

— Դեռ ամեն ինչ կորած չէ, իմ Կոռնելիուս, հույսդ դիր ինձ վրա:

Հայրը մրթմրթալով հետևեց աղջկան: Ինչ վերաբերում է թշվառ բանտարկյալին, ապա նրա ձեռքերը, որ ամուր սեղմել էին վանդակները, կամաց-կամաց թուլացան, նրա գլուխը ծանրացավ, աչքերը մթնեցին ու նա ամբողջ ծանրութեամբ տապալվեց իր խցի քարե հատակին, մրմնջալով.

— Գողացա՛ն: Ինձանից գողացա՛ն:

Այդ ժամանակաընթացքում Բոքստելը կակաչը փաթաթած լայն թիկնոցի մեջ, դուրս եկավ այն դռնակից, որն ինքը՝ Ռոզան էր բացել, իրեն նետեց կառքի մեջ, որը Հորկումում սպասում էր նրան. նա, իհարկե, իր բարեկամ Գրիֆուսին չնախազգուշացրեց իր այդքան հապճեպ մեկնելու մասին:

Իսկ հիմա, երբ մենք տեսանք, թե ինչպես նա կառքնստեց, հետևենք մինչև նրա ճանապարհորդութեան վերջը, եթե միայն ընթերցողը համաձայն է դրան:

Բոքստելը դանդաղ էր գնում. արագ ընթացքը կարող էր վնասել կակաչին:

Սակայն, վախենալով, որ այդ ընթացքով ինքը կուշանա, Բոքստելը Դեկֆտում պատվիրեց մի տուփ, որը պատած էր հրաշալի, թարմ մամուռով, և կակաչը տեղավորեց մեջը: Ծաղիկն ստացավ հանգիստ ու փափուկ տեղ, կառքըն արդեն առանց կակաչը վտանգելու, մեծ արագությամբ ապատ կարող էր սլանալ:

Հաջորդ օրվա առավոտյան Բոքստեյլը հոգնածությունից տանջված, սակայն հաղթանակած, հասավ Հաաուեմ և, որպեսզի գողության հատքերը թաքցնի, նա կակաչը տեղափոխեց մեկ այլ ամանի մեջ, իսկ կավե կճուճը ջարդեց և կտորները նետեց ջրանցքը: Այնուհետև նա ծաղկագործների ընկերության նախագահին նամակով հայտնեց, որ ինքը բոլորովին սև գույնի կակաչով ժամանել է Հաաուեմ և անվտանգ տեղ հասած ծաղիկով կանգ է առել մի հրաշալի հյուրանոցում:

Եվ այստեղ էլ նա սպասեց:

25

Նախագահ Վան Սիստենսը

Կոռնելիուսի մոտից հեռանալով, Ռոզան որոշում ընդունեց: Նա վճռեց կամ վերադարձնել Յակոբի գողացած կակաչը, կամ այլևս երբեք վան Բեուեի հետ չհանդիպել:

Նա տեսնում էր բանտարկյալի ամբողջ հուսախաբությունը, կրկնակի անբուժելի հուսախաբությունը. մի կողմից իրենց անխուսափելի բաժանումը, քանի որ Գրիֆուսն իրենց սիրո ու ժամադրությունների գաղտնիքը բացեց, մյուս կողմից՝ վան Բեուեի հույսերի կործանումը, որ նա յոթ տարի շարունակ փայփայել էր:

Ռոզան պատկանում էր այն կանանց թվին, որոնք մի դատարկ բանի համար հուսահատվում են, սակայն որոնք մեծ դժբախտության առջև մեծ դիմադրություն են ցուցաբերում և հենց դժբախտությունն էլ նրանց պայքարելու ուժ է ներշնչում: Աղջիկը մտավ իր սենյակը, վերջին անգամ նորից ստուգեց՝ համոզվելու, թե ինքը չի՞ սխալվում արդյոք, կակաչը ինչ-որ մի անկյունում չի՞ թաքցված, որտեղ ինքը չի նայել: Սակայն Ռոզան իզուր էր փնտրում. կակաչը չկար, կակաչը գողացել էին:

Ռոզան մի փոքրիկ կապոցի մեջ հավաքեց անհրաժեշտ իրերը, վերցրեց իր հավաքած երեք հարյուր ֆլորինը, որը

Նրա ամբողջ հարստությունն էր, փնտրեց ժանյակների մեջ ու հանեց թաքցրած երրորդ սոխուկը ու խնամքով պահեց կրծքի տակ, երկու անգամ փակեց իր սենյակը, որպեսզի իր փախուստը որքան հնարավոր է երկար ժամանակ անընկատ մնա և իջավ ցած: Նա բանտից դուրս եկավ նույն այն փոքրիկ դռնակից, որտեղից քիչ առաջ Բոքստեյն էր դուրս եկել, մտավ փոստի բակը և խնդրեց իրեն կառք տալ, սակայն այնտեղ միայն մեկ կառք կար, հենց այն, որ նախօրյակին վարձել էր Բոքստեյլը և այժմ սլանում էր Դեկֆտ տանող ճանապարհով:

Մենք ասում ենք «Դեկֆտ տանող ճանապարհով» ահա թե ինչու: Լեեշտեյնից Հաառլեմ գնալու համար հարկավոր էր մի մեծ շրջան կատարել. ուղիղ ճանապարհով այդ տարածությունը կրկնակի կարճանում էր: Սակայն ուղիղ ճանապարհով Հոլանդիայում միայն թուշոնները կարող են թուշել. Հոլանդիան ավելի, քան որևէ մեկ այլ երկիր, ծածկված է դետերով, առվակներով, ջրանցքներով ու լճերով:

Ռոզան ակամայից ստիպված էր ձի վարձել: Նրան վրստահեցին, որովհետև ձիու տերը գիտեր, որ Ռոզան բերդի պահապանի աղջիկն է:

Ռոզան հույս ուներ հասնել իր սուրհանդակի հետևից, որը մի լավ, ազնիվ տղա էր, և որին աղջիկը կվերցնեի իր հետ, նա և՛ պաշտպան, և՛ ուղեկցող կդառնար:

Նվ իրոք, դեռ մեկ մղոն չանցած՝ Ռոզան տեսավ տղային: Արագ ընթացքով նա քայլում էր գետի ափով՝ ձգվող ճանապարհով:

Աղջիկը խթանեց ձիուն ու հասավ տղային: Այդ ազնիվ տղան չնայած, որ չգիտեր իրեն հանձնարարված խնդրի կարևորությունը, սակայն այնպես արագ էր քայլում, որ թվում էր, թե նրան ամեն ինչ հայտնի է: Մի ժամվա ընթացքում նա անցել էր մեկուկես մղոն:

Ռոզան տղայից նամակը վերցրեց, որն այլևս պետք չէր, և բացատրեց, թե նա կարող է իրեն շատ օգտակար լինել: Նավակավարը իրեն դրեց աղջկա տրամադրության տակ և խոստացավ ետ չընկնել, եթե միայն աղջիկը թույլ տա բռնել ձիու սանձից կամ բաշից: Նրիտասարդ աղջիկը թույլա-

տրեց բռնելու ինչից որ ցանկանում է, միայն թե ինքը չուշանա:

Երկու ճանապարհորդներն արդեն հինգ ժամ է ճանապարհին էին, և անցել էին արդեն ութ մղոն, իսկ ծերուկ Գրիֆուսին դեռևս հայտնի չէր, որ իր աղջիկը բերդից հեռացել է: Բանտապահը լինելով չափազանց շար մարդ, բավականություն էր ստանում մտածելով, որ աղջկան սարսափի մեջ էր գցել:

Մինչդեռ նա ուրախացած էր, որ առիթ կունենա իր բարեկամ Յակոբին պատմելու այդպիսի մի հրաշալի պատմություն, Յակոբը նույնպես սլանում էր Դելֆտ տանող ճանապարհով: Շնորհիվ իր կառքի, նա Ռոզալից ու նավակավարից կարողացավ առաջ անցնել միայն չորս մղոնով: Նա դեռ կարծում էր, որ Ռոզան զայրացած ու շփոթված գտնվում է իր սենյակում, այնինչ աղջիկն արդեն հասնում էր նրա հետևից:

Այսպես ուրեմն, բացի բանտարկյալից, մնացածներից ոչ մեկը՝ այնտեղ չէր, որտեղ որ ըստ Գրիֆուսի ենթադրություն, պետք է գտնվեր:

Այն ժամանակից ի վեր, ինչ Ռոզան սկսել էր խնամել կակաչը, նա այնքան հաղվադեպ էր լինում հոր հետ, որ միայն սովորական ճաշի ժամին, այսինքն՝ ժամը տասներկուսին, երբ Գրիֆուսը քաղց զգաց, նկատեց, որ իր աղջիկը ինչ-որ շատ երկար է նեղացած մնում:

Նա իր օղնականներից մեկին ուղարկեց աղջկա հետևից: Երբ վերջինս վերադարձավ ու ասաց, որ ոչ մի տեղ չկարողացավ աղջկան գտնել, Գրիֆուսն ինքը դնաց աղջկան կանչելու: Նա գնաց ուղղակի աղջկա սենյակը, սակայն չնայած դուռն թակոցին, Ռոզան չէր պատասխանում:

Կանչեցին բերդի փականագործին, փականագործը դուռը բացեց, սակայն Գրիֆուսը Ռոզային չգտավ այնպես, ինչպես ժամանակին Ռոզան չգտավ կակաչը:

Կարելի էր պատկերացնել, թե Գրիֆուսն ինչպես կատաղեց, երբ մոտերքում հարցումիորձ անելով իմացավ, որ իր աղջիկը ձի է վարձել և մեկնել, իսկ և իսկ նման ար-

կածներ փնտրող մեկին, որը հեռանում է, առանց ասելու թե ուր:

Կատաղած Գրիֆուսը բարձրացավ վան Բեռլեի մոտ, հայհոյեց ու սպառնաց, տակնուվրա արեց նրա ամբողջ խղճուկ ունեցվածքը, խոստացավ նրան սլատժարան ուղարկել, զնդան նետել, սպառնաց, որ սովամահ կանի, կծեծի:

Կոռնելիուսը նույնիսկ չէր էլ լսում, թե բանտապահն ինչ է խոսում, մնալով մռայլ ու անշարժ, անընդունակ բոլոր տեսակի զգայություններ ընկալելու, խու՜՜ բոլոր տեսակի սպառնալիքների հանդեպ, նա թույլ տվեց, որ իրեն հայհոյեն, անսլատվեն, սպառնան:

Այն բանից հետո, երբ Գրիֆուսն ամեն տեղ ասարդյուն փնտրեց Ռոզային, նա սկսեց փնտրել Յակոբին և վերջինիս էլ աղջկա նման շահյտնաբերելով, սկսեց կասկածել, որ հենց նա՛ էլ փախցրել է երիտասարդ աղջկան:

Այդ ընթացքում Ռոզան երկու ժամ Ռոտերդամում մնալուց հետո շարունակում էր ճանապարհը: Այդ նույն երեկոյան նա կանգ առավ Դելֆտում, գիշերեց այնտեղ, իսկ հաջորդ առավոտյան Բոքստեղից չորս ժամ հետո հասավ Հաառլեմ:


Ամենից առաջ Ռոզան խնդրեց իրեն առաջնորդել ծաղկագործների ընկերության նախագահի՝ պարոն վան Սիստենսի մոտ:

Այդ պարոնին նա գտավ մի վիճակում, որը մենք պարտավոր ենք նկարագրել, եթե չենք ուզում դավաճանել արվեստագետի ու պատմաբանի մեր պարտավորությանը:

Նախագահը ընկերության կոմիտեին զեկուցագիր էր գրում: Զեկուցագիրը նա գրում էր մի մեծ թերթ թղթի վրա, մի այնպիսի գեղեցիկ ձևազրույ, որով միայն նա էր ընդունակ գրելու:

Ռոզան խնդրեց, որ իր մասին զեկուցեն. սակայն նրա անունը՝ Ռոզա Գրիֆուս, չնայած իր գեղահնչունությանը, նախագահին անծանոթ էր, և Ռոզային մերժեցին ընդունել:

Հոլանդիայում, այդ ամբարտակների ու ջրանցքների երկրում, առանց թույլտվության որևէ մեկի մոտ ընկնելը այնքան էլ հեշտ գործ չէ:



Սակայն Ռոդան չէր նահանջում: Նա իր վրա միսիա էր վերցրել և ինքն իրեն երդվել էր չընկրկել ո՛չ մերժումների, ո՛չ կոպտությունների և ո՛չ էլ վիրավորանքների առջև:

— Հայտնեք նախագահին, — ասաց նա, — որ ես նրա հետ ուզում եմ խոսել սև կակաչի մասին:

Այս խոսքերը պակաս մոգական չէին, քան «Հազար ու մի գիշերվա» «Սեզամ, բացվիր»¹, և աղջկա համար անցադրի դեր կատարեցին. այս խոսքերի շնորհիվ նա մտավ նախագահ վան Սիստենսի առանձնասենյակը և նախագահը ամմիջապես դուրս եկավ ու նրան քաղաքավարի առաջնորդեց ներս:

Դա մի փոքրիկ, փխրուն տղամարդ էր, շատ նման ծաղկի ցողունի. գլուխը կարծես ծաղկի գլխիկ լիներ, երկու կախված թևերը հիշեցնում էին կակաչի երկու երկարավուն սերկններ: Նա սովորություն ուներ թեթևակի օրորվելու, որը

¹. «Սեզամ, բացվիր» — արաբական հեքիաթներում մոգական խոսքեր, որոնց ուժով վայրկենապես բացվում էին զաղտնի զանձարանների դռները:

լրացնում էր նրա նմանությունը թեթևակի քամուց օրորվող կակաչի հետ:

Մենք արդեն ասել ենք, որ նրան անվանում էին վան Սիստենս:

— Օրիորդ,— բացականչեց նա,— դուք ասում եք, որ եկել եք սև կակաչի կողմից:

Ծաղկագործների ընկերության նախագահի համար Tulipa nigra-ն առաջնակարգ մի մեծություն էր և, որպես կակաչների արքա, կարող էր իր պատգամավորն ունենալ:

— Այո, պարոն,— պատասխանեց Ռոզան,— համե- նայն դեպս, եկել եմ, որպեսզի դրա մասին ձեզ հետ խոսեմ:

— Նա քաջառնող է,— հարցրեց վան Սիստենսը նուրբ, հարգալից ժպիտով:

— Ավա՛ղ, պարոն,— պատասխանեց Ռոզան,— այդ ինձ հայտնի չէ:

— Ինչպե՛ս, նշանակում է նրա հետ ինչ-որ դժբախտու- թյո՞ւն է պատահել:

— Այո, պարոն, շատ մեծ դժբախտություն, սակայն ոչ թե նրա հետ, այլ ինձ:

— Ինչպիսի՞:

— Ծաղիկը ինձնից գողացել են:

— Ձեզնից գողացել են սև կակա՛չը:

— Այո՛, պարոն:

— Իսկ դուք գիտե՞ք ով:

— Օ՛, ես կասկածում եմ միայն, չեմ համարձակվում մեղադրել:

— Բայց դա ստուգելը շատ հեշտ է:

— Ինչպե՞ս:

— Գողանալուց հետո քիչ ժամանակ է անցել, և գողը շատ հեռու գնալ չէր կարող:

— Ինչո՞ւ նա հեռու գնալ չէր կարող:

— Դե, որովհետև նրան երկու ժամ առաջ տեսել եմ:

— Դուք տեսե՞լ եք սև կակաչը,— բացականչեց աղջիկը՝ նետվելով դեպի վան Սիստենսը:

— Այնպես, ինչպես հիմա ձեզ եմ տեսնում:

— Բայց որտե՞ղ:

— Ձեր տիրոջ մոտ, օրիորդ:

— Իմ տիրոջ մոտ:

— Այո: Դուք Իսահակ Բոքստելի մոտ չե՞ք ծառայում:

— Ե՛ս:

— Այո, դուք:

— Սակայն դուք այդ ո՞ւմ տեղն եք դնում ինձ, պարոն:

— Իսկ դո՞ւք ինձ ում տեղն եք դնում:

— Պարոն, ես ձեզ դնում եմ այն մարդու տեղը, որին դուք իրականում ներկայացնում եք. այսինքն՝ մեծարգո պարոն վան Սիստենսի, Հառուլեմի քաղաքագլխի և ծաղկագործների ընկերության նախագահի:

— Եվ դուք եկել եք ի՞նձ մոտ:

— Եկել եմ ասելու, որ ինձնից դողացել են իմ սև կա-
կաչը:

— Այդպես ուրեմն, ձեր կակաչը պարոն Բոքստելի կա-
կա՞չն է: Այդ դեպքում դուք վատ եք բացատրում, զավակս.
կակաչը գողացել են ոչ թե ձեզանից, այլ պարոն Բոքստ-
տելից:

— Ես կրկնում եմ, պարոն, որ չգիտեմ, թե ո՞վ է այդ
պարոն Բոքստելը, որ առաջին անգամ եմ լսում այդ անունը:

— Դուք չգիտեք, թե ով է պարոն Բոքստե՞լը և դուք
նույնպես սև կակաչ ունե՞ք:

— Ինչպե՞ս, մի՞թե մի ուրիշ սև կակաչ նույնպես կա,—
դողալով հարցրեց Ռոզան:

— Այո, կա՛, պարոն Բոքստելի կակաչը:

— Ինչպիսի՞ն է:

— Սև, սատանան տանի:

— Առանց բծերի՞:

— Առանց ամենափոքր բծի անգամ, առանց որևէ կետի:

— Եվ այդ կակաչը ձեզ մո՞տ է, այստե՞ղ է:

— Ոչ, սակայն այստեղ կլինի, քանի որ պարզեւր սահ-
մանելուց առաջ ես պետք է ներկայացնեմ կոմիտեին:

— Պարոն,— բացականչեց Ռոզան,— այդ Իսահակ
Բոքստելը, այդ Իսահակ Բոքստելը, որը իրեն ներկայացնում
է որպես սև կակաչի տերը...

— Եվ որը իրականում այդպես է...

— Պարոն, այդ մարդը նիհա՞ր է:

— Այո:

— Ճաղա՞տ:

— Այո:

— Թափառող հայացքո՞ւմ:

— Թվում է, թե այդպես է:

— Անհանգիստ, կռաքած, ծուռ ոտքերո՞ւմ:

— Այո, իրոք որ դուք կես առ կես ներկայացնում եք Բոքստելի պատկերը:

— Պարոն, կակաչը սպիտակ, դեղնավուն ծաղիկներով նկարված կավե կճուճի մե՞ջ էր:

— Ա՛խ, ինչ վերաբերում է դրան, ապա ավելի քիչ եմ համոզված. ես ավելի շատ նայում էի մարդուն, քան թե կճուճին:

— Պարոն, դա ի՞մ կակաչն է, դա այն կակաչն է, որ ինձանից գողացել են: Պարոն, դա ինձ է պատկանում: Պարոն, ես նրա հետևից ձեզ մոտ եմ եկել, ես նրա հետևից այստե՛ղ եմ եկել:

— Օ՛հ,— նկատեց վան Սիստենսը՝ նայելով Ռոզային,— դուք եկել եք պարոն Բոքստելի կակաչի հետևից: Դե, դուք սատանա՛ն տանի, խիզախ կին եք:

— Պարոն,— ասաց Ռոզան մի քիչ շփոթված նման վերաբերմունքից,— ես չասացի, թե ես եկել եմ պարոն Բոքստելի կակաչի հետևից, ես ասացի, որ եկել եմ պահանջելու իմ կակաչը:

— Ձե՞ր:

— Այո, այն, որը ես անձամբ տնկեցի և անձամբ աճեցրի:

— Դե որ այդպես է, գնացեք պարոն Բոքստելի մոտ՝ «Սպիտակ կարապ» հյուրանոցը, և նրա հետ էլ ձեր գործը հարթեք: Ինչ վերաբերում է ինձ, ապա քանի որ այս վեճն ինձ թվում է այնքան բարդ, որքան այն, որը վճռում էր Սողոմոն թագավորը՝ և որի իմաստությունից զուրկ եմ, ու-

¹ Համաձայն ավետարանի ավանդության, Հին Հրեաստանի կայսր Սողոմոնը կարողանում էր լուծել ամենից դժվարին վեճերը: Այստեղ նկատի

րեմն կբաւարարվեմ նրանով, որ մեճ հաճույքով կկազմեմ իմ գեկուցագիրը սև կակաշի գոյության մասին և կնշանակեմ պարգև նրան, ով որ աճեցրել է: Իսկ հիմա հրաժեշտ տանք, զավակս:

— Օ՛, պարո՛ն, պարո՛ն,— պնդում էր Ռոզան:

— Միայն թե, զավակս,— շարունակեց վան Սիստենսը,— քանի որ դուք գեղեցիկ եք, քանի որ դուք երիտասարդ եք և քանի որ դուք դեռ այնքան էլ փշացած չեք, ուրեմն լսեք իմ խորհուրդը: Այս գործում զգուշ եղեք, որովհետև մեզ մոտ՝ Հաառլեմում գոյություն ունի դատարան և բանտ. դեռ ավելին, մենք բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են կակաշներին, խիստ բժախնդիր ենք, գնացեք զավակս, գնացեք պարոն Իսահակ Բոքստելի մոտ՝ «Սպիտակ կարապ» հյուրանոց:

Եվ պարոն վան Սիստենսը, նորից վերցնելով իր հրաշալի գրիչը, շարունակեց գրել ընդհատված գեկուցագիրը:

26

Ծաղկագործների ընկերության անդամներից մեկը

Ռոզան, իրեն կորցրած, և այն մտքից, որ սև կակաշը դտնվել է, խելահեղության աստիճանի ուրախացած, սակայն միաժամանակ վախեցած, իր նավակավարի ուղեկցումամբ, որը մի հաղթանդամ ֆրիսլանդացի տղա էր և մենակ կարող էր տասը բոքստելների հախից գալ, ուղղվեց դեպի «Սպիտակ կարապ» հյուրանոցը:

Ճանապարհին նավակավարը տեղյակ դարձավ գործի էությանը և, եթե կարիք ղգացվեր, կովից չէր հրաժարվի:

Հասնելով հյուրանոցին, Ռոզան հանկարծ կանգ առավ: Նրա ուղեղը հանկարծ մի միտք լուսավորեց:

է առնվում մեկ երեխայի պատճառով երկու կանանց միջև ծագած վեճը: Ռեֆսսի իմացվի, թե ո՞րն է երեխայի իսկական մայրը, Սողոմոնն առաջարկում է երեխային երկու կես անել. այսպիսով ճանաչվում է իսկական մայրը, որը սկսում է աղերսել կայսրին՝ ետ կանգնելու այդ վեճից:

— Աստված իմ,— շշնջաց նա,— ես սարսափելի մի սխալ թույլ տվեցի. հնարավոր է, որ ես կործանեցի և՛ Կոռնելիուսին, և՛ կակաչը, և՛ ինձ: Ես տագնապ բարձրացրի ու կասկածների տեղիք տվեցի: Չէ՞ որ ես միայն կին եմ. այդ մարդիկ կարող են միանալ իմ դեմ, և այն ժամանակ ես կորած եմ: Օ՛, եթե միայն ես մենակ կործանվեի, դա կլիներ շարիքների կեսը, սակայն Կոռնելիոսը, կակաչը...

Մի վայրկյան նա մտածմունքի մեջ ընկավ. «Իսկ եթե հանկարծ ես գնամ այդ Բոքստեղի մոտ, և պարզվի, որ նրան չեմ ճանաչում, եթե այդ Բոքստեղը Յակոբը չէ, եթե նա մի ուրիշ սիրող է, որը նույնպես աճեցրել է սև կակաչ, եթե իմ կակաչը գողացվել է ոչ թե նրա ձեռքով, որին ես կասկածում եմ և արդեն անցել է ձեռքից ձեռք: Եթե ես ճանաչեմ ոչ թե մարդուն, այլ միայն կակաչը, ինչո՞վ կարող եմ ապացուցել, որ այդ կակաչն ինձ է պատկանում:

Մյուս կողմից, եթե այդ խաբեբան իմ ճանաչած Յակոբը լինի, ո՞վ գիտի, ի՞նչ կպատահի: Մինչև մենք հարցը պարզենք, կակաչն արդեն կթառամի: Օ՛, ի՞նչ անեմ: Ինչպե՞ս վարվել: Չէ՞ որ հարցը վերաբերում է իմ կյանքին, մի թշվառ բանտարկյալի կյանքին, որը գուցե և հիմա մեռնում է»:

Այդ ժամանակ մեծ շուկայի կողմից լսվեց մեծ իրարանցում: Մարդիկ վազում էին, դռները բացվում էին. միայն Ռոզան էր, որ ամբոխի այդ իրարանցմանը անտարբեր էր մնում:

— Պետք է վերադառնալ նախագահի մոտ,— շշնջաց նա:

— Վերադառնանք,— ասաց նավակավարը:

Նրանք գնացին փոքրիկ փողոցով, որը նրանց տարավ ուղիղ պարոն վան Սիստենսի տունը. իսկ նա իր հիանալի գրչով ու հիանալի ձեռագրով շարունակում էր գրել իր զեկուցագիրը:

Ամեն տեղ ճանապարհին Ռոզան լսում էր խոսակցություններ սև կակաչի ու հարյուր հազար ֆլորին պարգևի մասին:

Նորությունն արդեն տարածվել էր ամբողջ քաղաքով մեկ:

Ռոզան քիչ ջանքեր չթափեց, որպեսզի նորից ընկնի վան Սիստենսի մոտ, որը, սակայն, ինչպես և առաջին անգամ, խիստ հուզված էր՝ լսելով «սև կակաչ» մոզական բառերը։

Սակայն, երբ նա ճանաչեց Ռոզային, որին մտքում խելագար կամ դրանից ավելի վատ բան էր համարում, չափազանց զայրացավ և ուզում էր դուրս վռնդել։ Ռոզան ձեռքերը խաչեց կրծքին և մինչև հոգու խորքը թափանցող անկեղծությամբ ասաց.

— Պարո՛ն, աղաչո՛ւմ եմ, մի՛ վռնդեք ինձ. ընդհակառակը, լսե՛ք, թե ես ձեզ ինչ կասեմ, և եթե դուք չկարողանաք ճշմարտությունը վերականգնել, ապա, ծայրահեղ դեպքում խիղճը չի տանջի ձեզ այն բանի համար, որ դուք մի շար գործի մասնակից եք եղել։

Վան Սիստենսն անհամբերությունից դողում էր. Ռոզան արդեն երկրորդ անգամ նրան կարում էր աշխատանքից. այդ բանը կրկնակի շոյում էր նրա ինքնասիրությունը և՛ որպես քաղաքագլխի, և՛ որպես ծաղկագործների ընկերության նախագահի։

— Սակայն իմ ղեկուցագի՛րը, իմ ղեկուցագի՛րը սև կակաչի մասին։

— Պարո՛ն,— շարունակեց Ռոզան անմեղության ու արդարության վճռականությամբ,— պարո՛ն, եթե դուք ինձ մինչև վերջ չլսեք, ապա ձեր ղեկուցագիրը հիմնված կլինի հանցագործ կամ էլ կեղծ սովյալների վրա։ Ես ձեզ աղաչում եմ, պարո՛ն, կանչեք այստեղ այդ պարոն Բոքստեյխն, որն իմ կարծիքով հենց նույն Յակոբն է, և ես երդվում եմ աստծով, որ եթե չճանաչեմ ո՛չ կակաչը, ո՛չ էլ նրա տիրոջը, ապա կակաչի նկատմամբ ոչ մի իրավունք չեմ ներկայացնի։

— Վատ առաջարկությունն չէ, սատանա՛ն տանի,— ասաց վան Սիստենսը։

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել։

— Ես հարցնում եմ ձեզ, իսկ եթե դուք երկուսին էլ ճանաչեք, դրանով ի՞նչ կապացուցվի։

— Սակայն, վերջապես, դուք ազնիվ մարդ եք, պարոն,— հուսահատությամբ ասաց Ռոզան։— Մի՛թե դուք

պարզեւ կտաք մի մարդու, որը ոչ միայն ինքը չի աճեցրել կակաչը, այլև գողացել է:

Գուցե և Ռոզայի համոզիչ տոներ աղբից վան Սիստենսի վրա, և նա կուղենար խեղճ աղջկան ավելի մեղմ պատասխանել, սակայն հենց այդ ժամանակ փողոցից աղմուկ լսվեց: Այդ աղմուկը կարծես թե քիչ առաջ Ռոզայի լսած աղմուկի շարունակութունը լինե՞ր՝ ավելի ուժեղացած ձևով, որին Ռոզան ուշադրութուն չդարձրեց և որը չէր կարող ստիպել նրան ընդհատելու իր խնդրանքը:

Աղմկոտ ողջույնները ցնցեցին ամբողջ տունը:

Պարոն վան Սիստենսն սկսեց ականջ դնել այդ ողջույններին, որոնք Ռոզան սկզբում չէր լսել, իսկ հիմա վերագրեց ուղղակի ամբոխի աղմուկին:

— Սա ի՞նչ բան է, — բացականչեց քաղաքագլուխը: — Սա ի՞նչ բան է: Հնարավո՞ր է արդյոք: Արդյոք ես լա՞մ լսեցի:

Նվ նա այլևս ուշադրութուն չդարձնելով Ռոզայի վրա և թողնելով նրան իր աշխատասենյակում, նետվեց դեպի ընդունարանը:

Ընդունարանում վան Սիստենսը զարմանքով տեսավ, որ սանդուղքները, ընդհուպ մինչև միջանցքի սրահը, լցված են մարդկանցով:

Սանդուղքներով բարձրանում էր պարզ, մանիշակագույն թաշվե արծաթակար հագուստով մի երիտասարդ. նա շրջապատված էր կամ ավելի ճիշտ, նրան ուղեկցում էր ամբոխը: Հպարտ նա բարձրանում էր ճերմակ ու մաքրութունից փայլող սանդուղքներով: Նրա հետևից գալիս էին երկու սպաներ, մեկ ծովային և մեկ հեծելազորային զինվոր:

Վան Սիստենսը ճեղքելով վախեցած ծառաների խումբը, խոնարհվեց այդ ամբողջ աղմուկի պատճառ հանդիսացող այցելուի առաջ:

— Տե՛ր իմ, — բացականչեց նա, — տե՛ր իմ: Ձերդ գերադանցութունը ի՞նձ մոտ: Ինչպիսի՞ բացառիկ պատիվ իմ համեստ տան համար:

— Սիրելի պարոն վան Սիստենս, — ասաց Վիլհելմ Օրանցին այնպիսի հանդատությամբ, որը նրա մոտ փոխա-

ըրևում էր ժպիտին,— ես իսկական հոլանդացի եմ, քս սիրում եմ ջուրը, գարեջուրը և ծաղիկները, երբեմն նույնիսկ պանիր, որի համն այնքան գնահատված է ֆրանսիացիների մոտ ծաղիկների մեջ ես, իհարկե, նախընտրում եմ կակաչը: Լեյդենում ինձ լուրեր հասան, որ Հաառլեմը վերջապես, սե կակաչի տեր է դարձել, և համոզվելով, որ դա ճշմարտություն է, չնայած որ անհավատալի ճշմարտություն, ես եկա ծաղկագործների ընկերության նախագահի մոտ այդ մասին իմանալու:

— Օ՛, տե՛ր իմ, տե՛ր իմ,— ասաց հիացած վան Սիւտենսը,— ինչպիսի՞ պատիվ է ընկերության համար, եթե նրա աշխատանքները ձերդ մեծության կողմից հավանության են արժանանում:

— Ծաղիկն այստե՞ղ է,— ասաց արքայազներ, հավանաբար, ափսոսելով, որ ավելորդ բաներ ասաց:

— Այլա՞ղ, տե՛ր իմ, ոչ, ինձ մոտ չէ:

— Իսկ որտե՞ղ է:

— Իր տիրոջ մոտ:

— Իսկ ո՞վ է այդ տերը:

— Մի աղնիվ ծաղկագործ՝ Դորդրեխտից:

— Դորդրեխտի՞ց:

— Այո:

— Ինչպե՞ս է նրա անունը:

— Բոքստել:

— Որտե՞ղ է ասյրում:

— «Սպիտակ կարապ» հյուրանոցում: Ես հիմա նրա հետևից մարդ կուղարկեմ, իսկ եթե իմ տերը բարեհաճի մտնել իմ հյուրասենյակը, ապա նա, իմանալով, որ ձեռք մեծությանն այստեղ է, կշտապի և իսկույն կեթ իր կակաչը կբերի ձերդ մեծությանը:

— Լավ, ուղարկե՛ք նրա հետևից:

— Լավ, ձերդ մեծություն: Միայն...

— Ի՞նչ:

— Օ՛, դատարկ բան է, տե՛ր իմ:

— Այս աշխարհում ոչ մի դատարկ բան չկա, պարոն վան Սիւտենս:

— Այնպես որ, տեր իմ, որոշ դժվարություններ են ծագում:

— Ինչպիսի՞նք:

— Այդ կակաչի նկատմամբ ինչ-որ հափշտակողներ հավակնություններ ունեն: Ճի՛շտ է, այն գնահատված է հարյուր հազար ֆլորին:

— Մի՞թե:

— Այո, տե՛ր իմ, հափշտակողներ, խաբեբաներ:

— Բայց չէ՞ որ դա արդեն հանցագործություն է, պարոն վան Սիստենս:

— Այո, ձերդ մեծություն:

— Իսկ ձեզ մոտ այդ հանցագործության ապացույցները կա՞ն:

— Ոչ, տեր իմ, մեղսագործուհին...

— Մեղսագործուհի՞:

— Ես ուզում եմ ասել, այն անձնավորությունը, որը հավակնություն ունի կակաչի նկատմամբ, գտնվում է հարևան սենյակում:

— Այստե՞ղ: Իսկ դուք ի՞նչ կարծիքի եք այդ աղջկա մասին, պարոն վան Սիստենս:

— Ես կարծում եմ, տե՛ր իմ, որ հարյուր հազար ֆլորին խաջօը նրան գայթակղել է:

— Եվ նա իր իրավունքներն է ներկայացնում կակաչի նկատմամբ:

— Այո՞, տեր իմ:

— Իսկ իր պահանջներին նա ինչպիսի՞ ապացույցներ է բերում:

— Ես հենց ցանկանում էի նրան հարցաքննել, երբ ձերդ մեծությունը բարեհաճեց գալ:

— Լսե՛նք նրան, պարոն վան Սիստենս, Լսե՛նք նրան: Չէ՞ որ ես պետության գլխավոր դատավորն եմ: Ես նրան կլսեմ և դատավճիռ կհանեմ:

— Ահա՛ և գտնվեց Սողոմոն թագավորը, — խոնարհվելով ասաց վան Սիստենսը և արքայազնին առաջնորդեց հարևան սենյակը:

Մի քանի քայլ անելով, արքայազնը հանկարծ կանգ առավ և ասաց.

— Գնացեք ինձանից առաջ և անվանեցեք ինձ ուղղակի պարոն:

Նրանք մտան առանձնասենյակը:

Ռոզան շարունակում էր կանգնած մնալ միևնույն տեղում և պատուհանից դեպի դուրս՝ այգին էր նայում:

— Ա՛, ֆրիսլանդուհի է,— նկատեց արքայազնը՝ անհետելով Ռոզայի կարմիր շրջազգեստն ու գլխանոցը:

Աղմուկի վրա Ռոզան շուտ եկավ, սակայն արքայազնին չնկատեց, քանի որ վերջինս նստել էր սենյակի ամենամութ անկյունում:

Պարզ է, որ աղջկա ամբողջ ուշադրությունը սևեռված էր այն կարևոր անձնավորության վրա, որին կոչում էին վան Սիստենս, և ոչ թե այն համեստ մարդու վրա, որը հետևում էր տանտիրոջը և, հավանաբար, մեծ անուն չուներ:

Համեստ մարդը դրակալից մի գիրք վերցրեց և Սիստենսին նշան արեց՝ հարցաքննությունը սկսել:

Վան Սիստենսը՝ երջանիկ ու հպարտ այն մեծ միսիայից, որ նրան հանձնարարել էին, մանուշակագույն հագուստով մարդու հրավերով սկսեց հարցաքննությունը:

— Զավակս, խոստանո՞ւմ եք ինձ ճշմարտությունը և միայն ճշմարտությունն ասել այդ կակաչի մասին:

— Ես ձեզ խոստանում եմ:

— Լավ, այդ ժամանակ այս պարոնի ներկայությամբ, որը մեր ծաղկագործների ընկերության անդամ է, պատմեք ամեն ինչ:

— Պարոն, բացի նրանից, որ ձեզ արդեն ասացի, էլ ի՞նչ կարող եմ ասել:

— Դե, ուրեմն ի՞նչ:

— Ես նորից ձեզ եմ դիմում նույն խնդրանքով:

— Ինչպիսի՞:

— Հրավիրեք այստեղ պարոն Բոքստելին՝ իր կակաչի հետ. եթե ես չճանաչեմ կակաչը, այդ մասին անկեղծորեն կասեմ, սակայն, եթե ճանաչեմ, կպահանջեմ, որ վերադարձնեն: Ես կպահանջեմ, եթե նույնիսկ պետք լինի դրա համար:

ապացուցներով հանդերձ զնալ նորին մեծութունն փոխարքայի մոտ:

— Ուրեմն դուք ապացուցներ ունեք, սքանչելի մանկիկս:

— Աստված է վկա, որ կակաշն իմն է, և նա՛ էլ կտա ինձ ապացուցներ:

Վան Սիստենսը մի հայացք փոխանալէից արքայազնի հետ, որը Ռոզայի առաջին իսկ խոսքերից հետո սկսեց լարել իր հիշողութիւնը: Նրան թվաց, որ այդ ձայնը ինքն առաջին անգամը չէ, որ լսում է:

Սպաններից մեկը գնաց Բոքստելի հետեից:

Վան Սիստենսը շալտեալէից հաջորդականութեամբ:

— Ինչի՞ վրա էք գուք հիմնվում, — հալցրեց նա, — երբ պնդում եք, որ աւելիաշարժեղ է պատկանում:

— Դե, պարզ է, այն բանի՜ւ որ քա անձամբ տնկել և աճեցրել եմ իմ սենյակում:

— Ձեր անյակում: Իսկ որտե՞ղ է գտնվում ձեր սենյակը:

— Լեւշտեյնում:

— Դուք Լեւշտեյնի՞ց եք:

— Ես այնտեղի բանտապահի աղջիկն եմ:

Արքայազնը մի շարժում արեց, որը կարճեռ թէն ասում էր. «Ախ, հա՛, հիմա վերհիշեցի»:

Եվ, շնայելով, որ տարված էր գործով, նա սկսեց ավելի մեծ ուշադրութեամբ հետեւել Ռոզային:

— Իսկ դուք սիրո՞ւմ եք ծաղիկներ, — շարունակեց վան Սիստենսը:

— Այո՛, պարոն:

— Ուրեմն դուք գիտնական ծաղկագործ եք:

Ռոզան մի վայրկյան տատանվեց, հետո ամենահուզիչ ձայնով ասաց.

— Պարոններ, չէ՞ որ ես խոսում եմ ազնիւ մարդկանց հետ:

Նրա ձայնի տոնն այնքան անկեղծ էր, որ վան Սիստենսը և արքայազնը միաժամանակ պատասխանեցին գլխի դրական շարժումով:



— Դե, այդ դեպքում ես ձեզ կասեմ: Գիտնական ծաղկագործը ե՛ս չեմ, ո՛չ, ես չեմ: Ես սոսկ ժողովրդից դուրս եկած մի խեղճ աղջիկ եմ, մի խեղճ ֆրիսլանդական գեղջկուհի, որը դեռ երեք ամիս առաջ ոչ կարդալ կարող էր, ոչ էլ գրել: Ո՛չ, կակաչը անձամբ ես չեմ աճեցրել:

— Իսկ ո՞վ է աճեցրել:

— Լևեշտեյնում փակված մի դժբախտ բանտարկյալ:

— Լևեշտեյնի բանտարկյալը, — հարցրեց արքայազնը: Այդ ձայնից Ռոզան ցնցվեց:

— Նշանակում է պետական հանցագործը,— շարունակեց արքայազնը,— քանի որ Լեւշտեյնում փակված են միայն պետական հանցագործները:

Եվ նա նորից սկսեց կարդալ կամ, համենայն դեպս, ձեռքնել, որ կարդում է:

— Այո՛, — դողալով շշնջաց Ռոզան, — այո՛, պետական հանցագործը:

Վան Սիստենսը գունատվեց, այդպիսի մի վկայի ներկայութեամբ նման խոստովանութիւն լսելով:

— Շարունակե՛ք, — սառը ասաց Վիլհելմը ծաղկագործների ընկերութեան նախագահին:

— Օ՛, պարոն, — ողբալի ձայնով դիմեց Ռոզան նրան, ում որ համարում էր իր իսկական դատաւորը, — ես պետք է խոստովանեմ մի շատ ծանր հանցանք:

— Այո՛, իրոք որ, — ասաց վան Սիստենսը, — պետական հանցագործները Լեւշտեյնում պետք է խիստ քաղտնի պահվեն:

— Ավա՛ղ, պարոն:

— Ձեր խոսքերից կարելի է եզրակացնել, որ դուք, որպէս բանտաւարճի աղջիկ, օգտվել եք ձեր վիճակից և շրվման մեջ եք եղել նրանց հետ ու ծաղիկներ եք աճեցրել:

— Այո՛, պարոն, — շփոթված շշնջաց Ռոզան, — այո՛, ես պետք է խոստովանեմ, է որ նրա հետ տեսնվել եմ ամեն օր:

— Թշվառակա՛ն, — բացականչեց վան Սիստենսը:

Արքայազնը գլուխը բարձրացրեց և նայեց վախեցած Ռոզային ու գունատված նախագահին:

— Դա, — ասաց նա իր կտրուկ, սառը տոնով, — ծաղկագործների ընկերութեան անդամներին չի վերաբերում. նրանք պետք է դատեն սև կակաչի մասին և ոչ թե խառնվեն պետական հանցագործների գործերին: Շարունակե՛ք, աղջիկ, շարունակե՛ք:

Վան Սիստենսը ծաղկագործների ընկերութեան նոր անդամին կակաչների անունից մի սերճախոս հայացքով շնորհակալութիւն հայտնեց:

Ռոզան խրախուսվելով անձանոթի նման վերաբերմունքից, պատմեց բոլորը, ինչ տեղի էր ունեցել վերջին երեք

ամիսներ ընթացքում, այն ամենը, ինչ որ ինքը արել էր, այն բոլոր տանջանքները, որ ինքը կրել էր: Նա պատմում էր Գրիֆուսի դաժանությունների մասին, վերջինիս կողմից առաջին սոխուկի ոչնչացման և բանտարկյալի հուսահատության մասին, այն նախադրուշական միջոցների մասին, որոնք իր կողմից ձեռք առնվեցին, որպեսզի երկրորդ սոխուկն աճի, բանտարկյալի համբերության և իրենց բաժանման շրջանում նրա դուրս վշտի մասին. թե ինչպես հուսահատությունից, որ խնքը կակաչի մասին ոչ մի տեղեկություն չունի, ցանկացել էր սովամահ լինել. նրա ուրախության մասին, երբ իրենք հաշտվել էին և, վերջապես, երկուսին տիրած այն հուսահատության մասին, երբ հայտնի էր դարձել, որ կակաչը գողացել են, և դա այն բանից հետո, երբ ծաղիկը մեկ ժամ առաջ ծաղկել էր:

Այդ բոլորը պատմվեց այնպիսի խոր անկեղծությամբ, որը արքայադստի արտաքինից դատելով՝ ճիշտ է, նրան անայլալ թողեց, սակայն վառ Սիստենսի վրա մեծ ազդեցություն ունեցավ:

— Սակայն, — ասաց արքայազներ, — չէ՞ որ շատ վաղուց չէ, ինչ ծանոթ եք բանտարկյալի հետ:

Ռոզան ասեց, լայն բացեց ու նայեց անծանոթին, որը խուսափելով աղջկա հայացքից, մտավ ստվերի մեջ:

— Ինչո՞ւ, պարոն, — հարցրեց նա:

— Որովհետև միայն շորս ամիս է անցել այն օրից, ինչ բանտապահն ու իր աղջիկը տեղափոխվել են Լեհշտեյն:

— Այո՛, պարոն, դա ճիշտ է:

— Գուցե և հենց դրա՞ համար էլ խնդրել եք, որպեսզի ձեր հորը տեղափոխեն Լեհշտեյն, որպեսզի դուք հնարավորություն ունենաք մոտ լինել այն բանտարկյալին, որին Հաագայից տարել էին Լեհշտեյն:

— Պարո՞ն, — կարմրելով ասաց Ռոզան:

— Վերջացրե՛ք, — ասաց Վիլհելմը:

— Նա խոստովանում եմ, որ բանտարկյալին Հաագայից էի ճանաչում:

— Երջանի՞կ բանտարկյալ, — ժպիտով նկատեց Վիլհելմը:

Այդ ժամանակ ներս մտավ մի սպա, որը ուղարկված էր Բոքստելի հետևից, և զեկուցեց, որ այն մարդը, որի հետևից ինքն ուղարկված էր, իր կակաշի հետ միասին ժամանել է:

Երրորդ սոխուկը

Հազիվ էր սպան վերջացրել իր զեկուցումը Բոքստելի գալու մասին, երբ վերջինս, երկու մարդկանց ուղեկցությամբ, ներս մտավ վան Սիստենեսի հյուրասենյակը: Այդ մարդիկ թանկարժեք իրը, որը դրված էր արկղի մեջ, բերեցին և տեղավորեցին սեղանին:

Արքայազներ, իմանալով, որ կակաշը բերել են, առանձնասենյակից դուրս եկավ, անցավ հյուրասենյակ, հիացմունքով դիտեց ծաղիկը և, ոչինչ չասելով, նորից ետ եկավ առանձնասենյակ ու լուռ գրավեց իր տեղը այն մութ անկյունում, որտեղ ինքն իր համար բազկաթոռ էր դրել:

Ռոզան՝ սրտի թպրտոցով, գունատ, երկյուղով լի, սպասում էր, թե երբ պիտի հրավիրեն կակաշը տեսնելու:

Ռոզան լսեց Բոքստելի ձայնը:

— Նա՛ է,— բացականչեց աղջիկը:

Արքայազներ նշանով հասկացրեց, որպեսզի աղջիկը կիսաբաց դռան արանքից նայի հյուրասենյակ:

— Դա ի՛մ կակաշն է,— գոռաց Ռոզան:— Նա՛ է, ես ճանաչեցի: Օ՛, իմ թշվառ Կոռնելիուս:

Նվ նա սկսեց հեկեկալ:

Արքայազներ վեր կացավ, մոտեցավ դռներին և որոշ ժամանակ կանգնեց այնպես, որ լույսն ուղղակի ընկնում էր նրա դեմքին:

Ռոզան իր հայացքը սևեռեց նրան: Նա արդեն համոզված էր, որ անծանոթին առաջին անգամը չէ, որ տեսնում է:

— Պարոն Բոքստել,— ասաց արքայազներ,— ապա մի եկե՛ք այստեղ:

Բոքստելը շուտափույթ ներս վազեց և դեմ առ դեմ հանդիպեց Վիլհելմ Օրանցուն:

— Ձերդ մեծություն,— բացականչեց նա՝ հտ-հտ գնալով:

— «Ձերդ մեծություն» — կրկնեց ապշած Ռոզան:

Այդ բացականչությունից, որ հնչեց Բոքստելի ձախ կողքից, նա շուտ եկավ ու նկատեց աղջկան:

Տեսնելով Ռոզային, այդ նախանձոտ մարդն ամբողջ մարմնով այնպես ցնցվեց, ինչպես կցնցվեն Վոլտյան սյան¹ հպումից:

— Ա՛հ,— քրթմնջաց ինքն իրեն արքայազնը,— նա շփոթված է:

Սակայն Բոքստելը հսկայական ուժ գործադրեց և ինքն իրեն տիրապետեց:

— Պարոն Բոքստել,— դիմեց նրան Վիլհելմը,— դուք, կարծեք թե հայտնագործել եք սև կակաշ աճեցնելու գաղտնիքը:

— Այո՛, տեր իմ,— մի քիչ շփոթված ձայնով պատասխանեց Բոքստելը:

Ճիշտ է, այդ տագնապը այգեգործի մոտ կարող էր առաջացած լինել նաև Վիլհելմի հետ ունեցած անսպասելի հանդիպումից:

— Սակայն, ահա,— շարունակեց արքայազնը,— այս երիտասարդ աղջիկը նույնպես պնդում է, որ ի՛նքն է բացել այդ դաղտնիքը:

Բոքստելն արհամարհանքով ժպտաց և ուսերը թոթվեց: Վիլհելմը հետաքրքրությամբ հետևում էր նրա բոլոր շարժումներին:

— Այսպես ուրեմն, դուք ճանաչո՞ւմ եք այս օրիորդին,— հարցրեց արքայազնը:

— Ո՛չ, տեր իմ:

¹ Վոլտյան սյուն — դալվանական էլեմենտներով մարտկոցի սկզբնական ձևը, որը հայտնագործվեց 1799 թվականին, էլեկտրական հոսանքի ումունքի հիմնագիրներից մեկի՝ իտալացի ֆիզիկոս Ալեքսանդրո Վոլտի կողմից:

— Իսկ դուք, օրիորդ, ճանաչո՞ւմ եք պարոն Բոքստելին:

— Ոչ, պարոն Բոքստելին չեմ ճանաչում, սակայն ճանաչում եմ պարոն Յակոբին:

— Ի՞նչ եք ցանկանում դրանով ասել:

— Ես ցանկանում եմ ասել, որ նա, ով իրեն անվանում է Իսահակ Բոքստել, լեհշտեյնում իրեն Յակոբ էր անվանում:

— Ի՞նչ կասեք դրա մասին, պարոն Բոքստել:

— Ես ասում եմ, տեր իմ, որ այս աղջիկը ստում է:

— Դուք հերքո՞ւմ եք, որ երբևիցե եղել եք լեհշտեյնում: Բոքստելը տատանվում էր. արքայազնը իր սեեռուն, հրամայողական, քննող հայացքով խանգարում էր նրան ստել:

— Ես չեմ կարող հերքել, որ ես լեհշտեյնում չեմ եղել, սակայն ես հերքում եմ, որ գողացել եմ կակաչը:

— Դուք գողացել եք ինձնից, դուք գողացել եք ի՞մ սենյակից,— զայրացած բացականչեց Ռոզան:

— Ես այդ հերքում եմ:

— Լսեցեք. դուք հերքո՞ւմ եք, որ լրտեսում էիք ինձ այգում այն օրը, երբ ես մշակում էի հողը, որպեսզի կակաչը տնկեմ: Հերքո՞ւմ եք, որ լրտեսում էիք ինձ այն օրը, երբ ես ձեացրի, թե արդեն տնկում եմ: Դուք չէի՞ք, որ ձեռք նետեցիք հողի այն թմբի վրա, որտեղ հույս ունեիք գտնել սոխուկը: Դուք չէի՞ք, որ ձեռքերով տակնուվրա էիք անում հողը, սակայն, փառք ասածո, ապարդյուն, քանի որ դա իմ կողմից միայն մի միջոց էր, որպեսզի պարզեմ ձեր մտադրությունները: Ասացեք, դուք այս բոլորը հերքո՞ւմ եք:

Բոքստելը հարկ չհամարեց պատասխանել այդ բազմաթիվ հարցերին:

Եվ թողնելով Ռոզայի հետ սկսված վեճը, նա դիմեց արքայազնին:

— Ահա արդեն քանի տարի է,— ասաց նա,— որ ես Դորդրեխտում զբաղվում եմ կակաչների մշակմամբ, և այդ գործում ես ձեռք եմ բերել նույնիսկ որոշ անուն: Իմ կակաչներից մեկը նշանավոր անունով մտել է ծաղկացուցակի մեջ: Ես այն նվիրել եմ Փորթուգալիայի թագավորին: Իսկ հիմա լսեք ճշմարտությունը: Այս աղջիկը գիտեր, որ ես

աճեցրել եմ սև կակաչ և իր սիրեկանի գործակցությամբ, որը գտնվում է Լեւշտեյն ամրոցում, մշակել էր մի պլան, թե ինչպիսի ինձ սնանկացնի և յուրացնի այն հարյուր հազար ֆլորին պարգևը, որը ես ձեր արդարամտության շնորհիվ հույս ունեմ ստանալու:

— Օ՛հ,— բացականչեց զայրացած Ռոզան:

— Սպասեք,— ասաց արքայազնը:

Այնուհետև դարձավ Բոքստեյին:

— Իսկ ո՞վ է այդ բանտարկյալը, որին դուք անվանում եք այս օրիորդի երկրպագուն:

Ռոզան քիչ էր մնում ուշաթափվի, քանի որ արքայազնը բանտարկյալին զիտեր որպես մի վտանգավոր հանցագործի: Բոքստեյի համար դա ամենահաճելի հարցն էր:

— Ով է այդ բանտարկյալը,— կրկնեց նա:

— Այո՛:

— Տե՛ր իմ, դա մի մարդ է, որի անունը ձերդ մեծությանը ցույց կտա, թե ինչքանով կարելի է հավատալ այս աղջկա խոսքերին: Այդ բանտարկյալը պետական հանցագործ է, որը մեկ անգամ արդեն մահվան է դատապարտվել:

— Նրա անո՞ւնը:

Ռոզան հուսահատությամբ ձեռքերով երեսը ծածկեց:

— Նրա անունը Կոռնելիուս վան Բեռլե է,— ասաց Բոքստեյը,— և նա հանդիսանում է ճիշդադ Կոռնել դե Վիտի սանիկը:

Դուքսը ցնցվեց: Նրա հանգիստ հայացքը վառվեց, սակայն սառնասիրտ հանգստությունը նորից անթափանցելի շղարշով պատեց նրա դեմքը: Նա մոտեցավ Ռոզային ու մատով նշան արեց, որպեսզի վերջինս ձեռքերը հեռացնի դեմքից: Աղջիկը հնազանդվեց, ինչպես այդ կաներ մի կին, որը ենթարկվում է հմայոդի կամքին:

— Նշանակում է, երբ դուք Լեյդենում ինձ խնդրեցիք ձեր հոր տեղափոխման մասին, նրա համար էր, որպեսզի այդ բանտարկյալի հետևի՞ց գնաք:

Ռոզան գլուխը կախեց և բոլորովին ուժասպառ, խոնարհվելով ասաց.

— Այո, տե՛ր իմ:

— Շարունակե՛ք,— ասաց արքայազնը Բոքստեխին:

— Ես այլևս ոչինչ չունեմ ասելու,— պատասխանեց վերջինս,— ձերդ մեծությանն ամեն ինչ հայտնի է: Այժմ ահա թե ինչ. ես չէի ցանկանում ասել, որպեսզի այդ աղջիկը իր անշնորհակալ գտնվելու համար չկարմրի: Ես իմ գործերի համար եկա լեռնաշխարհ, այնտեղ ես ծանոթացա ծերուկ Գրիֆուսի հետ, սիրահարվեցի նրա աղջկան և առաջարկություն արեցի և, քանի որ ես հարուստ չեմ, ապա դուրահավատ գտնվեցի ու պատմեցի հարյուր հազար ֆլորին շահելու իմ հույսի մասին: Որպեսզի հաստատեմ իմ այդ հույսը, ես աղջկան ցույց տվեցի սև կակաչը: Եվ, քանի որ նրա սիրեկանը, ուշադրությունը շեղելու համար այն դավադրությունից, որ նա նախապատրաստում էր, Դորդրեխտում զբաղվում էր կակաչների աճեցմամբ, ապա նրանք երկուսով միասին ծրագրեցին ինձ կործանել: Կակաչի ծաղկելուց մեկ օր առաջ այս աղջիկը կակաչը գողացավ, տարավ իր սենյակը, որտեղից ես բխտ ունեցա ետ վերցնել. այդ ժամանակ նա հանդդնություն ունեցավ ծաղկադործների ընկերության անդամների մոտ մի սուրհանդակ ուղարկել այն լուրով, որ ինքը աճեցրել է մեծ, սև կակաչ: Սակայն նրա վարքագիծը սրանով չի սահմանափակվում: Ամենայն հավանականությամբ, այն մի քանի ժամվա ընթացքում, երբ կակաչն իր մոտ էր գտնվում, այդ աղջիկը հասցրել է ծաղիկը ինչ-որ մեկին ցույց տալ, որին էլ վկայակոչում է: Սակայն, բարեբախտաբար, տե՛ր իմ, հիմա դուք ամեն ինչ գիտեք այս խառնակիչ աղջրկա և նրա վկաների մասին:

— Օ՛, աստված իմ, աստված իմ, ինչպիսի սրիկան է,— հառաչեց հեկեկացող Ռոզան և ընկավ փոխարքայի ոտքերը, որը շնայած աղջկան մեղավոր էր համարում, սակայն միաժամանակ խղճում էր նրան:

— Դուք շատ վատ եք վարվել, աղջի՛կ,— ասաց նա,— և ձեր երկրպագուն կպատժվի այն բանի համար, որ ձեզ վրա վատ ազդեցություն է ունեցել: Դուք դեռ շատ երիտասարդ եք և ձեր դեմքն այնքան անմեղ է, որ ինձ թվում է, թե ամեն չարիք բխում է ոչ թե ձեզանից, այլ նրանից:

— Տե՛ր իմ, տե՛ր իմ,— բացականչեց Ռոզան,— Կոռնելի լիուսը մեղավոր չէ՛:

Վիլհելմը մի շարժում արեց:

— Նա մեղավոր չէ, որ ձեզ դրդել է այդ գործի՞ն: Դուք այդ եք ցանկանում ասել, այնպես չէ՞:

— Ես ուզում եմ ասել, տե՛ր իմ, որ Կոռնելիուսը այս երկրորդ հանցանքում, որ լերագրում են նրան, նույնքան անմեղ է, որքան և առաջինում:

— Առաջինո՞ւմ: Իսկ ձեզ հայտնի՞ է, թե այդ ինչ հանցագործություն է: Դուք գիտե՞ք, թե նրան ինչո՞ւմ էին մեղադրում և ինչի՞ մեջ բռնեցին: Այն բանում, որ նա Կոռնել դե Վիտի գործակիցն է, և իր մոտ պահել է մեծ պենսիոնարի մարկիզ Լուվուայի հետ ունեցած նամակագրությունը:

— Ի՞նչ անենք, տե՛ր իմ, նա չգիտեր, թե իր մոտ ինչ գրություններ են պահվում, այդ մասին նա բացարձակապես ոչինչ չգիտեր: Նա ինձ կասեր: Կարո՞ղ էր արդյոք այդպիսի սրտի տեր մարդը գաղտնիք ունենալ և ինձնից թաքցնել: Ո՛չ, ո՛չ, տե՛ր իմ, կրկնում եմ, եթե նույնիսկ դրանով էս ձեր զայրույթը շարժեմ իմ դեմ, կրկնում եմ, որ Կոռնելիուսը մեղավոր չէ՛ առաջին հանցագործության մեջ այնպես, ինչպես՝ երկրորդի մեջ, և մեղավոր չէ երկրորդ հանցագործության մեջ այնպես, ինչպես առաջինի մեջ:

— Վիտերից մեկն է,— բացականչեց Բոքստելը:— Իմ տերը նրան շատ լավ է ճանաչում, մեկ անգամ նրան արդեն ներում են շնորհել:

— Լռե՛լ,— ասաց արքայազնը,— բոլոր այս սկետական գործերը, ինչպես արդեն ասացի, բացարձակապես չպետք է վերաբերեն Հաառլեմ քաղաքի ծաղկագործների ընկերությանը:

Այնուհետև մոայլվելով, նա ասաց.

— Ինչ վերաբերում է սև կակաչին, պարոն Բոքստել, կարող եք հանգիստ լինել, մենք արդարացի կվարվենք:

— Իսկ դուք, օրիորդ,— շարունակեց Վիլհելմ Օրանցին,— դուք քիչ էր մնում հանցանք գործելիք. ձեզ դրա համար չեմ պատժի, սակայն իսկական մեղավորը ձեր երկուսիդ համար էլ պատասխան կտա: Այդ անունը կրող մարդը կա:

րող է լինել դավադիր, նույնիսկ դավաճան... սակայն նա չպետք է գողանա:

— Գողանա՞լ,— բացնականչեց Ռողան:— Գողանա՞լ: Նա Կոռնելիուսն է: Օ՛, տեր իմ, զգո՛ւյշ եղեք: Նա կմեռնեի, եթե ձեր այդ խոսքերը լսեր: Ձեր խոսքերը ավելի շուտ կսպանեին նրան, քան թե Բյուլտենհոֆյան հրապարակում դահճի սուրը: Եթե խոսենք գողության մասին, տեր իմ, երդվում եմ, այդ բանն արել է ա՛յս մարդը:

— Ապացուցե՛ք,— ասաց Բոքստելը:

— Լա՛վ, ես կապացուցեմ,— վճռականորեն հայտարարեց Ֆրիսլանդուհին: Այնուհետև դառնալով դեպի Բոքստելը, նա հարցրեց.

— Կակաչը ձե՞ղ է պատկանում:

— Այո:

— Քանի՞ սոխուկ ունեի:

Բոքստելը մի վայրկյան տատանվեց, սակայն այնուհետև գլխի ընկավ, որ աղջիկն այդ հարցը չէր տա, եթե եղած լինեին միայն իրեն հայտնի երկու սոխուկները:

— Երեք,— ասաց նա:

— Ի՞նչ պատահեց այդ սոխուկների հետ,— հարցրեց Ռողան:

— Ինչ պատահե՞ց: Մեկը անհաջող դուրս եկավ, մյուսից աճեց սև կակաչը:

— Իսկ երրո՞րդը:

— Երրո՞րդը:

— Երրո՞րդը: Որտե՞ղ է երրորդը:

— Երրորդը ինձ մոտ է,— հուզված ասաց Բոքստելը:

— Ձեզ մո՞տ: Իսկ որտե՞ղ: Լեեշտեյնո՞ւմ, թե՞ Դորդրեխտում:

— Դորդրեխտում,— ասաց Բոքստելը:

— Դուք ստո՞ւմ եք,— գոչեց աղջիկը:— Տե՛ր իմ,— ավելացրեց նա, դառնալով արթալաղնին,— ես ձեզ կպատմեմ այդ երեք սոխուկների իսկական պատմությունը: Առաջինը իմ հայրը ոչնչացրեց բանտարկյալի խցում, և այս մարդուն դա շատ լավ հայտնի է, քանի որ նա հույս ուներ տիրանալու սոխուկին, բայց, երբ իմացավ, որ այդ հույսը

խորտակվեց, քիչ էր մնում հորս հետ կռվելու: Երկրորդը իմ օգնությամբ աճեց ու դարձավ սև կակաշ, իսկ երրորդը և վերջինը (աղջիկը կրծկալի տակից հանեց այն), երրորդը, ահա՛, այստեղ է, հենց այն թղթի մեջ: Որով Կոռնելիուսը կառավարան գնալուց առաջ, մնացած երկուսի հետ միասին, ինձ հանձնեց: Ահա՛ այն, տեր իմ, ահա՛:

Եվ Ռոզան թղթի միջից հանելով սոխուկը մեկնեց արքայազնին, որը վերցրեց աղջկա ձեռքից ու սկսել ղննել:

— Սակայն, տե՛ր իմ, մի՞թե այս աղջիկը չէր կարող կակաշի նման դա էլ գողանալ,— փնթփնթաց Բոքստելը՝ վախեցած այն ուշադրությունից, որով արքայազնը ղննում էր սոխուկը. Բոքստելին հատկապես վախեցրեց այն ուշադրությունը, որով Ռոզան կարդում էր ձեռքին բռնած մի քանի տողը: Հանկարծ երիտասարդ աղջկա աչքերը բոցավառվեցին. շնչահեղձ լինելով՝ նա կլանեց այդ խորհրդավոր թղթի մի քանի տողը և մեկնելով արքայազնին, բացա՛կանչեց.

— Օ՛, կարդացե՛ք այս, տեր իմ, աղաչո՛ւմ եմ ձեզ, փարդացե՛ք:

Վիլհելմը երրորդ սոխուկը հանձնեց նախագահին, վերցրեց թուղթն ու սկսեց կարդալ:

Թղթի այդ կտորը, որ Ռոզան տվեց նրան, ավետարանի այն էջն էր, որ Կոռնել դե Վիտը իր եղբոր՝ Յան դե Վիտի ծառայի՝ Կրակելի հետ ուղարկեց Դորդրեխտ. երկտողում Կոռնելիուսին խնդրվում էր, որպեսզի վերջինս այրի մեծ պենսիոնարիի և Լովուայի միջև եղած գրագրությունը: Այդ խնդրանքը, ինչպես մենք հիշում ենք, կաղմված էր հետևյալ ձևով.

«Թանկագին սանիկ, այրի՛ր այն ծրարը, որը քեզ հանձնեցի, այրի՛ր, առանց նայելու, առանց բացելու, որպեսզի նրա բովանդակությունը քեզ անհայտ մնա: Նման գաղտնիքները, որ պարունակում է այդ ծրարը, դրանց տիրոջը կարող են կործանել: Այրի՛ր և դու կփրկես Յանին ու Կոռնելին: Մնաս բարո՛ւ, սիրի՛ր ինձ: Կոռնել դե Վիտ: 20 օգոստոսի, 1672 թվական»:

Այդ թուղթը միաժամանակ ապացուցում էր, որ վան Բեռլեն անմեղ է, և սոխուկներն էլ պատկանում են նրան:



Ռոզան և արքայազնը միայն մեկ հայացք փոխանակեցին: Ռոզայի հայացքը կարծես թե ասում էր. ահա, տեսնո՞ւմ եք: Արքայազնի հայացքն ասում էր. լո՛րի և սպասիր:

Արքայազնը սրբեց քրտինքի սառը մի կաթիլ, որ ճակատից գլորվում էր դեպի այտը: Նա դանդաղ ծալեց թուղթը: Իսկ նրա մտքերը կորան այն անհուն անդունդի մեջ, որը կոչվում է զղջում և ամոթ՝ անցյալի առաջ:

Այնուհետև ճիգ գործ դնելով՝ նա գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Մնաք բարո՛ւ, պարոն Բոքստել: Կլինի այնպես, ինչպես արդարությունն է պահանջում, ես ձեզ խոստանում եմ:

Այնուհետև դիմելով նախագահին, նա ավելացրեց.

— Իսկ դուք, թանկագին վան Սիստենս, այս աղջկան ու կակաչը պահեք ձեզ մոտ: Մնաք բարո՛ւ:

Բոլորը խոնարհվեցին, արքայազնը դուրս եկավ կռած, կարծես թե ամբոխի աղմկոտ ողջույնները նրան ճնշում էին:

Բոքստելը «Սպիտակ կարապ» վերադարձավ շատ հուզված: Այն թուղթը, որը Վիլհելմը Ռոզայի ձեռքից վերցնելով կարդաց ու խնամքով ծալելով պահեց գրպանում, նրան շատ էր անհանգստացնում:

28

Ծաղիկների երգը

Մինչ տեղի էին ունենում մեր նկարագրած այս բոլոր իրադարձությունները, դժբախտ վան Բեռեն Լեեշտեյնի ամբողջ իր խցում մոռացության մատնված, Գրիֆուսի կողմից անասելի տանջանքների էր ենթարկվում: Այդպիսի տանջանքներ կարող էր պատճառել մի բանտապահ, որը որոշել էր ինչ գնով էլ լինի՝ դառնալ դահիճ:

Գրիֆուսը ոչ մի տեղեկություն չստանալով ո՛չ Ռոզայից ու ո՛չ Յակոբից, համոզվեց, որ իր հետ պատահածը սատանայի ձեռքի գործ է, իսկ դոկտոր Կոռնելիուս վան Բեռեն սատանայի կողմից երկիր առաքված մեկն է:

Հենց այդ պատճառով մի գեղեցիկ առավոտ, Ռոզայի ու Յակոբի հեռանալուց երեք օր անց, Գրիֆուսը սովորականից ավելի կատաղած բարձրացավ Կոռնելիուսի խուցը:

Կոռնելիուսը արմունկներով հենված պատուհանին, գլուխը դրած ձեռքերին, հայացքը հառած մշուշապատ հորիզոնին, որն իրենց հսկայական թևերով կտրատում էին Դորդրեխտի հողմաղացները, թարմ օդ էր շնչում և աշխատում էր զսպել իրեն խեղդող արցունքներն ու պահպանել փիլիսոփայի խաղաղ տրամադրությունը:

Աղավնիները դեռ այնտեղ էին, սակայն նրանց հետ այլևս հույս չէր կարելի կապել, իսկ ասպազան սուզված էր անհայտության մեջ:

Ավա՛ղ, Ռոզան հսկողության տակ է և այլևս չի կա-

բող զալ: Իսկ գրել արդյոք կարո՞ղ է: Եվ եթե կարողանա գրել, կհաջողվի՞ արդյոք ուղարկել իր նամակները:

Ո՛չ: Երեկ և նախորդ օրը ծեր Գրիֆուսի աչքերում չափից ավելի չարություն ու զայրույթ կալ: Նրա վզոնությունը երբեք չի թուլանա, այնպես որ Ռոզան, բացի բաժանումից ու փակվածությունից, գուցե և խիստ տանջանքներ է ապրում: Արդյոք այդ գազանը, ստորը, հարբեցողը վրեժխնդիր չի՞ լինի նրանից: Եվ երբ ոգելից խմիչքը խփի նրա գլխին, արդյոք նա աղատություն չի՞ տա իր ձեռքին, որն այնքան լավ բուժել էր Կոռնելիուսը և այժմ մահակով զինված երկու ձեռքերի ուժ ունեւ:

Այն միտքը, որ Ռոզայի հետ գուցե դաժան են վարվում, Կոռնելիուսին հուսահատության մեջ էր գցում: Եվ նա հիմանդադին կերպով զգում էր իր անուժ, անօգտակար լինելը, իր ոչնչությունը: Նա ինքն իրեն հարց էր տալիս. արդյոք իրավացի՞ է աստված, որ երկու անմեղ էակների այսքան դժբախտություններ է ուղարկում: Եվ նա կորցրեց հավատը, քանի որ դժբախտությունը հավատին լավ օգնական չէ:

Վան Բեռլեն մճռականապես որոշեց Ռոզային նամակ ուղարկել: Սակայն որտե՞ղ է Ռոզան:

Նրա մոտ միտք ծագեց գրել Հաագա, որպեսզի նախօրոք ցրի այն ամպերը, որ Գրիֆուսի կողմից պատրաստվող ամբաստանագրի հետևանքով նորից կուտակվում էին նրա գլխին:

Սակայն ինչո՞վ գրել: Գրիֆուսը խլել էր նրա թուղթն ու մատիտը: Բայց, եթե նույնիսկ նա ունենար և՛ մեկը, և՛ մյուսը, Գրիֆուսը հո չէ՞ր ուղարկելու նամակը:

Կոռնելիուսը բաղմամբիվ անգամներ մտքում ծանրութեթև արեց բոլոր այն խորամանկ միջոցները, որ իր ժամանակին գործադրել էին բանտարկյալները: Նա մտածեց նաև փախուստի մասին, չնայած այդ բանը, քանի դեռ նա ամեն օր հնարավորություն ուներ Ռոզայի հետ տեսնվելու, երբեք նրա մտքով չէր անցել: Սակայն, որքան շատ էր նա այդ մասին մտածում, այնքան փախուստի միտքը նրան թվում էր անիրականանալի: Կոռնելիուսը պատկանում էր այն ընտրյալ մարդկանց թվին, որոնք ամեն սովորականի հանդեպ

դիվանը են տածում և հաճախ կյանքում ձեռքից բաց են թողնում շատ հաջող ընդհանր միայն նրա համար, որ դրանք գնում են սովորական ճանապարհով, այն լայն ճանապարհով, որը մարդկանց հասցնում է իրենց նպատակին:

«Ինչպե՞ս կարող եմ ես կենտոններից փախչել,— մտածում էր Կոռնելիուսը,— այն բանից հետո, երբ այստեղից ինչ-որ մի ժամանակ Հրոցիտոն է փախել: Արդյո՞ք այդ փախուստից հետո բոլոր նախազգուշական միջոցները ձեռք չեն առնված: Երեի արդեն երկրորդ, երրորդ դռնե՞ր են արված: Մի՞թե դրանից հետո ժամապահներն իրենց պոստիթյունը չեն տասնապատկել:

Այնուհետև, բացի պահպանվող պատուհաններից, կրկնակի դռներից, զգոն ժամապահներից, մի՞թե ես չունեմ իմ անխոնջ արգուսը¹: Եվ այդ արգուսը, այդ Գրիֆուսը առավել էլ տանջավոր է, քանի որ ինձ ատելությամբ է նայում: Վերջապես, մի՞թե չկա մի հանգամանք, որն անդամալուծ է անում ինձ: Ուղագյի բացակայությունը: Ընդունենք, որ ես իմ հյանքից տասը տարի կկորցնեմ, որպեսզի խարտոց պատրաստեմ, որով կկարողանամ խարտոցել պատուհանի վանդակը, մի թոկ հյուսեմ, որով լուսամուտից ցած կիջնեմ, ինչպես արեց Դեդալը²... Սակայն ես անհաջողությունների դոտուն համդիպել: Խարտոցը կթանա, թոկը կկտրվի, իմ թևերն արևի տակ կհալվեն: Ես կջախջախվեմ: Ինձ կգտնեն հաշմանդամ դարձած, կաղ, մի ձեռքանի: Ինձ կդնեն Հաադալի թանգարանում՝ Վիլհելմ Լոակյացի արյունոտված բաճկոնի և ծովային հավերժահարսերի միջև, որոնց գոհի են Ստավսենում, և իմ նախաձեռնություն արդյունքը, վերջ է լինելու, կլինի այն, որ ես սլատիվ կունենամ Հոլանդիայի հրաշքների հետ միասին տեղ գտնելու թանգարանում: Ի միջի ալյոց, զուցե և ավելի լավ ելք գտնվի: Մի գեղեցիկ օր Գրիֆուսը նորից կանի իր հերթական ստորությունը: Այն

¹ Արգուս — հին հունական դիցաբանության մեջ՝ բազմաթ հսկա պահակ: Փոխաբերական իմաստով՝ զգոն պահակ:

² Դեդալ — հին հունական դիցաբանության մեջ՝ հմուտ մեքենագործ, որը փնտուրներից ու մոմից թևեր սարքեց, թռավ և, այդպիսով, փրկվեց հետապնդումից:

Ժամանակվանից, երբ ինձ գրկել են Ռոզալի հետ տեսնվելու երջանկությունից և, հատկապես, երբ Կորցրի կակաշներս, հս շատ շուտ համբերությունից դուրս եմ գալիս: Ոչ մի կասկած չկա, որ վաղ թե ուշ Գրիֆուսը կվերավորի իմ ինքնասիրությունը, իմ սերը և կամ կսպառնա իմ անձնական անվտանգությունը: Բանտարկվելուց ի վեր ես իմ մեջ զգում եմ կատաղած, անզուսպ ու ամեհի մի ուժ: Իմ ներսը եռ է գալիս, ես ծարավի եմ պայքարի, անբացատրելի մի ցանկություն ինձ մղում է կռվի: Ես կհարձակվեմ այդ ծեր սրիկայի վրա ու կխեղդեմ նրան»:

Վերջին խոսքերի հետ Կոռնելիուսը մի վայրկյան կանց առավ, նրա բերանը ծամածռվեց, հայացքն անշարժացավ: Նա ծանր ու թեթև էր անում իրեն ուրախացնող մի միտք:

«Այո, քանի որ Գրիֆուսը մեռած կլինի, ինչու՞ նրանից բանալիները չլեբցնել: Ինչու՞ չիջնել սանդուղքներից ներքև այնպես, կարծես թե ես ամենաբարի գործն եմ կատարում:

Ինչու՞ չգնալ Ռոզալի սենյակը, պատմել նրան պատահածի մասին և նրա հետ միասին պատուհանից նետվել վապրը:

Ես երկուսիս փոխարեն էլ հիանալի կլողամ: Ռոզան՝ Սակայն, աստված իմ, չէ՞ որ Գրիֆուսը նրա հայրն է: Որքան էլ նա ինձ սիրի, հոր սպանությունը երբեք չի ների, ինչքան ուզում է հայրը կոպիտ ու դաժան լինի: Ստիպված պետք է լինեմ նրան համոզել, իսկ այդ ընթացքում Գրիֆուսի օգնականներից մեկն ու մեկը կհայտնվի և տեսնելով վերջինիս մեռնելիս կամ խեղդված, ինձ կձերբակալի: Եվ ես նորից կտեսնեմ Բյուլտենհոֆյան հրապարակն ու այն քստմենքի կացնի փայլը. այս անգամ արդեն կացինը չի հապաղի և կիջնի իմ պարանոցին: Ո՛չ, Կոռնելիուս, ո՛չ, բարեկամս, պետք չէ այդ անել, դա վատ միջոց է: Սակայն, այդ դեպքում ի՞նչ անել: Ինչպե՞ս գտնել Ռոզային»:

Ռոզայից բաժանվելուց երեք օր անց այսպիսիք էին Կոռնելիուսի մտքերը այն րոպեին, երբ, ինչպես ասացինք մեր ընթերցողին, նա հենված պատուհանին՝ կանգնել էր:

Հենց այդ վայրկյանին էր, որ Գրիֆուսը ներս մտավ:

Նրա ձեռքին մի հսկայական մահակ կար, աչքերը վառվում էին շարագուշակ փայլով, շար ժպիտը ծոմոն էր շրթունքները, նա սպառնալից օրորվում էր և ամբողջ էությամբ համակված էր շար մտադրություններով:

Կոռնելիուսն ընկճված և, ինչպես տեսանք, ստիպված ամեն ինչ տանելու, լսեց, թե ինչպես մեկը ներս մտավ, իմացավ նրա ով լինելը և նույնիսկ շուռ շեկավ: Նա գիտեր, որ այս անգամ Գրիֆուսի հետևում Ռոդան կանգնած չի լինի:

Ոչինչ զայրացած մարդու համար այնքան տհաճ չէ, որքան այն, երբ նրա զայրույթին պատասխանում են լրիվ անտարբերությամբ: Մարդը տրամադրվել է համապատասխան ձևով և չի ցանկանում, որ իր տրամադրվածությունն իզուր անցնի: Նա բորբոքվել է, նրա արյունը եռ է գալիս, և նա կուզենար դոնե մի փոքր պոռթկալ:

Ամեն մի կարգին սրիկա, որը սրել է իր շար պենքը, ցանկանում է դրանով գոնե ինչ-որ մեկին մի լավ վիրավորել:

Երբ Գրիֆուսը տեսավ, որ Կոռնելիուսը տեղից չի շարժվում, սկսեց բարձրաձայն հաղալ.

— Ըհը, ըհը:

Կոռնելիուսն ատամների արանքից սկսեց երգել մի տխուր, գողտրիկ երգ՝ ծաղիկների երգը.

«Մենք նվիրական կրակի զավակներն ենք,

Կրակի, որ վառվում է երկրի խորքում,

Մենք արշալույսի ու ցողի ծնունդ ենք,

Մենք ջրի ծնունդ ենք,

Սակայն ամենից առաջ մենք երկնքի զավակներն ենք»:

Մյուս հրդը, որի տխուր ու հանգիստ մեղեդին ավելի էր ուժեղացնում Կոռնելիուսի անդրդվելի մեղամաղձությունը, Գրիֆուսին համբերությունից հանեց.

— Է՛յ, պարոն երգիչ,— բղավեց նա,— դուք չե՞ք լսում, որ ես եմ եկել:

Կոռնելիուսը շուռ եկավ:

— Բարե ձեզ,— ասաց նա:

Եվ նորից սկսեց երգել.

«Տանջվելով մարդկանց ձեռքից, մենք նրանց սիրուց
կործանվում ենք,

Բարակ թելով մենք կապված ենք հողին,
Այդ թելը մեր արմատն է, մեր կյանքը,
Իսկ ձեռքերով մենք ձգվում ենք դեպի երկինք»:

— Ախ, անիծյալ կախարդ, ինչպես տեսնում եմ՝
ծիծաղում ես ինձ վրա,— գոռաց Գրիֆուսը:

Կոռնելիուսը շարունակեց.

«Ձէ՞որ երկինքը մեր հայրենիքն է. այնտեղից,
Ինչպես հայրենիքից, մենք հողի ենք ստանում,
Որը նորից վերադառնում է այնտեղ.
Հողին, մեր բուրմունքը, նորից վերադառնում է երկինք»:

Գրիֆուսը մոտեցավ բանտարկյալին:

— Դու, նշանակում է, չե՞ս տեսնում, որ քեզ սանձա-
հարելու լավ միջոց եմ բերել և կստիպեմ խոստովանելու
մեղքերդ:

— Դուք ինչ է, գժվե՞լ եք, թանկագին Գրիֆուս,— շուռ
գլուխ հարցրեց Կոռնելիուսը:

Նվ, երբ տեսավ ծեր բանտապահի ծամածուլած դեմքը,
բոցկլտացող աչքերը, փրփրած բերանը, նա ավելացրեց.

— Դե, մենք, սատանան տանի, ավելի քան գժվել ենք,
մենք կատաղել ենք:

Գրիֆուսը բարձրացրեց մահակը:

Սակայն վան Բեռլեն մնաց անդրդվելի:

— Ահա՛ թե ինչ, Գրիֆուս,— ասաց նա ձեռքերը կրծքին
խաչելով,— կարծես թե դուք սպառնո՞ւմ եք:

— Այո, ես սպառնում եմ,— գոռաց բանտապահը:

— Իսկ ինչո՞ւ:

— Դու նախ նայիր, թե իմ ձեռքում ի՞նչ կա:

— Ինձ թվում է,— հանգիստ ասաց Կոռնելիուսը,— որ
դա փայտ է և այն էլ մեծ փայտ: Բայց ես չեմ կարծում, որ
դրանով ինձ սպառնում եք:

— Ա՛, դու այդ չե՞ս կարծում: Իսկ ինչու՞:

— Որովհետև յուրաքանչյուր բանտապահ, որը կխփի
բանտարկյալին, կենթարկվի երկու տեսակ պատժի. առաջի-
նը, համաձայն Լեհշտեյնի կանոնների իններորդ կետի, որը

ասում է. «Ամեն մի բանտապահ, վերակացու կամ բանտապահի օգնական, որը ձեռք կբարձրացնի պետական հանցագործի վրա, ենթակա է հեռացման»:

— Ձեռք,— նկատեց Գրիֆուսը կատաղությունից կաշվից դուրս գալով,— և ոչ թե փափաք, փափաք... կանոնադրությունը դրա մասին ոչինչ չի ասում:

— Նրկորդ պատիժը— շարունակեց Կոռնելիուսը,— որը կանոնադրության մեջ չի նշվում, սակայն որը նախատեսվում է ավետարանում, այն է՝ «Սուր բարձրացնողը ինքը այդ սրից կկործանվի... փայտը վերցնողը՝ ինքը փայտի տակ կմտնի...»:

Գրիֆուսն ավելի ու ավելի էր գրգռվում Կոռնելիուսի խաղաղ ու հաղթանակած տոնից. նա հտ տարավ մահակը և այն պահին, երբ ուզում էր թափով իջեցնել, Կոռնելիուսը նրա ձեռքից խլեց ու դրեց թևի տակ:

Գրիֆուսը շարությունից մոնչում էր:

— Այդպես, այդպես, սիրելիս,— ասաց Կոռնելիուսը,— ձեր պաշտոնը վտանգի տակ մի դրեք:

— Ա՛հ, կախարդ— մոնչում էր Գրիֆուսը,— սպասիր, ես քո հախից ուրիշ ձևով կգամ:

— Հաջողություն եմ ցանկանում:

— Դու տեսնո՞ւմ ես, որ իմ ձեռքում ոչինչ չկա:

— Այո, ես այդ տեսնում եմ և նույնիսկ շատ մեծ հաճությամբ:

— Սակայն քեզ հայտնի է, որ առավոտները, երբ ես բարձրանում եմ սանդուղքներից, ձեռքերս դատարկ չեն լինում:

— Այո, սովորաբար դուք բերում եք ամենաաղքատ ու ամենաղղվելի կերակուրը, որը կարելի է միայն ենթադրել: Սակայն դա ինձ համար բոլորովին էլ տանջալից չէ, քանի որ ես սնվում եմ միայն հացով, իսկ որքան այդ հացը զղվելի է քեզ համար, Գրիֆուս, այնքան ինձ ավելի համեղ է թվում:

— Այնքան քեզ համեղ է թվում:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Օ՛հ, շատ պարզ:

— Այդ դեպքում, ասա ինչո՞ւ:

— Հաճույքով. ես գիտեմ, որ ինձ քարթու հաց տալով, ստիպում ես ինձ տանջվել:

— Այո, ճիշտ է, որ ես հացը տալիս եմ ոչ նրա համար, որ քեզ հաճույք պատճառեմ:

— Բայց, ինչպես քեզ հայտնի է, ես կախարդ եմ և քո տված ամենավատ հացը վեր եմ ածում ամենալավի, որն էլ ինձ ամեն մի կարկանդակից ավելի հաճույք է պատճառում: Այսպիսով, ես ստանում եմ կրկնակի հաճույք. նախ, որ ուռտում եմ իմ սիրած հացը և երկրորդ, որ քեզ կատաղեցնում եմ:

Գրիֆուսը վայրույթից ոռնաց:

— Ա՛խ, ուրեմն դու խոստովանո՞ւմ ես, որ կախարդ ես:

— Իհարկե՛, կախարդ եմ, սատանա՛ն տանի: Միայն թե մարդկանց մոտ չեմ ասում, որովհետեւ ինձ կարող են խարույկ բարձրացնել, սակայն, երբ մենք միայն երկուսով ենք, ինչո՞ւ չպետք է խոստովանեմ:

— Լա՛վ, Լա՛վ Լա՛վ,— պատասխանեց Գրիֆուսը,— բայց եթե կախարդը սե հացը սպիտակի է վերածում, արդյոք սովահար չի՞ լինում նույն այդ կախարդը, երբ բոլորովին հաց չի ունենում ուտելու:

— Ի՞նչ, ի՞նչ,— հարցրեց Կոռնելիուսը:

— Այն, որ ես քեզ բոլորովին հաց չեմ բերի, տեսնենք թե մի շաբաթից հետո ինչ կլինես:

Կոռնելիուսը գունատվեց:

— Եվ դա մենք կսկսենք հենց այսօրվանից,— շարունակեց Գրիֆուսը:— Եթե դու այդպիսի կախարդ ես, ուրեմն քո խցում եղած-չեղածը հաց դարձրու. իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես ամեն օր առիթ կունենամ տնտեսելու տասնութ սու, որը բաց է թողնվում քեզ կերակրելու համար:

— Բայց դա մարդասպանություն է,— սարսափի տագնապից միանգամից բռնկվելով գոչեց Կոռնելիուսը, երբ սկսեց մտածել, թե ինչպիսի սարսափելի մահ է սպասում իրեն:

— Ոչի՛նչ,— շարունակեց Գրիֆուսը, հեգնելով նրան,—

ոչի՞նչ, քանի որ դու կախարդ ես, նշանակում է, ինչ էլ ուզում է լինի, դու կենդանի կմնաս:

Կոռնելիուսը՝ նորից անցավ իր ծաղրական տոնին և ուսերը թափ տալով ասաց.

— Մի՞թե դու շտեմար, թե ինչպես ստիպեցի Դորդրեխտի աղաւմնիներին թռչել այստեղ:

— Է՛, հետո ի՞նչ անենք,— ասաց Գրիֆուսը:

— Այն, որ աղաւմնին ամենալավ ճաշատեսակն է: Մարդ եթե ամեն օր մի աղաւմնի ուտի, ինձ թվում է, սովից չի մեռնի:

— Իսկ կրա՞կ,— հարցրեց Գրիֆուսը:

— Կրա՞կ: Բայց չէ՞ որ դու գիտես, որ ես սատանայի հետ գործարքի մեջ եմ մտել: Մի՞թե կարծում ես, որ սատանան ինձ առանց կրակ կթողնի:

— Ինչքան էլ որ մարդ քաջառողջ լինի, միևնույն է, նա չի կարող միայն աղաւմնիներով սնվել: Այդպիսի գրաւներ եղել են, սակայն դրանք միշտ տանուլ են տրվել:

— Դե, ի՞նչ անենք,— ասաց Կոռնելիուսը,— երբ աղաւմնիները ձանձրացնեն, ես կսկսեմ Վաալի ու Մաասի ձկներով սնվել:

Գրիֆուսը վախեցած աչքերը չռեց:

— Ես ձուկ շատ եմ սիրում,— շարունակեց Կոռնելիուսը,— իսկ դու երբեք ինձ ձուկ չես մատուցում: Դե ինչ, ես էլ կօգտվեմ հանգամանքից, որ դու ուզում ես ինձ սովամահ անել և ձուկ կճաշակեմ:

Գրիֆուսը քիչ էր մնում շարությունից ու վախից ուշադնաց լինելու: Սակայն նա զսպեց իրեն, ձեռքը տարավ գրքապանն ու ասաց.

— Քանի որ դու ինձ ստիպում ես, դե տե՛ս:

Եվ նա գրպանից հանեց դանակն ու բացեց:

— Ա՛, դանակ,— ասաց Կոռնելիուսը և փայտը ձեռքին բռնած՝ պաշտպանական դիրք ընդունեց:

Որտեղ վան Բեռլեն Լեռնային հեռանալուց առաջ Գրիֆուսի հետ հաշիվ է մաքրում

Եվ նրանք մի վայրկյան անշարժ կանգնած էին. մեկը՝ պատրաստ հարձակվելու, մյուսը՝ պատրաստ պաշտպանվելու:

Սակայն տեսնելով, որ այդ դրուժյունը կարող է անվերջ շարունակվել, Կոռնելիուսը որոշեց ինչ դնով էլ ուզում է լինի հասկանալ իր հակառակորդի կատաղության պատճառը:

— Այսպես ուրեմն, ի՞նչ եք ցանկանում, — հարցրեց նա:

— Քեզ կասեմ, թե ինչ եմ ցանկանում, — պատասխանեց Գրիֆուսը, — ուզում եմ, որ վերադարձնես իմ աղջկան՝ Ռոզային:

— Ձեր աղջկա՞ն, — բացականչեց Կոռնելիուսը:

— Այո, Ռոզային, որին դու քո սատանայական խորամանկություններով խլեցիր ինձնից: Լսո՞ւմ ես, ասա ինձ, որտե՞ղ է:

Եվ Գրիֆուսն ավելի ու ավելի ահարկու տեսք էր ընդունում:

— Ռոզան Լեռնայինում չէ՞, — նորից բացականչեց Կոռնելիուսը:

— Դու այդ շատ լավ գիտես: Ես քեզ նորից եմ հարցընում. կվերադարձնե՞ս իմ աղջկան, թե՞ ոչ:

— Լավ, — պատասխանեց Կոռնելիուսը, — դու ինձ համար թակարդ ես լարում:

— Վերջին անգամ եմ հարցնում, ասա՞, որտե՞ղ է աղջիկս:

— Եթե չգիտես, ի՞նքդ գուշակիր, սրիկա՛:

— Սպասի՛ր, սպասիր, — մոռնում էր Գրիֆուսը գունատ, խելահեղությունից ծամածուլած բերանով: — Ուրեմն ոչինչ չե՞ս ուզում ասել: Այդ դեպքում քեզ կստիպեմ խոսել:

Նա մի քայլ արեց դեպի Կոռնելիուսը՝ ցույց տալով ձեռքերի մեջ փայլող զենքը:

— Դու տեսնո՞ւմ ես այս դանակը. ես սրանով մորթել եմ ավելի քան հիսուն սև աքաղաղ. և, ինչպես նրանց եմ մորթել, այնպես էլ կմորթեմ նրանց տիրոջը՝ սատանային. սպասիր, սպասիր:

— Ա՛խ, դու, ստո՛ր,— ասաց Կոռնելիուսը,— դու իսկապե՞ս ինձ մորթել ես ուզում:

— Ես ուզում եմ բաց անել քո սիրտը, որպեսզի տեսնեմ, թե որտե՞ղ ես թաքցնում իմ աղջկան:

Ասելով այս խոսքերը, Գրիֆուսը, խելացնորության մեջ, հարձակվեց Կոռնելիուսի վրա, որը առաջին հարվածից խուսափելու համար, հագիվ հասցրեց թաքնվել սեղանի հետեւում:

Գրիֆուսը սպառնալիքներ տեղալով, թափ էր տալիս իր հսկայական դանակը:

Կոռնելիուսը գլխի ընկավ, որ եթե Գրիֆուսի համար դժվար է ձեռքով դիպչել իրեն, ապա զենքով նա այդ բանը հեշտությամբ կարող է անել: Հեռվից նետված դանակը կարող էր առանց դժվարության կտրել նրանց բաժանող տարածությունը և խրվել իր կուրծքը. ժամանակ չկորցնելով, նա ամբողջ ուժով փայտով խփեց Գրիֆուսի ձեռքին, որով ամուր սեղմել էր դանակը:

Դանակն ընկավ հատակին, և Կոռնելիուսը ոտքը դրեց դրա վրա:

Այնուհետև, քանի որ Գրիֆուսը գրգռված էր և փայտի հարվածից խիստ ցավ էր զգում ու ամոթահար էր եղել այն բանից, որ նրան արդեն երկրորդ անգամ զինաթափ են անում, թվում էր, որ նա պատրաստվել է մահու և կենաց պայքարի. այդ բանն զգալով, Կոռնելիուսը դիմեց ծայրահեղ միջոցների: Հերոսական սառնասրտությամբ նա սկսեց իր բանտապահի գլխին հարվածներ տեղալ, նախօրոք ընտրելով այն տեղերը, որտեղ որ պետք է իջեցներ իր մահակը:

Շուտով Գրիֆուսը թողություն խնդրեց:

Սակայն, նախքան թողություն խնդրելը, նա բղավում էր



շատ բարձր: Նրա աղաղակը տարածվեց ամբողջ բանտով մեկ
և ոտքի հանեց բանտի բոլոր ծառայողներին: Նրկու դռնա-
պաններ, մեկ վերակացու և երեք թե չորս զինվորներ հան-
կարծ հայտնվեցին և Կոռնելիուսին բռնեցին հանցանքի վայ-
րում՝ մահակը ձեռքին, դանակն ընկած ոտքերի տակ:

Կոռնելիուսն իրեն վերջնականապես կործանված զգաց,
երբ իր հանցագործ գործողություններին վկաներ գտնվեցին

որոնց, ինչպես ասում են, ոչ մի մեղմացուցիչ հանդամանք չկար:

Իրոք որ բոլոր հանցանշանները նրա դեմ էին: Մի վայրկյանում Կոռնելիուսին զինաթափ արեցին, իսկ Գրիֆուսին զգուշությամբ բարձրացրին ու բռնեցին, որ շնչկնի: Սակայն վերջինս չարությունից մոռնալով կարող էր հաշվել հարվածներին իր մեջքին ու ուսերին առաջացած կոշտուկներն ու ուռուցքները:

Հենց տեղում կազմեցին արձանագրություն այն մասին, որ բանտարկյալը բանտապահին հարվածներ է հասցրել: Արձանագրությունը՝ թելադրված Գրիֆուսի կողմից, դժվար թե աչքի ընկներ մեղմությամբ: Խոսքը վերաբերում էր ոչ ավել, ոչ պակաս, քան բանտապահի դեմ կանխամտածված մահափորձին ու բացարձակ խռովությանը:

Մինչ Կոռնելիուսի դեմ արձանագրություն էր կազմվում, երկու դռնապանները ծեծված ու տնքացող Գրիֆուսին տարան իր բնակարանը, քանի որ նա արդեն իր ցուցմունքները հայտնել էր և կարող էր զնալ:

Կոռնելիուսին բռնող պահակները նրան ծանոթացրին լեեշտեյնում գործող օրենքների հետ, որոնց վերջինս առանց այն էլ նրանցից ավելի լավ ծանոթ էր, քանի որ բանտ բերելու ժամանակ նրա համար կարդացվել էին և մի քանիսը խիստ տպավորվել էին նրա մտքում:

Պահակները, ի միջի այլոց, պատմեցին, թե ինչպես 1668 թվականին, այսինքն՝ հինգ տարի դրանից առաջ, այդ օրենքները կիրառվեցին Մատիաս անունով մի բանտարկյալի նկատմամբ, որը շատ ավելի թեթև հանցանք էր գործել, քան Կոռնելիուսը:

Մատիասին թվացել էր, թե իր կերակուրը շատ տաք է, և նա շուտ էր տվել պահակախմբի պետի գլխին, որն այդ լվացումից հետո տհաճ անակնընկալ էր ունեցել և դեմքը սրբելիս պլոկել էր նաև դեմքի մաշկի մի մասը: Տասներկու ժամ անց Մատիասին դուրս էին բերել իր խցից:

Այնուհետև նրան տարել էին բանտի գրասենյակ, որտեղ արձանագրել էին, որ վերջինս լեեշտեյնից դուրս է գրվել:

Այնուհետև նրան առաջնորդել էին բերդի առջևի հրա-

պարակը, որտեղից տասնմեկ մղոն տարածութեան վրա հրաշալի տեսարան է բացվում:

Այստեղ նրա ձեռքերը կապել էին:

Այնուհետև կապել էին նաև աչքերը և հրամայել էին կարգալ երեք աղոթք: Այնուհետև առաջարկել էին ծնկի գալ, և լեռնաշխարհի պահակախումբը, թվով տասներկու մարդ, սերժանտի հրամանով, ճարպկութեամբ նրա մարմնի մեջ տեղավորել էր հրացաններից արձակած մեկական զնդակ, որից և Մատիասը իսկույն ևեթ մեռած ընկել էր:

Կոռնելիուսը այդ տհաճ պատմությունը լսեց շատ մեծ ուշադրութեամբ:

— Ա՛,— ասաց նա, լսելով մինչև վերջ,— դուք ասում եք տասներկու ժամ ա՛նց:

— Այո, ինձ թվում է, որ նույնիսկ լրիվ տասներկու ժամ էլ չէր անցել,— պատասխանեց պատմողը:

— Շնորհակալութիւն,— ասաց Կոռնելիուսը:

Դեռևս պատմողի դեմքից չէր չքացել սիրալիր ժպիտը, որով նա ուղեկցում էր իր պատմությունը, երբ սանդուղքների վրա լավեցին բարձր ոտնաձայներ:

Կոշկախթանները զնգալով դիպչում էին աստիճանների մաշված եզրերին:

Երբ սպան մտավ Կոռնելիուսի խուցը, դրագիրը դեռևս շարունակում էր արձանագրութիւն կալմելը:

— Սա՛ է տասնմեկերորդ համարը,— հարցրեց սպան:

— Այո՛, զնդապետ,— պատասխանեց ենթասպան:

— Նշանակում է սա՞ է բանտարկյալ Կոռնելիուս վան Բեռլեի խուցը:

— Ճիշտ այդպես, զնդապետ:

— Այստե՞ղ է բանտարկյալը:

— Ես այստեղ եմ, պարոն,— պատասխանեց Կոռնելիուսը և, շնայած իր արիասրտութեանը, թեթևակի գունատվեց:

— Դո՛ւք եք Կոռնելիուս վան Բեռլեն,— հարցրեց զնդապետը, այս անգամ անմիջականորեն դիմելով բանտարկյալին:

— Այո՛, պարոն:

— Այդ դեպքում հետևեցեք ինձ:

— Օ՛հ,— շնչաց Կոռնելիուսը, որի սիրտը մահւման թախիծից ճմլւիկաց:— Լեեշտեյնում այս ինչ արագ են արւում գործերը, իսկ այս հիմարը խոսում էր ինչ-որ տասներկու ժամվա մասին:

— Դե, տեսնո՞ւմ եք, ես ի՞նչ էի ասում,— դատապարտւածի ականջին շնչաց այն պահակը, որը Լեեշտեյնի պատմութեանը լավատեղյակ էր:

— Դուք ստեցիք:

— Ինչպե՞ս թե:

— Դուք ինձ խոստացաք տասներկու ժամ:

— Ախ, հա՛, սակայն ձեր հետևից ուղարկել են նորին վերադանցութեան համհարդին, ըստ որում, նրա ամենամոտիկներից մեկին, պարոն վան Դեկենին: Այդպիսի պատվի յշվառ Մատիասին շարժանացրին, սատանա՛ն տանի:

— Լա՛վ, լա՛վ,— նկատեց Կոռնելիուսը, աշխատելով խոր շնչել,— լա՛վ, ցույց տանք այս մարդկանց, որ Կոռնել դե Վիտի ոանիկը կարող է առանց դեմքի մկանք շարժելու անգամ հրացանի նույնքան զնգակ ընդունել, որքան ընդունեց ինչ-որ մի Մատիաս:

Եվ նա հպարտ անցավ գրագրի առջևից, որը կտրվելով իր աշխատանքից, քաջություն ունեցավ սպային ասելու.

— Սակայն, զնդապետ վան Դեկեն, արձանագրութեանը դեռևս չի ավարտուել:

— Ավարտելու այլևս հարկ չկա:

— Լա՛վ,— պատասխանեց գրագիրը, փիլիսոփայի տեսքով տեղավորելով իր թղթերն ու գրիչը ճարպոտված պայուսակի մեջ:

«Ինձ բախտ չի վիճակված այս աշխարհում իմ անունը կտակելու ո՛չ զավակի, ո՛չ ծաղկի, և ո՛չ էլ գրքի»,— մտածեց Կոռնելիուսը:

Եվ արիաբար, զլուխը բաշճր պահած, նա հետևեց սպային:

Կոռնելիուսը հաշիւում էր աստիճանները, որոնք տանում էին դեպի հրապարակ, ղղջալով, որ պահակին չի հարցրել, ի՞նչ դրանք քանի հատ են: Վերջինս իր ծառայելու պատրաս-



տակամությամբ, իհարկե, չէր հասլաղի տեղեկություններ տալու այդ մասին:

Իր ճանապարհին, որը դատապարտւոյալը ընդունում էր որպէս նշանավոր ճանապարհորդութեան վախճան, նա միայն մի բանից էր վախենում, դա այն էր, որ ինքը կտեսնի Գրիֆուսին և ոչ թե Ռոզային: Ինչպիսի՜ չարախինդ բավարարածութիւն կարտահայտի հոր դեմքը, ինչպիսի՜ տանջանք կարտահայտի աղջկա դեմքը: Որքա՜ն կուրախացնի Գրիֆուսին այդ մահապատիժը. սակայն դա մի վայրենի վրեժ է Կոռնելիուսի վերին աստիճանի արգարացի վարմունքի հանդեպ, մի վարմունք, որի իրագործելը վան Բեռլեն իր պարտքն էր համարում:

Սակայն Ռոզա՜ն, այդ թշվառ աղջիկը: Հնարավո՞ր բան է արդյոք, որ ինքը մեռնի և չտեսնի նրան, վերջին անգամ չհամբուրի ու չուղարկի իր վերջին թողութիւնը: Մի՞թե ինքը պետք է մեռնի առանց որևէ տեղեկութիւն ստանալու մեծ, սև կակաչի մասին:

Մարդ պետք է չափազանց արիասիրտ լինի, որպեսզի այդպիսի մի ըոպէի չհեկեկա:

Կոռնելիուսը նայում էր աջ, նայում էր ձախ, սակայն նա արդեն հասել էր հրապարակին, բայց ոչ Ռոզան, ոչ Գրիֆուսը չէին երևում:

Թվում էր, որ նա գոհ էր:

Հրապարակում Կոռնելիուսն սկսեց աչքերով ուշադրութեամբ փնտրել պահակներին՝ իր դահիճներին, և, իսկապէս.

տեսավ մի խումբ զինվորների, որոնք խմբով կանգնած՝ զրուցում էին։ Նրանք զրուցում էին, սակայն ձեռքներին հրացաններ չկային. կանգնած զրուցում էին, սակայն շարք չէին կազմել։ Նրանք ավելի շուտ փսփսում էին, քան թե զրուցում. մի վարմունք, որը Կոռնելիուսին թվաց անարժան այն հանգիսավորությանը, որը սովորաբար լինում է նման պարագաներում։

Հանկարծ կաղալով, օրորվելով ու հենակի վրա կռթնած՝ երևաց Գրիֆուսը։ Նրա ծեր, կատալային աչքերը վերջին անգամ ատենությամբ վառվեցին։ Գրիֆուսն սկսեց զարշնչի անեծքների հեղեղ թափել Կոռնելիուսի գլխին. վան Բեռլեն ստիպված եղավ դիմել սպային.

— Պարո՛ն,— ասաց նա,— ես համարում եմ անթույլատրելի, որ այս մարդն ինձ վերավորի, այն էլ այսպիսի մի բոլակի։

— Լսե՛ք, ախր,— ծիծաղելով պատասխանեց սպան,— չէ՞ որ հասկանալի է, որ այդ մարդը պետք է ձեզ վրա զայրացած լինի. ասում են, որ դուք մի լավ ծեծել եք։

— Սակայն, պարո՛ն, դա միայն ինքնապաշտպանության նպատակ ունի։

— Դե,— ասաց սպան, փիլիսոփայի նման ուսերը թոթվելով,— դե, թողե՛ք նրան, թող խոսի։ Ձեզ համար հիմա արդեն միևնույն չէ՞։

Դժբախտը հասկացավ, որ ինքն այլևս հուսալու ոչինչ չունի, չունի ոչ մի բարեկամ և հնազանդվեց ճակատագրին։

— Թող այդպե՛ս լինի,— շնչաց նա՝ գլուխը կախելով։

Քիչ անց նա նորից դիմեց սպային, որը, թվում էր, թե սիրալիրությամբ սպասում էր, մինչև Կոռնելիուսը կվերջացնի իր խորհրդածությունները։

— Հիմա ո՞ւր պետք է գնամ, պարո՛ն,— հարցրեց վան Բեռլեն։

Սպան նրան մատնացույց արեց մի կառք, որին լծված էին չորս ձիեր, և հիշեցնում էր այն կառքը, որը հենց այսպիսի հանգամանքներում մեկ անգամ արդեն տեսել էր Բյուլտենհոֆյան հրապարակում։

— Կառք նստեցեք,— ասաց սպան։

— Օ՛հ, թվում է, թե բերդի հրապարակն ինձ արժանի չեն գտնում:

Այս խոսքերը Կոռնելիուսն այնքան բարձր ասաց, որ «ամենագիտուն» պահակը, որը կցված էր նրա անձնավորությանը, դրանք լսեց: Ամենայն հավանականությամբ, նա հարկ համարեց Կոռնելիուսին մի նոր բացատրություն տալ, և մինչ սպան կառքի ոտնատեղին կանգնած ինչ-որ կարգադրություններ էր անում, նա մոտեցավ կառքի դռանն ու ցածր ձայնով Կոռնելիուսին ասաց.

— Եղել են դեպքեր, երբ դատաւարտվածին բերել են իր հայրենի քաղաքը և, որպեսզի օրինակն առավել ցուցադրական լինի, մահապատժի են ենթարկել հենց իր տան դռների առջև: Դա կախված է հանգամանքներից:

Կոռնելիուսը, ի նշան շնորհակալության, գլխով արեց: Հետո ինքն իրեն մտածեց. «Դե, ի՞նչ, փառք աստծո, կա մեկը, որը առիթը բաց չի թողնում պետք եղած ժամանակ մխիթարական խոսք ասելու»:

— Բարեկամս, ես ձեզանից շատ շնորհակալ եմ, մնաք բարո՛ւ:

Կառքը շարժվեց:

— Ա՛խ, ստո՛ր, ա՛խ, սրիկա՛,— ծղրտում էր Գրիֆուսը՝ բռունցք ցույց տալով իր զոհին, որը խույս տվեց իրենից:— Համենայն դեպս, նա զնաց, առանց վերադարձնելու իմ աղջրկան:

«Եթե ինձ Դորդրեխտ տանեն,— մտածեց Կոռնելիուսը,— այդ դեպքում իմ տան մոտից անցնելիս ես կտեսնեմ, թե ծաղկաթմբերն ինչ վիճակում են»:

Որտեղ սկսում են կանկածել, թե ինչպիսի պատժի է դատապարտված Կոռնելիուս վան Բեդեն

Կառքն ամբողջ օրը զնաց: Դորդրեխտը մնաց ձախ կողմում, կտրեցին Ռոտերդամը ու հասան Դելֆտին: Ժամը հինգին մոտ նրանք անցել էին ամենապակասը քսան մղոն:

Կոռնելիուսը մի քանի անգամ հարցերով դիմեց այն սպային, որը կատարում էր նաև սլահակի և ուղեկցողի դերը։ Նայած հարցերը խիստ զգույշ էին, բայց, դժբախտաբար, մնացին անպատասխան։

Կոռնելիուսն ամիսոսաց, այն սլահակը չէր իր հետ, որն առանց սպասելու իրեն խնդրեն, մեծ հաճույքով խոսում էր։ Ամենայն հավանականությամբ, այս անգամ էլ, նա կհայտնեի հաճելի մանրամասնություններ և կտար այնպիսի ճշգրտիտ տեղեկություններ, ինչպես նախորդ երկու անգամ։

Կառքը գնում էր գիշերով։ Հաջորդ օրը, լուսաբացին, Կոռնելիուսը արդեն անցել էր Լեյդենից, նրա ձախ կողմում գտնվում էր Հյուսիսային ծովը, իսկ աջ կողմում՝ Հաառլեմի ծոցը։

Երեք ժամ անց նրանք մտան Հաառլեմ։ Կոռնելիուսը ոչինչ չգիտեր, թե այդ ընթացքում Հաառլեմում ինչեր էին տեղի ունեցել, և մենք էլ նրան կթողնենք այդ անտեղյակության մեջ, մինչև որ հանգամանքներն իրենք կբացահայտեն ամեն ինչ։

Սակայն, մենք նույն ձևով չենք կարող վարվել մեր ընթերցողի հետ, որն իրավունք ունի նույնիսկ հերոսից ավելի շուտ ամեն ինչի մասին տեղյակ լինելու։

Մենք տեսանք, որ Ռոզան և կակաչը քույր ու եղբոր կամ երկու որբուկների նման արքայազն Վիլհելմ Օրանցու կողմից թողնվեցին նախագահ վան Սիստենսի մոտ։

Մինչև երեկո Ռոզան արքայազնից ոչ մի տեղեկություն չունեի։

Երեկոյան վան Սիստենսի մոտ մի սպա եկավ։ Նորին մեծության անունից նա եկել էր Ռոզային հրավիրելու քաղաքապետարան։ Այնտեղ նրան առաջնորդեցին խորհրդակցությունների դահլիճը, որտեղ և աղջիկը տեսավ արքայազնին ինչ-որ բան գրելիս։

Արքայազնը մենակ էր։ Նրա ոտքերի մոտ նստած էր ֆրիսլանդական մի մեծ շուն։ Հավատարիմ կենդանին այնպես ուշադիր էր նայում իր տիրուջը, որ թվում էր, թե ցանկանում է անել այն, ինչ ոչ մի մարդու չի հաջողվել կարդալ իր տիրուջ մտքերը։

Վիլհելմը որոշ ժամանակ շարունակեց գրել, այնուհետև աչքերը բարձրացրեց ու նայեց Ռոզալին, որը դեռ կանգնած էր դռների միջև:

— Մոտեցե՛ք, օրիորդ,— ասաց նա՝ շղագարեցնելով դրեկը:

Ռոզան մի քանի քայլ արեց դեպի սեղանը:

— Տե՛ր իմ,— ասաց նա կանգ առնելով:

— Բարի, նստեցե՛ք:

Ռոզան հնազանդեց, քանի որ արքայազներ նրան էր նայում: Բայց հենց որ նա աչքերն իջեցնում էր թղթի վրա, աղջիկը շփոթված նորից ոտքի էր կանգնում: Արքայազներ նամակը վերջացնելու վրա էր: Այդ ժամանակ շունը մոտեցավ Ռոզալին ու սկսեց քնքշությամբ հոտոտել:

— Ա՛,— ասաց Վիլհելմը շանը,— դու ճանաչեցի՞ր հայրենակցիդ, ճանաչեցի՞ր:

Այնուհետև հայացքը հառնելով Ռոզալին, դիմեց նրան:

— Հսի՛ր ինձ, աղջիկս,— ասաց նա:

Արքայազներ քսաներեք տարեկանից ավելի չէր լինի, իսկ Ռոզան՝ տասնութ-քսան տարեկան էր, ավելի ճիշտ՝ կլիներ, եթե նա աղջկան «քույրիկս» անվաներ:

— Աղջի՛կս,— ասաց նա նույն խիստ տոնով, որից բոլոր նրան ճանաչողները քարանում էին,— մենք հիմա մենակ ենք, ե՛կ խոսենք:

Չնայած արքայազներ շատ բարեհամբույր տեսք ուներ, սակայն Ռոզան ամբողջ մարմնով սարսռաց:

— Տե՛ր իմ,— կմկմաց նա:

— Ձեր հայրը կեղտեցնում է:

— Այո՛, տեր իմ:

— Դուք նրան սիրո՞ւմ եք:

— Համենայն դեպս, տե՛ր իմ, ես նրան չեմ սիրում այն սիրով, ինչպես որ պետք է աղջիկը սիրի հորը:

— Լավ չէ, աղջիկս, չսիրել իր հորը, սակայն լավ է ճիշտն ասել իր արքայազնին:

Ռոզան աչքերը խոնարհեց:

— Իսկ ինչո՞ւ չեք սիրում ձեր հորը:

— Իմ հայրը շատ չար մարդ է:

— Ինչո՞ւմ է դրսևորվում նրա շարունակությունը:

— Իմ հայրը շատ վատ է վարվում բանտարկյալների հետ:

— Բոլորի՞ հետ:

— Բոլորի հետ:

— Սակայն դուք կարո՞ղ եք նրան մեղադրել այն բանում, որ նա վատ է վերաբերվում հատկապես նրանցից մեկի հետ:

— Իմ հայրը հատկապես վատ է վերաբերվում պարոն վան Բեռլի հետ, որը...

— Որը ձեր երկրպագո՞ւն է:

Ռուդան մի քայլ էտ դնաց:

— Որին ես սիրում եմ, տե՛ր իմ,— հսկարտ պատասխանեց նա:

— Վաղո՞ւց է,— հարցրեց Ղուքսը:

— Այն օրվանից, երբ նրան տեսա:

— Իսկ ե՞րբ տեսաք նրան:

— Մեծ պենսիոնարիի և նրա եղբոր սարսափելի մահվան հաջորդ օրը:

Արքայազներ շրթունքները սեղմեց, ճակատը կնճռոտեց ու աչքերն իջեցրեց, որպեսզի մի ակնթարթ թաքցնի դրանք: Մի պահ լռելուց հետո նա շարունակեց.

— Իսկ ի՞նչ իմաստ ունի սիրել մի մարդու, որը դատապարտված է ցմահ բանտարկության ու մահվան:

— Այն իմաստը, տե՛ր իմ, որ եթե նա դատապարտված է իր ամբողջ կյանքն անցկացնել բանտում և այնտեղ էլ մեռնել, ապա ես կարող եմ թեթևացնել նրա կյանքն էլ, մահն էլ:

— Իսկ դուք կհամաձայնվեի՞ք դառնալ բանտարկյալի կին:

— Ես աշխարհի ամենահպարտ և երջանիկ էակը կլինեի, եթե վան Բեռլի կինը դառնայի, սակայն...

— Սակայն ի՞նչ...

— Ես չեմ համարձակվում ասել, տե՛ր իմ:

— Ձեր ձայնի մեջ հույսի շեշտեր են լսվում: Ինչի՞ վրա եք հույս դնում:

Աղջիկը բարձրացրեց իր պայծառ աչքերը, բռնեց այն-
քան խելացի ու խորաթափանց էին. և այդ խավար սրտի
խորքում մեռածի քնով քնած բարեգթությունը հանկարծ
շարժվեց:

— Իսկ ես հասկացա՛:

Ռոզան ձեռքերը աղաչական ծալելով, ժպտաց:

— Դուք ինձ վրա՞ եք հույս դնում,— ասաց արթալագներ:

— Այո՛, տեր իմ:

— Ա՛:

Դուքսը կնքեց նամակը, որը նա հենց նոր վերջացրել էր,
և կանչեց սպաններից մեկին:

— Պարոն վան Դեկեն,— ասաց նա,— այս ուղերձը տա-
րեք Լենշտեյն: Դուք կկարդաք պարետին տված իմ կարգա-
դրությունը, իսկ ինքներդ կկատարեք այն բոլորը, ինչ վերա-
բերում է ձեզ՝ անձամբ:

Սպան խոնարհվեց և շուտով քաղաքատեսարանի խուլ
կամարների տակ լսվեց ձիու դուրյուն:

— Աղջիկս,— ասաց դուքսը,— կիրակի օրը կկայանա
կակաչի առնահանդեսը: Կիրակին վաղը չէ մյուս օրն է: Ահա
ձեզ հինգ հարյուր ֆլորին, այդ փողով ձեզ համար հագուստ-
ներ գնեք: Ես ուղում եմ, որ այդ օրը ձեզ համար դառնա
մեծ տոն:

— Իսկ ձերդ մեծությունը ինչպիսի՞ հագուստով կուզե-
նար ինձ տեսնել,— շնչաց Ռոզան:

— Հագեք ֆրիսլանդական հարսնացուի շորեր,— ասաց
Վիլհելմը,— ձեզ շատ կսազի:

31

Հաառլեմ

Հաառլեմը, ուր մենք երեք օր առաջ մտանք Ռոզայի հետ
և այնուհետև մտանք բանտարկյալի հետևից, մի գեղեցիկ
քաղաք է, և իրավունք ունի պարծենալու նրանով, որ Հո-
լանդիայի ամենից ավելի կանաչապատ քաղաքն է:

Այն դեպքում, երբ մնացած քաղաքները ձգտում էին փախլել զորանոցներով, նավաշինարաններով, խանութներով ու շուկաներով, Հաաուլեմը Միացյալ պրովինցիաների բոլոր քաղաքների մեջ վառաբանվում էր իր սքանչելի, փարթամ թվերով, ուղղաձիգ բարդիներով և հիմնականում՝ իր արևաշատ ծառուղիներով, որոնց վրա կամար են կապել կաղնիների, լորենիների ու շագանակենիների պսակները:

Տեսնելով, որ իր հարևան լեյդենը և թագավորական Ամստերդամը ձգտում են դառնալ մեկը՝ դիտության քաղաք, մյուսը՝ առևտրի կենտրոն, Հաաուլեմը որոշեց դառնալ հողաբորժուկության կամ ավելի շուտ՝ ալգեդործության կենտրոն: Եվ իրոք, լինելով քամիներից լավ պաշտպանված ու արևաշատ, Հաաուլեմը ալգեդործներին տալիս էր այնպիսի հնարավորություններ, որոնք քամիներով շրջապատված կամ հարթավայրի արևի տակ խաշվող ոչ մի քաղաք չէր կարող տալ:

Հաաուլեմում հաստատվել էին խաղաղ բնավորությամբ մարդիկ, որոնց ձգում էր հողն իր բարիքներով, այն դեպքում, երբ Ամստերդամում ու Ռոտերդամում ապրում էին անհանգիստ, շարժուն մարդիկ, որոնք սիրում էին ճանապարհորդություն և առևտուր, իսկ Հաաուլեմում հավաքվել էին բոլոր քաղաքագետներն ու հասարակական գործիչները:

Մենք ասում ենք, որ լեյդենը գիտության քաղաք էր: Իսկ Հաաուլեմը տոգորված էր սիրով դեպի նրբագեղ արվեստները՝ դեպի երաժշտությունը, գեղանկարչությունը, պտղատու այգիները, ծառուղիները, անտառներն ու ծաղկանոցները: Հաաուլեմը խելագարի նման սիրեց ծաղիկները, իսկ ծաղիկների մեջ՝ ամենից շատ կակաչը:

Ինչպես տեսնում ենք, մենք կադարելապես բնական անապարհով մեր նկարագրության մեջ հասնում ենք այն տեղին, երբ Հաաուլեմ քաղաքը 1673 թվականի մայիսի տասնհինգին պատրաստվում էր նշանակված հարյուր հազար ֆլորին պարգևը հանձնել այն մարդուն, որը աճեցրել էր անթերի, առանց բծերի սև կակաչ:

Դրսևորելով իր մասնագիտությունը, ի լուր բոլորի հաստարարելով ծաղիկների և հատկապես կակաչների նկատմամբ ունեցած իր սիրո մասին պատերազմների ու ապստամ

բությունների այդ դարում, Հաաուլեմը ապրում էր աննկարագրելի ուրախության օրեր, հասնելով իր ձգտումներին և, ամենայն իրավամբ, իրեն էր վերագրում այն մեծագույն պատիվը, որ իր մասնակցությամբ աճել ու ծաղկել է շնաշխարհիկ կակաշը: Եվ Հաաուլեմը, այդ գեղեցիկ քաղաքը, որ լիքն էր կանաչով ու արևով, ստվերով ու լույսով, Հաաուլեմը ցանկացավ պարգևի հանձնման ծիսակատարությունը վերածել մի այնպիսի տոնակատարության, որն ընդմիջա կոմնար սերունդների հիշողության մեջ:

Այդ բանն անելու նա շատ իրավունք ուներ, քանի որ Հոլանդիան տոնահանդեսների երկիր է: Դեռ երբեք աշխարհի ամենածույլ ժողովուրդներից ոչ մեկն այդքան աղմուկ չէր հանել, չէր երդել ու պարել այդպիսի հախուռն թափով, ինչպես այդ արեցին զվարճությունների ժամանակ Յոթ նահանգների բարի հանրապետականները:

Որպեսզի դրանում համոզվենք, բավական է միայն նայել երկու Թենիրսների՝ նկարներին: Հայտնի է, որ ծույլ մարդիկ մյուսներից ավելի են հակված իրենց հոգնեցնելու, միայն ոչ թե աշխատանքով, այլ հաճույքներով:

Այսպես ուրեմն, Հաաուլեմը եռակի ուրախություն էր ապրում. նա պատրաստվում էր տոնել երեք տոնահանդես միաժամանակ. առաջինը՝ աճեցվել էր սև կակաշ. երկրորդ՝ տոնահանդեսին, որպես իսկական հոլանդացի, ներկա էր վիլհելմ Օրանցին: Վերջապես, 1672 թվականի քայքայիչ պատերազմից հետո պետության պատվի գործն էր դարձել ֆրանսիացիներին ցույց տալ, որ Բատավյան հանրապետության² հիմքն այնքան ամուր է, որ դրա վրա ծովային զենքերի նվազակցությամբ կարելի է պարել:

1 Դավիթ Թենիրս Ավագ (1582—1649) և նրա որդի՝ Դավիթ Թենիրս Կրտսեր (1610—1690) — ֆլամանդական նշանավոր նկարիչներ:

2 Բատավյան հանրապետություն — Հոլանդիայի անվանումներից մեկը: Մագել է բատավ ցեղի անունից, որոնք ապրում էին Նիդեռլանդների տերիտորիայում մեր թվագրության սկզբներում: Պաշտոնապես Հոլանդիան Բատավյան հանրապետություն էր կոչվում 1795 թվականից սկսած մինչև 1806 թվականը:



Կակաշի մի սոխուկի համար զոհաբերելով հարյուր հազար ֆլորին, Հաաուեմի ալգեգործների ընկերությունը գտնելեց իր բարձրության վրա: Քաղաքը չցանկացավ ետ մնալ և այդքան գումար էլ տրամադրեց պարգևի պատվին տրվող տոնահանդեսին:

Եվ ահա, կիրակին, ծիսակատարության համար նշանակված օրը, դարձավ ժողովրդական ցնծության օր: Քաղաքացիներին համակել էր անսովոր մի եռանդ: Նույնիսկ նրանք, որոնք օգտված էին ֆրանսիացիների թեթևաբարո բնավորությամբ, որոնք սովոր էին ամեն ինչ և ամենքին ձեռք առնել, չէին կարող չհիանալ այդ հիանալի հուանդացիներով, որոնք պատրաստ էին նույնանման թեթևությամբ փող ծախսել շոգենավերի կառուցման վրա՝ թշնամու դեմ պայքարելու համար, և պարգև տալ ծաղկի մի նոր տեսակի հայտնագործման համար, որը միայն մեկ օր սլետք է փայլեր և այդ օրվա ընթացքում զվարճացներ կանանց, գիտնականներին ու հետաքրքրասերներին: Որպես քաղաքի ու ալգեգործների կոմիտեի ներկայացուցչության ղեկավար, իր ամբողջ շուքով փայլում էր վան Սիստենսը, որը հագել էր իր ամենալավ հագուստը: Մյու պատվարժան պարոնը ամեն ճիգ գործ էր դրել, որպեսզի իր սև ու խիստ հագուստը նրբաճաշակությամբ նմանվի իր սիրած ծաղկին և, շտապենք ասելու, որ նրան այդ հաջողվել էր: Սև ուլունքաձողիկներով պատած կապույտ թավիշը, մուգ մանուշակագույն մետաքսը, ճեփ-ճերմակ սպիտակեղենի զուգակցությամբ, ահա թե որն էր նախագահի հանդիսավոր համազգեստը. նախագահը մի

մեծ ծաղկեփունջ ձեռքին բռնած՝ գլխավորում էր կոմիտեի թափորը:

Կոմիտեի հետևից, դաշտային ծաղիկների նման խայտաբղետ ու գարնան նման բուրումնալից երթով գնում էին քաղաքի խորհրդի գիտնական անդամները, դատաստանական խորհուրդը, զինվորականները, ազնվականության և գյուղացիության ներկայացուցիչները: Ինչ վերաբերում է ժողովրդական զանգվածներին, ապա Յոթ նահանգների հանրապետականների մոտ անգամ նրանք շունեին իրենց տեղն այդ շքերթում. այդ ամենին նրանք մասնակից էին դառնում միայն կողքերից խցկվելով:

Ի միջի այլոց, դա ամենալավ տեղն էր ինչպես նայելու, այնպես էլ դործելու համար: Այդտեղ հավաքվում էր ժողովրդական ամբոխը և սպասում, մինչև որ հանդիսավոր արիումֆով¹ թափորը կանցնի, իսկ հետո նա իր անելիքը գիտի: Այս անգամ Պոմպեոսի² հաղթական երթի կամ էլ Կեսարի մասին խոսք չեղավ: Այս անգամ չէր տոնվում ոչ Միհրդատի պարտությունը և ոչ էլ Գալիայի³ նվաճումը: Երթն այնպես հանգիստ էր, ինչպես ոչխարի խաղաղ հոտը կանցնի, ինչպես թռչունը երկնքում կճախրի:

Հաառվեմում հաղթանակողները միայն այգեպաններն էին: Պաշտելով ծաղիկները, Հաառվեմը աստվածացնում էր ծաղկագործներին:

Այդ խաղաղ, օծված թափորի մեջտեղում վեր էր խոյանում սև կակաչը, որը դրված էր ոսկեգույն երիզներ ունեցող, սպիտակ թավշով պատած պատգարակների վրա: Զորս մարդ, ժամանակ առ ժամանակ փոխվելով, տանում էին պատգարակը, նման այն բանին, երբ ժամանակին Հռոմում փոխվում

1 Տրիումֆ — Հին Հռոմում հաղթանակող զորավարի հանդիսավոր մուտքը մայրաքաղաք:

2 Գնեյ Պոմպեոս (106—48 մ. թ. ա.) — հռոմեական զորավար ու քաղաքական գործիչ: Միահեծան իշխանության համար Կեսարի հետ բացարձակ պայքարի մեջ մտավ:

3 Նկատի է առնվում այն հաղթանակը, որ Պոմպեոսը տարավ Պոնտական կայսր Միհրդատի (66 թ. մ. թ. ա.) դեմ և Հուլիոս Կեսարի կողմից Գալիայի նվաճումը (58—51 թ. մ. թ. ա.):

էին Քիբելայի¹ Մեծ մոր պատկերը տանող մարդիկ, երբ էթ-
րուրիայից² շեփորների հնչյունների ու ընդհանուր խոնարհու-
թյան ներքո այն մտցնում էին հավերժական քաղաքը³:

Պայմանավորվել էին, որ փոխարքա արքայազնը ինքը
կհանձնի հարյուր հազար ֆլորին պարգևը, որը բոլորի հա-
մար էլ խիստ հետաքրքիր տեսարան էր ներկայացնում, և
գուցե նույնիսկ ճառ էլ ասի, որը հետաքրքրում էր ինչպես
նրա բարեկամներին, այնպես էլ՝ թշնամիներին:

Հայտնի է, որ քաղաքական գործիչների ամենաանշան
ճառերում անգամ նրանց բարեկամները կամ թշնամիները
աշխատում են միշտ բացահայտել կամ զանազան մեկնա-
բանություններ տալ ճառասացի առավել կարևոր ակնարկ-
ներին:

Վերջապես հասավ այդքան քաղձալի ու հանդիսավոր
օրը՝ 1673 թվականի մայիսի տասնհինգը: Ամբողջ Հաաուե-
մը, իր բոլոր արվարձաններով, դուրս էլ թափվել և տեղ էր
գրավել սքանչելի ծառուղիների երկայնքով, այն վճռական
մտադրություններ, որ այս անգամ պետք է ծափահարի ոչ թե
զինվորականներին ու մեծ զինակազմներին, այլ բնության
սովորական հաղթողներին, որոնք ստիպել են այդ անսպառ
մորը ծնել մինչ այդ անհնար համարվող սև կակաչը:

Սակայն ամբոխի մտադրությունները՝ ողջունելու որևէ
մեկին կամ որևէ բանի, երբեմն խիստ խախտում են լինում:
Եվ, երբ քաղաքը պատրաստվում է ծափահարել կամ էլ
սուլոցով հեռացնել որևէ մեկին, ապա նախօրոք չգիտես, թե
դրանցից ո՞ր մեկի վրա ինքը կանգ առնի:

Այսպես/ուրեմն, սկզբում ծափահարեցին վան Սիստեն-
սին՝ իր ծաղկեփնջով, ծափահարեցին իրենց կորպորա-
ցիաներին⁴, ծափահարեցին իրենք իրենց: Եվ, վերջապես,

1 Քիբելա — անտիկ դիցաբանության մեջ աստվածների մայրը: Նրա
պաշտամունքը Հռոմեական կայսրությունում մեծ տարածում էր գտել:

2 էթրուրիա — նահանգ Հին Իտալիայում:

3 Հավերժական քաղաք — այսպես էին անվանում Հռոմը:

4 Կորպորացիա — միջնադարյան քաղաքներում արհեստավորների ու
վաճառականների միավորումներ: Տոնական հանդեսների ժամանակ քա-
ղաքացիները գնում էին իրենց կորպորացիաների հետ:

այս անգամ արդեն արդարացի կերպով, ծափահարեցին այն սքանչելի երաժշտությանը, որը ջանասիրաբար հնչում էր յուրաքանչյուր կանգառում:

Սակայն տոնահանդեսի առաջին հերոսից՝ սև կակաշից հետո բոլորի աչքերն սկսեցին փնտրել տոնահանդեսի մյուս հերոսին, այն մարդուն, որը այդ կակաշի ստեղծողն էր:

Եթե մեր հերոսը մեջտեղ գար փառավոր վան Սիստենսի աշգրան խնամքով կազմված ճառից անմիջապես հետո, ապա ամենայն հավանականությամբ, ավելի մեծ տպավորություն կթողեր, քան ինքը՝ փոխարքան: Սակայն մեզ համար օրվա հետաքրքրությունը ոչ թե՝ մեր հարգելի բարեկամ վան Սիստենսի ճառն էր, որքան էլ որ պերճախոս լիներ, կամ երիտասարդ ու պճնված ազնվականուհիները, որոնք շարունակ իրենց լավ թխված կարկանդակներն էին ծամում, կամ թշվառ, կիսամերկ պլեբեյները¹, որոնք կրծում էին վանիլի փայտիկների նման մխոտած օձաձկներ: Մեզ չեն հետաքրքրում նույնիսկ կարմրայտ, սպիտակալանջ, սքանչելի հոլանդուհիները, կամ գեր ու գաճաճ պարոնները, որոնք առաջ երբեք չէին թողնի իրենց տները և չէին դուրս գա, ոչ էլ նիհար ու դեղնած ճանապարհորդները, որոնք դալիս էին Յեյլոնից ու Ճավայից: Մեզ չէր հետաքրքրում նաև զրգոված հասարակ ժողովուրդը, որը թարմանալու համար ուտում էր աղ դրած վարունգ: Ոչ, մեզ համար այս բոլոր դեպքերի ամբողջ հետաքրքրությունը, հիմնական, իսկական, դրամատիկ հետաքրքրությունը ուրիշ բանի մեջ էր կենտրոնացած:

Մեզ հետաքրքրում էր այն անձնավորությունը, որը փայլուն ու զվարթ տրամադրությամբ այգեգործների կոմիտեի անդամների հետ մեկտեղ հպարտորեն քայլում էր. մեզ հետաքրքրում էր այդ անձնավորությունը, որը սանրված, օծված, հագնված էր ամբողջովին կարմիր հագուստ, մի դույն, որը հատկապես ընդգծում էր նրա սև մազերն ու դեմքի ղեղին գույնը:

Այդ խանդավառված, հիացմունքից հարբած տրիումֆա-

1 Պլեբեյներ — Հին Հռոմում արտոնություններից զուրկ ազատ բնակչությունը: Միջին դարերում՝ քաղաքային շրջավորությունը, հասարակ ժողովուրդը:

տորը, օրվա այդ հերոսը, որին մեծ պատիվ էր լիճակված, իրենով ստվեր գցել ոչ միայն վան Սիստենսի ճառի, այլ նաև փոխարքայի ներկայության փաստի վրա, Իսահակ Բոքստեյն էր: Նա տեսնում էր, թե ինչպես իր առջևից, աջ կողմից, թավշյա բարձի վրա տանում են սև կակաչը, նրա մտացածին գավակը, իսկ ձախից՝ հարյուր հազար ֆլորինով մի մեծ պարկ սքանչելի, փայլուն ոսկիներ. Բոքստեյլը պատրաստ էր իր աչքերը բոլորովին շիւղացնելու՝ աչքից չկորցնելու համար ոչ մեկը և ոչ էլ մյուսը:

Ժամանակ առ ժամանակ Բոքստեյլը արագացնում էր քայլերն ու արմունկով դիպչում վան Սիստենսի արմունկին: Բոքստեյն աշխատում էր ամեն մեկից փոխ առնել նրա բամբասանություններից որևէ բան, որպեսզի գրանով իր արժեքը բարձրացնի: Այդ նույն ձևով նա Թոգայից գողացավ կակաչը, որպեսզի ձեռք բերի փառք ու հարստություն:

Կանցնի մի քառորդ ժամ էլ, և փոխարքան կժամանի: Հանդիսավոր թափօրին մի վերջին կանգառ է մնացել: Երբ կակաչը դրվի իր գահի վրա, արքայազնը, որը ժողովրդի սրտում իր տեղը կղիջի իր մրցակցին, կվերցնի հոյակապ զարդանկարված մագաղաթը¹, որտեղ գրված է կակաչի ստեղծողի անունը և բարձր, հստակ ձայնով կհայտարարի, որ տեղի է ունեցել հրաշք:

Հռոմեացիներն նրա՝ Բոքստեյլի ձեռքով բնությանը ստիպել է ստեղծել սև կակաչ, և այդ ծաղիկը պետք է անվանվի *Tulipa nigra Bostellea*:

Ժամանակ առ ժամանակ Բոքստեյլը մի ակնթարթ հայացքը կտրում էր կակաչից ու փողերի պարկից և վախվախված նայում էր ամբոխին, կարծես թե երկյուղ կրելով, որ այնտեղ, ամբոխի մեջ կտեսնի սքանչելի ֆրիսկանդուհու գունատ դեմքը:

Հասկանալի է, որ այդ ուրվականը կխափաներ նրա ստեղծել, ինչպես Բանքոն խափանեց Մակբեթի² տոնը:

¹ Մագաղաթ (պերգամենտ) — հատուկ մշակված կաշի, որը հին և միջին դարերում ծառայում էր որպես նամակ գրելու թուղթ:

² Շեքսպիրի ողբերգությունում Բանքոյի ուրվականը, որը սպանվել էր Մակբեթի հրամանով, խնջույքի ժամանակ երևում է նրան:

Շտապենք ավելացնել, որ այդ արգահատելի մարդը, որը դողեգող անցավ պարսպի մյուս կողմը, և այն էլ ոչ իր սեփական պարսպի, պատուհանից ներս մտավ իր հարևանի բնակարանը, կեղծած բանալու միջոցով մտավ Ռոզայի սենյակը, այդ մարդը, որը տղամարդուց գողացավ նրա փառքը, իսկ կնոջից՝ նրա օժիտը, այդ մարդն իրեն գող չէր համարում:

Նա կակաչի համար այնքա՛ն էր անհանգստացել, այնպիսի՝ խնամքով էր հետևել ծաղկին, սկսած Կոռնելիուսի շուրանոցի արկղում գտնվելուց մինչև Բյուլտենհոֆյան կառափնարանը, Բյուլտենհոֆյան կառափնարանից մինչև Լեեշտեյնյան ամրոցի բանտը, նա այնքա՛ն լավ գիտեր, թե ինչպես Ռոզայի պատուհանի գոգում կակաչը ծնվեց ու աճեց, նա այնքա՛ն անգամ էր իր շնչով տաքացրել ծաղիկը շրջապատող օդը, որ ոչ ոք նրանից ավելի շատ իրավունք չէր կարող ունենալ իրեն համարելու կակաչի իսկական տերը: Եթե հիմա նրանից խլեին սև կակաչը, ապա դա, անկասկած, կլիներ գողություն:

Սակայն նա ոչ մի տեղ Ռոզային չտեսավ: Եվ, այդպիսով, Բոքստելի ուրախությունը ոչինչ չէր խանգարում:

Թափորը կանգ առավ կլոր հրապարակի մեջտեղում, որի հոյակապ ծառերը զարդարված էին ծաղկապսակներով ու մակագրություններով: Թափորը կանգ առավ երաժշտության բարձր հնչյունների տակ, Հաաուլեմի երիտասարդ աղջիկները առաջ անցան, որպեսզի կակաչը ուղեկցեն մինչև բարձր պատվանդանը, որի վրա այն նորին մեծության ոսկյա բազկաթոռի կողքին պետք է բաղմեր:

Եվ հպարտ կակաչը, վեհորեն բազմած իր պատվանդանին, շուտով դարձավ բոլոր հավաքվածների ուշադրության կենտրոնը. բոլորը ծափահարում էին, և այդ ծափերը տարածվում էին ամբողջ Հաաուլեմով մեկ:

Վերջին խնդիրքը

Այդ հանդիսավոր րոպեին, երբ հնչում էին բարձրագույն ծափերը, ճանապարհով, զբոսայգու երկարությամբ մի կառք էր գալիս: Նա շարժվում էր դանդաղ, քանի որ շտապող կսնայք ու տղամարդիկ ծառուղիներից երեխաներին դուրս էին քշել ճանապարհի վրա:

Այդ փոշոտված, մաշված, ամեն կողմից ճոճաղող կառքով գնում էր դժբախտ վան Բեռլեն: Նա կառքի բաց դռնից դուրս էր նայում, և նրա աչքի առջև բացվում էր այն տեսարանը, որը մենք փորձեցինք չափազանց անհաջող նկարագրել մեր ընթերցողին:

Ամբոխը, աղմուկը, այդ շքեղ հագնված մարդիկ ու բնության շքեղությունը բանտարկյալին կուրացրել էին այնպես, ինչպես այն կայծակը, որը խփում էր նրա բանտային խցի պատահանին:

Չնայած այն բանին, որ Կոռնելիուսի ուղեկիցը դժկամությամբ էր պատասխանում նրա այն հարցերին, թե ինչ է սպասում իրեն, Կոռնելիուսը, համենայն դեպս, մի վերջին անգամ էլ փորձեց իմանալ, թե ի՞նչ է նշանակում այս ամենը, այդ աղմկոտ տեսարանը, որը, որքան ինքը հասկացավ, բոլորովին էլ նրա անձին չէր վերաբերում:

— Ի՞նչ է նշանակում այս ամենը, պարոն գնդապետ:— հարցրեց նա իրեն ուղեկցող սպային:

— Դուք ինքնեքդ էլ կարող եք տեսնել, պարոն, որ սատոնահանդես է:

— Ա՛, տոնահանդես,— ասաց Կոռնելիուսը այնպիսի մի մարդու մոտայլ, անտարբեր տոնով, որի համար վաղուց արդեն ոչ մի օւրախություն գոյություն չունեք:

— Ամենայն հավանականությամբ, Հաաուլեմ քաղաքի գահակալության տոնն է: Ես շատ ծաղիկներ եմ տեսնում:

— Այո՛, իրոք որ, պարոն, սա մի տոն է, որտեղ ծաղիկները խաղում են գլխավոր դեր:

— Օ՛, ինչպիսի նուրբ բուրմունք, օ՛, ինչպիսի դրախտային գույներ,— բացականչեց Կոռնելիուսը:

Սպան ենթարկվելով հանկարծակի բռնկած խղճի ձայնին, զինվորին, որը փոխարինում էր կառապանին, հրամայեց.

— Կանգնեցրեք կառքը, որպեսզի պարոնը կարողանա նայել:

— Օ՛, շնորհակա՛լ եմ, պարոն, սիրալիրության համար,— տխուր ասաց վան Բեռլեն,— սակայն իմ վիճակում շատ ծանր է ուրիշի ուրախութունը տեսնելը: Աղատե՛ք ինձ դրանից, ձեզ շատ եմ խնդրում:

— Ինչպես կամենաք, պարո՛ն: Այդ դեպքում շարունակենք մեր ճանապարհը: Ես հրամայեցի կանգնեցնել նրա համար, քանի որ խնդրեցիք և հետո, դուք համարվում եք ծաղիկների ու հատկապես այն ծաղիկների մեծ սիրահար, որոնց պատվին կազմակերպված է այս տոնահանդեսը:

— Իսկ ո՞ր ծաղիկների պատվին է կազմակերպված այսօրվա տոնահանդեսը, պարոն:

— Կակաչների պատվին:

— Կակաչների պատվի՞ն,— բացականչեց վան Բեռլեն.— Այսօր կակաչների տո՞նն է:

— Այո՛, պարոն, սակայն, քանի որ այդ տեսարանը ձեռնհաս է, շարժվենք առաջ:

Եվ սպան ցանկացավ կարգադրել, որպեսզի ճանապարհը շարունակեն:

Սակայն Կոռնելիուսը նրան կանգնեցրեց: Տանջող մի կասկած ծագեց նրա գլխում:

— Պարո՛ն,— հարցրեց նա դողացող ձայնով,— արդյոք այսօ՞ր են տալու պարգևը:

— Այո՛, պարգև սև կակաչի համար:

Կոռնելիուսի այտերը կարմրեցին, նրա ամբողջ մարմնով դող անցավ, ճակատը ծածկվեց քրտինքով: Այնուհետև, մտածելով այն մասին, որ առանց իրեն և իր կակաչի, միևնույն է, տոնահանդեսը չի կարող կայանալ, նա ավելացրեց.

— Ավա՛ղ, բոլոր այս հիանալի մարդիկ էլ ինձ նման շատ կվշտանան, քանի որ չեն տեսնի այն տեսարանը, որին

Պարզիրված են, և կամ եթե տեսնեն էլ, համենայն դեպս, կտեսնեն ոչ լրիվ:

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել, պարոն:

— Ուզում եմ ասել,— պատասխանեց Կոռնելիուսը՝ կառքի անկյունը քաշվելով,— ուզում եմ ասել, որ երբեք, ոչ մեկը, բացառությամբ մեկ մարդու, որին ես ճանաչում եմ, չի կարող գտնել սև կակաչի գաղտնիքը:

— Այդ դեպքում, պարոն, նա, որին դուք ճանաչում եք, արդեն բացել է այդ գաղտնիքը: Հաաուկեմը այժմ հիանում է այն ծաղկով, որը ձեր կարծիքով դեռևս ամենցված չէ:

— Սև կակաչը,— կիսով չափ դուրս կախվելով կառքից՝ բացականչեց վան Բեուլեն:— Ո՛ւր է: Ո՛ւր է:

— Ահա այնտեղ, պատվանդանի վրա, տեսնո՞ւմ եք:

— Տեսնում եմ:

— Հիմա, պարոն, պետք է շարունակել ճանապարհը:

— Օ՛, խնայեցեք, խղճացեք, պարոն,— ասաց վան Բեուլեն,— մի՛ տարեք ինձ: Թույլ տվեք նայել: Ինչպե՞ս, մի՞թե այն, ինչ հիմա ես տեսնում եմ, հենց սև կակաչն է, որ կա: Բոլորովին սև... Հնարավո՞ր է արդյոք: Պարո՛ն, դուք տեսե՞լ եք: Նրա վրա, ամենայն հավանականությամբ, բծեր կան, ամենայն հավանականությամբ կատարյալ չէ. կամ գուցե միայն թեթևակի է ներկված սև գույնով: Օ՛, եթե միայն մոտ լինեի նրան, կորոշեի, կարող էի այդ իսկույն ասել, պարոն: Թո՛ւյլ տվեք իջնել, պարոն, թո՛ւյլ տվեք մոտիկից տեսնել: Ես ձեզ շա՛տ եմ խնդրում:

— Դուք գծվե՞լ եք, ինչ է, պարո՛ն, մի՞թե կարող եմ:

— Աղաչո՞ւմ եմ:

— Բայց դուք մոռանում եք, որ բանտարկյալ եք:

— Ես բանտարկյալ եմ, ճիշտ է, բայց ես պատվախնդիր մարդ եմ: Երգվո՞ւմ եմ պատվովս, պարոն, որ ես չեմ փախչի. ես փախուստի ոչ մի փորձ չեմ անի. թո՛ւյլ տվեք միայն նայել ծաղկի վրա, աղաչո՞ւմ եմ ձեզ:

— Իսկ իմ պարտականությունե՞րը, պարո՛ն:

Եվ սպան նորից ուզում էր կարգադրել զինվորին՝ ճանապարհը շարունակելու:

Կոռնելիուսը նորից կանգնեցրեց սպային:

— Օ՛, սպասեցեք, մեծահոգի եղեր: Իմ ամբողջ կյանքը հիմա կախված է ձեր բարյացակամությունից: Ավա՛ղ ինձ, պարոն: Ինձ հիմա շատ քիչ է մնացել ապրելու: Օ՛, պարոն, դուք չեք պատկերացնի, թե ես ինչպե՛ս եմ տանջվում: Դուք նույնիսկ չե՛ք պատկերացնի, պարոն, թե ի՛նչ է կատարվում հիմա իմ գլխում ու սրտում: Ձե՛ որ դա, գուցե, — հուսահատությամբ ասաց Կոռնելիուսը, — իմ կակաչն է, այն կակաչը, որը Ռոզալից գողացան: Օ՛, պարոն, դուք հասկանո՞ւմ եք, թե ի՛նչ է նշանակում աճեցնել սև կակաչ, տեսնել միայն մեկ ակնթարթ, տեսնել, թե ինչպիսի կատարելություն է, հասկանալ, որ միաժամանակ արվեստի ու բնության մի հրաշալիք է, և կորցնել, ընդմիջտ կորցնել: Օ՛, պարոն, ես պետք է դուրս գամ կառքից, պետք է գնամ ու նայեմ ծաղիկը: Կուգեք՝ ինձ հետո սպանեք, սակայն ես կտեսնեմ, ես կտեսնեմ:

— Լեեցե՛ք, դժբախտ մարդ, և շտապե՛ք թաքնվել կառքում: Մոտենում է նոյին մեծություն փոխարքայի շքախումբը, և եթե արքայազնը նկատի այս իրարանցումն ու աղաղակը, երկուսիս համար էլ վատ կլինի:

Վան Բեռլեն ավելի շատ վախենալով իր ուղեկցի, քան իր համար, քաշվեց կառքի խորքը, սակայն նա այստեղ կես վայրկյան չկարողացավ մնալ: Դեռևս առաջին քսան հեծելակները չէին անցել, երբ նա կրկին իրեն նետեց դեպի կառքի դռները և արտահայտիչ շարժումներով սկսեց խընդրել փոխարքային, որը հենց այդ վայրկյանին անցնում էր այդտեղով:

Վիլհելմը, ինչպես միշտ հանգիստ, անվրդով, ձիով գրնում էր, որպեսզի կատարի իր նախագահական պարտականությունը: Նա ձեռքին բռնել էր մի մազաղաթյա փաթեթ, որն այդ տոնահանդեսի օրը նրա համար ծառայում էր որպես կոմանդորական գավազան:

Տեսնելով մի մարդու, որը շարժուձևով ինչ-որ բան է խնդրում, և գուցե միաժամանակ ճանաչելով նրան ուղեկցող սպային, փոխարքա արքայազնը հրամայեց կանգ առնել:

Նույն վայրկյանին նրա կառքի ձիերը, դողալով իրենց

պողոտայի տառերի վրա, քարացածի նման կանգ առան վաճ
Բեռլեից ընդամենը վեց քայլի վրա:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց արքայազնը սպային,
որը փոխարքայի հենց առաջին իսկ խոսքից իսկույն եեթ
կառքից թռավ ու ակնածանքով մոտեցավ նրան:

— Տե՛ր իմ,— պատասխանեց սպան,— սա այն պետա-
կան հանցագործն է, որի հետևից ձեր հրամանով գնացի
Լեհշտեյն և որին, ինչպես որ ցանկացավ ձերդ մեծությունը,
բերեցի Հատուկեմ:

— Իսկ ի՞նչ է ուղում:

— Շատ է խնդրում, որպեսզի իրեն թույլ տրվի մի քա-
նի ընկերով կանգ առնել...

— Որպեսզի նայեմ սև կակաչին, տե՛ր իմ,— զոչեց
Կոռնելիուսը ձեռքերը պաղատական ծալելով,— եթե ես տես-
նեմ և իմանամ, ինչ որ ինձ անհրաժեշտ է իմանալ, ես
կմեռնեմ, եթե այդ պահանջվում է, և մեռնելով էլ ես կօրհ-
նեմ ձերդ մեծությանը, քանի որ դրանով դուք թույլ կտաք,
որպեսզի իմ կյանքի էությունը կաղմող դործը հասնի իր
վախճանին:

Այս երկու մարդիկ, յուրաքանչյուրն իր կառքում, շրջա-
պատված իրենց պահակախմբերով, հետաքրքիր պատկեր
էին ներկայացնում. մեկը՝ ամենազորեղ, մյուսը՝ դժբախտ ու
թշվառ, մեկը՝ դեպի վահճ տանող ճանապարհին, մյուսը,
ինչպես ինքն էր կարծում՝ դեպի կառավարության տանող ճա-
նապարհին:

Վիլհելմը սառը նայեց Կոռնելիուսին և մինչև վերջ լսեց
նրա բոլոր ցանկությունը: Այնուհետև դարձավ սպային.

— Սա այն ըմբոստացած բանտարկյալն է, որը Լեհշ-
տեյնում իր բանապահի կյանքի դեմ մահափորձ էր կատա-
րել:

Կոռնելիուսը հոգոց հանեց ու դուխը կախեց, նրա նուրբ,
գունատ, ազնիվ դեմքը կարմրեց և իսկույն էլ գունատվեց:
Մեծանաղոր, ամեն բանի տեղյակ արքայազնի խոսքերը, որն
ինչ-որ անտեսանելի ուղիներով արդեն իմացել էր նրա հան-
ցագործության մասին, անկասկածելիորեն կանխագուշակում
էին ոչ միայն մահ, այլ նաև իր խնդիրքի մերժում:

Նա այլևս չաշխատեց ո՛չ պայքարել, ո՛չ էլ պաշտպանվել. արքայազնի համար նա ներկայացնում էր միամիտ հուսահատության մի հոգեմաշ տեսարան, որը լրիվ հասկանալի էր և կարող էր հուզել այդ պահին Կոռնելիուսին տեսնող յուրաքանչյուր մարդու սիրտն ու հոգին:

— Թո՛ւյլ տվեք բանտարկյալին դուրս գալու կառքից,— ասաց փոխարքան,— թող նա զնա ու նաչի սև կակաչին, որն արժանի է գոնե մեկ անգամ տեսնելու:

— Օ՛հ,— բացականչեց Կոռնելիուսը՝ ուրախությունից հաղիվ գիտակցությունը չկորցնելով և կառքի ոտնատեղի վրա օրորվելով,— Օ՛հ, տեր իմ:

Նա շնչահեղձ էր լինում, և եթե սպան նրան չսլահեր, ապա Կոռնելիուսը ծնկաչոք, դեմքը փռու մեջ, շնորհակալություն կհայտներ նորին մեծությանը:

Արքայադնը տվեց թույլտվությունը և ուղեկցվելով հիացած ամբոխի ողջույններով, զբոսայգու միջով շարունակեց իր ճանապարհը:

Շուտով նա հասավ բեմահարթակին և իսկույն ևեթ թնդացին հրանոթային համազարկերը:

Եզրափակում

Վան Բեռլեն չորս պահակների ուղեկցությամբ, որոնք ամբոխի մեջ ճանապարհ էին բացում, զնաց դեպի սև կակաչը: Որքան նա մոտենում էր ծաղկին, այնքան նրա աչքերն ավելի էին կլանում ծաղիկը:

Վերջապես Կոռնելիուսը տեսավ այդ հազվագյուտ ծաղիկը, որ ցրտի ու ջերմության, լույսի ու ստվերի անհաստ զուգակցումների շնորհիվ մեկ անգամ լույս աշխարհ էր եկել, որպեսզի հետո ընդմիջտ անհետանար:

Նա տեսավ ծաղիկը վեց քայլի վրա. նա հիանում էր ծաղկի կատարելությամբ ու քնքշությամբ. նա նայում էր երիտասարդ աղջիկների շարքի հետևից, որոնք պատվո պահակ էին կանգնել ազնվության ու մաքրության այդ նմուշի առջև: Սակայն, որքան Կոռնելիուսն ավելի շատ էր հիանում

ծաղկի կատարելությամբ, այնքան ավելի էր կտրատվում նրա սիրտը: Նա իր շուրջը փնտրում էր մեկին, որին կարելի կլիներ մեկ, միայն մեկ եղակի հարց տալ, սակայն շուրջն ամենուրեք օտար դեմքեր էին, բոլորի ուշադրությունն ուղղված էր դեպի գահը, որի վրա բազմել էր արքայազնը:

Վիլհելմը, որ գրավել էր բոլորի ուշադրությունը, վեր կացավ, հանգիստ հայացքը սահեցրեց հուզված ամբոխի վրա-լով, իր թափանցող հայացքով հերթով կպնդ առավ երեք անձնավորությունների վրա, որոնց այդքան տարբեր շահե-րը և այդքան տարբեր ապրումները նրա աչքերի առջև կազ-մել էին մի տեսակ կենդանի եռանկյունի:

Մի անկյունում կանգնել էր Բոքստեյլը, անհամբերությու-նից դողալով և բառացիորեն աչքերով ուտելով արքայազ-նին, ֆլորինները, սև կակաչը և բոլոր հավաքվածներին:

Մյուսում կանգնել էր շնչահեղձ եղող, անխոս Կոռնե-լիուսը, որն իր ամբողջ էությունամբ, սրտի ու հոգու ամբողջ ուժով ձգտում էր դեպի սև կակաչը, դեպի իր զավակը:

Երրորդ անկյունում, վերջապես, բեմահարթակի աստի-ճաններից մեկի վրա, Հաաուլեմի աղջիկների շարքում կանդ-նել էր սքանչելի ֆրիսլանդուհին, իր արծաթանկար, նուրբ, կարմիր բրդյա հագուստով և ոսկյա գլխանոցով, որից ալի-քաձև վայր էին թափվում ժանյակները: Դա Ռոզան էր, որը համարյա կիսաուշաթափ վիճակում, մթազնած հայացքով, հենվել էր Վիլհելմի սպաններից մեկի ձեռքին:

Արքայազնը դանդաղ բացեց մագաղաթյա գրությունը, և դանդաղ, հստակ, ոչ բարձր ձայնով, որի ոչ մի նոտան, սա-կայն, չէր կորչում այն լռության մեջ, որ տիրում էր շունչնե-րը պահած հիսունհալարանոց հանդիսատեսների մեջ, կար-դաց.

— Դուք գիտե՞ք,— ասաց նա,— թե ինչ նպատակի համար եք հավաքվել: Նրան, ով կաճեցնի սև կակաչը, խոս-տացված է պարգևատրել հարյուր հալար ֆլորինով:

Սև կակաչ: Եվ Հոլանդիայի այդ հրաշքը կանգնած է ձեր աչքի առջև: Սև կակաչը աճեցված է և աճեցված է այն-պիսի պայմաններում, ինչպիսիք որ ներկայացվել են Հաաու-լեմ քաղաքի ծաղկագործների ընկերության կողմից:

Այս պատմութիւնը և այն մարդու անունը, որը աճեց-
րել է ծաղիկը, կմտնեն քաղաքի ոսկյա գրքի մեջ:

Մո'տ բերեք այն մարդուն, ով աճեցրել է սև կակաչը:

Ասելով այս խոսքերը, արքայազնը, տեսնելու համար իր
խոսքերի թողած տպավորութիւնը, մի հայացք զցեց կեն-
դանի եռանկյունու յուրաքանչյուր անկյունին:

Նա տեսավ, թե ինչպես Բոքստելը նստարանի վրայից
իրեն առաջ նետեց:

Տեսավ, թե ինչպիսի Կոռնելիուսը ահամայից մի շար-
ժում արեց:

Տեսավ, վերջապես, թե ինչպես սպան, որին հանձնա-
րարված էր Ռոզային պահպանել, նրան տարավ, ավելի
շուտ հրեց դեպի գահը:

Արքայազնի աջ ու ձախ կողմերից միաժամանակ լսվեց
երկու մարդու ճիշ: Կայծակից զարնվածի նման Բոքստելը և
խելքը թողած Կոռնելիուսը միաժամանակ բացականչեցին.

— Ռոզա՛, Ռոզա՛:

— Այս կակաչը ձեզ է պատականում, այնպես չէ՞, օրի-
որդ,— ասաց արքայազնը:

— Այո՛, տեր իմ,— շնչաց Ռոզան, և նրա շուրջը տա-
քածվեց աղջկա գեղեցկությամբ շլացած հիացմունքի մի
ընդհանուր շշուկ:

— Օ՛, — շնչաց Կոռնելիուսը, — նշանակում է նա խա-
բում էր, երբ ասում էր, որ նրանից ծաղիկը գողացել են: Ահա
թե ինչու նա Լեեշտեյնից հեռացավ: Օ՛, մի՞թե ես մոռացված
եմ, մի՞թե նա ինձ դավաճան է, նա, որին ես իմ ամենալավ
բարեկամն էի համարում:

— Օ՛, — իր հերթին հառաչում էր Բոքստելը, — ես կոր-
ծանված եմ:

— Այս կակաչը, — շարունակեց արքայազնը, — բնակա-
նաբար, կկոչվի այն մարդու անունով, ով աճեցրել է. ծաղիկ-
ների ցուցակում կգրանցվի Tulipa nigra Rosa Barlaensis
անունով, ի պատիվ վան Բեռլեի անվան, որն այսուհետև
կկրի այսօրիտասարդ աղջիկը:

Այս խոսքերն արտասանելով, արքայազնը Ռոզայի ձեռ-
քը դրեց մի տղամարդու ձեռքի մեջ, որը նետվելով դեպի



գահը, ամբողջովին գունատ, ապշած, ուրախությունից ցրնց-
ված, ողջունում էր մերթ արքայաղնին, մերթ իր հարսնա-
ցուին:

Նույն պահին նախագահ վան Սիստենսի ոտքերի առաջ,
բոլորովին այլ զգացմունքից զարկված, մի մարդ ընկավ.
Քոքստեղն իր հույսերի խորտակումը տեսնելով՝ գիտակցու-
թյունը կորցրած փովեց գետին:

Նրան բարձրացրին. մեռած էր:

Այս միջադեպը բոլորովին շխանգարեց տոնահանդեսը,

քանի որ ո՛չ արքայազնին, ո՛չ էլ նախագահին այդ պատահարը առանձնապես չվշտացրեց։

Սակայն Կոռնելիուսը սարսափով ետ քաշվեց. ի դեմս այդ գողի, այդ կեղծ Յակոբի, նա ճանաչեց իր հարևան Իսահակ Բոքստելին, որին նա իր մաքուր սրտում ո՛չ մի անգամ, ո՛չ մի վայրկյան անգամ այդ շարամիտ գործում չէր էլ կասկածել։

Իրականում նման վախճանը Բոքստելի համար մեծ հաջողություն էր, քանի որ այդ կաթվածը խանգարեց նրան ավելի երկար ականատես լինելու իր փառասիրության ու ագահության համար այդքան տանջալից տեսարանի։

Ծիսակատարությունն այնուհետև շեփորների նվագակցությամբ շարունակեց առանց որևէ միջադեպի, եթե միայն նկատի չունենանք Բոքստելի մահը և այն, որ Կոռնելիուսն ու Ռոզան ձեռք-ձեռքի տված՝ հանդիսավոր քայլում էին իրար կողքից։

Երբ քաղաքապետարան մտան, արքայազնը Կոռնելիուսին մատնացույց արեց հարյուր հազար ֆլորինով պարկը։

— Մենք չենք կարող որոշակի վճռել,— ասաց նա,— թե այդ փողերը դո՞ւք եք շահել, թե՞ Ռոզան։ Դուք գտել եք սև կակաչի գաղտնիքը, սակայն աճեցրել ու ծաղիկ է դարձրել Ռոզան։ Բացի դրանից, այդ փողերը քաղաքը նվիրում է կակաչին։

Կոռնելիուսը սպասում էր՝ ցանկանալով հասկանալ, թե արքայազնը ի՞նչ է ակնարկում։ Վերջինս շարունակեց.

— Ես իմ կողմից հարյուր հազար ֆլորինը տալիս եմ Ռոզային։ Նա դրանք ազնիվ կերպով վաստակել է և կարող է առաջարկել ձեզ որպես իր օժիտը։ Դա պարզ է նրա սիրո, արիության ու ազնվության համար։

— Ինչ վերաբերում է ձեզ, պարո՛ն, ապա դարձյալ Ռոզայի շնորհիվ է, որը ձեր անմեղությունը ապացուցող փաստեր գտավ,— այս խոսքերով արքայազնը Կոռնելիուսին մեկնեց ավետարանից պոկված նշանավոր թերթը, որի վրա գրված էր Կոռնել դե Վիտի նամակը և որի մեջ փաթաթված էր երրորդ սոխուկը,— ինչ վերաբերում է ձեզ, ապա մենք տեսանք, որ ձերբակալվել եք մի հանցանքի համար, որ

դուք չեք կատարել: Դա նշանակում է, դուք ոչ միայն ազատ եք, այլև այն, որ անմեղ մարդու ունեցվածքը չի կարող բռնագրավվել: Այսպես ուրեմն, ձեր ունեցվածքը ձեզ է վերադարձվում: Պարոն վան Բեռլե՛, դուք Կոոնել դե Վիտի սանիկն եք և նրա եղբոր՝ Յանի բարեկամը: Մնացիք հավատարիմ այն անվանը, որ տվել է ձեզ առաջինը՝ կնքվելու ժամանակ, և այն բարեկամությանը, որը ձեր նկատմամբ տածում էր երկրորդը: Պահպանեցեք նրանց վաստակների հիշողությունը, քանզի դե Վիտ եղբայրները, որոնք անարդարացի կերպով դատապարտվել են և կրել անարդարացի պատիժ՝ ժողովրդի մոլորություն պահին, երկու մեծ քաղաքացիներ էին, որոնցով այժմ Հոլանդիան հպարտանում է:

Եվ արքայազնը այս խոսքերից հետո, որոնք նա ասաց մեծ պաթոսով, թույլ տվեց երկու նշանվածներին, որոնք ծունկ էին շոքել նրա կողքին, համբուրելու իր ձեռքը:

Այնուհետև նա, հոգոց հանելով, ասաց.

— Ավաղ, ձեզ կարելի է նախանձել: Զգտելով Հոլանդիայի համար ձեռք բերել իսկական փառք և, հատկապես, իսկական բարեհաջողություն, դուք աշխատում եք միայն կապալաների նորանոր երանգներ ստեղծելու:

Եվ նա մի հայացք գցեց Ֆրանսիայի կողմը, կարծես տեսնելով, որ այն կողմից նորից ամպեր են կուտակվում. այնուհետև նստեց կառքն ու մեկնեց:

Կոոնելիուսն էլ իր հերթին, հենց նույն օրը Ռոզայի հետ մեկնեց Դորդրեխտ: Ռոզան իր դայակի միջոցով, որին ուղարկել էր իր հոր մոտ որպես դեսպան, ամեն ինչի մասին նրան տեղյակ դարձրեց:

Նրանք, ովքեր, շնորհիվ մեր նկարագրության, ծանոթ էին Գրիֆուսի բնավորությանը, կհասկանան, որ նա մեծ դժվարությամբ հաշտվեց իր փեսայի հետ: Նա չէր կարող մոռանալ փայտի այն հարվածները, որոնք հետո ինքը կապտած տեղերի հետքերով հաշվել էր: Դրանց թիվը, ինչպես ինքն էր ասում, հասնում էր մինչև քառասունմեկի: Սակայն, Գրիֆուսը համենայն դեպս, վերջ ի վերջո, հանձնվեց, որպեսզի, ինչպես ինքն էր ասում, ավելի պակաս մեծահոգի չլինի, քան նորին մեծություն արքայազնը:

Դառնալով կակաչների պահապան այն բանից հետո, երբ նա եղել էր մարդկանց պահապան, Գրիֆուսը դարձավ ծաղիկների ամենախիստ հսկողը, որպիսին Ֆլանդրիայում երբեկիցե տեսել էին: Պետք էր տեսնել, թե ինչպիսի՝ ջանասիրությամբ էր նա հետապնդում վնասակար թիթեռներին, ինչպե՞ս էր սպանում դաշտային մկներին, ինչպե՞ս էր քշում շափազանց ագահ մեղուներին:

Նա իմացավ Բոքստելի պատմությունը և կատաղեց նրանից, որ այդ ինքնակոչ Յակոբը իրեն հիմարացրել է: Ինքն իր ձեռքով քանդեց այն աստղադիտարանը, որն այդ նախանձոտ մարդն իր ժամանակին կառուցել էր թխկիի հետևում: Քանի որ Բոքստելի հողամասը, որը վաճառքի էր հանվել, մտնում էր Կոռնելիուսի տերիտորիայի մեջ, ապա Կոռնելիուսը գնեց և այդպիսով իր կալվածքներն այնքան ընդարձակեց, որ այլևս կարող էր չվախենալ Դորդրեխտի թեկուզ բոլոր հեռադիտակներից:

Ռոզան ավելի ու ավելի գեղեցկանալով, միաժամանակ ավելի ու ավելի շատ գիտելիքներ էր ձեռք բերում: Ամուսնանալուց երկու տարի շանցած նա այնքան լավ էր կարդում ու գրում, որ կարող էր անձամբ իր ձեռքը վերցնել երկու սքանչելի երեխաների դաստիարակությունը, որոնք՝ կակաչների նման լույս աշխարհ եկան 1674 և 1675 թվականների մայիս ամսին: Եվ նրանք ավելի քիչ հոգս էին պատճառում նրան, քան այն նշանավոր կակաչը, որի շնորհիվ էլ այդ երեխաները երևան էին եկել:

Ինքնըստինքյան հասկանալի էր, որ մի երեխան տղա էր, մյուսը՝ աղջիկ. առաջինին անվանեցին Կոռնելիուս, իսկ երկրորդին՝ Ռոզա:

Վան Բեուլեն հավատարիմ մնաց Ռոզային ու կակաչներին: Ամբողջ կյանքում նրան անհանգստացնում էր միայն իր կնոջ երջանկությունը և ծաղիկների խնամքը: Նա հայտնագործեց այնպիսի նոր տեսակներ, որոնք գրանցվեցին հռչանդական ցուցակներում:

Վան Բեուլեի հյուրասենյակի երկու հիմնական զարդերն էին կազմում Կոռնել գե Վիտի ավետարանի այն երկու թերթերը, որոնք այժմ դրված էին մեծ, ոսկեզօծ շրջանակների

մեջ: Մեկի վրա, ինչպես մենք հիշում ենք, նրա կնքահայրը գրել էր, որպեսզի Կոռնելիուսը այրի մարքիզ Լուվուայի նամակները: Մյուսի վրա Կոռնելիուսը կտակել էր Ռոզային սև կակաչի սոխուկը, մի պայմանով, եթե նա ամուսնանա քսանվեց-քսանութ տարեկան մի գեղեցիկ երիտասարդի հետ, եթե նրանք միմյանց սիրեն:

Մի պայման, որը բարեխղճորեն ի կատար ածվեց, շնայած Կոռնելիուսը չմեռավ, և ի կատար ածվեց հենց այն պատճառով, որ նա չմեռավ:

Վերջապես, որպես խրատ ապագա նախանձոտ մարդկանց, որոնցից, հնարավոր է, որ բախտը չզրկի, ինչպես այդ արեց պարոն Իսահակ Բոքստելի գեպքում, Կոռնելիուսն իր դուսն վերևում գրեց մի երկտող, որը Հրոցիոսն իր փախուստի օրը գրել էր խցի պատին:

«Երբեմն տանջանքներդ այնքան շատ ին լինում, որ իրավունք ես վերապահում քեզ՝ երբեք չասելու. ես չափազանց երջանիկ եմ»:



Ֆրանսիացի նշանավոր գրող Ալեքսանդր Դյուման (1802—1870) հայտնի է որպես պատմական թեմաներով գրված բազմաթիվ արկածային վեպերի հեղինակ:

Սակայն Դյուման գրել է ոչ միայն վեպեր: Նրա գրչին են պատկանում նաև պատմական դրամաներ, ճանապարհորդական նոթեր, պատմվածքներ, ակնարկներ, հոդվածներ և այլն:

Դյուման համաշխարհային դրականության մեջ ամենաբեկմնավոր գրողներից մեկն է (ստեղծագործությունների լիակատար ժողովածուն ընդգրկում է 277 հատոր):

Դյումայի շատ գործեր վաղուց արդեն իրավացիորեն մոռացվել են. սակայն նրա լավագույն վեպերը հիմա էլ հրապուրում են ընթերցողներին իրենց հետաքրքրաշարժությամբ ու շարադրանքի թեթևությամբ, վարպետ կոռուցվածքով, արագ զարգացող, կյանքով ու գործողությամբ հագեցած արկածային ֆարուլայով:

Պատմական փաստերը Դյումայի համար ծառայում են սոսկ որպես հենք, որը տաղանդավոր վիպասանը ծավալաղարդում է իր հրեակայության քմահաճ զարդանկարներով: Երբ Դյումային նախատում էին, թե շատ հաճախ նա խեղաթյուրում է պատմական փաստերը, գրողը պատասխանում էր. «Հնարավոր է, սակայն պատմությունն ինձ համար սոսկ մի մեխ է, որից ես կախում եմ իմ նկարը»:

Առանձնապես հոգ շտանելով պատմական ճշմարտացիության նկատմամբ, Դյուման այնուհանդերձ հմտորեն գտնում է կենցաղային մանրամասներ ու բնորոշ մանրուքներ, որոնք նրա վեպերին պատմական ճշմարտացիության երևույթ են տալիս: Հանրահայտ պատմական փաստերը նրա վեպերում միահյուսվում են հնարավոր դեպքերի հետ, պատմական իրական դեմքերը համահավասար գործում են մտացածին հերոսների հետ:

Դյուման շատ հաճախ դիմում է Ֆրանսիայի պատմության բուռն, շրջադարձային ժամանակաշրջաններին (XVI դարի քաղաքացիական պատերազմներ, Ֆրոնդա, 1789. թվականի բուրժուական հեղափոխություն և այլն): Սակայն պատմական խոշոր իրադարձություններին, որոնք ազդել են ժողովուրդների ճակատագրի վրա, հեղինակը մոտենում է պարզունակ դիրքերից, դրանք բացատրելով առավել կամ պակաս պատահական պատճառներով: Նրա մոտ պատմության հիմնական շարժիչ ուժ են դառնում սլաշատական բանսարկությունները, քաղաքական դավադրությունները, առանձին պետական գործիչների փառասեր ձգտումները: Դասակարգային պայքարը, որն ընկած է ամեն տեսակի հեղափոխության և ժողովրդական շարժման հիմքում, Դյուման համարյա թե ուշադրության չի առնում:

Պատմության այդպիսի պարզունակ ըմբռնումը հանգեցնում է այն բանին, որ իսկական պատմական դեպքերը մնում են ստվերում, իսկ վեպ պարբերի հիմնական հոգսը դառնում են հերոսների մտայածին արկածները: Այդ պատճառով Դյումայի վեպերը չեն կարող իրեն պատմության գասագրքերի ճշմարտացի լուսաբանում ծառայել:

Բայց և այնպես, Դյումայի լավագույն գրքերը, ինչպիսիք են՝ «Երեք հրացանակիրները», «Քսան տարի անց», «Տասը տարի անց», «Կոմս Մոնտե-Քրիստո», «Թագուհի Մարգո» և մյուսները հրապուրում են մեզ ոչ միայն իրենց հետաքրքրաշարժ դրություններով և արկածային սյուժեով:

Նրա վեպերի էջերում և ընթերցողների հիշողության մեջ ապրում են ասելով, խիզախ, մեծահոգի հերոսներ, որոնք երբեք իրենց պատիվը հարբատության համար գետնով չեն տա, ընկերոջը դժբախտության մեջ չեն լքի, վտանգի առաջ չեն ընկրկի: Սերելով ժողովրդի հասարակ խավերից կամ աղքատացած աղնվականությունից, նրանք հանգամանքների բերումով դառնում են զոհեր կամ պալատական բանտարկությունների ու դավադրությունների ակամա մասնակիցներ: Յուրաքանչյուր քայլափոխում նրանց հետամտում են խոշընդոտներն ու հետապնդում շարագործները: Շրջապատող աշխարհը լի է ատելությամբ ու խարդավանքով: Սակայն Դյումայի հերոսներն երբեք չի դավաճանում հայրենասիրության և ազգային հրապարտության զգացմունքը: Նրանց խորթ են ֆեոդալների տոհմային թըշնամանքն ու պալատականների քաղաքական բանտարկությունները: Տուկունությունն ու արիությունը, բուռն եռանդը ու անսպառ լավատեսությունը օգնում են այդ խիզախ մարդկանց միշտ հաջողությամբ հասնել ցանկալի նպատակին:

Մարդկային հիանալի գծերն ու բարոյական առողջ սկզբունքները բնորոշ են նաև Կոռնելիուս վան Բեռլենին և Ռոզա Գրիֆուսին, «Սև կապալ» (1850) վեպի հերոսներին:

Այս հետաքրքիր ստեղծագործությունում արտացոլվել են Դյումայի, սյուժետային պատմության այդ հիանալի վարպետի, ստեղծագործության և՛ ուժեղ կողմերը, և՛ նրա պատմական վեպերի բոլոր թերությունները:

Պատմական հենք են դարձել XVII դարի Հոլանդիայի պատմություններից վերցված իրադարձությունները, ավելի ճիշտ՝ 1672 թվականի դեպքերը, երբ Հոլանդիան իրենից ներկայացնում էր ներքին և միջազգային հակասությունների մի խճճված կծիկ:

XVI դարի նիդեռլանդական բուրժուական հեղափոխությունը, որը եղել էր ազատեց իսպանական տիրապետությունից, փշրեց ֆեոդալիզմի կապանքները և հանգեցրեց կապիտալիստական պետությունների պատմության մեջ առաջին հանրապետական բնույթի կառավարչության ստեղծմանը:

XVI—XVII դարերում Հոլանդիայի տնտեսական կյանքում հիմնական դերը խաղում էր ծովային նավատորմը, որը ծառայում էր իրեն եվրոպական երկրների և նրանց գաղութների միջև բռնատեղափոխման հիմնադ

կան միջոց, Հոլանդիան դարձել էր «համաշխարհային սալապան», այսինքն՝ պիտով երկրորդ պլան մղելով մյուս ծովային տիրություններին.

Սակայն XVII դարի երկրորդ կեսին ծովում տիրապետության հասնելու համար Անգլիան սկսում է ավելի ու ավելի վճռական պայքար մղել:

Անգլո-հոլանդական հակասությունները միահյուսվում են ֆրանս-հոլանդական հակասություններին:

Լյուդովիկոս XIV-ի Ֆրանսիան հանդիսանում էր ֆեոդալիզմի պատվարը Արևմտյան Եվրոպայում: Ֆրանսիական թագավորը չէր ցանկանում հաշտվել իր տիրության ռազմաներին կաած Հոլանդական բուրժուական հանրապետության գոյության փաստի հետ:

Միջազգային հակասությունների սրումը հանգեցրեց անգլո-հոլանդական երեք պատերազմների: Վերջինում Ֆրանսիայի զլխավորությամբ Հոլանդիայի դեմ ելավ եվրոպական պետությունների մի հզոր միություն:

1672 թվականը Հոլանդական հանրապետության համար սուր ճգնաժամի տարի էր: Ֆրանսիական մեծ բանակը ներխուժեց երկիր և մոտենում էր նրա տնտեսական կենտրոնին՝ Ամստերդամին, Երկրի ներսում բռնկում էին ժողովրդական հուլումներ ու ապստամբություններ: Ցանդե Վիտի կառավարությունը, որը ներկայացնում էր առևտրական խոշոր բուրժուազիայի շահերը, չէր վայելում մանր առևտրականների ու արհեստավորների համակրանքը, չիտսելով արդեն մանուֆակտուրային բանվորների ու գյուղացիների մասին, որոնք ակտիվորեն բողոքում էին հրեշավոր շահագործման և ահավոր հարկերի դեմ:

Օրանժիստների արիստոկրատական կուսակցությունը, Վիլհելմ Երրորդ Օրանցու կողմնակիցները, Ցանդե Վիտին մեղադրում էին երկրի պաշտպանությունը կազմակերպելու անկարողության և, նույնիսկ, ֆրանսիացիների հետ դավադրական կապեր ունենալու մեջ: Այդ օրհասական պահին օրանժիստներին հաջողվեց իրենց դրածո Վիլհելմ Երրորդ Օրանցու համար ժողովրդականություն շահել. ժողովուրդը ի դեմս նրա տեսնում էր Վիլհելմ Առաջին Օրանցու՝ XVI դարի Նիդեռլանդական հեղափոխության նշանավոր գործչի հաջորդին և մի ուժեղ անձնավորության, որն ի վիճակի է համախմբել ազգային ուժերը՝ թշնամուն հակահարված տալու համար:

Այդ բոլորը հանգեցրեց 1672 թվականի պետական հեղաշրջմանը, երբ իշխանության զուլս անցավ Վիլհելմ Երրորդ Օրանցի փոխարքան:

Վիլհելմ Երրորդը խորամանկ ու ճարպիկ քաղաքագետ էր: Նրան իրոք հաջողվեց Հոլանդիայից վտարել ֆրանսիացիներին, ճիշտ է, ջրամբարների փլուզման և հողերի մի մասի հեղեղման գնով: Նրան հաջողվեց նաև խափանել հակահոլանդական միությունը և Անգլիայի հետ խաղաղության դաշինք կնքել: Ավելի ուշ նա Անգլիայի հետ իր դաշինքն ամրացրեց նաև անձնական ունիայով. հոլանդական փոխարքան դարձավ անգլիական թագավոր:

Սակայն երկրի ներքին կյանքում ոչ մի էական փոփոխություն տեղի չունեցավ: Վիլհելմ Երրորդը շարդարացրեց այն հույսերը, որ հոլանդական

բուրժուազիան կապել էր նրա հետ: Հոլանդիայի ազդեցությունը շարունակում էր ընկնել համաշխարհային ասպարեզում: Առավել ևս նա շարադարացրեց ժողովրդական զանգվածների հույսերը. երկրի ներսում կապիտալիստական ճնշումը տարեցտարի ուժեղանում էր, հարկերը գնալով աճում էին:

Ուստի ոչ մի հիմք չկա 1672 թվականի դեպքերը համարել «մեծ»։ Զահրենկեց արված հետադիմական մի խմբավորմանը փոխարինեց մեկ ուրիշը, ավելի հետադիմականը: Հիմք չկա նաև իդեալականացնելու Վիլհելմ Երրորդ Օրանցուն և նրա հակառակորդներին՝ դե Վիտ եղբայրներին:

Ասենք, հարադատ մնալով իր ստեղծագործական սկզբունքներին Դյուլման չի էլ ձգտել մանրամասն նկարագրել փոթորկալից 1672 թվականի քաղաքական իրադարձությունները: Պատմական դեպքերը, որոնք ուրվագծված են վեպի սկզբում, հեղինակին սոսկ որպես սյուժետային սրման աղբյուր, դեպքերի հանկարծակի շրջադարձի առիթ են ծառայում:

Իբրև ֆաբուլայի նյութ վերցված է մի բնագավառ, որը խիստ հոռու է քաղաքական կրթերից՝ ժաղկաբուծությունը, ավելի ճիշտ՝ կակաչների աճեցումը:

Համեստ, սոխուկային այդ բույսը՝ իր գեղեցիկ ծաղկով հոլանդացիների համար թերևս ավելի քիչ հուղումների առիթ չի եղել, քան քաղաքական պայքարը:

Կակաչներով հրապուրվելը սկսվեց XVI դարում, երբ Թուրքիայից ներմուծվեցին այդ ծաղիկների սոխուկներ: XVII դարի Հոլանդիայում կակաչների այդ նորածնությունը վերածվում է իսկական «կակաչամուլություն»։ Կակաչների աճեցումը դառնում է եկամտի աղբյուր, իսկ այդ ծաղիկի շուրջն ստեղծված անառողջ աժիոտաժը հազվադեպ տեսակների սոխուկների զինը հասցնում է չլսված չափերի: Հաառլեմյան բորսան դառնում է կակաչների շարաշահման կենտրոն, որի առաջն առնելու համար հարկ հեղավ կառավարական հատուկ որոշում հանել:

Նման պայմաններում կակաչների նոր տեսակներ ստանալու փորձերը հետապնդում էին ոչ այնքան գիտական, որքան առևտրական ու սպորտային նպատակներ:

XVII դարի հոլանդական կյանքի այդ կենցաղային առանձնահատկություններն էլ փաստորեն ծառայում են որպես հիմնական նյութ «Սև կալաչ» վեպի համար, որոնք Դյուլման պատկերում է վառ ու ճշմարտացի կերպով: Չնայած հեղինակի կողմից պատմական իրադարձություններին տված կամայական մեկնաբանությանը, «Սև կալաչը» անկասկած, ունի ճանաչողական որոշակի արժեք, ընթերցողը ծանոթանում է XVII դարի հոլանդացիների ինքնատիպ կենցաղին ու բարքերին: Սակայն, ամենից առաջ, ինչպես Ալեքսանդր Դյուլմայի մյուս առավել հայտնի ստեղծագործությունները, այնպես էլ «Սև կալաչը», հրապուրիչ, հետաքրքրաշարժ, կլանող, արկածային մի վեպ է:

Ե. ԲՐԱՒԻՍ

Երախտապարտ ժողովուրդը	3
Երկու եղբայր	15
Յան դե Վիտի օանիկը	26
Զարդարարները	39
Կակաշների սիրահարն ու նրա հարևանը	50
Կակաշների սիրահարի ասեղնոթյունը	61
Երջանիկ մարդը ծանոթանում է դժբախտության հետ	72
Հարձակում	86
Տոհմական խուցը	95
Բանտապահի աղջիկը	100
Կոռնելիուս վան Բեռլեի կտակը	106
Մահապատիժ	120
Այդ ժամանակ—ի՛նչ էր կատարվում մի հանդիսատեսի հոգում	125
Կոդրեխտի աղավինները	130
Պատուհանը	136
Ուսուցիչը և աշակերտուհին	143
Առաջին սոխուկը	152
Խոլպայի երկրպագուն	162
Կինը և ծաղիկը	170
Ի՛նչ էր տեղի ունեցել ութ օրվա ընթացքում	178
Երկրորդ սոխուկը	188
Կակաշը ծաղկեց	199
Նախանձոտը	206
Ան կակաշը փոխում է իր տիրոջը	215
Նախագահ վան Սիստենսը	220
Ծաղկագործների ընկերության անդամներից մեկը	228
Երրորդ սոխուկը	239
Ծաղիկների երգը	248
Որտեղ վան Բեռլեն Լեեշտեյնից հեռանալուց առաջ Գրիֆուսի հետ հաշիվ է մաքրում	257
Որտեղ սկսում են կասկածել, թե ինչպիսի պատժի էր դատապարտված Կոռնելիուս վան Բեռլեն	265
Հաադեմ	269
Վեբշին խնդիրքը	278
Եզրափակում	282
Ալեքսանդր Դյումայի «Ան կակաշ» վեպը	291

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄԱ

Ս և Կ ա Կ չ

Դպրոցական միջին ու բարձր տարիքի համար

Խմբագիր՝ էդ. Ս. Ավագյան
Նկարիչ՝ Ն. Պետրովա
Գեղ. խմբագիր՝ Վ. Բ. Մանդակունի
Տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Խալաթյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Վ. Վարդանյան

Հանձնված է արտադրության 15/IV 1968 թ.:
Ստորագրված է տպագրության 14/VIII 1968 թ.:
Թուղթ՝ տպագրական № 2, 84×108¹/₃₂, հրատ. 13,6
մամ., տպագր. 18,5 մամ.=15,54 պայմ. մամ.,
պատվեր 582, տիրած 30000, գինը՝ 50 կոպ.:
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9,
Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական
կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վար-
չության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65: